**120. Ո՞ր շարքերում բառիմաստի բացատրության սխալ կա.**

- 1) **անօրինակ** – 1.մանր չունեցող, 2.անօրինական, 3.անսովոր, տարօրինակ, 4.արտակարգ, բացառիկ
- 2) **երախտագիտություն** – երախտիքը իմանալն ու գնահատելը, երախտագետ լինելը
- 3) **զգացում** – 1.զգալը, 2.հոգեկան ապրում, հույզ, 3. անուրջ, 4.զգալու կարողություն, զգացողություն
- 4) **հազվագյուտ** – 1.դժվարությամբ, հազիվ գտնվող, 2.բացառիկ, արտակարգ
- 5) **ակնարկ** – 1.հարևանցի նայվածք, թուուցիկ հայացք, 2.աչքով արված նշան, 3.ուղղակի ասված խոսք, 4.համառոտ արված քննություն՝ նկարագրություն

**121. Տրված բառային միավորները կոչվում են՝**

1. համանուններ
  2. հոմանիշներ
  3. հարանուններ
- տեղի տալ** – ընկրկել, նահանջել, զիջել  
**տեղիք տալ** – առիթ տալ, պատճառ դառնալ

**122. Տրված բառային միավորները կոչվում են՝**

1. համանուններ
  2. հոմանիշներ
  3. հարանուններ
- պատվեր** – որևէ բան անելու հանձնարարություն  
**պատվիրան** – կրոնաբարոյական պատգամ

**123. Տրված բառային միավորները կոչվում են՝**

1. համանուններ
  2. հոմանիշներ
  3. հարանուններ
- հոն** – ասիական ծագմամբ ցեղ  
**հոն** – /արևմտի./ այնտեղ  
**հոն** – հոնի ծառի պտուղը  
**հոն** – հոնք

## 124. Տրված բառային միավորները կոչվում են՝

1. համանուններ
2. հոմանիշներ
3. հարանուններ
  - շուք – 1.ստվեր, 2./փխբ./ հովանավորություն
  - շուք – ճոխություն, շքեղություն

## 125. Տրված բառային միավորները կոչվում են՝

1. հարանուններ
2. հոմանիշներ
3. համանուններ
  - հուլով – 1.գոյականի քերականական կարգ, 2.դարձ, պտույտ
  - հուլով – հող-ի գործիականը
  - հուլով – հաճախ

## 126. Տրված բառային միավորները կոչվում են՝

1. համանուններ
2. հոմանիշներ
3. հարանուններ
  - կամ – կամք
  - կամ – գոյություն ունեմ
  - կամ – հասկերը կալսելու գործիք
  - կամ – շաղկապ

## 127. Տրված բառային միավորները կոչվում են՝

1. հակահիշներ
2. հոմանիշներ
3. հարանուններ
  - կատարյալ – անկատար, թերի, պակասավոր

## 128. Տրված բառային միավորները կոչվում են՝

1. հարանուններ
2. հոմանիշներ
3. հակահիշներ
  - անհարիր – հարիր, հարմար, պատշաճ, համապատասխան

## 129. Տրված բառային միավորները կոչվում են՝

1. հակահիշներ
2. հոմանիշներ
3. հարանուններ
  - եռանդ – ավյուն, կորով, ջիղ, ոգևորություն, հրայրք

## 130. Տրված բառային միավորները կոչվում են՝

1. հոմանիշներ
2. հակահիշներ
3. հարանուններ
  - վիհ – անդունդ, խորխորատ, գահավանդ, կիրճ

**131. Նշի՛ր այն բառակապակցությունները, որոնք ունեն և՛ ուղիղ և՛ դարձվածային իմաստ.**

(1)բերանը փակել, (2)բերանը բան գցել, (3)բերանը ցավել, (4)բերանը ծռել, (5)բերանը խոսք դնել, (6)բերանը լեզու դնել, (7)բերանը չորանալ, (8)բերանից դուրս թռչել, (9)բերանը թույլ

**132. Նշի՛ր այն բառակապակցությունները, որոնք չունեն դարձվածային իմաստ.**

(1)դանակի տակ պառկել, (2)դանակը կտորել, (3)դանակը կոկորդին դեմ տալ, (4)դանակը ծռել, (5) դանակը ոսկորին հասնել, (6)դանակի քաշել, (7)դանակ առնել, (8)դանակի տակ մեռնել, (9)դանակ կտորել

**133. Նշի՛ր այն բառակապակցությունները, որոնք ունեն միայն դարձվածային իմաստ.**

(1)ծովը նետել, (2)ծովը հրդեհել, (3)ծով կապել, (4)ծով աչքեր, (5) ծովը գնալ՝ ծարավ ետ գալ, (6)ծովից թաց դուրս գալ, (7)ծով խելք, (8)ծով կրակող, (9)ծովում լողալ

**134. Տրված բառակապակցություններից քանի՞սն ունեն դարձվածային իմաստ.**

միտքը դնել, միտքը կարդալ, միտքը փոխել, մտքից գուրկ բաներ խոսել, միտն ընկնել, միտքը ծուռ, մտքի թռիչք, միտք անել, մտքովն անցնել, մտքով ընկնել, մտքի թելը կտրվել, մտքից հանել

**135. Տրված դարձվածքներից քանի՞սն ունեն նաև ուղիղ իմաստ.**

ոտքը քաշել, ոտքը քարին առնել, ոտին տեղ անել, ոտքը կտրել, ոտքը կապել, ոտը գալ, ոտի տակ ընկնել, ոտի տակը փորել, ոտները լիզել, ոտից գլուխ, ոտից-ձեռից ընկնել, ոտը փուշ մտնել

**136. Տրված դարձվածքներից քանի՞սն ունեն նաև ուղիղ իմաստ.**

ջուրն ընկնել, ջրի ճամփա, ջրի երես հանել, ջրից հանել, ջուր պղտորել, ջրի բերանն ընկնել, ջուր կապել, ջուր վերցնել, ջուր մաղվել, ջրի գորտ, ջուրը նետել, ջուր ծեծել

**137. Նշի՛ր այն նախադասությունները, որոնցում դարձվածք կա.**

1. Այդ ոլոր-մոլոր ճամփաների վրա ուղևորները դեռ շատ ուրիշ խոչընդոտներ պետք է հաղթահարեն:
2. Այդ օրերին տեղի ունեցան մի շարք իրադարձություններ, որոնք լույս սփռեցին նախորդ տարվա առեղծվածային դեպքերի վրա:
3. Նրանք ուզում են հավաքագրել Բրետոնի բոլոր ծխականներին և կովի ուղարկել իրենց ծխերից դուրս՝ հեռավոր երկրամասեր:
4. Բայց հեղափոխության այդ ժամանակներում ամեն մարդ զենքի էր վերածում իր ամբողջ ունեցվածքը և նվիրում իր կուսակցությանը:
5. Երիտասարդ ու գեղեցիկ ասպետը անհամբեր սպասում էր, որ առիթ ներկայանա կատակելու համար, որպեսզի օրիորդ Մարին մեկ անգամ ևս նայի իրեն:
6. Բայց օրիորդը չպատասխանեց և մանկական հափշտակությամբ սլացավ պարելու՝ մարկիզին զգելով մտատանջության գիրկը:

**138. Նշի՛ր այն նախադասությունները, որոնցում դարձվածք կա.**

1. Աղջիկը երիտասարդ ղեկավարին ընդունեց քիթը կախ և առանց մի բառ ասելու, բայց նրանից հեռացավ ժպտալով:
2. Կինը նկատեց այդ և գլուխը հակեց այնպիսի կոկետությամբ, որ բոլորը տեսան նրա սիրուն վիզը, մարմնի հազվագյուտ կատարելությունը:
3. Դառը շեշտով ասված այս խոսքերը այնպես ուժեղ ազդեցին նրա վրա, որ նա ապշահար նայեց Ռաֆայելին:
4. Ու մի ցատկով քիչ էր մնում՝ իսկույն ինձ մահի բաժին աներ, բայց հանդիպեց իմ հարվածին:
5. Նա մի կողմից անզուսպ պահանջ էր զգում բավարարելու իր մոլեգնությունը, մյուս կողմից՝ պարտվածի ոտքերն ընկնելու և ներողամտություն հայցելու:
6. Առանց հրամանի կատարված այդ գնդակահարության վայրագությունն ու նենգությունը համապատասխանում էին նրա սրտի գաղտնի իղձերին:

**139. Նշի՛ր այն բառակապակցությունները, որոնք չունեն դարձվածային իմաստ.**

(1)արևով երդվել, (2)արևի ձայնն ածել, (3)արև բացվել, (4)արևը թեքվել, (5) արևը վկա, (6)մեկի արևը օրհնել, (7)արևի երես տեսնել, (8)արևը սևանալ (9)արևից սևանալ

**140. Նշի՛ր այն բառակապակցությունները, որոնք ունեն դարձվածային իմաստ.**

(1)ամպերից ընկնել, (2)ամպերում սավառնել, (3)ամպերից վերև, (4)ամպոտ օր, (5) ամպամած երկինք, (6)սև ամպեր կուտակվել, (7) ամպերը երկնքից կախվել

**Նշի՛ր, թե տրված բառերից որոնք չունեն իրենց համանունները.**

(1)խատուտիկ, (2)խակ, (3)խաղ, (4)խլեգ, (5) խորդ, (6)խումբ, (7)խաշ, (8)խեթ, (9)խեժ

**141. Նշի՛ր այն բառերի համարները, որոնց բացատրությունը սխալ է նշված.**

1. ակուք – կերակուր եփելու օջախ, թոնիք
2. ակրատ – թեթև նախաճաշ
3. անդրիագործ – դերձակ, կարող վարպետ
4. անդրենածին – բնիկ, տվյալ վայրում ծնված և ապրած
5. անդրշիրիմ – հանդերձյալ աշխարհ
6. անմասն – մասերի չբաժանվող

**142. Նշի՛ր այն բառերի համարները, որոնց բացատրությունը սխալ է նշված.**

1. արհավրալի – քամահրանքի, արհամարհանքի արժանի
2. արհեստավարժ – ինչ-որ արհեստի կամ գործի մեջ վարժ
3. արձակագիր – հրապարակախոսական հոդվածներ գրող
4. արձանագործ – քանդակագործ վարպետ
5. արձանագրություն – մահարձանի վրա կատարվող հիշատակություն
6. արքան – մկրատաձև բռնող գործիք

**143. Նշի՛ր այն բառերի համարները, որոնց բացատրությունը սխալ է նշված.**

1. գործակալ – որևէ գործի մեջ խիստ զբաղված անձ
2. գրամոլ – գրելու հիվանդագին մոլուցք ունեցող անձ
3. գրչակ – երիտասարդ գրող, ստեղծագործող
4. գրչագիր – որևէ սկզբնաղբյուրից ընդօրինակված ձեռագիր հուշարձան
5. գրչատուն – գրչության տուն, վանք, կամ դպրոց, որտեղ զբաղվում էին գրչությամբ
6. գրաստ – բեռներ կրող կենդանի

**144. Նշի՛ր այն բառերի համարները, որոնց բացատրությունը ճիշտ է նշված.**

1. երկնադետ – երկինք նայող, դեպի երկինք ձգվող
2. երկնառաք – դեպի երկինք ուղղված, արձակված
3. երկնուղեշ – դեպի երկինք ձգվող ուղեշներով, բարձրուղեշ
4. երկնակարկառ – բարձր ժայռ
5. երկնաքեր – երկինքը քերող, երկնահաս
6. երկնաքերծ – բարձրաքերծ շենք

**145. Նշի՛ր այն բառերի համարները, որոնց բացատրությունը ճիշտ է նշված.**

1. տերունական – Աստծուն վերաբերող, հատուկ
2. տիեզերափայլ – տիեզերքում փայլող աստղ
3. տիվանդորր – ցերեկվա մշուշ
4. տիտղոս – իշխանական կամ տոհմական պաշտոնական պատվավոր կոչում
5. տիտղոսաթերթ – իշխանների, դուքսերի տրվող կոչումների վկայական
6. տիպական – որևէ տիպի բնորոշ առանձնահատկություններ ունեցող

**146. Նշի՛ր այն թվերը, որոնցում սխալ են տրված խմբերի բացատրությունները:**

1. բոլուկ – խոզերի խումբ
2. հորան - աղվեսների խումբ
3. խորդերամ – կռունկների խումբ
4. ճահուկ – որսաշների խումբ
5. պարս – մեղուների խումբ
6. ասպականի - փղերի խումբ
7. նքողնակ – սողունների խումբ
8. երամակ – թռչունների խումբ
9. վտառ – ձկների խումբ

**147. Ո՞ր նախադասություններում բառագործածության սխալ կա.**

- 1) Օրնիբուն բանելով՝ գեղջուկը դեռ պարտասուն էր կալվածատիրոջը և չէր կարողանում վերադարձնել վերցրած գումարը:
- 2) Լուծարելով քննաշրջանի առաջին փուլում կուտակած պարտքերը՝ նա վերջապես թեթևություն զգաց:
- 3) 1961 թվականին Խորհրդային Միությունում անց է կացվել ջերմամիջուկային սաքավորումների պատմության մեջ ամենահզոր փորձարկումը:
- 4) Ուժասպառ ոտքերը քարշ տալով՝ մուրացիկը նստեց քարին՝ խոնջանալու:
- 5) Դասագրքում տրված խնդիրներից մեկը ավարտական դասարանի աշակերտներից ոչ մեկին այդպես էլ չհաջողվեց լուծարել:

**148. Ո՞ր նախադասություններում բառագործածության սխալ կա.**

- 1) Ջոկատն անձնուրաց մարտի նետվեց՝ հաղթելով թշնամու դիրքերի առաջ եղած արգելապատնեշները:
- 2) Այդ կինն իր ողջ էությանը ինձ չեխովյան կերպարանք էր հիշեցնում:
- 3) Ամերիկայի Միացյալ Նահանգները 1945-ին ճապոնական երկու քաղաքների վրա ատոմային ռումբ է նետել:
- 4) Մարզիչը զովեստով խոսեց մարզիկների մասին, որոնք մրցանակային տեղի հավակնոտ են:
- 5) Ատոմային ռումբի օգտագործումը պատերազմական նպատակներով շատ մեծ անհանգստություններ առաջացրեց ամբողջ աշխարհում՝ հասկացնելով, թե ինչ ազդեցություն կարող է ունենալ այն մարդկության հետագա ճակատագրի վրա:

**149. Ո՞ր նախադասություններում բառագործածության սխալ կա.**

- 1) Գործի դնելով էլեկտրական շառափը՝ թունելագործները փորձում էին աստիճանաբար քանդել այն մեծ քարաբեկորը, որի մյուս կողմում մնացել էին մի քանի բանվորներ:
- 2) Ջերմամիջուկային ռումբերի կիրառումը պատերազմող կողմերից մեկին ոչ միայն կարող է հաղթանակ պարգևել, այլ լիովին բնաջնջել կյանքը մոլորակի մեծ մասում:
- 3) Հերոսիմա և Նագասակի քաղաքների ռմբակոծությունից հետո ատոմային ռումբերն այլևս ռազմական ոչ մի գործառնություններում չեն կիրառվել:
- 4) Նրանք զայրացած կարդում էին նոր օրինագիծը, ըստ որի՝ ավելացվելու էին պետժառանգություններից բռնագրավվող հարկաչափերը:
- 5) – Ինչպե՞ս կարողացաք վիրավորել մի մարդու, որը միշտ զուրկ է եղել չարակամությունից ու բանասարկությունից,- վրդովված ասում էր հայրս:

**150. Ո՞ր նախադասություններում բառագործածության սխալ կա.**

- 1) Այժմ աշխարհում գործում է միջազգային պայմանագիր, ըստ որում դրա նպատակն է արգելել միջուկային զենքերի ստեղծումը, տարածումը և գործածումը:
- 2) Երկրի նախագահը մի շարք նախարարությունների աշխատառճը խիստ քննադատել է՝ իր կողմից տրված պատվիրանները չկատարելու համար:
- 3) Օլիմպիական խաղերի հինգ օղակները աշխարհի հինգ մայրցամաքների խորհրդանիշն են:
- 4) Հնում օլիմպիական խաղերում ընդունված էր միավորներ շնորհել շքանշանների և գրաված բարձր տեղերի համար, որի արդյունքում ոչ պաշտոնական թիմային հաշվարկով որոշվում էր հաղթող երկիրը:
- 5) Դատական գործը ոչ միայն խճճված էր, այլև տարաբնույթ բարդություններով լի:

**151. Ո՞ր նախադասություններում բառագործածության սխալ կա.**

- 1) Առաջիկայում նախատեսված են մի շարք գործառություններ արգենտինական խոշոր բանկերի հետ:
- 2) Գործարանի մի քանի արտադրամասերի գործառությունները փոխվել են՝ կապված նորագույն սարքավորումների արտադրությունը իրականացնելու գործընթացի հետ:
- 3) Բանկային համակարգի առաջնային գործառությունը հաճախորդներին բարեհաճ սպասարկելն է:
- 4) Տնօրենը այլևս չէր պատասխանում իրեն չարախոսողներին՝ կազմակերպության առաջ դրված խնդիրները լուծված համարելով:
- 5) Կազմակերպության այդ մասնաճյուղը վաղուց լուծարված է, և նրա պարտքերի խնդիրը քննվում է դատական ատյաններում:

**152. Ո՞ր նախադասություններում բառագործածության սխալ կա.**

- 1) Հնուց եկած մի ավանդույթի համաձայն՝ Փարվանա լիճը գոյացել է արցունքներից:
- 2) Գիտական նստաշրջանի ընթացքում ընթերցված բազմաթիվ ծավալուն և բազմաբովանդակ զեկույցներ աչքի էին ընկնում հրատապ հիմնախնդիրների արծարծմամբ:
- 3) Քրեագետների երկու խմբերի՝ առաջին փորձաքննություններին վերաբերվող կարճառոտ զեկույցումները գրեթե նույն բանն էին փաստում:
- 4) Աստվածաշնչյան մի ավանդույթ պատմում է ընտանեկան հարկը լքած և օտարության մեջ անառակ կենցաղով ապրող մի երիտասարդի մասին:
- 5) Որոշ երկրներում կա մի զարմանալի ավանդույթ, որի համաձայն Ամանորի գիշերը պատուհաններից դուրս են նետում հին իրերը:

**153. Ո՞ր նախադասություններում բառագործածության սխալ կա.**

- 1) Փոքրիկը փռփռացրեց բաժակի օճառը և սկսեց օճառագնդեր բաց թողնել պատուհանից:
- 2) Մեղադրական դատավճռով նախատեսված էր ոչ միայն մեղադրյալի երկարաժամկետ ազատազրկում, այլև ամբողջ գույքի բռնագանձում:
- 3) Աշխատանքային խումբը պարտականություն էր վերցրել սեղմ ժամկետում ավարտել գրքի սրբագրական աշխատանքները:
- 4) Միսաք Մեծարենցի «Ըլլայի՛, Ըլլայի՛ ... » շարքում իր համապարփակ դրսևորումն է ստացել այլասիրությունը:
- 5) Անկախ իր ցանկությունից՝ նա ինքնիրեն անվերջ քննարկում էր կատարվածը՝ փորձելով հասկանալ հակառակորդի քայլերի տրամաբանությունը:

**154. Ո՞ր նախադասություններում բառագործածության սխալ կա.**

- 1) Ի ուրախություն պեղումներն իրականացնողների՝ հայտնաբերվեց Տիգրանակերտ քաղաքի տեղակայման վայրը:
- 2) Շախմատային մրցաշարն ավարտվեց հոգուտ հայ շախմատիստների:
- 3) Օրավար շենանում ու շքեղանում էր Տիգրան արքայի կառուցած նոր մայրաքաղաքը:
- 4) Դարավոր պայքարի արդյունքում հայ ժողովուրդն ի գորու եղավ ազատվել օտարի լծից՝ ձեռք բերելով անկախություն:
- 5) Աշնան վերջերին գյուղացու մտանները լիքն էին մրգով, կարասներում փոփոացող գինով, տհալով ու չորացող ավելուկի շարաններով:

**155. Ո՞ր նախադասություններում բառագործածության սխալ կա.**

- 1) Հայաստանյան բանկերի միջև կազմակերպվող ֆուտբոլի ընկերական խաղերն արդեն մի քանի անգամ ավարտվել են ի օգուտ Կենտրոնական բանկի թիմի:
- 2) Ի շնորհիվ հայ ազատամարտիկների՝ մայիս ամիսը մեզ համար նշանավորվեց մեկ հաղթական իրադարձությամբ և՛ Շուշիի ազատագրումով:
- 3) Առաջանալով դեպի նա՝ հույս ուներ կանխել վերջինիս փախուստը:
- 4) Ասածներիդ համաձայն չեմ, սակայն քեզ էլ չեմ կարողանում հակառակը համոզել:
- 5) Մենք պատրաստականություն հայտնեցինք նրանց սատարելու բոլոր հարցերում:

**156. Ո՞ր նախադասություններում կա բառագործածության սխալ.**

- 1) Բոլոր տեղերից մի նպատակով էին գալիս՝ հուսալով մի բան իմանալ, մի լուր ստանալ իրենց գոհված հարագատի մասին:
- 2) Նրա հասկացողությանը խորթ է տարրական հասկացությունների իմացությունը:
- 3) Աշխարհում ավելի քան 12 մլն ժայթքում ունեցած հրաբուխը Սալվադորում գտնվող Իսլակոն է:
- 4) Արքան մի փոքր մտածեց և վերահաս լինելով կատարվածին՝ կտրուկ բարձրացավ տեղից՝ նշանացի հասկացնելով, որ ներկաներն իրենց մեռնակ թողնեն:
- 5) Պալատական պերճ սրահներում աչքի էին զարնում տարբեր դարաշրջաններում ստեղծված գլուխգործոցները՝ հանրահայտ նկարիչների կտավները, ոսկեգօծ սկահակներն ու անութները, բյուրեղապակե ջահերն ու նրբաճաշակ գորգերը, նաև չինական թրերն ու ասպետական հանդերձանքի պարագաները:

**157. Ո՞ր նախադասություններում կա բառագործածության սխալ.**

- 1) Վերջապես ցանկությունս կատարվեց, և ինձ դաս հարցրին, բայց արդեն չէի հիշում բանաստեղծության վերջին քառյակը:
- 2) Նա քայլում էր ու մտածում, թե տարիների ընթացքում քանի՞ դավ է տեսել, քանի՞-քանի՞ վիրավորանքներ են խարամվել հոգում, քանիսից է հիասթափվել, քանիսից հեռացել:
- 3) Տիեզերական առաջին զբոսաշրջիկը ամերիկացի գործարար Դենիս Տիտոն է եղել, որը 2001-ին տիեզերք է բարձրացել երկու աստղանավորողների հետ:
- 4) Մանրամասն ծանոթանալով ներկաների տարբեր տեսակետներին՝ խորհուրդը չեղյալ համարեց նախորդ նիստի որոշումը:
- 5) Միմյանց դեմ հանդիման գետեղվել էին պարսից և հայոց գորաբանակները՝ պատրաստվելով վճռական գոտեմարտին

**158. Ո՞ր նախադասություններում կա բառագործածության սխալ.**

- 1) Մասքութների դեմ փառավոր հաղթանակ տանելով՝ հայոց Խոսրով արքան ձեռնամուխ եղավ երկրի բարենորոգչության աշխարհաշեն գործին:
- 2) Տեսնելով Մուշեղի առնչությամբ ռամիկի և ազնվականի սերը՝ իշխաններից ոմանք դավեր էին նյութում՝ փորձելով գժտեցնել արքային նրա հետ:
- 3) Պետական մտածողությունից գերծ շատ իշխանավորներ փորձում էին Վարազդատ արքայի մոտ քսությամբ սևացնել Մուշեղին, սակայն դեռ արդյունքի չէին հասել:
- 4) Վրա հասավ այն օրը, երբ Վարազդատը, ընկնելով չարակամների ազդեցության տակ, մասնակից դարձավ նրանց դավին և խնջույքի ժամանակ, տասներկու զինյալների թույլ տալով կալանել Մուշեղին, սպանեց նրան:
- 5) – Ա՞յս ստացա ի տրիտուր իմ ծառայությունների,- վրդովված բացականչեց գորավարը՝ տեսնելով իրեն շրջապատողների նենգությունը:

**159. Ո՞ր նախադասություններում կա բառագործածության սխալ.**

- 1) Հանձինս մանկատներին նվիրատվություններ կատարած բարերարների՝ այդ հաստատությունների ֆինանսական վիճակը բավականաչափ բարելավվել է:
- 2) Վերահասու վտանգից խուսափելով՝ մարդիկ լքում էին իրենց տները՝ փորձելով գնալ որքան հնարավոր է հեռու:
- 3) Ճապոնական գիտնականները տարիներ շարունակ գիտափորձեր են անցկացրել բույսերի վրա՝ պարզելու՝ դրանցից որոնք են առավել լավ կլանում փոշին:
- 4) – Ես ինձ համար կառուցել եմ մի այնպիսի դամբարան, որ իր վեհությամբ անգերազանցելի մնա բոլոր ժամանակներում,- ասում էր փարավոնը:
- 5) Աստղագետ Վ. Համբարձումյանը իրավացի մեր ժամանակների ամենակարկառուն գիտնականներից էր:

**160. Ո՞ր նախադասություններում կա բառագործածության սխալ.**

- 1) Ըստ ժողովրդական մի ավանդույթի՝ օրերից մի օր Գրիգոր Նարեկացին գնում է Մծբին՝ Հակոբ հայրապետի գերեզմանին այցելելու:
- 2) Նարեկացին, հասնելով Տիգրիսի ափը, անակնկալի է գալիս՝ տեսնելով մի հրաշք կամուրջ՝ կանգնած ամուր մուկերի վրա և եզերված գեղեցիկ կողափայտերով՝ անցորդներին պաշտպանելու համար Տիգրիսի ահեղ ալիքներից:
- 3) Բանաստեղծը հիացած չոքում է և հայացքն ուղղելով երկնքին՝ մրմնջում. «Ո՛վ սուրբդ ամենակարող, թողություն շնորհիր այս հրաշքը կառուցողի մեղքերին՝ արժանացնելով երկնային արքայության»:
- 4) Հայտնվում է հրեշտակը և ասում, թե կամուրջը կառուցողը վաղուց հանգրվանել է դժոխքում:
- 5) Նարեկացու աղոթքով մեռյալը կենդանանում է, խոստովանելով իր մեղքը՝ մեղանջում և արժանանում երկնային արքայության:

**161. Տրված նախադասություններից որոնցո՞ւմ կա բառագործածության սխալ.**

- 1) Ներկաների մի մասը ուրախ տրամադրություն ուներ:
- 2) Գործընկերներից մի քանիսը նոր էին վերադարձել արտերկրից:
- 3) Մեծ մասամբ ընկերներն են օգնում երկրաշարժից տուժված այդ ընտանիքին:
- 4) Երիտասարդներից մի քանիսը իրենց ձեռքերում պահել էին եռագույնը:
- 5) Հրապարակում գտնվողների մեծ մասը ցնծության մեջ էր:
- 6) Բարեկամներից ոմանք շնորհավորեցին հաղթողներին:
- 7) Մեծամասամբ տղաներ էին մասնակցում շախմատի օլիմպիադային:
- 8) Աշխատողների մեծ մասն ուներ բարձր որակավորում:

**162. Տրված նախադասություններից որոնցով կա բառագործածության սխալ.**

- 1) Այդ քայլը դրությունը շտկելու հնարավորություն ընձեռնեց:
- 2) Կառքերն սկսեցին դանդաղ մոտենալ մարդկանց:
- 3) Մարզիկները ծանրաձողին մոտենալուց առաջ խաչակնքվում էին:
- 4) – Շնորհակալություն Ձեզ, մեր սիրելի ուսուցիչներ:
- 5) – Բարև՝ ձեզ, սիրելի՛ հայրենակիցներ:
- 6) – Ողջուն՛ ձեզ, իշխաններ և իշխանուհիներ:
- 7) Բարին ընդ ձեզ, հարգելի՛ ժողովուրդ:

**163. Տրված նախադասություններից որոնցով կա բառագործածության սխալ.**

- 1) Նորապսակ գույգի ուշադրությունը շեղեց անձանոթ հյուրը:
- 2) Ընտանիքը ցնծության մեջ էր. գույգ էր ծնվել:
- 3) Վարդանի և Անահիտի հարսանյաց հանդեսին բոլորը շնորհավորեցին ամուսնացող գույգերին:
- 4) Ջուլգերով վայելելու էին իրենց հանգիստը:
- 5) Մենք սկզբունքային դեմ ենք այդ որոշմանը:
- 6) Բանավեճի ժամանակ քննարկվում էին սկզբունքորեն իրարից տարբեր հարցեր:
- 7) Սկզբունքային հարցերում Մարիամը ճիշտ է կողմնորոշվում:

**ԲԱԺԻՆ 2****ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ**

**1. Բառերից քանիսի՞ միևնույն արմատին կարող են միանալ *և՛ -ային, և՛ -ական* վերջածանցները /առանց երկրորդ ածանցի/.**

իրավունք, իսկություն, պատմիչ, անգլուխ, լեզվակ, դիվոտել, անգիր, ժողովուրդ, հնչյունաբանություն, լեռնաստան

**2. Բառերից քանիսի՞ միևնույն արմատին կարող են միանալ *և՛ -ային, և՛ -ոտ* վերջածանցները /առանց երկրորդ ածանցի/.**

Թռչնամիս, անվեհեր, արևավառ, գալարափող, ուղտափուշ, ջլապինդ, շահամոլ, աղմկարար, փոթորկահույզ, համուհոտ

**3. Բառերից քանիսի՞ միևնույն արմատին կարող են միանալ *և՛ -(ա)զին, և՛ -ոտ* վերջածանցները /առանց երկրորդ ածանցի/.**

լացակումած, էլեկտրասրտագրություն, մարդասեր, հիվանդասենյակ, հողացավ, մոլագար, թախծաշաղախ, խելամտություն, նենգորեն, փրկագին

**4. Բառերից քանիսի՞ միևնույն արմատին կարող են միանալ *և՛ -(ա)վոր, և՛ -ույի* վերջածանցները /առանց երկրորդ ածանցի/.**

ծալապակաս, բնագրային, նշանակություն, եղջերաթաղանթ, երկթև, անտնտեսվար, խելամտություն, միալար, խաչապաշտ, աշնանացան

**5. Բառերից քանիսի՞ միևնույն արմատին կարող են միանալ *և՛ -իչ, և՛ -վածք* վերջածանցները /առանց երկրորդ ածանցի/.**

արյունաքամ, գարնանացան, դյութանք, զտարյուն, ոսկեթել, սրբատաշ, քերթողահայր, բաժանարար, ավագախառն, շրջադարձ

**6. Բառերից քանիսի՞ միևնույն արմատին կարող են միանալ *և՛ -ք, և՛ -ույթ* վերջածանցները /առանց երկրորդ ածանցի/.**

մատենագրություն, անկառավարելի, բարձրադիր, շարական, հանրակրթություն, եզրահանգում, արդյունահանում, անելանելի, ճարտասանություն, փաթեթավորում

**7. Քանի՞ բառում կա *-ան* ածանցը.**

չմահավան, վիպասանություն, խցանահան, կիսակայարան, մականախաղ, վահանաձև, վիժանուտ, սահանկում, շրջանաձև, անվանական

**8. Բառերից քանիսի՞ արմատներից որևէ մեկին կմիանա և նոր բառ կկազմի *-ու՛մ* վերջածանցը (առանց 2-րդ ածանցի).**

հրահրիչ, սրտահույզ, երկնաձիգ, արյունլվա, թաղապետարան, երկրաշարժ, բազկաթոռ, դրդապատճառ, հարդարանք, մարդախույս

**9. Բառերից քանիսի՞ արմատներից որևէ մեկին կմիանա և նոր բառ կկազմի *-վածք* վերջածանցը (առանց 2-րդ ածանցի).**

կավաշեն, վերադառնալ, արևայրուք, միակտուր, մենախոսական, կիսափուլ, բառակազմիչ, բնագիր, խառնիխուռն, սրտաբացություն

**10. Բառերից քանիսի՞ արմատներից որևէ մեկին կմիանա և նոր բառ կկազմի *-ո՛ն* վերջածանցը (առանց 2-րդ ածանցի).**

ծեփամածիկ, շնչակտուր, որսագող, շերտավարագույր, գազատար, բուրումնալից, սալջարդ, ձյութածածկ, գեղագրական, շարակցական

**11. Նշի՛ր այն բառերի համարները, որոնցում *աճ*-ը նախածանց չէ.**

(1)անձնասեր, (2)անաճ, (3)անալի, (4)անարի, (5)անապատ, (6)անապակ, (7)անարգ, (8)անգղարծիվ, (9)անդորր

**12. Նշի՛ր այն բառերի համարները, որոնք բարդ են.**

(1)խոսքարվեստ, (2)խորհրդատու, (3)կատակերգու, (4)խոյընթաց, (5)համաճարակագետ, (6)հուզումնախառն, (7)տնտեսվար, (8)կրծքագարդ, (9)կրկնաբարդ

**13. Նշի՛ր այն բառերի համարները, որոնք բարդածանցավոր են.**

(1)արժանահավատ, (2)արտադրանք, (3)շարականագետ, (4)ոսկեզմբուխտ, (5)ջրմուղագիծ, (6)ակնածանք, (7)ջրբաժան, (8)ջրվեժ, (9)ջրտուր

**14. Նշի՛ր այն բառերը, որոնց արմատներից մեկին կարող է միանալ *նյութ* արմատը և բարդ բառ կազմել.**

(1)գրկանք, (2)անտառապահ, (3)ինքնաշեն, (4)ոսկեղ, (5)ջրանոթ, (6)չափաբաժին, (7)բարեպաշտ, (8)մոլուցք, (9)լեռնաբնակ

**15. Նշի՛ր այն բառերը, որոնց արմատներից մեկին կարող է միանալ *նիշ* արմատը և բարդ բառ կազմել.**

(1)տասնյակ, (2)ձողաձուկ, (3)շարժուձև, (4)միամտություն, (5)փորձանոթ, (6)բազմավաստակ, (7)մարդանման, (8)ուղեմուր, (9)այսչափ

**ԳԼՈՒԽ III**

**ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

**1. Տրված նախադասության մեջ ձևաբանական փոփոխության ենթարկված (ձևափոխված) քանի՞ բառ կա.**

Կար մի ուրիշ խենթ, որ ամեն օր ընտրում էր մի փողոց և դրա մի որոշ կետից մի ուրիշ կետ անընդհատ գնում էր ու գալիս բացարձակորեն հանգիստ, երբեմն կանգ էր առնում՝ քիչ անց շարունակելով երթևեկը:

**2. Տրված բառաշարքում հայր բառի քանի՞ բառաձև կա.**

հայրիկ, հայրաբար, նախահայր, հայրեր, հայրենի, հորից, հայրը, հայրական, հորը, անհայր, հայրերով, վանահայր

**3. Տրված բառաշարքում սրել բառի քանի՞ բառաձև կա.**

սրած, սրություն, սրեցի, սրեր, սրի, սրիչ, պիտի սրենք, մի՛ սրեք, սրել ենք, սրելիս, սրատես, չսրող

**4. Տրված բառաշարքում ուտել բառի քանի՞ բառաձև կա.**

ուտելիք, կերել են, չկերա, ուտում էին, ուտեստ, կուտեր, կեր՛, կերած, ուտես, չեմ ուտի, կերել է, կերակուր

**5. Տրված բառաշարքում լինել բառի քանի՞ բառաձև կա.**

չի լինում, լինի, կամ, եղավ, չլիներ, չեղած, լինելիս, կլինեք, չեք լինելու, կայիր, լինելու, մի՛ եղիր

**6. Տրված բառաշարքում ինքը բառի քանի՞ բառաձև կա.**

իրենք, ինքնիրեն, իրենով, նրա, նրան, իր, ինքնին, իրենց, ինքնուրույն, ինձնից, իրենցով, ինքնական

**7. Տրված բառաշարքում հոգի բառի քանի՞ բառաձև կա.**

հոգեկան, հոգոց, հոգու, հոգիներով, հոգյակ, հոգուց, հոգիներին, հոգաստար, հոգիները, հոգուն, հոգս, հոգիդ

**8. Տրված բառաշարքում տուն բառի քանի՞ բառաձև կա.**

տներ, տնետուն, տան, տունը, տներից, տնակ, տնային, տնով, տնական, տանը, տներում, անտուն

**9. Տրված պլուրալներում բառերը առանձնացված են՝ ըստ իրենց արտահայտած նյութական, քերականական կամ վերաբերմունքային իմաստների. բառերից քանի՞սն են սխալ տեղաբաշխված.**

Նյութական իմաստ արտահայտող	Քերականական իմաստ արտահայտող	Վերաբերմունքային իմաստ արտահայտող
մանգաղ	հանուն	ինչևէ
մասին	նկատմամբ	խշխշոց
մենություն	փոխանակում	ուր
անել	որպեսզի	երևի
ինչպիսի	վերստին	վահ
տասներորդ	որևէ	լոկ

**10. Անձնանիշ քանի՞ գոյական կա տրված բառաշարքում.**

արքայորդի, արշավախումբ, մարդախույս, գրագիր, դպիր, դեսպանորդ, օրասպահ, դերձան, հռետոր, երջանիկ, մրցավար, ուսանողություն

**11. Քանի՞ անձնանիշ գոյական կա տրված բառաշարքում.**

ծաղկող, տալ, կառավ, տիրամայր, կոթող, լրագրող, հյուսն, կորյուն, ուրու, պայտար, նավագ, նավախել

**12. Տրված կապակցություններից քանի՞սն են բաղադրյալ հատուկ անուն /կապակցությունները տրված են փոքրատառ/.**

ազգային գրադարան, ազգային խորհուրդ, ազգային հերոսի կոչում, ազգային եկամուտ, ազգային հերոս, ազգերի բրիտանական համագործակցություն, ազգային պալատ, ազգային օլիմպիական կոմիտե

**13. Տրված կապակցություններից քանի՞սն են բաղադրյալ հատուկ անուն /կապակցությունները տրված են փոքրատառ/.**

ֆիլիպինյան կղզիներ, բուլոնյան անտառ, ֆրանսուա ռաբլե, օղակաձև զբոսայգի, ֆրանսիական բարեկրթություն, աբիլլեսյան գարշապար, քաղկեդոնյան թերակղզի, քաղկեդոնի ժողով

**14. Տրված կապակցություններից քանի՞սն են բաղադրյալ հատուկ անուն /կապակցությունները տրված են փոքրատառ/.**

դրամատիկական թատրոն, փյունիկ համաստեղություն, հարյուրամյա պատերազմ, փոքր արարատ, սպարտայի թագավորություն, փոքր անտիլյան կղզիներ, սիզիփոսյան աշխատանք, ոչտունյաց օրիորդ

**15. Տրված կապակցություններից քանի՞սն են բաղադրյալ հատուկ անուն /կապակցությունները տրված են փոքրատառ/.**

եգիպտական հիերոգլիֆ, մազե կամուրջ, գլխավոր վարչություն, արծրունյաց տիկին, արտակարգ և լիազոր դեսպան, արյունոտ կիրակի, զինված ուժեր, մարդու իրավունքների եվրոպական դատարան

**16. Երկու շարքերում տրված բառերի խաչաձև համադրումով քանի՞ երկբաղադրիչ բաղադրյալ հատուկ անուն կարելի է կազմել՝ ըստ հարկի քերականական փոփոխություններ կատարելով/բաղադրիչը կարող է կրկնվել/.**

ա) գիրք, իջվածք, ջուր, ազգ, փամբակ, լեռ, բարձրավանդակ, հերոս, պրժևալսկի  
բ) լիգա, լեռնանցք, ձի, աղբյուր, վարագ, ազգային, մարիանյան, տիբեթական, սուրբ

**17. Երկու շարքերում տրված բառերի խաչաձև համադրումով քանի՞ երկբաղադրիչ բաղադրյալ հատուկ անուն կարելի է կազմել՝ ըստ հարկի քերականական փոփոխություններ կատարելով/բաղադրիչը կարող է կրկնվել/.**

ա) մրցանակ, կոմիտե, սյունիք, սերոբ, վանք, ժողով, առաքյալ, բալկանյան, օր, պիրենեյան  
բ) թովմաս, թերակղզի, երկիր, պետություն, լեռ, նոբելյան, աղբյուր, թաղե, ազգային, անկախություն

**18. Երկու շարքերում տրված բառերի խաչաձև համադրումով քանի՞ երկբաղադրիչ բաղադրյալ հատուկ անուն կարելի է կազմել՝ ըստ հարկի քերականական փոփոխություններ կատարելով/բաղադրիչը կարող է կրկնվել/.**

ա) կենտրոն, ազգ, փողոց, բլուր, ջուր, առյուծասիրտ, լեռ, մհեր, խոտհարք  
բ) սառը, ռիչարդ, կարմիր, օրաթերթ, դուռ, թեքեյան, գաջագործ, պառնաս, ալպյան

**19. Երկու շարքերում տրված բառերի խաչաձև համադրումով քանի՞ երկբաղադրիչ բաղադրյալ հատուկ անուն կարելի է կազմել՝ ըստ հարկի քերականական փոփոխություններ կատարելով/բաղադրիչը կարող է կրկնվել/.**

- ա) թագավորություն, բերդ, արևելք, իսլանդիա, դաշնություն, արևելյան, կայսրություն, երկիր,
- բ) եվրոպա, ռուսաստան, հանրապետություն, իսպանիա, կապույտ, արարատյան, մարգարիտ, ալպեր

**20. Երկու շարքերում տրված բառերի խաչաձև համադրումով քանի՞ երկբաղադրիչ բաղադրյալ հատուկ անուն կարելի է կազմել՝ ըստ հարկի քերականական փոփոխություններ կատարելով/բաղադրիչը կարող է կրկնվել/.**

- ա) թամանյան, տրդատ, ազգային, բարեհուտ, կղզի, թանգարան, դարդանել, դամբարան, պարնի
- բ) մեծ, հրվանդան, կոնգրես, բրիտանական, նեղուց, դիվիզիա, բարձրավանդակ, կանթեղ, ալեքսանդր

**21. Երկու շարքերում տրված բառերի խաչաձև համադրումով քանի՞ երկբաղադրիչ բաղադրյալ հատուկ անուն կարելի է կազմել՝ ըստ հարկի քերականական փոփոխություններ կատարելով/բաղադրիչը կարող է կրկնվել/.**

- ա) լուսավորիչ, վերք, հանրապետություն, բրանդենբուրգյան, լյուդովիկոս, բաղրամյան, լորդ, խուստուփ, ձմեռային, դար
- բ) դարպաս, հայաստան, դուռ, գրիգոր, կանթեղ, տասնվեցերորդ, գեներալ, պալատ, պողոտա, հովհաննես

**22. Երկու շարքերում տրված բառերի խաչաձև համադրումով քանի՞ երկբաղադրիչ բաղադրյալ հատուկ անուն կարելի է կազմել՝ ըստ հարկի քերականական փոփոխություններ կատարելով/բաղադրիչը կարող է կրկնվել/.**

- ա) հովիտ, գետ, լեռ, աշխարհ, կենտրոնական, այգի, զբոսայգի, ձոր, հրվանդան
- բ) ծիրինկատար, գողգոթա, ասեղ, կախովի, հաղթանակ, խնուս, ծոփաց, ասիացի, աֆրիկա

**23. Երկու շարքերում տրված բառերի խաչաձև համադրումով քանի՞ երկբաղադրիչ բաղադրյալ հատուկ անուն կարելի է կազմել՝ ըստ հարկի քերականական փոփոխություններ կատարելով/բաղադրիչը կարող է կրկնվել/.**

- ա) նիագարա, սողոմոն, գավառ, յարոսլավ, առյուծաձև, յոթնամյա, եկեղեցի, լիճ, ձի
- բ) իմաստուն, Ռիչարդ, չուդ, պատերազմ, դպրոց, յոթվերք, ջրվեժ, պարզ, ոստան

**24. Քանի՞ գոյական կա տրված հատվածում.**

Ես խոսում եմ իմ մասին ո՛չ եսասիրությունից. երբ պառկած կլինեմ այդ անդունդի հատակին, դուք կշարունակեք բարձր թռչել որպես մաքուր հրեշտակ: Առանց որևէ ակնարկի՝ կասեմ ուղղակի. դուք իմ անձը չեք սիրում և չեք կարող սիրել: Լսե՛ք իմ փորձառությանը և անպայման հավատացե՛ք: Չէ՞ որ իմ սիրտը վաղուց է սկսել բաբախել, և հենց դա է ինձ սովորեցրել՝ զգալ կանոնավոր բաբախյունը:

**25. Քանի՞ գոյական կա տրված հատվածում.**

Ես պետք է գիտենամ, թե որտեղ է ճշմարտությունը, որտեղ՝ մոլորությունը, և ես պետք է նախազգուշացնեմ նրան, ով դեռ չի կարողացել իմանալ այդ: Քանի դեռ սերը մեր մեջ դրսևորվում է թեթև, ժպտացող տեսիլքի կերպարանքով, քանի այն սլանում է յասամանի ճյուղի բույրի մեջ, ամոթխած հայացքի մեջ, ես նրան չեի վստահում:

**26. Քանի՞ գոյական կա տրված հատվածում:**

Նա սովորական հոգևորականներից ավելի ազդեցիկ էր խոսում, և գրուցակիցը ստիպված էր լինում առանց այլևայլության ենթարկվելու նրան: Նա ուներ հուսալի խելամտություն և գիտելիքներ, որոնցով օժտված են միայն իրոք հոգևոր անհատները: Խոստովանում եմ՝ ես շատ բան ունեի սովորելու այդ մարդուց:

**27. Տրվածներից քանի՞սն են հատուկ անուններ (բառերը տրված են փոքրատառ).**

երևանցի, արշակունիներ, հելլենիստական, ազգերի լիգա, խորհրդարան, նոբելյան կոմիտե, պետական բյուջե, «դանթեական առասպել», սահմանադրական դատարան, արդարադատության նախարարություն, հայկենք, մեծ եղեռն, ռուսական երկիր

**28. Տրված բառաշարքում գոյականի հոգնակի թվի կազմության քանի՞ սխալ ձև կա.**

ծնկներ, ձևաբայեր, բաղաձայներ, ջերմաչափեր, տղամարդիկ, ստեղնաշարներ, անասնակերներ, կաթնասուններ, ատամնաբույժեր, շարասյուններ, էներգակիրներ, մակբայեր

**29. Տրված բառերից քանիսի՞ հոգնակին է կազմվում -էր վերջավորությամբ.**

շնորհ, սպի, սերմնացան, մարտավա, կողոսկր, բուսակեր, հացատուն, գործարանատեր, ճոպանուղի, գանձարկղ, որթատունկ, փայտահատ

**30. Տրված գոյականներից քանիսը չունեն հոգնակի թիվ.**

ազգ, երկիր, եղեռն, հույզ, լող, գութ, մանուկ, քաղց, խիղճ, մարզ

**31. Ո՞ր շարքերի բոլոր գոյականները չունեն հոգնակի թիվ.**

- 1) սուգ, տապ, սով, մութ
- 2) բաղձանք, առածանի, գորք, միտք
- 3) խռովք, վախ, գես, ազգ
- 4) շաքարավազ, հեր, զեփյուռ, ցորեն
- 5) լող, մածուն, եղյամ, լվացք
- 6) բեմ, մամուլ, շախմատ, աման

**32. Տրված գոյականներից քանի՞սն ունեն հոլովական գուգաձևություն.**

տեր, ծնունդ, սեր, տալ, սկեսուր, թոնիր, պատիվ, սյուն, արյուն, սկեսրայր

**33. Տրված գոյականներից քանի՞սն ունեն հոլովական գուգաձևություն.**

աղջիկ, տիրուհի, ամիս, հանգիստ, սուգ, օր, ձմեռ, դուստր, ծունկ, երեկո

**34. Տրված գոյականներից քանի՞սն ունեն այլաձև հոլովում.**

բեռ, հույս, ցասում, գիշեր, գառ, ձմեռ, կայսր, կորուստ, սուգ, լույս, դուստր, ամառ

**35. Տրված գոյականներից քանի՞սն են հոգնակի կազմելիս հնչյունափոխվում.**

ռուս, նիշ, նուշ, դիրք, կիրճ, հիմք, սուրճ, գուրգ, ռումբ, քունք, զեռուն, քուրք

**36. Տվյալ տեքստում որոշյալ առումով գործածված քանի՞ բառ կա.**

Հայրս վերադարձին մի սնդուկ էր հանձնում մորս և այլևս ոչնչի չէր խառնվում: Բայց, սովորության համաձայն, բոլորն էլ, իրենց մանուկներին գրկած, գնում էին նրա ձեռքը համբուրելու: Հայրիկը օրհնում էր յուրաքանչյուրին և երեխաներին համբուրում:

**37.Տվյալ տեքստում որոշյալ առումով գործածված քանի՞ գոյական կա.**

Թթենին իմ հայրն է՝ ճյուղավորված և կանաչաձև: Քամին երգում է նրա տերևների մեջ: Ոչ թե հայրս է լսում այդ երգը, այլ ինքն է երգում իր տերևներով: Թթենու ստվերները գրկում են ինձ. հորս թևերն են փաթաթվում ինձ ու բարձրացնում վեր:

**38. Ներքին հոլովման ենթարկվող քանի՞ գոյական կա տրված քառաշարքում.**

մեծատուն, գինի, ուսում, ազգանուն, աղջիկ, նախահայր, մահ, տնակ, անկողին, քառանկյուն, վաղորդայն, Հարություն

**39. Ո՞ր շարքերի բոլոր բառերն են դերանուններ.**

- 1) նույնիսկ, նույնքան, նույնպես, նույնպիսի
- 2) նա, նաև, այլ, այլև
- 3) քանի, քանիեքորդ, քանի որ, մի քանի
- 4) որևիցե, ուր, այնչափ, ինքը
- 5) մյուս, որոշ, իրար, ոմն
- 6) ոչինչ, ոչ ոք, ոչ, ոչ մի

**40. Ո՞ր շարքերի բոլոր դերանուններն են միևնույն տեսակի.**

- 1) նույն, այդ, այդպիսի, միևնույն
- 2) ես, դու, ինքը, ով
- 3) բոլորը, յուրաքանչյուր ոք, ամենքը, ողջ
- 4) ինչ-որ, երբևէ, այլ, մեկը
- 5) այսպես, այդպիսի, որպիսի, նույնպիսի
- 6) որտեղ, ինչպես, երբ, ինչևէ

**41. Քանի՞ դերանուն կա տրված հատվածում.**

Նա հիսունին մոտ մարդ էր, որ մի քանի տարի առաջ երևաց մորաքրոջս տանը և հետաքրքրվում էր հարմար սենյակով: Չեղնահարկում վարձելով մի փոքրիկ սենյակ և կողքի նեղլիկ ննջախուցը՝ այդ մարդը վերադարձավ երկու ճամպրուկով ու գրքերի ծանր արկղով և ապրեց մեզ մոտ ինը կամ տասը ամիս: Ապրում էր շատ անաղմուկ, ինքն իր համար, և եթե չլիներ մեր ննջասենյակների հարևանությունը, որի հետևանքով պատահաբար հանդիպում էինք աստիճանների վրա կամ միջանցքում, առհասարակ անձանոթ կմնայինք միմյանց, քանի որ, ինչպես երևում էր, շփվող չէր:

**42. Քանի՞ դերանուն կա տրված հատվածում.**

– Դ-ա ճիշտ է,- ասաց Արագոտնը: –Դ-ու կարող ես դրա վրա ավելացնել, որ այստեղ լավ խնձորոլի էլ կա, բայց ես այն չեմ խմի այս անիծյալ մացառուտի մոտ: Միշտ իմ աչքի առաջ է այն պատկերը, երբ ընկերս թավալվող ընկավ այնտեղ: Ամբողջ կյանքումս կհիշեմ, թե ինչպես խեղճի հյուսքը ոստոստում էր դարպասի թակոցի մման: Իսկ նա՝ որպես զինվոր, չափազանց վառ երևակայություն ունի և պատրաստ է ուրիշ բաներ էլ հորինելու ու պատմելու:

**43. Քանի՞ ածական կա տրված հատվածում.**

Փոքրիկ հյուղակը, որը կտուրից վերև բարձրացող ժայռին էր հենվում և պաշտպանված էր հյուսիսային քամիներից, բանաստեղծական էր, որովհետև նրա կտուրին լեռնային ծաղիկները պսակ էին կազմել: Ծածկի ու տնակի միջև գտնվող ժայռում փորված կոպիտ սանդուղքը նրա բնակիչներին թույլ էր տալիս ապառաժի գագաթը բարձրանալ՝ թարմ օդ շնչելու: Հյուղակի ձախ կողմում ժայռը միանգամից ցածրանում էր, և այնտեղից երևում էին մի շարք արտեր, որոնցից առաջինը, անկասկած, պատկանում էր այս ազարակին:

**44. Քանի՞ ածական կա տրված հատվածում.**

Բարեկազմ մի աղջիկ էր նա՝ մոտ քսանհինգամյա, խարտյաշ մազերով, որի դեմքի գույնը՝ կաշվի թարմությամբ, այտերի առողջ կարմրությամբ, գատորոշում է այդ տարածքի կանանց: Նրա ծավի աչքերի հայացքը խելացիություն չէր արտացոլում, բայց արտահայտում էր նկարագրի որոշ ուժ՝ քնքշության հետ միախառնված: Ըստ նորմանդական սովորության՝ նրա մազերը հավաքված էին մի փոքր գդակի տակ և նրա դեմքին տալիս էին մի գրավիչ պարզություն՝ առանց սալոնների պայմանական ազնվականության, համեստ ու երիտասարդ աղջկա բնական բարեմասնություններով:

**45. Տրված ածականներից քանի՞սը չունեն համեմատության աստիճան.**

վատահ, խիստ, մունջ, բոկոտն, խելոք, առողջ, նվազ, խոհուն, դյուրին, մեղմ, տհաճ, տձև, գույգ, թավշե

**46. Տրված ածականներից քանի՞սը չունեն համեմատության աստիճան.**

արու, մերկ, անջատ, խրթին, վարդագույն, հավասար, ծալովի, ճաղատ, անհեթեթ, անեզր, լերկ, բուսակեր, պարզ, ընտիր

**47. Տրված թվականներից քանի՞սն ունեն նույն իմաստը.**

երկու երրորդ, մեկ երկրորդ, չորս հազար, երկուական, մեկուկես, զրո ամբողջ հինգ տասնորդական, մեկ քառորդ, կես, հինգ վեցերորդ, զրո ամբողջ հինգ վեցերորդական

**48. Տրված բայերից քանի՞սն են պարզ.**

գարթնել, բռնել, մտնել, հառնել, խթանել, մերձենալ, սասանել, հավանել, խառնել, գետնել, զբոսնել, վատնել, օգնել, հայտնել, հասնել, մատնել

**49. Տրված բայերից քանի՞սն են ածանցավոր.**

հոգնել, փշրտել, կառչել, մեռնել, հիշվել, բռնել, սլանալ, հիշեցնել, կանգնել, խառնել, օրհնել, մտնել, ընկնել, պոկոտել, շփոթեցնել

**50. Տրված բայերից քանի՞սը ածանցման միջոցով պատճառական չեն կազմի.**

կռվել, բերել, լարել, վախենալ, օրհնել, սովորել, օգտագործել, հաչել, փայլել, նկարել, սառչել, նվազել, վիատել, քամել, գործել

**51. Տրված բայերից քանի՞սը պատճառական չեն.**

սահեցնել, եզրակացնել, հասցնել, կանգնեցնել, յուրացնել, աճեցնել, դադարեցնել, հիշեցնել, քնեցնել, նստեցնել, հարցնել, լցնել, հագցնել, փախցնել

**52. Տրված բայերից քանի՞սը պատճառական չեն.**

վախեցնել, հատկացնել, սովորեցնել, մեռցնել, իջեցնել, հոգնեցնել, հեռացնել, սլացնել, պայթեցնել, թոցնել, փայլեցնել, խոսեցնել

**53. Ո՞ր նախադասությունների մեջ ածանցավոր բայ չկա.**

- 1) Բարակ առուն մարած գետակից մի շիթ առել ու հոսում էր թեք լանջերով:
- 2) Խլացնելով շրջապատի աղմուկը՝ ծավալվեց հարսանեկան գուռնայի զվարթ մեղեդին:
- 3) Հարսանիքը կառավարում էր թամադան՝ ասող-խոսող մի երիտասարդ:
- 4) Այդ դիպվածը խռովել էր բանաստեղծի ողջ ներաշխարհը:
- 5) Երիտասարդը մի պահ կորցրեց հավասարակշռությունը:
- 6) Իսկ աղջիկը չուզեց անտեսել նրա փաղաքշական վերաբերմունքը:

**54. Տրված տեքստում քանի՞սն են անկախ դերբայներ.**

Տեղ է հասել ու տեսել, որ կնոջ ներկայությունը տղաներին ոգևորել է, նրանց թմրած ջղերը կենդանացրել, և յուրաքանչյուրը կարծում է՝ նրա ուզածն ինքն է: Եկել են խանութ՝ առևտուր անելու, գիտեն՝ ինչ են առնելու և ինչքան: Խանութին մոտենալիս պառավներից մեկը, ճանաչելով մեզանից սերվածին, փորձել է խոսքի բռնվել, բայց հանդիպել է նրա խայթող հայացքին ու հետ կանգնել իր մտադրությունից:

**55. Տրված բառաշարքում քանի՞ անորոշ դերբայ կա.**

վարձակալ, փղձկալ, փոշոտել, մոտեցել, նյութել, բանտել, գդալ, ցանկալ, վախեցնել, սևացել, կիսել, ելել

**56. Քանի՞ անորոշ դերբայ կա տրված նախադասության մեջ.**

Մեզ համար դյուրին էր մի ակնթարթում քրդին տապալելն ու երեխային խլելը, բայց ստիպված էինք զսպել մեզ՝ չկամենալով խաթարել հայ բեկորների քրդերից հավաքելու գործը:

**57. Քանի՞ անորոշ դերբայ կա տրված նախադասության մեջ.**

Սակայն ինձ չհաջողվեց տեսնել նրա դեմքը. իմ կանգնելու տեղից առաջ գնալ չէի կարող, որովհետև լեփ-լեցուն եկեղեցուն ընդհանրապես անհնար էր շարժվել, և ես առանց մի վայրկյան ձանձրանալու սպասեցի մինչև պատարագի վերջը:

**58. Քանի՞ անորոշ դերբայ կա տրված նախադասության մեջ.**

Ես մի ակնթարթ նայեցի նամակին և ոչինչ չասացի՝ խնդրելով ինձ տալ նամակը՝ լավ ուսումնասիրելու, և տուն բերելով՝ մանրագնին կարդացի այն:

**59. Քանի՞ անորոշ դերբայ կա տրված նախադասության մեջ.**

Ի վերջո սկսեցի կասկածել մի աշակերտի և ձեռագիրը համեմատելու համար արտագրելու պատրվակով մի տետր խնդրեցի և համեմատելով համոզվեցի, որ նամակի հեղինակը նա է:

**60. Քանի՞ անորոշ դերբայ կա տրված նախադասության մեջ.**

Գետի եզերքին տարածվեց հայկական գորաբանակը, որ նույնպես սկսում է տեղաշարժվել, մեջընդմեջ դասավորվել՝ իրար կողքի շարվելով և երկու բանակների միջև գոյացնելով մի լայն անջրպետ:

**61. Քանի՞ անորոշ դերբայ կա տրված նախադասության մեջ.**

Անընդհատ հոխորտում էր, ամպագոռգոռ խոսքերով փորձում էր բոլորին ապշեցնել՝ նույնիսկ մի ակնթարթ չմտածելով, որ երկու անպաշտպան կանայք կարող են հակառակ գնալ իր կամքին և դուրս գալ իր իշխանության տակից՝ նպաստելով նրա ինքնառչնչացմանը: 5

**62. Քանի՞ վաղակատար ձևբայ կա տրված նախադասության մեջ.**

Շատ են ճամփորդել փրփրաղեգ ծովերով, շատ մրրիկներ ու փոթորիներ տեսել, բայց ծովերը երբեք ինձ այնքան երկյուղ չեն ներշնչել, որքան օվկիանոսը, որից միշտ երկնչել եմ ու դարձրել նրան իմ սարսափը:

**63. Քանի՞ վաղակատար ձևաբայ կա նախադասության մեջ.**

Ամբողջ մի դար՝ հարյուր տարի էր ապրել Մարգարիտ տատը, և որդիներն ու դուստրերը վաղուց արդեն իրենք էին ավագարդ պապիկներ ու տատիկներ դարձել, բայց նա դեռ ապրել էր ուզում և արարել:

**64. Քանի՞ վաղակատար ձևաբայ կա տրված նախադասության մեջ.**

Այդ մեխը չէր կարող միայն իր ծանրությունից պոկվել. ո՞վ է ձգել, պոկել պարանը, ապա ջուր լցրել վրան՝ ուշքի բերելով անէացած վիճակից:

**65. Քանի՞ վաղակատար ձևաբայ կա տրված նախադասության մեջ.**

Նա ուներ այնպիսի մարդու դեմք, որը տառապել է, գվարճացել, ապաշխարել, այսինքն՝ կյանքում տեսել է ամեն ինչ և շարունակել սիրել մարդուն:

**66. Քանի՞ վաղակատար ձևաբայ կա տրված նախադասության մեջ.**

Նա առաջարկություն է ր արել նրան և պնդել, որ նրա մասին ասվածները բանասարկությունների անհեթեթ բամբասանքներ են, և խնամքով թաքցնել էր փորձում էմմայի նողկալի արարքը:

**67. Քանի՞ վաղակատար ձևաբայ կա տրված նախադասության մեջ.**

Եղել էր չափազանց աղքատ, բայց կարողացել էր ինչ-ինչ միջոցներով պահել ինքն իրեն, հայթայթել հանապազօրյա հացը, քանի որ միայն իրեն հայտնի բազմաթիվ աղբյուրներ գիտեր, որոնցով կարողանում էր վաստակել փոքրիկ գումարներ:

**68. Քանի՞ ապակատար ձևաբայ կա տրված նախադասության մեջ.**

Ես երկար էի մնալու այնտեղ և ի սրտե գոհ էի, որ առիթ ունեի թե՛ հանգստանալու այդ հիանալի առողջարանում, թե՛ վայելելու մեծ գիտնականի մտերմությունն ու հարևանությունը և մոտիկից ճանաչելու նրան:

**69. Քանի՞ ապակատար ձևաբայ կա տրված նախադասության մեջ.**

Ինքնըստինքյան հասկանալի է, որ նրանք ծնվելու են և մեռնելու՝ առանց հասկանալու ապրելու խորհուրդը:

**70. Քանի՞ ապակատար ձևաբայ կա տրված նախադասության մեջ.**

Բայց երբեմն տեսնում եմ ամբարտավան մեկին, որը այնպես կտրիճավարի է անցնում, ասես ուր որ է շուռ է տալու համաշխարհային պատմության անիվը, այն հասնելու է վատ ճամփից ու ավելի վատ ճամփի վրա դնելու՝ դույզն-ինչ չանհանգստանալով, թե ինչ են խոսելու ու պատմելու մարդիկ իր մասին:

**71. Քանի՞ ապակատար ձևաբայ կա տրված նախադասության մեջ.**

Զգացվեց, որ ծավալվելու է որևէ վեհ մի նվագ, որի ախորժալուր հնչյունները ընդարձակվելու են և մի շնչով հոսելու ու կերտելու են մի վեհատիպ կառույց:

**72. Քանի՞ ապակատար ձևաբայ կա տրված նախադասության մեջ.**

Թվում էր՝ ուղևորը չի հասկանալու իր լեզուն և չի պատասխանելու իր հարցերին, բայց նահանջելու միտք չունեի, և ուղևորին հետապնդելու և հարցաքննելու մոլուցքը հանգիստ չէր տալիս նրան:

**73. Քանի՞ ապակատար ձևաբայ կա տրված նախադասության մեջ.**

Բայց նրա՝ տարիներ շարունակ վարժված աչքերը շուտով ձեռք էին բերելու առարկաները ականակիր մթնում բորենու պես տեսնելու տարօրինակ ընդունակություն, որը նրան օգնելու էր՝ շրջապատը զգալու և լավ տեսնելու:

**74. Նշի՞ր այն նախադասությունների համարները, որոնցում ապակատար ձևաբայ կա.**

- 1) Այդպիսի դեպքերում նա կարծես ապշում էր, թե ինչ կար ծիծաղելու, հետո ինքն էլ էր սկսում սրտաբուխ ծիծաղել:
- 2) Այդ օրն ընդամենը երեք աշխատող էին, որոնցից մեկը գործիք բերելու էր գնացել, իսկ մյուսը փայտ էր կտարատում:
- 3) Ես այդպես էլ գլխի չընկա, որ նա էր ինձ հետ գալու, և արագ առաջ անցա:
- 4) Հենց որ տաղտուկ եմ զգում, մեջս ցանկություն է առաջանում մարդկանց տեսնելու, անմիջապես նստում եմ ուղղաթիռ ու թռչում:
- 5) Նա շուտով Եվրոպա էր վերադառնալու, և ոչ ոք հույս չունեի նրան այլևս տեսնելու:
- 6) Նա աղջկան թարմ կերակուրներ բերելու է ուղարկում, և քիչ անց արդեն տանը մի թունդ գինարբուք է սկսվում:

**75. Նշի՞ր այն նախադասությունների համարները, որոնցում կան անկախ դերբայներ.**

- 1) Եվ միայն լուսադեմին, երբ կաթնալույսով ողողված էին երկինք ու դրախտ, Ադամը կարողացավ վերագտնել ճանապարհը:
- 2) Շարունակելով մեր՝ անակնկալներով հարուստ ճանապարհը՝ հետզհետե հանդիպում էինք նորանոր սքանչելիքների:
- 3) Եվ գուցե պատմեր նաև մխիթարական դեպքեր, որոնք մեզ չէին ստիպի հուզվել:
- 4) Պիզայում հիացմունք պարզևող տեսարժան վայրեր շատ կան:
- 5) Տաճարը կառուցելիս Պիզան վերելք էր ապրում, և կառուցման համար ակնհայտորեն ոչինչ չեն խնայել:
- 6) Թվում էր՝ նա այլևս չի տեսնի իր նախնիների երկիրը:

**76. Նշի՞ր այն նախադասությունների համարները, որոնցում կան անկախ դերբայներ.**

- 1) Իտալիայի կառավարությունը հապշտապ դիմեց աշխարհի բոլոր մասնագետներին՝ մասնակցելու աշտարակի փրկության գործին:
- 2) Թեքությունն այնքան զգալի է, որ մարդ ինքնապաշտպանական բնագրով հետ է քաշվում:
- 3) Առաջին հայցքից կարծես թե հանցանքը մատնող որևէ նշան չկար:
- 4) Նա մանրագնին ուսումնասիրել է այդ ջրառատ գետը և հայտնաբերել է մի հոյակապ ջրվեժ, որը կոչվեց Վիկտորիա՝ ի պատիվ Անգլիայի թագուհու:
- 5) Սևադան սրդողած պատմեց, որ հաղթանակից հետո թագավորն իջել էր Սևորդյաց ձորը:
- 6) Լեռնալանջերի ճերմակաթույր ձյունը հալվել էր, սարերն առաջվա նման ամպրոպներից արձագանք չէին տալիս:

**77. Տրված տեքստում է խոնարհման ենթարկվող քանի՞ բայ կա.**

Աշուն է, թեթև քամի, այգին տերևաթափ է ապրում, ծխում են խաշամի կույտերը, շարժվում են սիմինդրի տերևները: Ծերունին վեր է կենում, հուշիկ քայլում այգով, ծածկում այգու դուռը, գնում փողոցն ի վար, և նրա կողքով ընթացող կյանքը կարծես չտեսնելու է տալիս նրան, նա կարծես չկա այդ կյանքի համար:

**78. Ո՞ր նախադասություններում ժխտական խոնարհման բայաձև կա.**

- 1) Ուզում է որևէ տգեղ բան անել, բայց չի կարողանում:
- 2) Պարո՛ն, գուր մի՛ չարչարեք ձեզ էլ, մեզ էլ:
- 3) – Ի՞նչ հարցնեմ, տիկի՛ն,- չքմեղացավ Արտակը:
- 4) Բայց նրան այդ ամենի մասին չպիտի որևէ բան ասես:
- 5) Ծերունին ո՛չ լսեց նրա ասածը, ո՛չ էլ որևէ ձևով արձագանքեց:
- 6) Դու կարող ես ինձ չլսել, բայց չանսալ քո ներքին ձայնին անկարող ես:

**79. Ո՞ր շարքերում ապառնի ժամանակով դրված բայաձև չկա.**

- 1) կարել են, կատեն, չեն երևում, ասել էր
- 2) կան, պիտի գրավեր, խմեի, տալիս է
- 3) երգելու էր, կարդաց, կտա, չպիտի լսեր
- 4) թռչեի, ունեմ, չեմ հավատում, չգնաց
- 5) չբերեր, դարձան, չգա, պետք է հավատալ
- 6) գալիս են, պետք է հավատար, մի՛ երկնչիր, պարզել են

**80. Ո՞ր նախադասություններում անկանոն բայ կա.**

- 1) – Ի՞նչ ես ասում, բան չեմ հասկանում,- բարկացավ տղան:
- 2) Եվս մի վայրկյան, և նա իրեն տվեց մի գեղեցիկ հուշի:
- 3) Աղջկա խոսքը, բարեբախտաբար, հետևանքներ չունեցավ:
- 4) – Կանգնած սպասում է, շու՛տ արա, իրեն հասի՛ր,- գոռաց հայրը:
- 5) Միմոնն ու երեխան ձորն անցել էին, գնում էին գյուղամիջի շեկ ճանապարհով:
- 6) Երբ ելավ գյուղամիջի ճանապարհ, ուր երեխաները ֆուտբոլ էին խաղում, նա իրեն ազատ զգաց:

**81. Տրված բայերից քանի՞սն են անկանոն հրամայական եղանակում.**

հասնել, թողնել, հասկանալ, տեսնել, ուտել, լողալ, զգալ, բերել, ասել, ելնել, բարձրանալ, բարձրացնել, գալ, հիշել, համաձայնել

**82. Նշի՛ր այն նախադասությունները, որոնցում անկանոն բայերը խոնարհման կանոնավոր ձևերից շեղվել են.**

- 1) Չեզանից հետո եկավ գիտություն՝ Յուր ծանր հայացքով աշխարհի վերա...
- 2) Ու մարդասպանը դուրս եկավ ձորից, Դեմքը այլայլված, քայլվածքը մոլոր:
- 3) Լինեի չորբան սարերում հեռու, Գայի ր, անցնեի ր վրանիս մոտով:
- 4) Գնում են ես մի մութ աշխարհ, հեռու երկիր, էլ չեմ գալու, Բարի՛ հիշեք ինձ ձեր սրտում, մնա՛ք բարով, մնա՛ք բարով:
- 5) Չյունն էլ արևի ջահել համբույրից Ուրախ լալիս է դաշտերի վրա:
- 6) Գնամ հետևից ծիծեռնակների, Նրանց հետ ետ գամ, գարունը բերեմ:

**83. Նշիր այն նախադասությունները, որոնցում անկանոն բայերը խոնարհման կանոնավոր ձևերից շեղվել են.**

- 1) Ծիածանների լարերը վրան՝  
Ինձ քնար տվեց երկինքը մի օր:
- 2) Գարուն էր: Չեկած ամառ՝  
Փուլ եկավ երկնակամար:
- 3) Հայաստա՛ն, անո՛ւնդ տալիս  
Ժայռի մեջ մի տուն եմ հիշում:
- 4) Օրոր էր ասում աշունն անտառին,  
Բայց դեռ անտառի քունը չէր տանում:
- 5) Ծանր նստել է և ամեն մեկին  
Իրեն արժանի պատիվն է տալիս:
- 6) Արթնացող ամպի հառաչն առաջին  
Գալիս մտնում է ականջը նրա:

**84. Նշիր այն նախադասությունները, որոնցում անկանոն բայերը խոնարհման կանոնավոր ձևերից շեղվել են.**

- 1) Առաջին շողքը խուտուտ է տալիս,  
Շոշափում նրա շրթունքները փակ:
- 2) Ժամանակն այսպես գալիս է, գնում,  
Եվ տարու վրա ծավլում է տարին...
- 3) Ու խեղճ քարափը մենակ չի մնում՝  
Խորհի, թե ինչ է տալու աշխարհին:
- 4) Երկինք չի տեսել թուփն այդ հիրավի,  
Երկինքն էլ երբեք չի տեսել նրան:
- 5) Թեղին անտարբեր ականջ էր դնում  
Տապալված կաղնու խուլ հառաչանքին:
- 6) Ու քայլեցի խայտալով ու շաղ տալով մայթերին  
Մանուշակներ ու վարդեր ու շուշաններ ձյունաթույր:

**85. Ո՞ր նախադասությունների մեջ դերբայական սխալ ձևերի գործածություն կա.**

- 1) Չնայած խեղդող շոգին՝ օրիորդն առանց հովանոցի էր, հերարձակ ու քայլելուց էլ մի տեսակ ծիծաղելիորեն թափահարում էր ձեռքերը:
- 2) Առօրյա դժվարություններից խոսելիս լսելի էր, թե ինչպես են ալիքները խփվում իրենց խոչընդոտող քարերին:
- 3) Երիտասարդը լիովին գրավվեց այդ յուրօրինակ տեսարանով և սկսեց ապշած նայել աղջկան, որը գալիս էր ճիշտ իր կողմը:
- 4) Նա բացեց պատուհանի փեղկը, և ներս խուժեց սարսռեցնող սյուրը՝ բերելով խոնավ հողի բույրը:
- 5) Ապրելուց քաղցր է մեռնել քեզ համար,  
Զգալ, որ դու կաս, և լինել հեռու:
- 6) Փոքրիկին վախացնող շունը անակնկալ դուրս թռավ բնից ու սկսեց հաչել:

**86. Ո՞ր նախադասությունների մեջ դերբայական սխալ ձևերի գործածություն կա.**

- 1) Նշանավոր ճանապարհորդ Մարկո Պոլոն Չինաստան գնալուց և վերադառնալուց երկու անգամ անցել է Հայաստանով:
- 2) Չկնկիթ դնելուց ձկները դարձյալ հեռանում են իրենց բնակվելու մշտական անդորրավետ վայրերը՝ վերադառնալով միայն հաջորդ տարի:
- 3) Կինը թերսնվելուց լրիվ թուլացել էր:
- 4) Խմիչքը չարաշահելուց կորցրեց ամբողջ ունեցվածքը:
- 5) Որդու մասին խոսելուց աչքերը լցվում էին արցունքով:
- 6) Իր անեցրած բարիքներից հաճախ քաղում և տալիս էր հարևաններին:

**87. Ո՞ր նախադասությունների մեջ սխալ բայաձև կա.**

- 1) Իզուր մի՛ մտահոգվիր, քեզ թողող չկա, որ կեսգիշերին տուն գնաս:
- 2) Գլխի ահավոր ցավը փոքր-ինչ թուլացել էր և հիմա միայն ժամանակ առ ժամանակ էր հիշացնում իր գոյությունը:
- 3) Չվարճալին այն է, որ հաճախ բախտը չարիքից փախչող մահկանացուին հենց նրա փախուստի ճանապարհին է բերում, հանդիպացնում այն նույն չարիքին, որից նա խուսափում էր:
- 4) Հենց նորություն ունենամ, կկապնվեմ քեզ հետ և կհայտնեմ մանրամասները:
- 5) Շուտով հայերը տնկեցին թթենի, նռնենի, նշենի, աճեցրին սրգեր ու բանջարեղեն և ցանեցին տեսակ-տեսակ կանաչիներ:
- 6) Այսպիսի սրտմաշուկ խոհերով համակված՝ մի ժամանակ ես էլ խորհում էի տնից փախնելու, ազգանունս փոխելու մասին:

**88. Սահմանական եղանակի քանի՞ օրինակ բայաձև կա տրված հատվածում.**

Կան նաև լուրջ փողոցներ՝ քարակոփ տներով, բարեկարգ, առանց ջրափոսերի, սալահատակված մայրերով: Այդ փողոցներով սուրալով անցնում են շքեղ ու փայլուն մեքենաներ, և ծառերը անգամ այնտեղ միահավասար են, միանման ու հպարտ և ամեն մի պատահական քամուց չեն շարժվի, մինչև չշարժվի առաջինը, և ստափը սաղարթից սաղարթ չանցնի:

**89. Սահմանական եղանակի քանի՞ օրինակ բայաձև կա տրված հատվածում.**

Մենք ականա շրջեցինք քաղաքում, եղանք ասիական թաղամասերին բնորոշ լաբիրինթոսում, եղանք նաև բարեկարգ փողոցներում, ուր գրանիտե հունի միջով ջրերը հոսում են առանց շառաչունի՝ չհանդիպելով ոչ մի խոչընդոտող քարի, բայց այդ փողոցներից ոչ մեկը չունի այն դերը, ինչ Աստաֆյանը:

**90. Սահմանական եղանակի քանի՞ օրինակ բաղադրյալ ժամանակաձև է գործածված տրված տեքստում.**

Ծերունին երկար գամվել էր ջրելքի անցքին. ջուրը ճողփալով դուրս էր հորդում: Հետո նա քրթմնջաց, և այն, ինչ նա ասում էր, շատ ավելի մենախոսություն էր. «Գու, որ քո կյանքի համար մկան ծակին տասը շահի ես տալիս, ուրիշ կյանքերի հետ ո՞նց ես միլիոնատերի խաղեր խաղում»: Եվ նա չգիտի, թե այս մարդը, որ տասը հազար տարի աղ է կերել, ինչու էլի նույն անալի վայրենին է:

**91. Նշիր, թե որ տարբերակներում ըղձական եղանակի բայաձև չկա.**

- 1) Կախարդական մի շղթա կա երկնքում՝  
Աներևույթ, որպես ցավը խոր հոգու...
- 2) Թող դուրս ընկած իմ աչքերի մեջ կախվածի  
Նոքա տեսնեն պայծառ օրերդ ապագա:
- 3) Բայց ես երգեցի աչքերդ միայն,  
Մեկ էլ աչքերիդ երկինքները խոր...
- 4) Եթե ուզեն, արևներին նոր տեմպ կըտան ու նոր ուղի...
- 5) Ելնեմ, ծաղկումն է ձմեռադիկների,  
Չյունից ինձ նայող աչերն համբուրեմ:
- 6) Անտառում ամպի ծվեճներ կային,  
Կապույտ մշուշներ կային անտառում:

**92. Նշիր, թե որ տարբերակներում ըղձական եղանակի բայաձև չկա.**

- 1) Շանթն է բեկվում ճակտիս վրա,  
Մահ չգիտեմ՝ կա՞, թե՞ չկա:
- 2) Գիտեմ, որ մի օր կմեռնեմ ես էլ...
- 3) Ինչքան էլ սուր սիրտս խոցեն արյունաքամ վերքերը մեր,  
Էլի՛ ես որք ու արնավառ իմ Հայաստան-յա՛րն եմ սիրում:
- 4) Չէ՞ որ նա գիտեր, թե ում է ծնել...
- 5) Երկրի մեջ մարդ չմնաց՝  
Մարդ թաղեր մարդու նման...
- 6) Տուն կանչե մորս ձայնը իրիկվան՝  
Չպոկեմ սարից աչքս կարոտած:

**93. Նշիր, թե որ տարբերակներում ենթադրական եղանակի բայաձև կա.**

- 1) Եթե ուզեն, կամքով արի ու աշխարհի հրով վառված՝  
Ինչե՛ր միայն չեն կատարի ամբոխները խելագարված...
- 2) Մի տեսակ տազնասպ կա, որ  
Չես ասի ոչ մի բառով:
- 3) Երկինք չի տեսել թուփն այդ հիրավի,  
Երկինքն էլ երբեք չի տեսել նրան:
- 4) Հանկարծ կըզարթնի ջերմ լալու փափագ,  
Միրտըս չի գտնի ոչ մի արտասուք:
- 5) Ու նոքա, որ սիրեցին-սիրտըս նրանց չըտվի.  
Գնացին ու չըղարձան, ու ինձ ոչինչ չըմնաց:
- 6) Չի հասկանա ձեր հոգին և՛ ծույլ, և՛ օտար,  
Տաճար է մեր երկիրը, սուրբ է ամեն քար:

**94. Նշիր, թե որ տարբերակներում ենթադրական եղանակի բայաձև կա.**

- 1) Չի դավաճանում ոչ մի ժամանակ  
Հյուրընկալության հինավուրց ոճին:
- 2) Ինչ ունի-չունի, բաժանում է նա  
Եվ չի պահանջում ոչ ոքից ոչինչ:
- 3) Եվ տարու վրա ծավում է տարին,  
Ու խեղճ քարափը մենակ չի մնում՝  
Խորհի, թե ինչ է տալու աշխարհին:
- 4) Չենք հանդիպի մենք արդեն, Նվարդ,  
Թեև բացվում են նորից վարդեր:
- 5) Ես արդեն երբեք չեմ մոռանալու  
Աչքերդդ անգոր և անօգնական...
- 6) Եգիպտական բուրգերը փոշի կըդառնան,  
Արևի պես, երկի՛ր իմ, կըվառվես վառման:

**95. Նշիր այն նախադասությունների համարները, որոնցում հարկադրական եղանակի բայեր կան.**

- 1) – Ինչի՞ս են պետք ոսկին, արծաթ  
Եվ կամ աստղը երկրնքի...
- 2) Եվ դենքով տխուր ու լուռ աչքերով  
Պիտի միևնույն սուգը հաղորդեն...
- 3) Տարիներ հետո նա պիտի դառնա  
Մի ժողովրդի ազնիվ կենսագիր...
- 4) Մի՞թե ես պիտի երգեմ քեզ օրոր  
Եվ արքայական դնեմ գերեզման...
- 5) Ու գոջում եմ ես մի պահ. սեր ու բարիք եմ ցրել,  
Մինչդեռ պետք էր սեր հայցել, իսկ բարիքը՝ վաճառել:
- 6) Դու փոքր ես դեռ, դեռ չգիտես, թե ոնց պիտի կյանքին նայել:

**96. Նշի՛ր այն նախադասությունների համարները, որոնցում հարկադրական եղանակի բայեր կան.**

- 1) Այսպես «պիտի»-ն պիտի  
Նստի գահի վրա,  
Իսկ մենք մնանք ոտքի,  
Երկրպագենք նրան...
- 2) Եվ օդը սենյակիս  
Պիտի շարունակի մենակություն բառից անվերջ դողալ...
- 3) Թվում է, թե հիմա է՛լ չպիտի լինի ո՛չ մի ստվեր...
- 4) Ու երբ պետք է ձեզ,  
Սրտաճաք ճիչով  
Արթնացնում են ձեզ,  
Որ քնով չընկնեք:
- 5) Չպետք է, որ մարդ հեկեկա անքուն  
Աշխարհում մի օր ապրելու համար:
- 6) Չգիտեմ՝ ինչ պիտի փոխվեր,  
Սակայն ես նույնը մնացի...

**97. Նշի՛ր այն նախադասությունների համարները, որոնցում հրամայական եղանակի բայաձևեր կան /առողջանության նշանները դրված չեն/.**

- 1) Իմ գերեզմանին դուք չընտենաք,  
Հարկավոր չէ ինձ ոչ ծաղիկ, ոչ սուգ:
- 2) Հուսաբեկ մութ ու մեզ թող լինի,  
Իմ վերև թող արև չլիսնդա:
- 3) Բաբելոնն է եղել մեր ախտյանը՝ տես-  
Անհետ կորել, անցել է չար մշուշի պես:
- 4) Լինեի չոբան սարերում հեռու,  
Գայիր անցնեիր վրահնիս մոտով:
- 5) Բոլորը տամ ու նվիրեմ, ինձ ոչ մի հուր թող չմնա,  
Դու չմրսես ձմռան ցրտում,- բոլորը քեզ...
- 6) Մի վախեցեք  
Կեղծի մասին ճիշտ գրելուց.  
Նա դրանից կքչանա:

**98. Նշի՛ր այն նախադասությունների համարները, որոնցում հրամայական եղանակի բայաձևեր կան /առողջանության նշանները դրված չեն/.**

- 1) Թող շուրջըս փռվի անանց լռություն,  
Թող ինձ չհիշեն, թող ինձ մոռանան:
- 2) Դու կգաս ու կրկին հեքիաթով կըղյուծես,  
Լուսերես կըցրես մառախտողն իմ հոգու:
- 3) - Արիացիր, սիրտ իմ, ել հավատով տոկուն:
- 4) Որպես փյունիկ կրակից կելնես, կելնես նոր  
Գեղեցկությամբ ու փառքով վառ ու լուսավոր:
- 5) Տխուր երեկոն զարկել է վրան.  
- Միրտս կարոտով կանչում է քեզ՝ եկ:
- 6) Լսում ես, Մարիամ,  
Ինձ ներս ու դրսից կապույտ հագցրրու...

**99. Տրվածներից քանի՞սն են պարզ դիմավոր ձևեր.**

չէր ապաքնիվել, պետք է մտածելիք, եփեցինք-թափեցինք, կարժանանա , մի՛ վարանիր, կանգ էր առել, դուրս եկավ, չպիտի լսես, թույլ մի՛ տուր, սիրտ արավ

**100. Տրվածներից քանի՞սն են պարզ դիմավոր ձևեր.**

չտեսա, հարկ համարեցի, ելք գտավ, չի զնգալու, պետք է հավատ տածես, կանգ մի՛ առ, պիտի գլուխ բերես, կերավ-խմեց, տարան- բերեցին

**101. Տրվածներից քանի՞սն են բաղադրյալ ժամանակաձևեր.**

չի տեղավորվում, պետք է արժանացնել, երգչուհի էր, ուրախ եմ, մարդ դարձավ, քաղաք կոչվեց, լաց է լինում, խորհուրդ է տալիս, պետք է մաքրել

**102. Տրվածներից քանի՞սն են բաղադրյալ ժամանակաձևեր.**

ցավ զգաց, երգչուհի պիտի դառնամ, մի՛ վիստվիր, չի հավատա, չպետք է ներես, երես մի՛ տուր, պետք է գնամ, տարավ-բերեց, ցավ կապրեմ, հարց չեմ տա

**103. Նշի՛ր այն նախադասությունները, որոնցում կա պարզ դիմավոր ձև.**

- 1) Անդրանիկի ձեռքն էլ գրպանից դատարկ ելավ:
- 2) Մայրը տեսնում է, որ որդին արթուն է, և անմեկին մի տազնապով գիրկն առնում երեխային:
- 3) Դուրս եկավ մի խաղաղ հայարտությամբ, վեհ ու չքնաղ քայլվածքով՝ իբրև բնության ողջ գեղեցկության սիգապանձ տերն ու տնօրենը:
- 4) Լուսնի շողը ներս ընկավ լուսամտի բաց փեղկից՝ լուսավորելով մահճակալին պառկած եպիսկոպոսի դեմքը:
- 5) Աղջիկն էլ էր այդ ամենը տեսել ու լռել:
- 6) Նա պետք է դիմեր այդ քայլին՝ բոլորին ապացուցելու համար իր անմեղությունը:

**104. Նշի՛ր այն նախադասությունները, որոնցում կա բաղադրյալ ժամանակաձև.**

- 1) Անդրանիկը քրդին ներս կանչել տվեց:
- 2) Մեզ համար դյուրին էր մի ակնթարթում քրդին տապալելն ու երեխային խլելը:
- 3) Երբևէ այդպիսի գրգռված հոգեվիճակում չէի եղել:
- 4) Միշտ էլ մեկը խելքից թեթև է, մյուսը՝ խարդախ, երրորդը՝ ամբարիշտ:
- 5) Մի քանի ակնթարթ ներսը զննելուց հետո ճամփորդը մոտեցավ դռանը և կանգ առավ:
- 6) Արտիստը շնչասպառ ավարտեց շեքայիրյան բառերով շաղախված մենախոսությունը, անշնչացավ, ու թվաց՝ ուր որ է ընկնելու է:

**105. Նշի՛ր այն նախադասությունները, որոնցում կա բաղադրյալ ժամանակաձև.**

- 1) Նա մի անգամ հետ չնայեց ու չտեսավ, թե ինչպես է պանդոկապանը աշխույժ խոսում ու մատով ցույց տալիս իր կողմը:
- 2) Նա ինձ դուր է գալիս, ու ես կփորձեմ հաճոյանալ նրան:
- 3) Յուրաքանչյուր գրող դժբախտ կզգա իրեն՝ տեսնելով՝ ինչպես է խամբում իր երբեմնի համբավը:
- 4) Ինքնըստինքյան հասկանալի էր, որ չկարողացա շատ բան անել գերդաստանիս մյուս անդամներին կատարյալ դարձնելու համար:
- 5) Ջգաց, որ պետք է շտապեր, արագ գործեր, բայց ապարդյուն:
- 6) Աշխարհում ապրող ամեն մի մարդ իր նպատակին է ձգտում:

**106. Նշի՞ր այն նախադասությունները, որոնցում կա բաղադրյալ ժամանակածև.**

- 1) Վոլոդյան սենյակի աչ անկյունում ծնկի իջավ՝ բարձրաձայն աղոթելով:
- 2) – Ա խ, դեռ մի՛ տարեք նրան,- սրդողած հառաչեց կինը:
- 3) Այդ խաղատունն է նրան շեղել ճիշտ ճանապարհից:
- 4) Դու պետք է հավատաս քո գործի հաջողությանը:
- 5) Նա հապշտապ դուրս եկավ քաղաքից՝ քայլելով դեպի դաշտերը տանող խորդուբորդ ճանապարհով:
- 6) Իհարկե, կոշիկն ու արվեստի ստեղծագործությունները տարբեր են, բայց պետք է համոզված լինես, որ բարձրարժեք աշխատանքները երբևէ չեն կորչի:

**107. Նշի՞ր այն նախադասությունները, որոնցում ներգործական սեռի բայ կա.**

- 1) Արևելքը շառագունել էր. արդեն լուսանում էր:
- 2) Քիչ անց հարևան վագոնից վերադարձավ ամուսինը՝ մասամբ վերագտած հոգու անդորրը:
- 3) Երիտասարդը վազեց դեպի կառքը և ուղղելով բաճկոնի օձիքը՝ կանգնեց ձգված, մինչև գորավարը նստեց օթոցին:
- 4) Ու այս խոսքերն արտաբերեց այնքան լուրջ, որ կինը նորից տարակուսանքի մեջ ընկավ:
- 5) Իններորդ պարկը փոխադրելուց հետո նա մի պահ կանգ առավ:
- 6) Մի օր դպրոցում արտակարգ դեպք պատահեց:

**108. Նշի՞ր այն նախադասությունները, որոնցում ներգործական սեռի բայ կա.**

- 1) Նրա այդ համոզմունքի ամբողջացմանը նպաստում էին ամբարտավանությունը, արհամարհանքն ու սնափառությունը:
- 2) Ժամանակ անցավ, ու հարմարվեցին ծառի ներկայությանը:
- 3) Իսկ ամռանը չարաճճի երեխաները, իրենց աշխույժ գոռում-գոչյուններով կենդանացնելով կեսօրվա տաղտկալի անդորրը, մազլցեցին պատերն ի վեր:
- 4) Յուրաքանչյուր տարուբերումից շղթայի ժանգոտած օղակները սուր ճռռում էին՝ խախտելով շրջապատի անդորրը:
- 5) Հանկարծ երևաց մի կին, որը քայլում էր դեպի ճոճանակը՝ երեխան գրկած, մեջքից մի տուպակ կախ:
- 6) Այդ փոքրիկ գեղեցկուհին նայողի մեջ իր թմբիկն այտերը կծելու ցանկություն էր առաջացնում:

**109. Նշի՞ր այն նախադասությունները, որոնցում չեզոք սեռի բայ կա.**

- 1) Այս ամենին նայելով՝ Հայաստանը կամա-ակամա կոչում էս քարե:
- 2) Հիվանդ հոր մոտ նստած՝ նա պատմում էր ողջ եղելությունը:
- 3) Մեր թեմական դպրոցը գտնվում էր Թավրիզի հռչակավոր բերդի տակ՝ մի ընդարձակ պուրակում:
- 4) Նա անտարբեր դիտում էր հասնող հրացուլքը և ոչինչ չէր ձեռնարկում:
- 5) Դասամիջոցին գրեթե բոլոր աշակերտները դուրս էին գալիս պուրակ՝ ըմբռնելու մաքուր օդը:
- 6) Ու ոչ թե ջղայնացած փորձում էի մի մտացածին պատմություն հորինել, այլ պարզել ճշմարտությունը:

**110. Նշիր այն նախադասությունները, որոնցում կրավորական սեռի բայ կա.**

- 1) Վաղորդյան առաջին շողերի հետ լավեցին նորածնի առաջին ճիչերը:
- 2) Ընկերոջս հետ քայլում էի ամառանոցային քաղաքի գողտրիկ փողոցներից մեկով, որը լցված էր ծաղկած ծառերի բույրով:
- 3) Ծոծրակից ձգվող ծանրությունից ծնոտները սեղմվել էին, և անհնարին էր դարձել շնչելը:
- 4) Երեխաներով հավաքվեցինք, մտածեցինք, խորհեցինք ու հանկարծ գտանք պատճառը:
- 5) Հոգնած ու ընկճված էին, և ոչինչ չէր կարող նրանց մխիթարել այդ պահին:
- 6) Հանկարծ դուռը բացվեց, և շենքին հայտնվեց տանտիրուհին:

**111. Նշիր այն նախադասությունները, որոնցում կրավորական սեռի բայ կա.**

- 1) Ի վերջո նրանք տեղավորվեցին, ինչպես կյանքում` ըստ ուժի և անգորության, ըստ համարձակության ու խոնարհության:
- 2) Այդ ժամանակ, սակայն, նորածն էին իսպանական ոճով կարված անդրավարտիքները, որոնց փողքերը երիզված էին կարմիր նախշերով:
- 3) Մեկ ամիս անց, երբ դասերն սկսվեցին, դպրոց գնացի և հանդիպեցի ընկերոջս:
- 4) Գիպսե նախշերով ծածկված առաստաղը ժամանակի ընթացքում գորշացել էր ու ծածկվել սարդոստայններով:
- 5) Դա մի բավականին ընդարձակ, մարմարյա սյուներով զարդարված սրահ էր:
- 6) Եվ այդտեղ մարդ զգում էր իր իսկ ստեղծած այն ուժը, որը կոչվում էր օրենք:

**112. Նշիր այն նախադասությունները, որոնցում չեզոք սեռի բայ կա.**

- 1) Նրա ստեղծած փոքրիկ բանջարանցում բուրում էին սամիթն ու ռեհանը, անանուխն ու թարխունը:
- 2) Տատը ոչ ոքի չէր թողնում խառնվել իր գործին` երեխայի նման ուրախանալով օրեցօր փարթամացող ու փթթող հուռթի բանջարանցով:
- 3) Ու հիմա նա շատ բարձր էր գնահատում իր այդ վճռականությունը, որով փորձել էր նրան բարձրացնել մինչև իր մակարդակը:
- 4) Նրան հանդիպելիս մի մեծ բաժակաճառ ասաց:
- 5) Այդ սեփեթող աղջիկներին հաճոյանալը շատ զավեշտալի էր:
- 6) Փոքր-ինչ ընտելանալուց հետո կրիաները նույնիսկ կեր էին վերցում ձեռքիցդ:

**113. Նշիր այն նախադասությունների համարները, որոնցում մակբայ կա.**

(1)Իշխան Անդրեյը ձեռք ձեռքի տված համբուրվեց քրոջ հետ և ասաց, որ նա նույնպիսի լացկան է, ինչպես առաջ: (2)Իշխանուհին անդադար խոսում էր: (3)Վերին կարճ շուրթը մի ակնթարթ արագությամբ իջնում էր, դիպչում ստորին շուրթին և երևան հանում շողացող ժպիտը: (4)Նա պատմում էր իրեն պատահած դեպքի մասին և դրանից անմիջապես հետո հայտնում, որ իր բոլոր զգեստները թողել է Պետերբուրգում: (5)Նա պնդում էր, որ Անդրեյը բոլորովին փոխվել է, դարձել անճանաչելի, տարօրինակ կերպով ծերացել: (6)Իշխանադուստր Մարիան մինչև վերջ չլսեց և շարունակելով իր մտքերի թելը` ինչ-որ հարց տվեց հարսին: (7)Լիզայի վերին շուրթն իջավ, նա երեսը մոտեցրեց տալոջ դեմքին և կրկին անսպասելի լաց եղավ: (8)Բոլորը մի պահ լռեցին: (9) Անդրեյը պատվիրեց, որ Լիզային տանեն իր սենյակը, որ այդ երեկո էլ չընկնի նույն վիճակի մեջ:

**114. Քանի՞ մակբայ կա տրված բառաշարքում.**

այսուհետև, այսպես, արտաքուստ, մասին, միասին, միօրինակ, միշտ, դեմ դիմաց, այնտեղ, որքան, լիովին, չափ

**115. Քանի՞ կապ կա տրված հատվածում.**

Մինչ դրսում տեղի էին ունենում այս դեպքերը, գորականների պարագլուխները խորհրդակցում էին ապագա ճակատամարտի մասին: Հանկարծ լավեց գնդակի ճայթյուն՝ որպես չարաղետ պատերազմի արձագանք, որ այս ազնվական դավադիրներն ուզում էին մղել հանրապետության դեմ: Տիկինը սարսուռաց, և նրա՝ իր ախտյանից ազատված զգալու ուրախությունից առաջացած շարժման վրա հյուրերը լուռ իրար նայեցին, իսկ մարկիզը վեր կացավ սեղանից և դուրս գնաց:

**116. Քանի՞ կապ կա տրված հատվածում.**

Դոյակի ստորոտի և գրանիտե ժայռերի միջև բարձրանում է եկեղեցին: Թուֆակի աշտարակը, որի վրա շինված էր օրհորդի բնական տունը, իր հիմքով հենվում է անդունդի հենց խորքին ու բարձրանում մինչև եկեղեցու տափարակը: Այս տնից հայացքով կարելի է ընդգրկել քաղաքի մեծ հրապարակը, որ երեք դարի հնություն ունեցող փայտաշեն տներով է շրջապատված: Այդ տները եկեղեցու հետ միասին կազմում են մի փակուղի, որ հասնում է մինչև Սուրբ Լեոնարդոյի դարպասը:

**117. Տրված կապերից կամ կապական բառերից քանի՞սը կարող են գործածվել բացառական հոլովածկի հետ.**

պես, փոխարեն, առաջ, անկախ, հետ, պատճառով, հետո, հանդերձ, վերաբերյալ, բացի, որպես, գատ

**118. Քանի՞ շաղկապ կա տրված հատվածում:**

– Ի՞նչ ես ուզում,- հարցրեց կոմսուհին վախեցած, բայց աղջկա դեմքից նկատելով, որ դա չարածնիություն է, ձեռքը խստությամբ թափ տվեց նրա վրա, իսկ գլխով սպառնական ու բացասական շարժում արեց:

Հյուրերի մեծ մասը նայեց մեծերին, այնինչ վերջիններս չգիտեին՝ ինչպես վերաբերվեն Նատաշայի այդ չարածնիությանը:

– Մայրիկ, կարկանդակ եմ բերելու,- հարցրեց Նատաշան բարձրաձայն, արդեն համարձակ և ուրախ, նախապես վստահ, որ իր վարմունքը լավ ընդունելություն կգտնի:

Մինչ նա աղմկում էր, հյուրերը շարունակում էին տարակուսած իրար նայել, թեև ամեն ինչ արդեն պարզ էր:

**119. Ո՞ր շարքերում ստորադասական շաղկապ չկա.**

- 1) այսինքն, երբ, եթե, և՛...և՛
- 2) սակայն, կամ, այլև, նաև
- 3) բայց, ու, ուր, ինչքան
- 4) ինչպես և, հենց որ, ոչ, այնպես էլ

**120. Ո՞ր նախադասությունների մեջ վերաբերական չկա.**

- 1) Բայց օտարը կարծես մենք էինք:
- 2) Մի քանի անգամ բախեց դուռը, և այն ցավալիորեն ճոնչաց:
- 3) Միայն թե լսեր ինձ, չգնար խոտոր ճանապարհով:
- 4) Ամոթ ու խղճի մնացորդ, այնուամենայնիվ, ուներ:
- 5) Պատշգամբում չնայած լվացարան կար, կինը, սրբիչն ուսին, միշտ կողքին էր:
- 6) - Ա՛յ ժողովուրդ, ախր մի կո՛ղմ քաշվեք,- ձայն տվեց մեքենայի թափքից:

**121. Տրված բառաշարքում քանի՞ վերաբերական կա.**

իսկույն, իրավամբ, երևի, ուրախալի, ցավոք սրտի, կասկածելի, անպատճառ, արդյոք, թեպետ, թերևս, ափսոսանք, մի՞թե

122. Թվարկված բառերից քանի՞սը կարող են գործածվել տարբեր խոսքի մասերի արժեքով.  
ժամանակ, ապա, ծանոթ, հով, թեև, էլ, գրեթե, չնայած, թավուտ, զինվորական

123. Թվարկված բառերից քանի՞սը կարող են գործածվել տարբեր խոսքի մասերի արժեքով.  
հետո, ծերունի, չափ, ապստամբ, մաս, թողություն, ոչինչ, հետ, ցուրտ, թվարկել

124. Թվարկված բառերից քանի՞սը կարող են գործածվել տարբեր խոսքի մասերի արժեքով.  
մինչև, բարեկամ, լոկ, հենց, միայնակ, մոտ, անդորր, սիրային, կամավոր, առաջ

125. Թվարկված բառերից քանի՞սը կարող են գործածվել տարբեր խոսքի մասերի արժեքով.  
փոխանակ, հոգևորական, այլ, ուրիշ, հիվանդ, սուտասան, գող, դավաճան, նման, նախքան

www.atc.am

**ԳԼՈՒԽ IV****ՇԱՐԱՀՅՈՒՄՈՒԹՅՈՒՆ****ԲԱԺԻՆ 1****ԽՆԴԻՐԱՌՈՒԹՅՈՒՆ, ՀԱՄԱՉԱՅՆՈՒԹՅՈՒՆ,  
ՇԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ****1. Տրված նախադասություններում կան տարաբնույթ սխալներ. որո՞նք են համաձայնության սխալներ.**

- 1) Այվագովսկու կորած գեղանկարչական գլուխգործոցներից մեկը վերջերս պատահականորեն հայտնաբերել են Տրետյակովյան թանգարանի նկուղում մնացած շինարարական թափոնների մեջ:
- 2) Նա հոգով կաշառակեր էր. հնար էր գտնում կաշառք վերցնել իր ծառայակիցներից, բարեկամներից, և միայն աստված գիտի՝ ինչպես և ինչի համար:
- 3) Հնդկաստանը և Հայաստանը բազմաթիվ միջազգային կազմակերպություններում աջակցում են միմյանց քաղաքական հարցերում:
- 4) Որքան էլ ընթերցելն այսօր հետին դիրքեր է մղվել երիտասարդության շրջանում, կա զանգված, այնուամենայնիվ, որ հետաքրքրվում են, կարդում են և բավականաչափ զարգացած են:
- 5) Կեսարիայի հայերը 1573 թվականին սուլթան Սելիմ Երկրորդի հրամանով ենթարկվել է զանգվածային տեղահանության և տարվել Կիպրոս կղզի:

**2. Տրված նախադասություններում կան տարաբնույթ սխալներ. որո՞նք են շարադասության սխալներ.**

- 1) Մեծանուն հայազգի ճարտարապետ Սինանի կառուցած Սելիմիե մզկիթը համաշխարհային ճարտարապետությանը հայտնի է որպես օսմանյան ճարտարապետական գլուխգործոց:
- 2) Վաղուց ի վեր մարդիկ աստղային երկինքը բաժանել են համաստեղությունների, որոնց վառ ապացույցն է հանդիսանում Կենդանակերպը:
- 3) Աշխարհի հնագույն բնակավայրերից մեկը, որտեղ խաղող է մշակվել, և որոնցից մեկը հաստատապես հայկական է, գտնվում են Արցախի Հանրապետության շրջանում և կոչվում Ազոխ, այսինքն՝ խակ խաղող:
- 4) Հայ ժողովրդի վաղնջական ժամանակներից բոլոր խավերը օգտագործել են զվարթացնող ըմպելիքը՝ գինին, և այլ կերպ չէր էլ կարող լինել, քանի որ Հայաստանը խաղողագործության դասական երկրի է:
- 5) Հաշվի առնելով, որ գինարբուքը գայթակղիչ է, և արքունականներից շատերը հրապուրվում են դրան, Վաղարշակ թագավորը «իր թագավորական տանը օրենքներ է հաստատում, ժամեր է սահմանում արքունիք մտնելու և իջնելու, խորհրդի, կերուխումի և զբոսանքների համար»:

**3. Տրված նախադասություններում կան տարաբնույթ սխալներ. որո՞նք են խնդրառության սխալներ.**

- 1) Հին Հայաստանում գինուց բացի պատրաստել են թունդ խմիչք՝ կոչելով ցքի կամ օղի (ցքի են ասել՝ նկատի ունենալու, որ այն օգտագործողի սիրտը ցաքի փշի մման կծակծկվի), և ծաղրվել են այդ խմիչքն օգտագործողները, հալածվել:
- 2) Ծանրութեթև անելով գինու դրական և բացասական կողմերը՝ մեր մեծերը ժողովրդական իմաստությունների մի ամբողջ խրատանի են ստեղծել, որոնցից է «Շնությունը, գինին ու քաղցուն սիրտը կխաբեն», «Գինին մարդուն չի մեռցնում, բայց անպատիվ է դարձնում»:
- 3) Իր առակներից մեկում Մխիթար Գոշը իրավամբ գրել է. «Եթե մարդը զգույշ լինի ուտելու և խմելու մեջ, կարիք չի ունենա բժիշկներին դիմելուն»:
- 4) Միջնադարի նշանավոր իրավագետը ձևակերպել է հարբեցողներին պատժելու օրենքը, որով ուրիշին վնասած հարբեցողը պետք է հատուցի այն, պետք է պատժվի հարբեցող հոգևորականը, նաև գինարբուքին մասնակցողները և կազմակերպիչները:
- 5) Հին Հայաստանում տարածված է եղել ավելի քան 400 տեսակ մրգահյութեր և քաղցր օշարակներ, որոնց մեջ նռան հյութը և՛ հաճելի ընպելիք, և՛ բուժիչ դեղ էր շատերի համար:

**4. Տրված նախադասություններում կան տարաբնույթ սխալներ. որո՞նք են շարադասության սխալներ.**

- 1) Երբ մարդ այնպիսի պայմաններում է (ջրի տակ, թունավոր ծխով շրջապատված), որ օդ շնչել չեն կարողանում, որոշ ժամանակ ստիպված են շունչը պահել, մարդու կողմից շունչ պահելու ռեկորդը հավասար է 7 րոպե 1 վայրկյանի:
- 2) Օրնիբուն զգոն է արտակարգ իրավիճակների նախարարության շարժական ճգնաժամային կառավարման կենտրոնը, որը արագ արձագանքման գործընթացի արդյունավետ կազմակերպիչն է մեր հանրապետությունում:
- 3) Հանրապետության դեղատնային ցանցերում վաճառքի են հանվել էլեկտրոնային արյան ճնշման չափիչ սարքեր:
- 4) Միտքն ազատ թռչունի պես թևածում էր նրա գլխում՝ այդպես էլ չվերածվելով որևէ կոնկրետ ծրագրի, չտալով որևէ օգուտ շրջապատին:
- 5) Նա տանը եղած պահերին սովորաբար առանց փողկապ ու առանց բաճկոն էր, մի բան, որ նրա համար ազգության ու կամայականության լուրջ դրսևորում էր դիտվում:

**5. Տրված նախադասություններում կան տարաբնույթ սխալներ. որո՞նք են շարադասության սխալներ.**

- 1) Ընթրիքից հետո, որտեղ առատ իսպանական ու հռենոսյան գինիներ, խեցգետիններ մատուցվեցին, կառքերն աստիճանաբար լքեցին դղյակի բակը:
- 2) Արևմտյան Եվրոպան բոլոր տրանսպորտի տեսակներով ամենահագեցած շրջանն է:
- 3) Մարդն իր ամբողջ կյանքի ընթացքում կատարում է մոտ 700 միլիոն շնչառական գործունեություն, և շնչառական ուղիներ թափանցող օդն ամենուրեք հանդիպում է լորձապատ մակերևույթի:
- 4) Եզակի հայկական ճարտարապետության անգնահատելի կոթողներից է Գանձասարի վանքի համալիրը, որ գտնվում է Արցախի Մարտակերտի շրջանում:
- 5) Եվրոպան շատ խիտ բնակեցված տարածաշրջան է. այստեղ կան բազմաթիվ բարձր արդյունաբերությամբ զարգացած պետություններ:

**6. Ո՞ր նախադասություններում կա խնդրառության, շարադասության կամ համաձայնության սխալ.**

- 1) Պարադոնտիտը լնդաբորբն է, հետագա ատամների քայքայումը և արդյունքում՝ ատամի կորուստը:
- 2) Գինեգործության և խաղողագործության ասպարեզում ամենահեղինակավոր ուսումնասիրողներից մեկը՝ Վիկտոր Հենը, իր՝ «Կենդանիների ու բույսերի դեգերումները» գրքում հաստատում է, որ գինու իրական հայրենիքն այն բարեբեր երկրամասն է, որ Կասպից ծովից հարավ՝ «Կովկասի, Արարատի և Տավրոսի միջև են ընկած»:
- 3) Նախկին կրթության և գիտության նախարարը վերջերս իր հեռուստատեսությամբ խոսում էր կրթության ոլորտի թերությունների մասին:
- 4) «Արդշինիմվեստ» բանկի ցանկացած հայաստանյան մասնաճյուղից կարող եք ձեռք բերել կուտակային քարտեր:
- 5) Ճապոնացի գիտնականները մի քանի տարի շարունակ ուսումնասիրություններ են անցկացրել՝ հայտնաբերելու համար այն բուսատեսակները, որոնք կարող են պայքարել օդի աղտոտվածության դեմ, և պարզել են, որ բարդենիները, արևածաղկի դաշտերը մեծ ունակություն ունեն օդը մաքրելու:

**7. Տրված նախադասություններում կան տարաբնույթ սխալներ. որո՞նք են խնդրառության սխալներ.**

- 1) Մնջախաղի Երևանի թատրոնը պատրաստվում է նոր բեմադրության:
- 2) Նախասենյակում բարձրացրած աղմուկով նա հույս ուներ քնած տանտիրոջն արթնացնելու և ընկերակցելու վերջինիս ընթրիքի ժամանակ:
- 3) Անտառները հանդիսանում են Երկրագնդի բնական գոտիներ, որ մաքուր են պահում օդը և գետերը:
- 4) Իրավապահները հայտնաբերել են Պոլ Սեզանի Յյուրիխի պատկերասրահից հափշտակված նկարներից մեկը, որը գողացողն այդպես էլ չի կարողացել վաճառել այն պատճառով, որ նկարը չափազանց հայտնի է եղել:
- 5) Խաղաղօվկիանոսյան կամ, ինչպես ընդունված է ասել, Օվկիանիայի կղզիները բաժանվում են ըստ երեք հիմնական խմբերով՝ Միկրոնեզիայի, Մելանեզիայի և Պոլինեզիայի, որ շատ ավելի մեծ տարածքներ են զբաղեցնում, քան ցամաքային շատ պետություններ:

**8. Տրված նախադասություններում կան տարաբնույթ սխալներ. որո՞նք են համաձայնության սխալներ.**

- 1) Բարդագույն սրտի վիրահատություններ տարած հայ ծանրամարտիկն իրեն արդեն լավ է զգում:
- 2) Արական սեռի բարձրագույն ուսումնական հաստատություն ընդունված դիմորդները առաջին կուրսի վարձավճարը կարող են վճարել զինծառայությունից վերադառնալուց հետո:
- 3) Նման մարդիկ ծանոթների շրջանում պահապան շների դեր են կատարում, որ հաչում է բոլորի վրա, թույլ չի տալիս ոչ ոքի շարժվել:
- 4) Ցանկացած Ռուսաստանի Դաշնության քաղաքացի երրորդ երեխայի ծննդի դեպքում պետությունից հող ստանալու իրավունք ունի:
- 5) Ժպիտ, խոժոռ հոնքեր, հպարտ կեցվածք, խեղճացած ուսեր. ահա որն է մեր հոգեվիճակի և զգացմունքների ակամա հաղորդիչը:

**9. Տրված նախադասություններում կան տարաբնույթ սխալներ. որո՞նք են խնդրառության սխալներ.**

- 1) Պոռչյանի՝ Աշտարակի խճուղու վրա գտնվող կոնյակի գործարանը արդեն խաղողի մթերման գործընթացը սկսել են:
- 2) Աշխարհահռչակ մարզիկը վստահ էր իր ուժի և հաղթանակի մեջ:
- 3) Ճարտարապետության եվրոպացի խոշոր մասնագետ Շառլ Դիլը համաշխարհային մշակույթի գանձարան մտած հինգ հուշարձաններից երրորդը համարում է Գանձասարը:
- 4) Սպարապետը տեղյակ էր Վասակի նենգ քայլերում:
- 5) Մահվան մահճից գամված Մոցարտը հանկարծ ձեռքը գլխից վեր է բարձրացրել ու ասես մտովի պատրաստվել նվագախումբ դեկավարել:

**10. Տրված նախադասություններում կան տարաբնույթ սխալներ. որո՞նք են համաձայնության սխալներ.**

- 1) Ցավոք, Դուք այն գրողներից եք, որ կարծում է, թե իրեն չի հասկանում ոչ ոք, քանի որ ինքը բարձր է բոլորից:
- 2) Իմ ներկայացրած փաստարկումների մեջ չափազանց վատահ են, այդ պատճառով էլ պնդում եմ, որ հարցը դրվի քննարկման:
- 3) Մարզանքների համալիրը նպաստում է բոլոր մկանների մասնակցությունը, լավացնում օրգանիզմի ընդհանուր վիճակը:
- 4) Մշտական մարզանքն ու վարժությունը բարձրացնում է օրգանիզմի դիմադրողականությունը, որը բնութագրվում է սրտի և անոթների՝ մարմնի բջիջներին անհրաժեշտ թթվածին մատակարարելու կարողությամբ:
- 5) Առաջիկա մրցումներում նա իր մասնակցությունը կբերի:

**11. Տրված նախադասություններում կան տարաբնույթ սխալներ. որո՞նք են խնդրառության սխալներ.**

- 1) Ձեր նշումների հետ ծանոթանալով՝ եզրակացրի, որ նախագիծը լուրջ շտկումների կարիք ունի:
- 2) Նա այդ պահին այնպիսի հայացք ուներ, ասես պատրաստ էր ընկնող մսի կտորը խլելու, ինչպես սոված շունը:
- 3) Ասում են՝ Կեսարի գորքերում դասալքություն բացարձակապես չի եղել, իսկ գերի ընկած հռոմեացի զինվորները նախընտրում էին մեռնելու, քան կռվելու Կեսարի դեմ:
- 4) Թեղենիսի լանջերին կառուցված օտարերկրյա զբոսաշրջիկներին այսուհետ սպասարկող նոր հյուրանոցային համալիրի սպասարկումը ստանձնել է արտասահմանյան մի ընկերություն:
- 5) Որպես գորավար՝ Հուլիոս Կեսարի հաջողությունները պայմանավորված են եղել հատկապես հասարակ զինվորների հետ ունեցած փոխհարաբերություններով:

**12. Տրված նախադասություններում կան տարաբնույթ սխալներ. որո՞նք են շարադասության սխալներ.**

- 1) Աֆրիկյան արշավանքի ժամանակ Կեսարը նավից իջնելուց հետո սայթաքեց ու չկորցնելով իրեն՝ ամուր գրկեց հողին և հանդիսավոր հայտարարեց. «Դու իմ ձեռքերում ես, Աֆրիկա»:
- 2) «Գլաքսո» հանրահայտ անգլիական դեղագործական ընկերությունը հսկայական տուգանք է վճարել, երբ բացահայտվել է որոշ դեղամիջոցների՝ հիվանդների առողջության վրա մահացու ազդեցություն թողնելու փաստը:
- 3) Նավաբեկությունից առաջացած իրավունքը միջազգային իրավունքի հին կետ է, ըստ որի՝ նավաբեկության հետևանքով ափ նետված կամ մերձափնյա մասում հայտնաբերված ողջ գույքը համարվում էին տվյալ առափնյա տարածքի գերիշխանի սեփականությունը:
- 4) Առանց հայրենիքի մարդը թափառական թռչուն է, անարմատ ծառ:
- 5) Եռադեմք Երվանդ Բոչարի տարածանկարները Մոնակոյում ճանաչվեցին լավագույնը Պիկասոյի և այլ մեծերի նկարների շարքում:

**13. Տրված նախադասություններում կան տարաբնույթ սխալներ. որո՞նք են խնդրառության սխալներ.**

- 1) Բոլորին կարելի է ինչ-որ կերպ հասկանալ և ներել՝ բացառությամբ ձեր դասարանից:
- 2) Տիեզերական առաջին զբոսաշրջիկը դա ամերիկացի գործարար Դենիս Տիտոն է, որը 2001- ին տիեզերք է բարձրացել երկու աստղանավորողների հետ:
- 3) Մոլորակի լեռներն առաջացել են բարդ ընդերքային գործընթացների հետևանքով:
- 4) Ըստ Շառլ Դիլի՝ հինգ հայկական նշանավոր կոթող են Աղթամարի Սուրբ Խաչը, Էջմիածնի Հռիփսիմեի տաճարը, Գանձասարի վանքը, Հաղպատի համալիրը, Անիի Մայր տաճարը:
- 5) Բացի քո վերաբերմունքը քո իսկ ընկերների նկատմամբ, կարևոր էին նաև բազմաթիվ այլ հանգամանքներ ձեր հարաբերություններում:

**14. Ո՞ր նախադասություններում կա խնդրառության կամ շարադասության սխալ.**

- 1) Ֆրանսիայի հյուսիս-արևելքում՝ Բրետոնում, քարե մեծ հուշարձան կա, որն իր մոտակայքում գտնվող քաղաքի հետ կոչվում է Քարակ, իսկ բրետոներենով արտասանվում է «Քարնիխ», այսինքն՝ Քարնակ, Քարնիշ, որն է՝ «հնչող քարեր»:
- 2) Հավատացած են քո հետագա հաջողությունների մեջ և վստահ են՝ կհաղթես առաջիկա մրցաշարերում:
- 3) Երվանդ Քոչարի Երևանի թանգարանի ցուցանմուշներից շատերը ժամանակակից եռաչափ նկարների նախանմուշներ կարող են համարվել:
- 4) Ըստ աստղագիտության պատմաբան Վ. Օլբրոֆի՝ առաջին մարդիկ, ովքեր բաժանել են երկինքը համաստեղությունների, ապրել են ոչ թե Բաբելոնում, Եգիպտոսում, այլ Հայկական բարձրավանդակում՝ Եփրատ գետի հովտում և Արարատ լեռան շուրջը՝ 36-41 աստիճան լայնություններում:
- 5) Անհրաժեշտ է խրախուսել նրա բոլոր քայլերին և աջակցել անվերապահորեն:

**15. Ո՞ր նախադասություններում կա խնդրառություն կամ շարադասության սխալ.**

- 1) Դավիթը, նկատելով թշնամուն, սուրը հանեց և դեպի նրան առաջանալով թիկունքից՝ փորձեց անակնկալի բերել:
- 2) Ամենախոշոր Եվրոպայի ընկերություններից մեկը բարձրակարգ յուղերի և քսանյութերի մատակարարներից է մեր երկրում:
- 3) - Ես տեղում եմ, բերե՛ք փաստաթղթերը,- հրահանգեց տնօրենը հեռախոսով:
- 4) Ի. Մաունդերը գրում է. «Եգիպտացիները, որոնց հուշարձաններում հայտնաբերվել են կենդանակերպի տասներկու նշանները, նշում են, որ աստղերի մասին գիտելիքները փոխառել են խալդերից»:
- 5) Նրանց գրասենյակն աշխատում է բոլոր օրերին՝ բացառությամբ կիրակի օրերից:

**16. Ո՞ր նախադասություններում կա խնդրառության, համաձայնության կամ շարադասության սխալ.**

- 1) Նա մի փոքր մտածեց և վերահասու դառնալով կատարվածին՝ բարձրաձայն ասաց, որ անխուսափելի է կտրուկ քայլերը. իրավիճակն այլ կերպ շտկել չի լինի:
- 2) Մարգաշխարհի «Էպիկենտրոն»-ի լուրերը կհեռարձակվեն ժամը 7-ին:
- 3) Հնագույն աստղադիտարանը նախատեսված են երկնային լուսատուների շարժը դիտելուն և ժամանակը չափելուն:
- 4) Բանաստեղծության երկու քառատողերը չեն կարողանում հիշել:
- 5) Նախարարը ներկա է եղել հայոց լեզվի և գրականության քննությանը, ով դրական է գնահատել ընդունելության գործընթացը:

**17. Ո՞ր նախադասություններում կա խնդրառության կամ շարադասության սխալ.**

- 1) Առաջիկա Մոսկվայի դրամանիշների համաշխարհային մրցույթում կներկայացվեն նաև հայկական ցուցանմուշներ:
- 2) Հրամանատարների անհետատեսության պատճառով զորաջոկատները հայտնվել էին շրջափակման մեջ:
- 3) -Առայժմ կարող եք չշտապել,- ասաց տնօրենը.- ծրագիրը պատրաստ պետք է լինի միայն երկու շաբաթից:
- 4) Հնավայրը վաղուց զբոսաշրջիկների ուշադրության կենտրոնում է, ինչը պայմանավորված է ինչպես նրա պատմամշակութային բարձր արժեքով, այնպես էլ աշխարհագրական հարմար դիրքից:
- 5) «Մթար» հանրախանութների ցանցում տեղական ապրանքների գները գրավիչ են հաճախորդների համար:

**18. Ո՞ր նախադասություններում կա շարադասության սխալ.**

- 1) 27-ամյա իտալական «Նապոլի» թիմի ռմբարկուն որոշել է թողնել մեծ ֆուտբոլը:
- 2) Ալեքսանդրի և Գարեհ 3-րդի նշանավոր Գավգամելայի ճակատամարտը սկսվել է պարսկական մանգաղավոր մարտակառքերի գրոհով:
- 3) Վրացուհի Աննա Նովիլաձեն որոշել է կապված ձեռքերով լողալ Դարդանելի նեղուցով:
- 4) Լատիներենը մեռած լեզու է, որը հիմք է եվրոպական մի շարք լեզուների համար և գործածական է միայն Վատիկանում:
- 5) Մեծարգո հյուրի պատվին մատուցվեց ճոխ տոնական ընթրիք:

## ԲԱԺԻՆ 2 ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ

### 1. Քանի՞ խոսքի մասով արտահայտված ենթակա կա տրված հատվածում.

Գրելն ու ստեղծելը այն մարդկանց գործն է, ովքեր պահանջ են զգում գրելու ու ստեղծելու: Գրելու ցանկությունը մաքուր ու բացարձակ պիտի լինի: Հավատացած եմ՝ կգա այն օրը, երբ գրամուն այլևս գրիչ չի վերցնի՝ թութակի պես կրկելու համար ուրիշների մտքերը: Մեկը խելացի մի միտք է արտահայտում, և հայտնվում են հազարավորներ, որ աղավաղում են այդ միտքը, խեղաթյուրում:

### 2. Տրված նախադասություններից որոնցում պարզ ստորոգյալ կա.

- 1) Ջաղացը, անուշ-անուշ մտմտալով, մանուկ օրերից մի հեքիաթ է պատմում:
- 2) Ինչ որ մեզ համար վերջալույս է, այլոց համար արշալույս է:
- 3) Այսուհետև անհնար է հավատալ մարդուն:
- 4) Մինչև այժմ ես այն կարծիքին էի, որ պետք է կռվել և հետ բերել մեր կորցրած հայրենիքը:
- 5) Ոչ մի անհատ հասարակական կարծիքից ազատ չէ և չի կարող շրջանցել այն:
- 6) Ինձանից առաջ շատերն են այդ ցավը զգացել:

### 3. Նշի՞ր այն նախադասությունները, որոնց մեջ բաղադրյալ ստորոգյալ կա.

- 1) Զգալով, որ իր գործը լավ է կատարել՝ նա մեկ անգամ էլ անթաքույց հաճույքով զննեց սեղանը:
- 2) Նա, զվարթ ու կենսաբոսիկ կին լինելով, շարունակ անախորժությունների մեջ էր ընկնում:
- 3) Այնտեղ էր նաև ականավոր գրականագետ ու լեզվաբան Մանուկ Աբեղյանը, ու ես ավելի մոտիկից ճանաչեցի նրան:
- 4) Ի վերջո նա ըմբռնարտիկ դարձավ և իր վաստակած ողջ դրամը ծախսում էր մարզական ակումբի կարիքների համար:
- 5) Պատանին հանկարծակի էր եկել և իր թախծոտ հայացքն ուղղել մեզ:
- 6) Թամադան պետք է մտքով հարուստ լինի. երևակայությունից զուրկ թամադայի ղեկավարած խրախճանքը կավարտվի քառորդ ժամում:

### 4. Նշի՞ր այն նախադասությունները, որոնց մեջ բաղադրյալ ստորոգյալ կա.

- 1) Ես հապշտապ դուրս թռա դասարանից և որոշեցի՝ եղելության մասին տեղյակ պահեմ տնօրենին:
- 2) Ես մտածեցի, որ հարցերը չպետք է անընդհատ ուսուցիչները տան, իսկ աշակերտները պատասխանեն:
- 3) Գնալով վիճակը տագնապալի դարձավ, և սկսվեց անզիջում ձեռնամարտ:
- 4) Գուցե դա էր պատճառը, որ թշվառ բնակիչների մեծ մասը տառապում էր սուր աչքացավից ու կոկորդացավից:
- 5) Նա փղձկաց. վաղուց էր ուզում ազատվել հոգեկան ծանր բեռից:
- 6) Նա պիտի փնտրի մեկ ուրիշին. այս են պահանջում անողորմ բնության օրենքները:

### 5. Ստորոգյալներից քանի՞սն են բաղադրյալ.

Ցորենը՝ ցորեն, գարին գարի էր,  
Քամին էր քամին, քարը՝ քար,  
Կարծես ամեն ինչ հասկանալի էր,  
Ոչ մի բանի մեջ խորհուրդ չկար:

**6. Ստորոգյալներից քանի՞սն են բաղադրյալ.**

Դու և՛ Ամբերդ ես, և՛ Բյուրական ես,  
Քեզ համար խորթ է վաղանցավորը,  
Հավիտենության կանգնած վկան ես  
Եվ բացվող օրվա անդուլ հնձվորը:

**7. Ստորոգյալներից քանի՞սն են բաղադրյալ.**

Այդ ինչքա՛ն ես թույլ ու փոփոխական,  
Մրսում ես հուշի մի ցուրտ բեկորից  
Եվ հույսի մի տաք նշխարից անգամ  
Շիկնում ես նորից:

**8. Ստորոգյալներից քանի՞սն են բաղադրյալ.**

Մեծությանը չեն ների  
Փոքրածիններն անարդար,  
Չար է նախանձն էլ բարի,  
Երբ քեզ ազգն է սիրահար:

**9. Ստորոգյալներից քանի՞սն են բաղադրյալ.**

Մորս սրտի հետ աշխարհն են չափել՝  
Էլի մեծ էր նա, մեծ էր ու անգին,-  
Քանզի աշխարհը ճամփեքս է կապել,-  
Մայրս կամուրջ էր հույսի ճամփեքին:  
Ու հիմա քիչ է, թե աչքերս տամ,  
Թե սիրտս հանեմ ու տամ մայրիկիս,  
Ա՛խ, մայր երգելուց ինչպե՞ս կշտանամ.  
Մայրս պատկերն է մայր հայրենիքիս:

**10. Ստորոգյալներից քանի՞սն են բաղադրյալ.**

Կործանված վանք է հավատն իմ հոգու,  
Լուկ մի կանթեղս՝ վառված իմ աչքով,  
Պեղում է մահվան խավարն ահարկու,  
Ա՛խ, գուցե հառնի մայրս հրաշքով:

**11. Ստորոգյալներից քանի՞սն են բաղադրյալ.**

Քարափների գլխին՝ Որոտնաբերդ,  
Քարափների ծունկին՝ Ծիծեռնավանք,  
Քարափների շուրթին՝ երկնքի շերտ,  
Քարափների շուքին՝ ջրվեժի գանգ...

**12. Քանի՞ ստորոգելի կա.**

Յերեկն անգոր ես, գիշերներն՝ հզոր,  
Գիշերը՝ նուրբ դև, ցերեկն՝ հրեշտակ,  
Առյուծն էլ քո դեմ մանուկ է անգոր,  
Երբ սուրբ քնքշանքդ դառնում է հեշտանք:  
Երբ կին ես, ոչ թե սրբությունը մոր:

**13. Քանի՞ ստորոգելի կա.**

Թե գրկածս չես, դրախտ ես, ո՛վ կին,  
 Քո մի համբույրով մեռյալն է հառնում,  
 Ո՛վ կին, երբ մայր ես դառնում կաթոզին՝  
 Միրո սրբության սանդուղքն ես դառնում,  
 Չնաշխարհիկ ես դառնում դու, մա՛յր-կին:

**14. Քանի՞ ստորոգելի կա.**

Ամեն ինչ ես դու, ո՛վ կին, ամեն ինչ-  
 Ե՛վ սուրբ մայր ես դու, և՛ կին-սատանա,  
 Ե՛վ հրեշտակ ես, և՛ դև ես թովիչ,  
 Համբույրիդ մեջ էլ և՛ կյանք ես, և՛ մահ,  
 Ե՛վ մութ անդունդ ես, և՛ կանթեղ ես ջինջ:

**15. Քանի՞ ստորոգելի կա.**

Եթե լինեիր երկաթյա ու բիրտ,  
 Ի՞մ սանդուղքն անգամ կլիներ ոսկի,  
 Բայց քեզ հետ ինչպե՞ս կզգայինք, իմ սի՛րտ,  
 Հրճվանքն այս խոսքի:

**16 Քանի՞ ստորոգելի կա.**

Մի բերան սուտն էլ դառնում է թախիծ  
 Ու մահ է դառնում քեզ համար կարծես,  
 Ե՛վ մի պուտ հավատ կորցնելու վախից  
 Կորցնում ես դու քեզ...

**17. Տրված բայերի հարակատար դերբայի ձևերից քանի՞սը չեն կարող գործածվել որպես ստորոգելի.**

դողալ, թմրել, հոսել, հուզել, մաղել, վերաբերվել, հորդել, հարթել, խարանել, կոպտել, ամաչել,  
 համաձայնել

**18.Տրված բայերի հարակատար դերբայի ձևերից քանի՞սը չեն կարող գործածվել որպես ստորոգելի.**

գալ, գուշակել, գահակալել, գայթել, գոհանալ, թռչնել, հորդել, պարզվել, արհամարհել, հաշմել, շողալ,  
 գռվել

**19. Տրված բայերի հարակատար դերբայի ձևերից քանի՞սը չեն կարող գործածվել որպես ստորոգելի.**

թվալ, մեկուսանալ, կապտել, կաշառել, քայլել, խորհել, բարկանալ, վազել, հաճախել, հորդանալ,  
 ապտակել, դյութել

**20.Տրված բայերի հարակատար դերբայի ձևերից քանի՞սը չեն կարող գործածվել որպես ստորոգելի.**

հարգել, զարմանալ, գուզել, հուզել, ընդգրկել, անել, ցնցել, հոգնել, ծփալ, սպանել, հիանալ, սայթաքել

**21. Քանի՞ որոշիչ կա տրված տեքստում.**

Հնչյունները կրծում են սիրտս ու խոր ցավեցնում: Չեմ սիրում այդ երաժշտությունը. դաժան է այն:  
 Նայում եմ մյուսներին. ոմանք հանգիստ նստել են, ոմանք ուրախ կատակում են, ոմանք՝  
 ներանձնացած լսում: Ամեն մարդ զոց աշխարհ է՝ անմատույց ու անիմանալի: Տարիներ հետո ոչ ոք չի  
 մնալու այս ապրող բազմությունից: Բայց աշխարհը տակավին իմն է ու ձերը, և հերթը մերն է:

**22. Ո՞ր դերքայը չի կարող դառնալ ժամանակի պարագա.**

- 1) անորոշ
- 2) ենթակայական
- 3) հարակատար
- 4) համակատար

**23. Ո՞ր նախադասություններում գոյականով արտահայտված որոշիչ կա.**

- 1) Տոն օրերին բոլորը ուրախ են լինում:
- 2) Նա մտովի իրեն զգում էր երագե հովիտներում:
- 3) Ծաղիկների մեջ այդ անուրջ կույսի շշուկը մնաց:
- 4) Գոհար աստղերի քարավանները թափառում էին երկնի ճամփերով:
- 5) Ծով են աչքերը Ջավախքի դստեր:
- 6) Նրա ծով աչքերի խորքում անսահման թախիծ կա:

**24. Նշիր, թե քանի որոշիչ կա տրված հատվածում.**

Սարգսի ապաշխարությունը փարոսի նման հավերժ կվառվի իր արքայական իշխանության անհաս կատարին և ուղիղ ճանապարհի կրերի մյուս «մոլորյալներին»: Գուցե արդեն աչքին պատկերանում էր իր հաղթական մուտքը Անի, ինքը՝ սպիտակաթույր ձիու վրա, ահեղ Վեստը՝ իր առջև:

**25. Նշիր, թե քանի որոշիչ կա տրված հատվածում.**

Երբ հոռոմների դեսպանը հաջորդ օրը Սուրմառի ժամանեց, ասես ոչինչ էլ չէր եղել՝ ո՛չ Անին նվաճելու եկած բյուր բանակը, ո՛չ ահեղ ճակատամարտը, ո՛չ իրենց միակ կյանքը Ախուրյանի ջրերում թաղած հազարավոր զոհերը:

**26. Նշիր, թե քանի որոշիչ կա տրված հատվածում.**

Նա երջանիկ թագավորություն մաղթեց նորընծա արքային, և պատանի Գագիկն այնքան մեծահոգի դարձավ, որ նորեկ դեսպանի հետ Սարգսին էլ արքայական կառք հրավիրեց և իր կողքին բազմեցրեց: Առավոտյան, երբ վերադառնում էին Անի, անամպ երկինքն ու պայծառ արեգակը բոլորին անհոգ ու զվարթ տրամադրություն էին հաղորդել: Թվում էր՝ թե վտանգն էլ անցած մի քանի ցավատանջ օրերի նման հետևում է մնացել:

**27. Բացահայտյի քանի՞ տեսակ կա տրված նախադասություններում (նախադասությունները կետադրված չեն).**

1. Մեզ շատ մոտիկ բլուրների թիկունքից ուրվագծվում էր Արագածի գագաթը:
2. Ես էլ որպես ծնողներիս կրտսեր որդին աշխատում էի օգտակար լինել:
3. Այդ անձանոթը հայտնի էր որպես դիպուկ կրակող:
4. Որպես մարմնացյալ հայրենասեր սպարապետ Վարդանը կանգնել էր ատյանի առաջ:

**28. Ո՞ր նախադասություններում մասնական բացահայտիչ կա (նախադասությունները կետադրված չեն).**

- 1) Կանգնել էր բարձունքին որպես մի արծիվ:
- 2) Բոլորը հարգում են նրան որպես մեծ մտածողի:
- 3) Պատրիկյանը իբրև պարապ մարդ խմբագրության ամենօրյա այցելուն էր:
- 4) Արջը հարվածից գլորվեց ինչպես մի կոտրված ծառ:
- 5) Սարյանի կտավները որպես ազգային արժեք զարդարում են մեր պատկերասրահը:
- 6) Սամվելը գնում էր որպես մի սգավոր:

**29. Նշիր, թե քանի ուղիղ խնդիր կա տրված հատվածում.**

Խաղաղության օրերն ամռան անհոգ ամիսների հետ աննկատելիորեն անցնում էին՝ իրենց հետ տանելով մահու ու կենաց պայքարում ձեռք բերածը: Խաղաղ կյանքը վերահաստատեց պայքարի ժամանակ մերժվածը: Պայքարի ժամանակ մոռացության տրվածները կրկին դարձան առաջինը երկրում, իսկ մարտադաշտում փայլածները կրկին անհայտության տրվեցին:

**30. Նշիր, թե քանի ուղիղ խնդիր կա տրված հատվածում.**

Վեստ Սարգիսը անփոխարինելի դարձավ պալատում, իսկ Պահլավունիները անմասնակից մնացին երկրի կառավարմանը: Կրկին հունական ոսկու քաղցրահնչյուն զնգոցը սովորացրեց «հունասերների» բանակը, կրկին բյուրավոր դրամատենչ հայացքներ բաղձանքով դեպի արևմուտք բեռնվեցին: Եվ երկիրը կրկին գլորվեց իր հունը, իսկ կայսրության գահը ձեռքից ձեռք էին գլորում: Միքայել Կալափատեսին կուրացրել ու բանտ էին նետել, իսկ պառավ կայսրուհին ոչ մի կերպ չէր փարատում իր կասկածամտությունը:

**31. Նշիր, թե քանի անուղղակի խնդիր կա տրված հատվածում.**

Այդ երկու տարիները ակնթարթի մեծ անցան, և կրկին ստվերի մեծ հայտնվեց կործանման վտանգը: Կրկին կատվի պես գողունի ու փափուկ մոտեցավ, զարմացրեց բոլորին: Սկզբում հոռոմները զորահավաք արեցին Վասպուրականում, վերջին հայ զինվորներին էլ տարան արևմուտք: Հոռոմաց դեսպանի ժպիտով հնայված արքան չհիշեց, որ գահ բարձրանալուն պես երդվել էր մոտենալ Տարոնին, իսկ Անիում նստած իշխաններն ավելի ու ավելի նվաստացուցիչ թղթեր էին հղում կայսերը:

**32. Նշիր այն նախադասությունների համարները, որոնցում անուղղակի խնդիր կա.**

(1) Ամառվա երկարատև, տոթ օրվա ավարտին քիչ էր մնացել: (2) Պառավ կինը և նրա երկու փոքրիկ թոռները ծալապատիկ նստել էին թախտին և ինչ-որ բան էին ուտում: (3) Սպիտակ սփռոցի վրա փայլում էր մի փոքրիկ լամպ, որին էլ մոտեցավ հոգնատանջ պառավ կինը: (4) Նրանց կերածը փռի սև հաց էր և կիսախակ մի ձմերուկ, որի գույնը դժվար էր որոշել: (5) Լամպի լույսն իր շուրջը հավաքել էր ահագին թվով մանր մեղների, որոնք պտույտ էին գալիս տաք ապակու շուրջը, թափվում ներքև: (6) Պառավ Հեղմարը ցամաքած, կուչ եկած մի կին էր՝ դեմքի անհամար խորշոմներով: (7) Հարատև չքավորությունն ու բախտի ծանր հարվածները ծռել էին նրա մեջքը և իրենց անջնջելի կնիքը դրոշմել նրա դեմքի կնճիռների և թախմալի աչքերի մեջ: (8) Թոռները որբ էին, և պառավ տատի խնամքն անհրաժեշտ էր նրանց:

**33 Նշիր այն նախադասությունները, որոնցում ձևի պարագա կա.**

(1) Բուռոսն իր ծառայությունն սկսել էր դեռ Կալիգուլայի օրոք, մասնակցել շատ ճակատամարտերի և կարող էր հեշտ ու հանգիստ մեռնել: (2) Նրա նժույզը դանդաղորեն գնում էր դեպի ճամբար, որտեղ տեղավորված էր Հռոմի մոտակայքում գտնվող հավաքակալանը: (3) Նժույզն իր տիրոջ հետ այնքան էր անցել այդ ուղին, որ անսխալ գիտեր ճանապարհը: (4) Մի վարձկան, գետնին նստած, զարեհաց էր ուտում: (5) Ցենտուրիոնները անցուդարձ անելով գրուցում էին: (6) Բուռոսը խանդաղատանք էր ապրում այդ տեսարաններից և շնչում ռազմական ճամբարի առնական սուր հոտը: (7) Նա ուղևորվեց այնտեղ, ուր ծածանվում էր կապույտ դրոշը. դա հեծյալների ճամբարն էր: (8) Բուռոսը նստեց իր վրանի մոտ դրված փոքրիկ աթոռակի վրա:

**34. Ընդգծվածներից որո՞նք են դերբայական դարձված.**

1. Հին պատմության ուսուցչուհին շատ գոհ էր այս աննշան թեմայի շուրջ արտասանված հարուստ ճառից:
2. Բանն այն է, որ իրենք էլ իմանալով գնացել էին այդ գործարքին:
3. Նման գործակցությունը համաշխարհային պրակտիկայում շատ է օգտագործվում:
4. Նրան ասացին, թե այդ թեկնածուի դեմ կոմունիստների ելույթները նախօրոք համաձայնեցված են եղել:
5. Նա ասում էր, որ օտարամուտ բառերի փոխարեն պետք է գործածել մեր աստվածային բառերը:
6. Նրանք ժամանակին ջանք ու եռանդ չէին խնայել իրենց ուտելու դեղատոմսերը նախապատրաստելու համար:

**35. Ընդգծվածներից որո՞նք են դերբայական դարձված.**

1. Եվ այդ ժամանակ դուք կարող եք տեսնել իսկական խաղացողին:
2. Դուրս գալու տենդագին ու մշտական զանկությունը նա իրեն պատեպատ է տալիս:
3. Խաղացողի դիմաց կանգնած մի քանի բախտախնդիրներ եկել էին այստեղ՝ իրենց բախտը փորձելու:
4. Նրա դեմքից դատելով՝ քսանհինգ տարեկան կլիներ, և մոլությունը նրա մոտ պատահական բան չէր:
5. Նրանց բոցկլտացող, փայլող ու ժպտացող աչքերը հուշում էին, որ նրանց համար ամեն ինչ դեռ առջևում է:
6. Ծերունի դռնապանը, նկատելով գլխարկի գզգզված վիճակը, վերադարձրեց այն:

**36. Ընդգծվածներից որո՞նք են դերբայական դարձված.**

1. Դուք ուզում եք փրկել ձեր հոգիները և ցույց տալ, որ թագավորի պաշտպաններն եք:
2. Նրանք իրենց զավակներին բերում էին դդումն ամանով օղի կամ նրանց վաղուց մոռացած ատրճանակները:
3. -Ինչո՞ւ ես այսպես ուշացումով երևում, - ասաց պահակապետը:
4. Ըստ իս, այնուամենայնիվ, նա կարող էր տիկնոջ արտաքինի մասին ավելի սիրալիք արտահայտվել:
5. Աղջիկը խենթորեն սիրահարվել էր այդ մարդուն, և ոչինչ չէր ուզում հասկանալ:
6. Նա զազազած շուռ եկավ և անմիջապես անհետացավ:

**37. Ընդգծվածներից որո՞նք են դերբայական դարձված.**

1. «Թոմսոնի խրամ» մենք անավնում էինք գետի կանգնած տեղը, որտեղ ջուրն սկսում էր լճանալ:
2. Եթե ամռանը ծանձաղուտը խանգարում էր խոտերի վրա շունչ առնելուն, ասպա մենք տեղափոխվում էինք մյուս ափ:
3. Այդ ակնթարթներն ինձ ձմռան երազի գիշերներ թվացին, ձմռան, քանի որ վախենալուց բացի ես նաև մրսում էի:
4. Եթե կամաց քայլելով ես ջուրը մտնում, ուրեմն՝ լողորդ չես:
5. Հոսանքի արագ փախուստից մյուս ափը մեզ անսահման հեռու էր թվում:
6. Բայց իմ պապը տեղում հանգիստ նստողներից չէր, նա անպայման պետք է մի բան աներ:

**38. Նշի՛ր այն նախադասությունների համարները, որոնցում դերբայական դարձվածի պաշտոնը ճիշտ է նշված.**

1. Նոյեմբերյան մի օր ես գնացի հյուրանոց՝ նրան վերցնելու *(նպատակի պարագա)*:
2. Ռեստորանում իմ տեղը վերադառնալիս հանդիպեցի մի հին ծանոթի, որը շատ էր փոխվել *(ժամանակի պարագա)*:
3. Ես քեզ հայտարարում եմ, որ իշխանությունը կամ գրական մեծ համբավ նվաճելը ինձ թվում էր հեշտագույն հաղթանակ *(ենթակա)*:
4. Իմ մեջ եռացող այս անսահման ինքնասիրությունը ինձ այդ պահին լիովին փրկեց *(որոշիչ)*:
5. Բայց նա այդքան շուտ հուսահատվողներից չէ, նրան չի կարելի ընկճել *(ստորոգելի)*:
6. Ես որոշեցի անհապաղ վրեժ լուծել հասարակությունից, իշխել մարդկանց մտքերին *(անջատման խնդիր)*:

**39. Նշի՛ր այն նախադասությունների համարները, որոնցում ընդգծված դերբայական դարձվածի պաշտոնը սխալ է նշված.**

1. Այդ օրերին նրան համարում էին միջոցառումների լավագույն վարողը, և շատերը չէին համարձակվում նրան դիմել *(ենթակա)*:
2. - Է՛հ, Դուք իրավունք ունեք,-ավելացրի ես՝ նստելով մոտիկ դրված աթոռին *(տեղի պարագա)*:
3. Հաճախ մի շաբաթվա հացի փողը ես ծախսել էի միայն նրա համար, որ գնամ՝ գոնե մի բույե նրան տեսնելու *(նպատակի պարագա)*:
4. Իմ մասին ասված այս միամիտ գովասանքը ինձ մի փոքր մխիթարեց *(որոշիչ)*:
5. Խեղճ աղջիկը փորձեց ծածկել իր ուրախությունը, բայց հուզմունքը թաքցնել չկարողացավ *(ձևի պարագա)*:
6. Այդ դեպքում սերը դառնում է ահավոր դժբախտություն. նա ստիպում է ձեզ բազում տանջանքներ կրել *(ուղիղ խնդիր)*:

**40. Նշի՛ր այն նախադասությունների համարները, որոնցում կա դերբայական դարձված.**

(1)Տասներեք տարեկան էի, երբ ինձ կնքեցին հայկական կաթոլիկ եկեղեցում, չնայած ես դեռ երգում էի եկեղեցական երգչախմբում: (2)Ես քննադատաբար էի վերաբերվում եկեղեցական ծիսակատարություններին և ձգտում էի յուրովի հաղորդակցվել տեր Աստծու հետ: (3)Նույնիսկ մկրտվելիս ես իմ հոգում խոր անբավարարություն ունեի: (4)Սկրտվելուց երկու ամիս անց ձայնս կտրվեց, և օրիորդի հետ կնքած պայմանը ի չիք եղավ: (5)Ինձ համար դա մեծ թեթևություն էր, իսկ նրա համար՝ սարսափելի հարված: (6)Ծննդյան և Չատկի տոներին ես լինում էի հայկական կաթոլիկ եկեղեցում, իսկ մնացած ժամանակ մի կրոնից մյուսն էի անցնում: (7)Հիմա ես ցանկացած դավանանք ընդունում եմ՝ դրանից ավելի վատը չդառնալով: (8)Ի վերջո, հավատալով կամ չհավատալով ոչինչ չի փոխվում. միայն թե լավ մարդ լինես:

**41. Ընդգծված լրացումներից որո՞նց պաշտոնն է սխալ տրված.**

- 1) Եվ նորից խորհում է տիեզերքի մեծության մասին:  
/ուղիղ խնդիր/
- 2) Ամռան մի օր՝ լճից վերադառնալիս, երկու հոգի ծեծել էին նրան:  
/ժամանակի պարագա/
- 3) Աննկարագրելի է այն զգացումը, որ ստացա այդ հայացքից:  
/անջատման խնդիր/
- 4) Կարոտով նայում էր իր վաղեմի բնակարանին:  
/հանգման խնդիր/
- 5) Քրմապետի խորհրդով նա որդուն տարավ աստվածների դուռը:  
/հիմունքի պարագա/
- 6) Այծյամի պես մի աղջիկ անդադար խոսում է ու խոսում:  
/ձևի պարագա/

**42. Նախադասություններից քանի՞սն են պարզ համառոտ.**

- 1) Վահրամն էր միայն գնում - գալիս:
- 2) Իսկ ժողովուրդը տեղից տեղ է թափառում:
- 3) Չէ, հայր սուրբ, ամբոխը չի հանգստանա:
- 4) Ճարտարապետին կանչե՞մ, հայրիկ:
- 5) Է՛, ա՛յ որդի, դու թագավոր էլ կդառնաս:
- 6) Զաջերի սահմանը իրենց զենքն է:

**43. Քանի՞ բաղադրիչ նախադասություն կա տրվածում.**

- Մենք մեր տեր Հիսուսից խելոք չենք, չնայած ինքն էլ մարդու ճակատին նոր գիր փորոզներից էր. ինչ որ նա մեզ սովորեցնում է, դրա համար պիտի ասենք՝ հանապազօրյա հացիդ համար շնորհակալ ենք, տե՛ր, որ երկնքում ես,- սփռոցի գլխին ծալապատիկ նստած՝ ասաց ծերունին:

**44. Ո՞ր շարքերում միակազմ նախադասություն կա.**

- 1) Ինձ թվում է՝ հիմա ես լսում եմ գրոհող հեծելազորի դոփյունը:
- 2) Բացարձակապես անվախ է, որովհետև անտառի մասին գիտի ամեն ինչ:
- 3) Մնում է, որ մենք էլ հետևենք նրա օրինակին:
- 4) Ամեն անգամ գետը գերան չի բերի:
- 5) Մարդ ոչ միայն հացով կապրի, այլև խոսքով:
- 6) Այդ գիշեր բարձրացավ մի կատաղի քամի:

**45. Նշի՞ր այն նախադասությունները, որոնք պարզ են.**

- 1) Հայոց հողում ճարտասանները երբեք հաջողության չեն հասել՝ թատերաբեմերից դուրս ծափերի չարժանանալով:
- 2) Հինգ տարում կրկին մոմի պես բարակել ու թափանցիկ էր դարձել:
- 3) Սմբատին ասես անսպասելիորեն արթնացրել էին խոր քնից՝ ցույց տալով իր նախնիների փառապանծ անցյալը:
- 4) Ծնկի իջած պատասխանի էր սպասում. երբեք ինքն իրենից այդքան գոհ չէր եղել:
- 5) Արքայի շուրջ խմբված պալատականներն սկսել էին իրար մեջ խոսել, շշուկով մտքեր փոխանակել և տարօրինակ կերպով ամեն ինչից զգուշանալ:
- 6) Միայն ինքն էր ամբողջը բաշխել իր ազգի նժարին և հենց դրանով էլ անգոր էր:

**46. Նշի՞ր այն նախադասությունների համարները, որոնք բարդ համադասական են.**

(1)Թե որքան խոր մենակության մեջ էր նա թաղել ինքն իրեն, անշուշտ, իմացա միայն նրա թողած գրառումներից: (2)Բայց դրանից առաջ էլ՝ կարճատև հանդիպումների ու զրույցների ընթացքում, արդեն որոշ չափով կարողացել էի ճանաչել նրան: (3)Այդ մարդու արտաքինի մասին մի քանի տեղեկություններ տվել եմ արդեն. նա առաջին հայացքից թողնում էր անսովոր մարդու տպավորություն: (4)Նրա դեմքը լի էր խելացիությամբ, իսկ գծերի արտակարգ նուրբ ու շարժուն խաղերն արտացոլում էին բացառիկ խոր ու զգայուն ներաշխարհը:

**47. Նշի՞ր այն նախադասությունների համարները, որոնք բարդ համադասական են.**

(1)Ամառվա երկարատև, տոթ օրը նոր էր մթնել: (2)Պատավ Հեղնարը և նրա երկու փոքրիկ թոռները՝ մեկը տղա, մյուսն աղջիկ, ծալապատիկ նստել էին թախտի վրա և ինչ-որ բան էին ուտում: (3)Կապույտ սփռոցի վրա պսպղում էր մի փոքրիկ լամպ, որ չմաքրած ապակու միջից պղտոր լույս էր սփռում նրանց հոգնատանջ, քրտնած երեսներին: (4)Նրանց կերածը փռի սև հաց էր և կիսախակ մի ձմերուկ, որի գույնը դժվար էր որոշել: (5)Լամպի լույսն իր շուրջը հավաքել էր ահագին թվով մանր մծեղներ, որոնք պտույտ էին գալիս տաք ապակու շուրջը: (6)Պատավ Հեղնարը ցամաքած, կուչ եկած մի կին էր՝ դեմքի անհամար խորշոմներով: (7)Հարատև չքավորությունն ու բախտի ծանր հարվածները ծռել էին նրա մեջքը և իրենց անջնջելի կնիքը դրոշմել նրա դեմքին: (8)Թոռները որբ էին և մնացել էին պառավ տատի խնամքի տակ: (9) Նրա դեմքի ու ձեռքերի կաշին եռացրած ջրի ու թոնրի կրակի մեջ չորացել, ճաքճքել, մագաղաթ էր դարձել:

**48. Տրված նախադասություններից որո՞նք են բարդ համադասական.**

- 1) Տարիքով մեծ չլինելը՝ մի լավ դաս կտայի:
- 2) Տառերը սովորելուց և հեզելով կարդալուց հետո մենք, հեռանալով վարժապետի մոտից, գնացինք դպրոց:
- 3) Մենք միասին էինք դպրոց գնում. ես առաջնորդում էի նրան:
- 4) Մի օր, երբ դաս էի պատմում, ներս մտավ տնօրենը:
- 5) Ե՛վ արևն էր այրում նրանց մարմինը, և՛ ցուրտն էր խոշտանգում նրանց:
- 6) Հորիզոնը կարծես պատել է բաց կարմիր մի հրդեհ, մինչև անգամ փողոցի փոշին վարդագույնին է տալիս:

**49. Բարդ նախադասություններից որո՞նց բաղադրիչ նախադասություններն են միմյանց հետ կապված հարաբերական դերանուններով.**

- 1) Մայրս, երբ տեսնում էր ինձ գիշերները կարդալիս, անմիջապես հրահանգում էր քնել:
- 2) Պապը մի տեսակ սուր հայացքով նայում էր թռռներից, ուրեմն պիտի լռեին:
- 3) Ով մի անգամ լսեր նրա գեղեցիկ ձայնը, երբեք չէր մոռանա այն:
- 4) Չկար մի ամերիկահայ, որ ոսկե ատամ չունենար:
- 5) Ասում էին, որ այդ ընտանիքն ունեցել է հայր, որ վաղուց գաղթել է Ամերիկա:
- 6) Ովքե՛ր անցան ձեզանով, ո՛ր գնացին, ճամփանե՛ր...

**50. Նշի՛ր ենթակա երկրորդականով նախադասությունները.**

- 1) Ինչ լավ է, որ մենք վերջապես հանդիպեցինք:
- 2) Մեզ համար մեծ ուրախություն էր, երբ ամբողջ ընտանիքը հավաքվում էր ու միասին ընթրում:
- 3) Ասում են, որ հնաքնակները վաղուց են հայտնվել այս վայրերում:
- 4) Կարծես երեկ էր, որ մենք հանդիպեցինք:
- 5) Միբու՛ն եմ, երբ մարդիկ չեն թերագնահատում իրենց համեստ կարողությունները:
- 6) Դեռ հայտնի չէ՝ երբ են նրանք գալու:

**51. Նշի՛ր ենթակա երկրորդականով նախադասությունները.**

- 1) Ուրիշ հարց է, եթե դու չես կարողանում կառավարել զգացմունքներդ:
- 2) Հասկացի՛ր վերջապես, որ այլևս վերադարձի ճանապարհ չկա:
- 3) Մարտ ամսին էր, երբ տղաները մեկնեցին ճակատ:
- 4) Խոստացի՛ր, որ ինձ երբեք չես լքի:
- 5) Հիվանդանոցից դուրս գրվելու օրն էր հենց, որ Անահիտը ստացավ մի գեղեցիկ ծաղկեփունջ:
- 6) Նա դուրս շտապեց՝ տեսնելու, թե ովքեր են աղմկում:

**52. Նշի՛ր ստորոգելի երկրորդականով նախադասությունները.**

- 1) Նրա միակ ցանկությունն էր, որ որդին բարձրագույն կրթություն ստանար:
- 2) Իմ ուզածն էր այն, որ նա միշտ ինձ հետ լինի:
- 3) Այս ամենը նրանից է, որ մենք այլևս չենք նայում աստղերին:
- 4) Ինձ համար ամենաանտանելին այն է, որ մարդիկ նախանձում են իրար:
- 5) Ով ամեն օր պայքարում է այս կյանքի դեմ, իմ իղեալը նա է:
- 6) Արդյոք ատելուց չէ, որ այսքան շատացել են դառնությունները:

**53. Նշի՛ր ստորոգելի երկրորդականով նախադասությունները.**

- 1) Այստեղ էականն է այն, որ դու մեզ հետ ես:
- 2) Այս պահին գլխավորն այն է, որ մենք չդավաճանենք ինքներս մեզ:
- 3) Լավ ընկերը նա չէ, ով ամեն ինչում իր շահն է հետապնդում:
- 4) Առայժմ այն է հասկացել միայն,  
Որ ինքը մեծ ու աններելի սխալ է գործել:
- 5) Ես նա եմ, հենց նա,  
Ով մարդկանց մերժել չի կարողանում:
- 6) Այդ ո՞վ է ասել՝ նորից են սիրում:

**54. Նշի՛ր որոշիչ երկրորդականով նախադասությունները.**

- 1) Աղոթքից հետո սկսվեց դասը, որ հայոց լեզվից էր:
- 2) Սկսած այն օրից, երբ նա հայտնվեց մեր գյուղում, խոռվություն չի պատահել:
- 3) Վաղ առավոտյան, երբ բոլորս հավաքվել էինք, բացվեց կտակը:
- 4) Ատում եմ նաև այն նեղ կոշիկը,  
Որ արքանի պես ոտքերդ է բռնում:
- 5) Մարդ կա՝ աշխարհն է շալակած տանում:
- 6) Այդ օրը ես ընդունեցի նրա հրավերը, ով միշտ իմ կողքին է եղել:

**55. Նշի՛ր հասկացուցիչ երկրորդականով նախադասությունները.**

- 1) Աղջկա լռությունը նշանակում էր, որ ինքը ընդունում է տղայի առաջարկը:
- 2) Եկեք նաև նրան ներենք,  
Ով լռում է հարկադրված:
- 3) Ովքեր անկյունում էին նստած, նրանց դեմքերը լավ չէին երևում:
- 4) Նրանց, ում մոտ մենք սովորում ենք, կոչում ենք ուսուցիչներ:
- 5) Մարդկությունը չի հիշի նրանց անունը, ովքեր կյանքում գեթ մի բարի գործ չեն կատարել:
- 6) Ես երբեք չեմ մոռանա հայացքը նրա, ում կյանքը հարվածել էր ոչ մեկ անգամ:

**56. Նշի՛ր բացահայտիչ երկրորդականով նախադասությունները.**

- 1) Մերում են նրանք բոլոր՝ ու նրանցից,  
Որ սատանային հոգին են ծախում:
- 2) Հատկապես կարևոր է ծիրանի ծառը, որը մեր յուրօրինակ խորհրդանիշն է:
- 3) Այն բույսերն են, որոնք երգչուհին բեմ բարձրացավ, դահլիճը քար կտրեց:
- 4) Իսկ գարնանը, երբ բնությունը զարթոնք է ապրում, ի նշ եղեմական ծաղկունք է բացվում այս լեռան վրա:
- 5) Փրկարար օղակը, որը կախված էր անկողնու վերևում, քեզ ծաղր է թվում:
- 6) Դու, որ գալիս ես աշխարհը փոխելու, փոխի՛ր ու նաև ինքդ քեզ:

**57. Նշի՛ր ուղիղ խնդիր երկրորդականով նախադասությունները.**

- 1) Իմացի՛ր, որ մեր օրերի խորքում  
Ես էլ եմ եղել կրքերին գերի:
- 2) Տարօրինակ է, որ սիրվելու բոլոր բարենասնություններով օժտված մի կին  
փախչում է այդ սիրազվարճ աշխարհից:
- 3) Այդ բոլորից արդեն երևում էր, որ մենք հեռու չենք գյուղից:
- 4) Ամենքին հաճելի է, որ նա ոչ միայն գեղեցիկ է, այլև գրագետ:
- 5) Մեզ բոլորիս մեծ վիշտ պատճառեց այն, որ նա հեռացավ:
- 6) Ես ուզում եմ, որ տարափը տեղա արտի, ոչ թե իզուր՝ ծովի վրա:

**58. Նշի՛ր ուղիղ խնդիր երկրորդականով նախադասությունները.**

- 1) Շատ վտանգավոր էր այն, որ ձիերը շարունակ սայթաքում էին:
- 2) Մեզ վախեցրեց այն, որ անձրևը սաստկացավ:
- 3) Եվ այն հասկացա, որ դրամի պես մաշվել են արդեն բառերը բոլոր:
- 4) Եվ ինչ որ բերվում էր, վատնվում էր անմիջապես:
- 5) Կցանկանալի իմանալ, թե ինչն է ձեզ ինձ մոտ բերել:
- 6) Ուզում էր, որ քաջ մարդ դառնար ձեր աչքին:

**59. Նշի՛ր անուղղակի խնդիր երկրորդականով նախադասությունները.**

- 1) Մենք տեսանք, թե ինչպես արևը կամաց բարձրացավ լեռան հետևից:
- 2) Ես միշտ հպարտացել եմ նրանով, որ իմ ծնողները հայ են, ու ես հայ եմ ծնվել:
- 3) Նա երգում էր այն լեռնագագաթների լազուրի մասին, որոնցից ինքը գահավիժել էր:
- 4) Ամեն կողմից ողջունում էին նրանց, ովքեր կռել էին հաղթանակը:
- 5) Հայրս խորապես հավատում էր, որ ճամփորդությունը կփրկի նրան:
- 6) Նա խուսափում էր միայն այն բանից, որ որևէ տաղտկալի գործ չհանճարարեն իրեն:

**60. Նշի՛ր հանգման խնդիր երկրորդականով նախադասությունները.**

- 1) Ես կարող եմ ենթադրել, թե այս ջուրը ոչ թե պղտոր, այլ վճիտ է:
- 2) Երանի՛ նրան, ով իր կյանքից կհեռանա առանց ավստասանքի:
- 3) Ես հավատում եմ, որ դու մի օր կգաս:
- 4) Եկե՛ք միասին չհարգենք նրանց, Ովքեր սերտում են և ոչ թե դատում:
- 5) Անհանգիստ սպասում էի, թե երբ է հասնելու իմ հերթը:
- 6) Նա միշտ ձգտում է՝ բոլորից առաջ անցնի:

**61. Ստորադաս նախադասություններից որո՞նց բնույթն է սխալ նշված.**

- 1) Թույլ մի՛ տուր, որ լեզուդ մտքիցդ առաջ անցնի (ենթակա):
- 2) Երկու վիճողներից ավելի շատ բորբոքվում է նա, ով իրավացի չէ (ենթակա):
- 3) Իմ բարեկամը նա է, ում ամեն ինչ կարող եմ ասել (ստորոգելի):
- 4) Դժբախտ է նա, ով բարի անուն չի թողնի (ստորոգելի):
- 5) Օրում կախված մնացին բառերը նրա, ով փորձում էր ասել ողջ ճշմարտությունը (որոշիչ):
- 6) Նրան, ով հաղթող է ճանաչվել, շնորհվեցին մեծ պարգևներ (հատկացուցիչ):

**62. Ստորադաս նախադասություններից որո՞նց բնույթն է սխալ նշված.**

- 1) Ես չնկատեցի, թե նա ինչպես հեռացավ մեզանից (*ձևի պարագա*):
- 2) Մերը հասկանում է միայն նա, ով դա զգացել է (*ենթակա*):
- 3) Ով չի վախենում ճշմարտությունից, ստից վախենալու բան չունի (*ենթակա*):
- 4) Ես անհամբեր սպասում եմ, թե երբ նորից կհանդիպեմ քեզ (*ուղիղ խնդիր*):
- 5) Մինչև երեխան լաց չլինի, մայրը կաթ չի տա (*պայմանի պարագա*):
- 6) Այն ժամանակ, երբ այլևս ելք չկար, հայտնվեցիր դու (*ժամանակի պարագա*):

**63. Ստորադաս նախադասություններից որո՞նց բնույթն է սխալ նշված.**

- 1) Չկա որևէ մեկը, որ աստվածների կողմից առատորեն օժտված լինի ամեն ինչով (*ուղիղ խնդիր*):
- 2) Եվ գիշերը, երբ Բաղդադը քուն էր մտել Տիգրիսի նոճիածածկ ավերի վրա, գաղտնի հեռացավ քաղաքից (*ժամանակի պարագա*):
- 3) Թե ուզում ես երգը լսեն, ժամանակիդ շունչը դարձի՛ր (*պայմանի պարագա*):
- 4) Սարսափելի էր այս ամենն այնքան, Որ մեր շուրթերից ոչ մի բառ չընկավ (*չափի պարագա*):
- 5) Ես չեմ ուզում փշրել երազները նրա, ով դեռ հավատում է հեքիաթներին (*որոշիչ*):
- 6) Թե ուզում ես քեզ հարգեն, հարգի՛ր նախ դիմացինիդ (*պայմանի պարագա*):

**64. Ստորադաս նախադասություններից որո՞նց բնույթն է սխալ նշված.**

- 1) Ես չգիտեմ, թե ինչու քեզ հիշեցի (*պատճառի պարագա*):
- 2) Հիմարը նա է, ով փոթորկի ժամանակ նավ է նստում (*ենթակա*):
- 3) Պատահեց, որ մի այրի կնոջ մի հատիկ որդին մեռավ (*ուղիղ խնդիր*):
- 4) Իսկ ես, որ կրթություն չունեմ, մեղավո՞ր եմ (*պատճառի պարագա*):
- 5) Իջավ պարտեզը, որ նորից լսի հավքերի երգը (*նպատակի պարագա*):
- 6) Թ՛վաց՝ մեկը ինձ է կանչում (*ենթակա*):


**65. Ստորադաս նախադասություններից որո՞նց բնույթն է ճիշտ նշված.**

- 1) Մինչև հիմա էլ ինձ թվում է, որ իմ այդ ստորագրությունը տպված է ոսկե տառերով (*ուղիղ խնդիր*):
- 2) Այդ շշուկի մեջ կանացիություն կար այնքան, որ ես նրան պատկերացրի ավազանում լողալիս (*չափի պարագա*):
- 3) Տարիներ հետո, երբ արտասահմանում հանդիպեցին, երկար վերհիշեցին իրենց պատանեկությունը (*ժամանակի պարագա*):
- 4) Ես ուզում եմ, որ այժմ մեկն ինձ դաժանորեն խոշտանգի այդ արարքներիս համար (*ենթակա*):
- 5) Նրա համար ամենաերջանիկն այն օրն էր, երբ առաջին անգամ պետք է գնար համալսարան (*ստորոգելի*):
- 6) Մեկը կար, որ առաջին հայացքից խելոք էր թվում (*որոշիչ*):

## ԳԼՈՒԽ V ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐ


### 1) Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը.

Իսկ ես, որ հիացած էի նրա տեսքով և ուժով, ամեն երեկո իմ բաժին հացի կեսը տալիս էի նրան, հետևում նրա լարված շարժումներին, որպեսզի անուշաղբույր չմատնեմ նրա որևէ խոսք կամ շարժում:




### 2. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը.

Երբ անտառ էր գնում, անպայման ինձ հետն էր տանում ու ծանր փայտեր էր դնում ուսիս, որ ավելի ուժեղանամ և այդպես կոփվելով՝ դառնամ իսկական տղամարդ:




### 3. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը.

Չնայած չէր ցանկանում, բայց մեկ-մեկ էլ մորեղբայրս ինձ տանում էր անտառ, անտառում դիտմամբ «կորցնում էր» ինձ, որ մենակ մնամ, սովորեմ չվախենալ:




### 4. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը.

Ինչքան էլ պապս ստիպեց, չասացի, թե ինչ էր եղել, և զիչերը մորեղբայրս համբուրեց ինձ ու ասաց, որ կամաց-կամաց իսկական տղամարդ եմ դառնում:




**5. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը.**

Երբ ձմռանը որևէ մեկը հիվանդանում էր, և սիրտը մեղր էր ուզում, ժլատ Հովհաննեսին չէին դիմում, այլ գնում էին հարևան գյուղերը:




**6. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը.**

Մենք ոչ մեկի ձայնը չէինք լսում, ուզում էինք գծություն անել, որպեսզի մարդիկ դուրս գան վրաններից ու նայեն աստղերին, նայեն լեռան կատարին, որտեղ մենությունից տխուր կծկվել էր անտառը:




**7. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը.**

Հենց այդ ժամանակ լրացավ իմ յոթ տարին, և բոլորը միանգամից գլխի ընկան, որ ես մեծ մարդ եմ դառնալու, որովհետև գիշերները նայում էի լեռան գագաթին, որի վրա ասես աստղեր էին թափվում:




**8. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը.**

Երեխաները, որ հավաքվել էին մի մեծ քարայրի առջև, ցանկանում էին ներս մտնել, որ գիշերեին այնտեղ, քանի որ չէին կարող անտառից այդ ժամին դուրս գալ:




**9. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը.**

Ու ոտխի զարկիցը սև  
 Դու պաշտպանի՜ր կրծքով նրան,  
 Ինչպես մորդ կպաշտպանես,  
 Թե սուր քաշեն մորդ վրա:




**10. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը.**

Թե խենթ լեզուս անունդ տա,  
 Ես կսեղմեմ ատամներով,  
 Որ հնչյուն իսկ չշշնջա:




**11. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը.**

Թե տիրես, մեծ Շահ, դու նըրա սըրտին,  
 Թաթուլն էլ անգոր կընկնի ոտիդ տակ,  
 Հանգիստ կըտիրես և թըմուկ բերդին,  
 Որ չես կարենում էսքան ժամանակ:




**12. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը.**

Երբ սկսեց աճյունն իջնել  
 Շիրիմ կոչված այն փոսի մեջ,  
 Որ հիրավի պիտի կոչվեր նոր Խոր Վիրասպ,  
 Նույն այդ պահին հայ երկնքից  
 Հանկարծակի անձրև տեղաց:




**13. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը.**

Իսկ ձմեռները քաղաքի աշխույժն ավելանում էր նրանով, որ թագավորն իր ամբողջ արքունիքով տեղափոխվում էր Գվին և ապրում էր միջնաբերդում մինչև գարնան կեսերը՝ լիարժեք վայելելով իր հանգիստը:




**14. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը.**

Նա թեև պատասխանեց, բայց և անմիջապես զգաց, որ դա իսկական պատասխան չէր, և ծերունու հարցումը նկատելի հուզեց նրան և անչափ մտահոգեց:




**15. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը.**

Թեև փետրվարի վերջն էր, այնուամենայնիվ ցրտերն օրեցօր սաստկանում էին, քաղաքում զգացվում էր մթերքի, առաջին հերթին հացի կարիք, քանի որ կապը խզված էր շրջանների հետ, և գյուղացին այլևս ոչինչ չէր բերում քաղաք՝ ո՛չ մթերք, ո՛չ վառելիք:




**16. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը.**

Նրանց ուսանող որդին՝ Արամը, որ վաղուց Մոսկվայում էր ապրում, և որից երկու տարուց ավելի լուր չունեին, Ռոստովից հեռագրել էր, թե գալիս է:




**17. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը.**

Երբեմն լինում են պահեր, երբ սարսափելի գրավում է մարդուն հետաքրքիր տեսարանի պես, և մարդ անդիմադրելի ցանկությամբ ուզում է տեսնել այն, թեկուզև վտանգի իրեն:




**18. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը.**

Բայց երբ անցավ մի տասը օր, և կռիվը բավական հեռացավ քաղաքից, նրա մեջ հանկարծ զարթնեց այրված տունը տեսնելու մի փափագ, իսկ դրա համար նրան օգնեց կինը, որը շարունակ տրտնջում էր, թե նոր բնակարանը հարմարություններ չունի:




**19. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը.**

Այնքան փոշի կա այստեղ, որ իրենք հեշտությամբ կարող են վարակվել ու հիվանդանալ, ուստի պնդում էր, որ շուտափույթ հեռանան այդ վայրից և ապրեն ավելի ապահով ու մաքուր մի վայրում:




**20. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը.**

Թեպետ տասը օր էր, ինչ զինվորները հեռացել էին քաղաքից, սակայն տենդային վիճակը շարունակվում էր, և մարդիկ, որոնք խիստ անհանգիստ էին, քնում էին ուշ, զարթնում շուտ և, առանց մի բան ուտելու, իրենց նետում փողոց:




**21. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը.**

Արդյոք գիտե՞ր, որ ինքը դողանջուն անտառների ազատ երեխա է եղել, որ մայրը այնտեղ կաթ է տվել իրեն, որ այնտեղ է իր հայրը եղջյուրները խփել կաղնիներին, արդյոք գիտե՞ր, որ այդ խուլ շառաչը անուշ օրորել է իրեն:




**22. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը.**

Երբ գրկում էի նրան՝ այդ նագելի էակին, և նայում լեռնային աղբյուրների մման նրա վճիտ աչուկների մեջ, տեսնում էի, որ այնտեղ մի թախծալի, երազուն կարոտ կա:




**23. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը.**

Մեր պարտեզի բարձր բարդու վրա, ուր ծառը երեք մեծ ճյուղի էր բաժանվում, երկու արագիլ՝ այր ու կին, իրենց մեծ բույնն էին հյուսել այնպես, որ արագիլները իրենց ձագուկներով հանգիստ տեղավորվում էին այնտեղ:




**24. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը.**

Պետին գնաց, որ ջուր խմի մոտակա աղբյուրից, ցրված նախիրը հավաքի ձորի մոտ, բայց երբ վերադարձավ, կովն արդեն սատկել էր:




**25. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը.**

Մեր ուսուցչուհին դասարան մտավ պղտոր, շփոթ հայացքով՝ փորձելով մի կերպ աշխարհագրություն դասավանդել, բայց զգաց, որ չի կարողանում, ուստի և մեզ խնդրեց դասն անցկացնել:




**26. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը.**

Նա տեսել էր ավագակների, որոնք տաճարների դռներն էին համբուրում և բարեպաշտ հռչակվում, հարստահարողների, որոնք Աստծու սեղանի կանթեղի մեջ յուղ էին լցնում, մոլլաների, որոնք այդ բոլոր մարդկանց օրհնում էին՝ նրանց բարեպաշտությունը հռչակելով և Աստծու պաշտամունքը նրանց ծառայեցնելով:




**27. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը.**

Անապատի բնակիչները գիտեն, որ այդպիսի աղբյուրների մոտ երբեմն հավաքվում են անապատի գազանները՝ իրենց ծարավը հագեցնելու, և ուրեմն համոզված են, որ երբեք միայնակ պետք չէ մոտենալ աղբյուրին:




**28. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը.**

Թեև գետն արդեն կես էր եղել և սպառնում էր շուտով մի առավակ դառնալու, սակայն գյուղացիք շարունակեցին ծիծաղել երևակայական վիշապի վրա և ջրի նվազելը համարեցին որևէ բնական պատճառի արդյունք՝ քացարձակ շանհանգստանալով ոչ մի բանից:




**29. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը.**

Այն միջոցին, երբ մեր հարևան հրեաների խանութները թալանում էին, երբ տներից դուրս ձգվող մանկական անկողիների բուրդն ու փետուրը քամու բերանում էին, կանանց ու երեխաների աղաղակն ու հեծկլտանքը լցրել էին օդը, մենք փակված էինք խանութում:




**30. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը.**

Պարզ էր ինձ համար, որ այդ մարդը մի ժամանակ վայելել է կյանքի բարիքները և այժմ, երբ տարիներն իրենց հետքն էին թողել նրա դեմքին, չի կարողանում անցյալի հիշողություններից ազատվել:




**31. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը.**

Մեր արևը սպիտակ գույնի է, ուժեղ դեղնավուն երանգ ունի, բայց երբ տարրալուծում ենք նրա ճառագայթներից մեկը, տեսնում ենք, որ այն բաղկացած է յոթ գույներից և չի կարող ավելի ունենալ:




**32. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը.**

Սիրիուսի բնակիչը, որի երկրում նման տարրերի թիվը հասնում էր երեք հարյուրի, և որն իր ճանապարհորդությունների ընթացքում հայտնաբերել էր ևս երեք հազար ուրիշ տեսակներ, անսովոր զարմանք պատճառեց Սատուրնի փիլիսոփային:




**33. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը.**

Կտրելով հարյուր հիստոն մղոն ճանապարհ՝ նրանք եկան հասան Յուպիտերի վրա, այնտեղ մնացին մեկ տարի և իմացան շատ ու շատ ուշագրավ գաղտնիքներ, որոնք, անտարակույս, արժանի են մամուլում հրապարակվելու:




**34. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը.**

Քանի որ օրիորդը մեծ հակում ուներ դեպի գիտությունը, ուստի և նա, մի պահ անգամ չվարանելով, ուշադրությամբ սկսեց դիտել կատարվող և կրկնվող այն փորձերը, որոնց վկան էր դարձել ինքը:




**35. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը.**

Նա իսկույն հանել է տալիս Կանդիդի ձեռնաշղթաները՝ ասելով, որ դա սխալմունք է, հետ է ուղարկում իր մարդկանց, իսկ հետո երկուսին էլ ուղարկում Վենետիկ, ուր նրանց թողնում է իր եղբոր մոտ:




**36. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը.**

Որոշած լինելով երկար ճանապարհորդություն կատարել՝ մենք եկել էինք Փարիզ՝ անհրաժեշտ պատրաստություններ տեսնելու, բայց որոշ գործեր կարգավորելու համար ժամանակ էր պահանջվում, և հարկ եղավ մեկ ամսով կահավորված բնակարան վարձել, որպեսզի ավարտեինք մեր գործերը:




**37. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը.**

Քարտեզի վրա հակված Աննան փնտրում էր այն վայրը, ուր կարող էինք թաքնվել, և այդ անորոշության մեջ այնպիսի հաճույք էր գգում, որ ձևացնում էր, թե չի կարողանում որևէ որոշում կայացնել:




**38. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը.**

Երբ կինը հանկարծ տխրում էր և խոնարհում աչքերը, երիտասարդը նրան սրտապնդելու համար ջանում էր վստահ ու վճռական տեսք ընդունել, սակայն դա նրան միշտ չէր հաջողվում, և երբեմն ինքն էլ էր հուզվում՝ չդիմանալով լարումին:




**39. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը.**

Հաջորդ օրը՝ կեսօրին, երբ փայլում էր պայծառ արևը, նրանք գնացին՝ պանդոկի վերևի սենյակներից մեկում նախաճաշելու, որտեղից բացվում էր աշխարհի հիասքանչ տեսարաններից մեկը:




**40. Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը.**

Այո՛, նայիր նրանց, մտածիր նրանց մասին, ում լավում է ձանձրույթը, և որոնց հեռուներն է տանում մի վիշտ, որին ոչ ոք հաղթել չի կարող:




**41. Նշիր, թե որ նախադասությունն է համապատասխանում տրված գծապատկերին.**




- Ի դժբախտություն իրեն՝ ինքը դարձել էր մուրացիկ, որ, մարդկանց մեջ միայն ցինիզմ ու անասնական զգացմունքներ տեսնելով, միանգամայն բնական էր համարում իշխանից իր անձի հանդեպ գոնե մի փոքր հարգանք պահանջելը:
- Վիկտոր Հյուգոյին, որն այդ ժամանակ գլխավորում էր Ֆրանսիական ակադեմիան, հանձնարարեցին ցավակցություն հայտնել թագավորին, և նա փառաբանեց վաղաժամ զոհված դուքսին:
- Այդպիսի երկար զրոսանքների ժամանակ նա հագնում էր կապույտ տաբատ՝ զվարթությամբ ասելով, որ իր երկար հագուստը հարմար չէ թփուտների համար, և պետք է այն փոխարինել մեկ ուրիշով:
- Կարելի է ասել, որ մեր վեճը թախժոտ չի եղել. այլ հաշտությունը նրա կողմից ուղեկցվել է անասելի խորհրդավորությամբ:

42. Նշիր, թե որ նախադասությունն է համապատասխանում տրված գծապատկերին.




1. Մակայն երկու բանաստեղծներն էլ մնում էին համախոհներ, նաև գովասանքներ էին փոխանակում՝ մի սնունդ, որն անհրաժեշտ էր բարեկամությունը պահպանելու համար:
2. Մեկ ամսում գրված այդ պիեսը Հյուգոյի դրամատիկական լավագույն ստեղծագործությունը դարձավ, որն իր հերոսական հնչեղությամբ չէր զիջում «մեծ դարաշրջանի» դասականների չափածոյին, նրանց հարուստ և հնչեղ հանգին:
3. Հայտնի է, որ իրերն ուրիշ կերպ լինել չեն կարող, քանի որ ստեղծված լինելով որոշակի նպատակի համար՝ դրանք անհրաժեշտորեն գոյություն ունեն՝ ծառայելու լավագույն նպատակին:
4. Մի օր նա, երբ զբոսնում էր դղյակի մոտերքում, թփուտների մեջ տեսավ Աննային, որը ֆիզիկայի դաս էր տալիս իր մոր աղախնուն՝ թխաղեմ, շատ սիրունիկ ու հնազանդ մի աղջկա:

43. Նշիր, թե որ նախադասությունն է համապատասխանում տրված գծապատկերին.




1. Ես տեսել եմ Տիցիանի այն նկարը, որտեղ սուրբ Թովմասը մատը դրել է Քրիստոսի վերքի վրա, և հաճախ մտածել եմ այն մասին, որ սերը Աստծու նկատմամբ մարդու ունեցած հավատի հետ համեմատելու դեպքում ես կարող էի ասել, որ նման եմ այդ սրբին:
2. Ես դողում էի այն մտքից, որ չլինի թե նրա մեջ դեռ պահպանված լինի նախկին վախը, և նկատում էի, որ իմ մեջ կատարվող փոփոխությունները կարող էին նրան կասկածամիտ դարձրած լինել, փոխած լինել հիմնովին:
3. Ես չէի կարողանում ուշադրությունս կենտրոնացնել՝ տեսնելու, թե ինչ է կատարվում բեմի վրա և սրահում. այնքան վշտացած էի, որ, այսպես ասած, սպրում էի միայն ինձնով, և արտաքին աշխարհը չէր ազդում զգայարաններիս վրա:
4. Նա պետք է որ ինձ ճանաչեր դեմքով և, բացի այդ, եթե նույնիսկ չճանաչեր, երբ մարդ տեսնում է մեկ ուրիշի՝ իրեն մոտենալը, պարտավոր է նրան գեթ սպասել:

**44 Նշիր, թե որ նախադասությունն է համապատասխանում տրված գծապատկերին.**



1. Մինչ նա խոսում էր, ես նայում էի տիկին Պիրսոնին և սպասում, թե ինչ է պատասխանելու, որ ես փարատեմ իմ կասկածները.
2. Հենց որ նստեց նատարանին, սկսեց խոսել Փարիզի մասին, բայց չէր նկատում իմ գայրույթը, որ առաջացավ այն պահին, երբ նա սկսեց խոսել:
3. Լինելով մարմնեղ և գունատ՝ նա ինձ երբեք դուր չէր եկել և չէր գրավել, քանի որ նրա մեջ աստիճանաբար հայտնաբերում էի այնպիսի գծեր, որոնց ինձ տհաճ էին:
4. Քանի որ նրա շուրջը ամեն ինչ գեղեցիկ էր, ամեն ոք ձգտում էր հաճոյանալ նրան և դուր գալ, որպեսզի ինքն էլ ուրախ և երջանիկ զգար, ինչպես հրեշտակներն են անհոգ ու երջանիկ:

**45. Նշիր, թե որ նախադասությունն է համապատասխանում տրված գծապատկերին.**




1. Ես չեմ կարծում, որ տվյալ դեպքում ինձ սնահավատության մեջ մեղադրելու ավելի հիմք ունենան, քան եթե ես խոսեի սֆինքսների մասին, որոնց գոյությունը դիցաբանության մեջ ընդունված է:
2. Երիտասարդը ընդոստ վեր կացավ՝ ինչ-որ շարժում անելով, երբ իր նստած աթոռի վերևում նկատեց շագրենի կաշվի մի կտոր, և մոտեցավ այդ կարծեցյալ թալիսմանին, որն իրեն իբրև թե պետք է պահպաներ դժբախտությունից:
3. Ծերունին իր դանակը տվեց անձանոթին, ով վերցրեց և փորձեց կաշին կտրել այն տեղից, որտեղ գրված էին բառերը:
4. Ծերունին սկսեց խոսել՝ գլուխն օրորելով և լուրջ տոն ընդունելով, բայց, ցավոք, նրան ոչ ոք չէր լսում, քանի որ բոլորն զբաղված էին պարահանդեսի պատրաստությամբ:

**46. Նշիր, թե որ նախադասությունն է համապատասխանում տրված գծապատկերին.**




1. Ինչպե՞ս կարելի է տենդագին, վաղանցիկ հիացումները գերադասել առավել կամ գունագեղ իրերից, ինչպե՞ս կարելի է հուսախաբ կամքի աղետները գերադասել անկաշկանդ շարժվելու հաճույքից՝ զերծ ժամանակի և տարածության կապանքներից:
2. Ո՛չ, Դուք պայմանագիր եք ստորագրել, և դա հուշում է՝ ինչ է լինելու:
3. Ես այդ արտասովոր ուժին հրամայում եմ՝ ինձ համար բոլոր ուրախությունները միաձուլի մեկ ուրախության մեջ:
4. Բայց այս գողորիկ զանձերը, դեռատի աղջկա այս հարստությունը, գեղեցկության այս ամբողջ պերճանքը ասես կորչում էին ինձ համար՝ հիշեցնելով իմ վաղաժամ ծերությունն ու տկարությունը:

**47. Նշիր, թե որ նախադասությունն է համապատասխանում տրված գծապատկերին.**




1. Մի՞թե կրոնական որևէ հույզ, հոգածության որևէ նշույլ չկա այդ վերաբերմունքի մեջ, որ շռայլվում է սիրած էակի նկատմամբ, որը դեռ չի կարող այն գնահատել:
2. Այդ նշանավոր տարվա հոկտեմբեր ամսվա վերջին, Պալե-Ռոյալ մտավ մի երիտասարդ ճիշտ այն բույսին, երբ խաղատները բացվում էին՝ համաձայն այն օրենքի, որ պաշտպանում է անխուսափելի դարձած կիրքը:
3. Այդ միջոցին, երբ դուք մտնում եք խաղատուն, օրենքը նախ և առաջ ձեզնից խլում է ձեր գլխարկը, որպեսզի դուք հարգալից կեցվածք ընդունեք նրանց առջև, ովքեր խաղի մեջ խլելու են ձեր գումարը:
4. Օրիորդը մի քանի անգամ բարձրացրել էր վարագույրները՝ ժայռերից վերև ելնող ծխի մի սյուն տեսնելու, բայց թվում էր, որ մառախուղը բույս առ բույս նոր երանգներ է ստանում, որոնց մեջ նրա երևակայությունը վատ նախագուշակումներ նշմարեց:

**48. Նշիր, թե որ նախադասությունն է համապատասխանում տրված գծապատկերին:**




1. Ես ավելի ուշ իմացա, որ կանայք չեն ցանկանում՝ իրենց խնդրեն, այլ շատերը պաշտում են հեռվից, նվիրում իրենց սիրտը, հոգին, որպեսզի զոհողությունների ու տանջանքների միջով մաքրագործվեն:
2. Իմ հասակակից երիտասարդների մեջ ես հանդիպեցի մի խումբ սնապարծների, որոնք քայլում էին՝ գլուխները բարձր պահած, շողակրատում էին դատարկ բաների մասին, հանդուգն խոսքեր ասում, շարունակ ցույց տալիս, որ խուսափում են հաճույքներից:
3. Այն կնոջ հանդեպ, որը ինձ կխղճար, ես իմ սրտում ոչ միայն սեր ունեի, այլև այնպիսի երախտապարտություն, այնպիսի շնորհակալական զգացում, որ նրան կպաշտեի իմ ամբողջ կյանքում:
4. Եվ այդ ժամանակը ես կնվիրեի՝ լույս ընծայելու այդ երկը, որը հասարակության ուշադրությունը կիրավիրեր ինձ վրա և ինձ համբավ կբերեր, կբերեր փառք և հարստություն, որ անհունորեն տենչում էի:

**49. Նշիր, թե որ նախադասությունն է համապատասխանում տրված գծապատկերին:**



1. Այն ժամանակ, երբ այս անվեհեր հյուրերը տեղավորվեցին դուքսի սեղանի մոտ, Ռաֆայելը, որ երեկ ճաշից հետո ինչ-որ պատրվակով դուրս էր եկել, զգուշությամբ չքացել, ներկայացավ հանդիսավոր դեմքով:
2. Դուք կսարսափեիք, երբ տեսնեիք այս մարդկային դեմքերը, հառաչանք կարձակեիք, երբ հոգնած աչքերով ձեզ դիմավորեին նրանք, ում դուք անսահման կարոտել եք:
3. Հյուրերը, որոնք ցանկանում էին կամաց-կամաց ցրվել, ծանր հառաչանք արձակեցին. նրանք զգացին, որ իրենց թևերն ու ոտքերը թմրել են, և սաստիկ թուլություն են զգում:
4. Նա, որ այդքան փորձառու էր, բանակցությունները վարում էր բացառիկ վարպետությամբ, և չնայած խորամանկությանն ու փորձին՝ Փիլոնը ստիպված էր հստակ ու կոնկրետ պայմաններ հանձն առնել, որպեսզի դիմացինն իրեն խաբված չզգա:

**50. Նշիր, թե որ նախադասությունն է համապատասխանում տրված գծապատկերին:**



1. Երբ Սիմեոնի բանակը, դուրս գալով քաղաքի դարպասներից, շարժվեց հարավ-արևելք, Կողոմիայի բարձր աշտարակները դեռևս մշուշի մեջ էին:
2. Երբ զինվորները հեռացան, որպեսզի երեսնիվայր ընկնեն կանաչների վրա, մենք գլխահակ կանգնեցինք՝ ասես ինչ-որ բանից սարսափած:
3. Եթե հաշվեր իր վերքերը, չէր կարողանա անհամար սպիների մեջ գտնել թուրքից ստացած առաջին վերքը, որը մի ժամանակ սոսկալի ցավում էր:
4. Արժրունյաց Սենեքերիմ արքան, որ փակվել էր Վանի անառիկ ամրոցում, երեց որդուն՝ Դավթին, ուղարկել էր Կոստանդնուպոլիս՝ բանակցություններ վարելու:

**ԳԼՈՒԽ VI ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐ**

**1. Բարդ ստորադասական նախադասությունների փոխակերպման տարբերակներից որո՞նք են սխալ.**

- 1) Յերեկվա երրորդ ժամին հյուրերը հետզհետե հավաքվեցին Վորոնցովի զբոսայգում, որը գտնվում էր բարձունքներից մեկի վրա:  
*Յերեկվա երրորդ ժամին հյուրերը հետզհետե հավաքվեցին բարձունքներից մեկի վրա գտնվող Վորոնցովի զբոսայգում:*
- 2) Հետևյալ օրը, երբ Պապը պատրաստվում էր մեկնել Տերենտի դղյակը, եղանակը հանկարծ փոխվեց:  
*Հետևյալ օրը՝ Պապի՝ Տերենտի դղյակը մեկնել պատրաստվելիս, եղանակը հանկարծ փոխվեց:*
- 3) Եվ տարօրինակն այն էր, որ բոլորը նույն կերպ էին մտածում:  
*Եվ տարօրինակ էր բոլորի՝ նույն կերպ մտածելը:*
- 4) Սակայն երկուսն էլ ըմբռնում էին, որ խիստ անհրաժեշտ էր որևէ բավարարող վճիռ ընդունել:  
*Սակայն երկուսն էլ ըմբռնում էին որևէ բավարարող վճիռ ընդունելու խիստ անհրաժեշտությունը:*
- 5) Այդ օրերին կարծես թե անագորույն ճակատագիրը որոշեց կալանավորներին գրկել վերջին հույսից ու ևս մեկ անգամ հիշեցնել, որ նրանք մշտնջենական բանտարկության են դատապարտված:  
*Այդ օրերին կարծես թե անագորույն ճակատագիրը որոշեց կալանավորներին գրկել վերջին հույսից ու ևս մեկ անգամ հիշեցնել նրանց՝ մշտնջենական բանտարկության դատապարտված լինելը:*
- 6) Երբեմն գնում էի այնտեղ՝ տեսնելու՝ ինչպես են սովորում աշակերտները:  
*Երբեմն գնում էի այնտեղ՝ տեսնելու աշակերտների սովորելը:*

**2. Բարդ ստորադասական նախադասությունների փոխակերպման տարբերակներից որո՞նք են սխալ.**

- 1) Ես շատ շուտ ճանաչեցի նրանց ներաշխարհը, որովհետև դյուրին է այդպիսի մարդկանց ճանաչելը:  
*Ես շատ շուտ ճանաչեցի նրանց ներաշխարհը այդպիսի մարդկանց դյուրին ճանաչելու համար:*
- 2) Բայց նա հիմա էր հասկանում, որ այդքան ժամանակ ինքը պարզապես կանգնած է եղել երկուսի միջև:  
*Նա հիմա էր հասկանում այդքան ժամանակ իր երկուսի միջև պարզապես կանգնած լինելը:*
- 3) Չգիտեմ՝ ինչ խոսեցի երեսփոխանի հետ, ինչ հորդորեցի նրան:  
*Չգիտեմ՝ երեսփոխանի հետ ինչ խոսելու, նրան ինչ հորդորելու:*
- 4) Ծագող արևի առաջին ճառագայթներն ընկան մերձակա բլրի հյուսիսարևելյան լանջին, որը ծածկված էր սաղարթախիտ անտառով:  
*Ծագող արևի առաջին ճառագայթներն ընկան մերձակա բլրի՝ սաղարթախիտ անտառով ծածկված հյուսիսարևելյան լանջին:*
- 5) Այդ կտրիճ վանականի միակ մեղքն այն էր, որ խնդրել էր կաթողիկոսին սովից փրկել հերոսաբար մարտնչող գեղջուկներին:  
*Այդ կտրիճ վանականի միակ մեղքն էր կաթողիկոսին հերոսաբար մարտնչող գեղջուկներին սովից փրկել խնդրելը:*
- 6) Ով որ կարողանում էր մազապուրծ փախչել, հանդիպում էր զինվորներին:  
*Մազապուրծ փախչողը հանդիպում էր զինվորներին:*

**3. Բարդ ստորադասական նախադասությունների փոխակերպման տարբերակներից որո՞նք են սխալ.**

- 1) Որքան շատ են չբացահայտված արարքները, այնքան մեծ է բանասրկումների հետաքրքրությունը:  
*Բանասրկումների հետաքրքրությունը չբացահայտված արարքների շատ լինելու չափ մեծ է:*
- 2) Անտանելին Հակոբ պապի համար այն է, որ իր մոտ սուտ են խոսում:  
*Անտանելին Հակոբ պապի համար իր մոտ սուտ խոսելն է:*
- 3) Դ-ա այն օրն էր, երբ գիշերը իջևանատանը այրեց փաստաթղթերը:  
*Դ-ա գիշերը իջևանատանը փաստաթղթերը այրելու ժամանակն էր:*
- 4) Ջրվեժի հմայքը մեծ է հատկապես վաղորդայնին, երբ արևի ոսկեգօծ ճառագայթները փոխվում են երփներանգ ծիածանի:  
*Ջրվեժի հմայքը մեծ է հատկապես վաղորդայնին՝ արևի ոսկեգօծ ճառագայթների՝ երփներանգ ծիածանի փոխվելու ժամանակ:*
- 5) Ես ուշադիր հետևում էի՝ ինչպես էր ուսուցչուհին դաս բացատրում:  
*Ես ուշադիր հետևում էի ուսուցչուհու դաս բացատրելուն:*
- 6) Ես այն եմ ուզում, ինչ բոլորն են փնտրում:  
*Իմ ուզածը բոլորի փնտրածն է:*

**4. Բարդ ստորադասական նախադասությունների փոխակերպման տարբերակներից որո՞նք են սխալ.**

- 1) Դ-ու, որ շատ ես տառապել, չես հասկանում ուրիշի տառապանքը:  
*Դ-ու, շատ տառապած լինելով, չես հասկանում ուրիշի տառապանքը:*
- 2) Այս երեկո հիշել եմ քեզ, որ հեռացար ու մոռացար ինձ:  
*Այս երեկո հիշել եմ քեզ՝ հեռացողիդ ու ինձ մոռացողիդ:*
- 3) Ես երագում եմ նրա ներկայությունը, ով կմեղմի հոգուս ցավը:  
*Ես երագում եմ նրա ներկայությունը հոգուս ցավը մեղմելու համար:*
- 4) Ճակատագրական պահերին Արամը միշտ անցել է նրանց կողմը, ովքեր զորեղ են:  
*Ճակատագրական պահերին Արամը միշտ անցել է նրանց՝ զորեղների կողմը:*
- 5) Եվ այն հասկացա, որ դրամի պես մաշվել են արդեն բառերը բոլոր:  
*Դրամի պես բոլոր բառերի մաշվելը հասկացա:*
- 6) Ես սիրով լսեցի ոչ միայն տուժածներին, այլև նրանց, ովքեր այդ պահին հավաքված էին այդտեղ:  
*Ես սիրով լսեցի և՛ տուժածներին, և՛ այդ պահին այդտեղ հավաքվածներին:*

**5. Բարդ ստորադասական նախադասությունների փոխակերպման տարբերակներից որո՞նք են սխալ.**

- 1) Ձեկուցողը ամենից շատ քննադատվեց նրանց կողմից, ովքեր ամենաքիչն էին հասկանում այդ հարցից:  
*Ձեկուցողը ամենից շատ քննադատվեց նրանց՝ այդ հարցից ամենաքիչը հասկացողների կողմից:*
- 2) Քո արարքը արդարացվում է միայն նրանով, որ դու անտեղյակ ես եղել այդ ամենին:  
*Քո արարքը արդարացվում է միայն քո՝ այդ ամենին անտեղյակ լինելով:*
- 3) Ես անհամբեր սպասում եմ, թե դու երբ ես գալու:  
*Ես անհամբեր սպասում եմ քո երբ գալուն:*
- 4) Ես միշտ էլ վախեցել եմ, որ դու ինձ ճիշտ չես հասկանա:  
*Ես միշտ էլ վախեցել եմ քո՝ ինձ ճիշտ չհասկանալու համար:*
- 5) Նրանք դարձյալ վիճում էին այն մասին, թե ով այս անգամ կհաղթի մրցույթում:  
*Նրանք դարձյալ վիճում էին ում՝ մրցույթում այս անգամ հաղթելու մասին:*
- 6) Հարևան շենքի մուտքը, որ զարդարված էր տոնականորեն, գրավում էր անցորդների ուշադրությունը:  
*Տոնականորեն զարդարված հարևան շենքի մուտքը գրավում էր անցորդների ուշադրությունը:*

**6. Բարդ ստորադասական նախադասությունների փոխակերպման տարբերակներից որո՞նք են սխալ.**

- 1) Ես այդպես էլ չէի կարողանում կռահել, թե նա ինչպես հայտնվեց:  
*Ես այդպես էլ չէի կարողանում կռահել նրա ինչպես հայտնվելը:*
- 2) Բոլոր հարցերը քննարկվեցին նրանց կողմից, ովքեր ներկա էին ժողովին:  
*Բոլոր հարցերը քննարկվեցին նրանց ժողովին ներկա եղողների կողմից:*
- 3) Բոլորն էլ գիտեն, որ մենք այլևս իրար հետ չենք:  
*Բոլորն էլ գիտեն մեր՝ այլևս իրար հետ չլինելու մասին:*
- 4) Արամն այդպես էլ չիմացավ, թե երբ է գալու իր հերթը:  
*Արամն այդպես էլ չիմացավ իր հերթի երբ գալը:*
- 5) Մարդիկ հարստանում են նրանով, որ գրկում են ուրիշներին:  
*Մարդիկ հարստանում են ուրիշներին գրկելով:*
- 6) Հարցը հասավ նրան, որ մենք բաժանվեցինք:  
*Հարցը հասավ նրան՝ մեր բաժանվելուն:*

**7. Բարդ ստորադասական նախադասությունների փոխակերպման տարբերակներից որո՞նք են սխալ.**

- 1) Մենք դեռ երանի ենք տալու նրանց, ովքեր այդ պահին ներկա չէին:  
*Մենք դեռ երանի ենք տալու նրանց՝ այդ պահին ներկա չեղողներին:*
- 2) Մարդ միշտ պետք է սիրի ուսուցչին, ով իրեն սովորեցնողն է:  
*Մարդ միշտ պետք է սիրի ուսուցչին՝ իրեն սովորեցնողին:*
- 3) Ով չի պատժում հանցանքը, դրա մեղսակիցն է:  
*Հանցանքը չպատժողն է դրա մեղսակիցը:*
- 4) Աղջիկն ապշած նայում էր, թե ինչպես էր նա դողում ծիծաղից:  
*Աղջիկն ապշած նայում էր ծիծաղից նրա դողալուն:*
- 5) Այն մեծ մտքից, որ մարդ են, վեհանում է միշտ հոգիս:  
*Մարդ լինելուս մեծ մտքից վեհանում է միշտ հոգիս:*
- 6) Մարդու մասին կարելի է դատել այն բանով, թե նա ինչի վրա է ծիծաղում:  
*Մարդու մասին կարելի է դատել նրա՝ ինչի վրա ծիծաղելով:*

**8. Բարդ ստորադասական նախադասությունների փոխակերպման տարբերակներից որո՞նք են սխալ.**

- 1) Իմ մեծությունն է այն, որ իմ տոհմը ինձանից է սկսվում:  
*Իմ մեծությունը իմ տոհմի ինձանից սկսվելն է:*
- 2) Աշխարհի նպատակն այն է, որ բանականությունը թագավորի:  
*Աշխարհի նպատակը բանականության թագավորելն է:*
- 3) Եթե մարդու սրտում սեր չկա, ապա ոչ մի տեղ այն լինել չի կարող:  
*Մարդու սրտում սեր չլինելու դեպքում ապա այն ոչ մի տեղ լինել չի կարող:*
- 4) Ով շատ է խոսում, շատ հիմարություններ է ասում:  
*Շատ խոսողը շատ հիմարություններ է ասում:*
- 5) Շատախոս է նա, ով մտածել չի իմանում:  
*Շատախոսը մտածել չիմացողն է:*
- 6) Չի սխալվում նա, ով ոչինչ չի անում:  
*Չի սխալվում ոչինչ չանողը:*

**9. Բարդ ստորադասական նախադասությունների փոխակերպման տարբերակներից որո՞նք են սխալ.**

- 1) Դու, որ չես տառապել, կարեկցելու ընդունակ չես:  
*Դու՝ չտառապածդ, կարեկցելու ընդունակ չես:*
- 2) Այն պահին, երբ վերջին երգն էին երգում, երգչախմբի անդամներից մեկը ուշաթափվեց:  
*Վերջին երգը երգվելու ժամանակ երգչախմբի անդամներից մեկը ուշաթափվեց:*
- 3) Երջանիկը նա է, ով սիրվում է:  
*Միրվողը երջանիկ է:*
- 4) Նրանց մեջ էր նաև ընկերուհիս՝ Արփիկեն, որը նոր էր վերադարձել հյուրախաղերից:  
*Նրանց մեջ էր նաև հյուրախաղերից նոր վերադարձած ընկերուհիս՝ Արփիկեն:*
- 5) Աննան, երբ տարիներ հետո վերհիշում էր այդ պահը, խորապես զղջում էր:  
*Աննան տարիներ հետո այդ պահը վերհիշելիս խորապես զղջում էր:*
- 6) Եվան կանգ առավ, մինչև հայրը հասավ իրեն:  
*Եվան կանգ առավ մինչև հոր՝ իրեն հասնելը:*

**10. Պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունների փոխակերպման տարբերակներից որո՞նք են սխալ.**

- 1) Մտնելով ծառերով շրջապատված բակը՝ Պապը տանտիրոջ ուղեկցությամբ քարե սանդուղքներով բարձրացավ դղյակը:  
*Երբ Պապը մտավ ծառերով շրջապատված բակը, տանտիրոջ ուղեկցությամբ քարե սանդուղքներով բարձրացավ դղյակը:*
- 2) Մինչ տնեցիների՝ իրերը հավաքելը Հաճի աղան մտածում էր իր հետագա անելիքների մասին:  
*Հաճի աղան, մինչ տնեցիները հավաքում էին իրերը, մտածում էր իր հետագա անելիքների մասին:*
- 3) Քո լավ սովորելը անհրաժեշտ է մայրիկիդ տրամադրությունը բարձր պահելու համար:  
*Մայրիկիդ տրամադրությունը բարձր պահելու համար անհրաժեշտ է, որպեսզի դու լավ սովորես:*
- 4) Հայր սուրբը մեկ շաբաթ առաջ վերջնականապես որոշել էր դուրս պրծնել այս դաժան վիհի ճիրաններից:  
*Հայր սուրբը մեկ շաբաթ առաջ վերջնականապես որոշել էր, որ դուրս պրծնի այս դաժան վիհի ճիրաններից:*
- 5) Ատենախոսը իր ելույթն ընթերցելիս հանկարծ բոլորի համար անսպասելի հուզվեց:  
*Երբ ատենախոսն իր ելույթն էր ընթերցում, հանկարծ բոլորի համար անսպասելի հուզվեց:*
- 6) Ինձ հետ պատահածը բոլորովին էլ սովորական բան չէր այն, ինչ պատահեց ինձ հետ:  
*Բոլորովին էլ սովորական բան չէր այն, ինչ պատահեց ինձ հետ:*

**11. Պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունների փոխակերպման տարբերակներից որո՞նք են սխալ.**

- 1) Հասմիկը շատ էր անհանգստանում որդու՝ գիշերը ուշ տուն գալուց:  
*Հասմիկը շատ էր անհանգստանում որդու համար, քանի որ գիշերը ուշ էր տուն գալիս:*
- 2) Ո՞վ կհերքի վշտի՝ մարդուն դժբախտացնելը:  
*Ո՞վ կհերքի, որ վիշտն է մարդուն դժբախտացնում:*
- 3) Զգաց իր՝ այլևս այդ անտանելի ճնշմանը չդիմանալը:  
*Զգաց, որ ինքն այլևս չի դիմանում այդ անտանելի ճնշմանը:*
- 4) Մեր ճարտարապետական վաղեմի կոթողները չտեսածը թող չխոսի հայրենիքից:  
*Նա, եթե չի տեսել մեր ճարտարապետական վաղեմի կոթողները, թող չխոսի հայրենիքից:*
- 5) Երեխայի փրկության գործը հանձնարարվեց լավ մասնագիտած բժշկին:  
*Երեխային փրկության գործը հանձնարարվեց այն բժշկին, ով լավ մասնագիտացած էր:*
- 6) Իմ հարցերից խուսափողի աչքերում տեսնում էի զղջում:  
*Նա, ով խուսափում էր իմ հարցերից, աչքերում տեսնում էի զղջում:*

**12. Պարզ (ղերբայական դարձվածով) նախադասությունների փոխակերպման տարբերակներից որո՞նք են սխալ.**

- 1) Կարճ ժամանակ անց պարզվեց նրա՝ բոլորին խաբելը:  
*Կարճ ժամանակ անց պարզվեց այն, որ նա բոլորին խաբում է:*
- 2) Մենք մտածում էինք երեխայի ծանր հիվանդության լուրը առայժմ գաղտնի պահել ծնողներից և ինքներս խնամել նրան:  
*Մենք մտածում էինք այն մասին, որ երեխայի ծանր հիվանդության լուրը առայժմ գաղտնի պահենք ծնողներից՝ ինքներս խնամելով նրան:*
- 3) Հանկարծակիի եկած աղջիկը չհասցրեց պատասխանել տղայի հարցին:  
*Աղջիկը, որ հանկարծակիի էր եկել, չհասցրեց պատասխանել տղայի հարցերին:*
- 4) Ես միշտ էլ աջակցել եմ իմ կարիքը ունեցողներին:  
*Ես միշտ էլ աջակցել եմ նրանց, քանի որ ունեցել են իմ կարիքը:*
- 5) Որդու՝ ուսումը շարունակելը իմ ամենամեծ մտահոգությունն է:  
*Իմ ամենամեծ մտահոգությունն այն է, որ որդիս շարունակի ուսումը:*
- 6) Բայց ինչ-որ ցրվածություն հետզհետե տիրում էր նրա ուղեղին, որ սարսափից մթազնել էր:  
*Բայց ինչ-որ ցրվածություն հետզհետե տիրում էր նրա ուղեղին, որ սարսափից մթազնել էր:*

**13. Պարզ (ղերբայական դարձվածով) նախադասությունների փոխակերպման տարբերակներից որո՞նք են սխալ.**

- 1) Ոմանք նույնիսկ պնդում էին ճարտարապետի՝ աշտարակին դիտավորյալ մասամբ թեքություն տալը:  
*Ոմանք նույնիսկ պնդում էին, որ ճարտարապետը աշտարակին դիտավորյալ է մասամբ թեքություն տվել:*
- 2) Նրանք անվերջ վկայակոչում են պատերազմի ժամանակ ռմբակոծությունից քաղաքն անվերջ ցնցվելու, բայց աշտարակի կանգուն մնալու փաստը:  
*Նրանք անվերջ վկայակոչում են, որ պատերազմի ժամանակ ռմբակոծությունից քաղաքն անվերջ ցնցվել է, բայց աշտարակի կանգուն մնալը փաստ է:*
- 3) Մտնելով հյուրասրահ՝ Մանեն զարմացած կանգ առավ:  
*Երբ Մանեն մտավ հյուրասրահ, զարմացած կանգ առավ:*
- 4) Շատ դառնություն, անամոք վիշտ կար նրա՝ վիրավորանքից մղկտացող մայրական հոգում:  
*Շատ դառնություն, անամոք վիշտ կար նրա մայրական հոգում, որ մղկտում էր վիրավորանքից:*
- 5) Ապա ինչպե՞ս չանպատվեի այդ գարշելիին՝ ազգիս ինքնասիրությունը վիրավորողին:  
*Ապա ինչպե՞ս չանպատվեի գարշելիին, որ վիրավորում է ազգիս ինքնասիրությունը:*
- 6) Գրքերը բաժանելուն պես ուսուցչուհին բացեց պահանջված էջը:  
*Գրքերը բաժանելուն պես ուսուցչուհին բացեց այն էջը, որը պահանջվել էր:*

**14. Պարզ (ղերբայական դարձվածով) նախադասությունների փոխակերպման տարբերակներից որո՞նք են սխալ.**

- 1) Աղամը, լսելով Լիլիթի պատասխանը, իր զարհուրելի տանջանքը նույն սրությամբ նորից ապրեց:  
*Աղամը, հենց որ լսեց Լիլիթի պատասխանը, իր զարհուրելի տանջանքը նույն սրությամբ նորից ապրեց:*
- 2) Գիտնականի ներս մտնելուն պես բոլորը ոտքի կանգնեցին հուզված և ուրախացած:  
*Գիտնականի ներս մտնելուն պես բոլորը ոտքի կանգնեցին, քանի որ հուզված էին և ուրախացած:*
- 3) Սպասվածից մեծ էր ժողովում հավաքվածների թիվը:  
*Ժողովում հավաքվածների թիվը ավելի մեծ էր, քան սպասում էին:*
- 4) Երբեմն գնում էի այնտեղ, որ տեսնեմ աշակերտների ինչպես սովորելը:  
*Երբեմն գնում էի այնտեղ, որ տեսնեմ, թե աշակերտները ինչպես են սովորում:*
- 5) Յուրաքանչյուրիս սրբազան գործը մեր լեզվի մաքրությունը պահելն է:  
*Յուրաքանչյուրիս սրբազան գործն է, որ պահենք մեր լեզվի մաքրությունը:*
- 6) Խնջույքին ներկա էին նաև մեր հարևանները՝ Սիրիայից նոր վերադարձած մի խումբ մարդիկ:  
*Խնջույքին ներկա էին նաև մեր հարևանները՝ մի խումբ մարդիկ, որոնք նոր էին վերադարձել Սիրիայից:*

**15. Պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունների փոխակերպումներից որո՞նք են ճիշտ.**

- 1) Երեխան անհամբեր սպասում էր մոր՝ իրեն կերակրելուն:  
*Երեխան անհամբեր սպասում էր, թե երբ մայրը իրեն կկերակրի:*
- 2) Մտածում եմ նրանից ինչպես հեռանալու մասին:  
*Մտածում եմ այն մասին, թե ինչպես հեռանամ նրանից:*
- 3) Ես միանգամայն հավատում էի նրա մեղավոր լինելուն:  
*Ես միանգամայն հավատում էի, որ նա մեղավոր է:*
- 4) Տղայի համար կարևորը անձնագոհություն ցույց տալն է:  
*Տղայի համար կարևորն այն է, որ անձնագոհություն ցույց տա:*
- 5) Հիմա ես անգամ ծնողներիս այցելել չկարողանալու չափ զբաղված եմ:  
*Հիմա ես այնքան զբաղված եմ, որ անգամ չեմ այցելում ծնողներիս:*
- 6) Բայց ես՝ գիշեր ու ցերեկ տանջվողս, մի՞թե հարգանքի արժանի չեմ:  
*Բայց ես, քանի որ գիշեր ու ցերեկ տանջվում եմ, մի՞թե հարգանքի արժանի չեմ:*

**16. Պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունների փոխակերպումներից որո՞նք են ճիշտ.**

- 1) Նրանք ինձ ժամանակի զգացողությունս կորցնելու չափ սիրալիր ընդունեցին:  
*Նրանք ինձ այն աստիճան սիրալիր ընդունեցին, որ կորցրի ժամանակի զգացողությունս:*
- 2) Գիրքը բացելուն պես աչքերի առաջ մթնում էր:  
*Գիրքը բացում էր թե չէ, աչքերի առաջ մթնում էր:*
- 3) Մեկ էլ անագորույն գազանի նման կմռնչար՝ զարթնեցնելով քուն մտած արջերին անգամ:  
*Մեկ էլ անագորույն գազանի նման այնպես կմռնչար, որ կզարթնեցներ արջերին անգամ, որ քուն էին մտել:*
- 4) Դահլիճում հավաքվածների հայացքը չդարձավ նրա կողմը:  
*Նրանք, ովքեր հավաքվել էին դահլիճում, հայացքը չդարձրին նրա կողմը:*
- 5) Դժվար է պատճառաբանել նրա՝ տրամաբանական շրջանակների մեջ չտեղավորվող այս վարքը:  
*Դժվար է պատճառաբանել նրա վարքը, որ չի տեղավորվում տրամաբանական շրջանակների մեջ:*
- 6) Վտանգի պահին անմիջապես ուզում եմ հասկանալ նրա՝ որտեղից գալը:  
*Վտանգի պահին անմիջապես ուզում եմ հասկանալ, թե նա որտեղից է գալիս:*

**17. Պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունների փոխակերպումներից որո՞նք են ճիշտ.**

- 1) Չնայած իմ՝ տասնչորս տարեկան լինելուն՝ արդեն կարդում էի հայտնի փիլիսոփաների գործերը:  
*Քանի որ ես արդեն տասնչորս տարեկան էի, արդեն կարդում էի հայտնի փիլիսոփաների գործերը:*
- 2) Իր վաստակած ողջ դրամը, սակայն, նա ծախսում էր գինարբուքներում:  
*Ողջ դրամը, որ իր վաստակածն էր, նա ծախսում էր գինարբուքներում:*
- 3) Մենք չէինք կարողանում հավատալ Մարգարիտ տատի մահանալու լուրերին:  
*Մենք չէինք կարողանում հավատալ այն լուրերին, որ Մարգարիտ տատը մահացել է:*
- 4) Շուտով փրփրաբաշ ալիքները նավի՝ տաշեղի պես նրանց մրրկածուփ կատարները ելնելու աստիճան բարձրանում էին:  
*Շուտով փրփրաբաշ ալիքները այնքան էին բարձրանում, որ նավը տաշեղի պես նրանց մրրկածուփ կատարներն էր ելնում:*
- 5) Նա հարգանքով ողջունում էր բոլոր ներս մտնողներին:  
*Նա հարգանքով ողջունում էր նրանց, ովքեր ներս էին մտել:*
- 6) Ընտանիքի թերի կողմերը տեսնելով՝ երիտասարդը տանջվում էր:  
*Երիտասարդը, երբ տեսնում էր ընտանիքի թերի կողմերը, տանջվում էր:*

**18. Պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունների փոխակերպումներից որո՞նք են ճիշտ.**

- 1) Ես հաճախ էի լսում այդպիսի դեպքերի՝ նրա սրտաբուխ ծիծաղով ընդհատվող նկարագրություններ:  
*Ես հաճախ էի լսում այդպիսի դեպքերի նկարագրությունները, որ նա ընդհատում էր սրտաբուխ ծիծաղով:*
- 2) Եվ չպետք է մոռանալ երկնքի՝ բոլորինը լինելը:  
*Եվ չպետք է մոռանալ, որ երկինքը բոլորինն է:*
- 3) Հրթիռը տիեզերք ուղարկողն ամենաշատը կարիք ունի ջերմ մտերմության, հոգեկան անդորրի ու միասնության:  
*Նա, ով հրթիռը տիեզերք է ուղարկում, ամենաշատը կարիք ունի ջերմ մտերմության, հոգեկան անդորրի ու միասնության:*
- 4) Ասես զվարթություն ու խիճկ կա նրա՝ հազար վիշտ տեսած այդ խոհուն հայացքի մեջ:  
*Ասես զվարթություն ու խիճկ կա նրա հայացքի մեջ, որ հազար վիշտ է տեսել:*
- 5) Սիրելի սաներին այդքան տարի հետո հանդիպելը մեծ ուրախություն էր Անտոնյանի համար:  
*Անտոնյանի համար մեծ ուրախություն էր այն, որ այդքան տարի հետո հանդիպում էր իր սիրելի սաներին:*
- 6) Նավապետի հակակրանքի պատճառը ուղևորի՝ առափնյա մաքսային ծառայողներին հայտնի մարդ լինելն էր:  
*Նավապետի հակակրանքի պատճառն էր այն, որ ուղևորը առափնյա մաքսային ծառայողներին հայտնի մարդ էր:*

**19. Պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունների փոխակերպումներից որո՞նք են ճիշտ.**

- 1) Գյուղի բնակիչները վախից կծկվել էին բարձրաբերձ լեռան՝ ներքևից չերևացող անմատչելի ծերպերում:  
*Գյուղի բնակիչները վախից կծկվել էին այն բարձրաբերձ լեռան անմատչելի ծերպերում, որ ներքևից չէին երևում:*
- 2) Ազատության հուրը վառվում է կյանքից հոգնածների սրտերում:  
*Ազատության հուրը վառվում է նրանց սրտերում, ովքեր հոգնել են կյանքից:*
- 3) Դրանք ուրիշների վիշտը չհարգող եզակի անհատներ են:  
*Դրանք այն անհատներն են, ովքեր չեն հարգում ուրիշների վիշտը:*
- 4) Իշխանուհու գրեթե միշտ խոնարհված կոպերը քողարկում էին աչքերի կենսաթրթիռ հուրը:  
*Իշխանուհու կոպերը, որ գրեթե միշտ խոնարհված էին, քողարկում էին աչքերի կենսաթրթիռ հուրը:*
- 5) Նա չէր վախենում գետի հունի խորը լինելուց:  
*Նա չէր վախենում, որ գետի հունը խորն է:*
- 6) Այլևս չէր լսվում շրջակայքը կենդանացնողի երգը:  
*Այլևս չէր լսվում այն երգը, որ կենդանացնում էր շրջակայքը:*

**20. Պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունների փոխակերպումներից որո՞նք են սխալ.**

- 1) Շուշանը, իրենց տուն հասնելով, ինչ-որ հաճելի տազնապ զգաց:  
*Երբ Շուշանը իրենց տուն հասավ, ինչ-որ հաճելի տազնապ զգաց:*
- 2) Դու ես ինձ ստիպողը:  
*Դու նա ես, ով ինձ ստիպում է:*
- 3) Ծաշկերույթին ներկա էին նաև սփյուռքահայերը՝ հայրենիքին կարոտած, հայրենիքի հոգսերով ապրող մարդիկ:  
*Ծաշկերույթին ներկա էին նաև սփյուռքահայերը՝ մարդիկ, ովքեր հայրենիքին կարոտել, հայրենիքի հոգսերով էին ապրում:*
- 4) Ոչ ոքի դեռևս չի հաջողվել խորամանկությունը թաքցնել կարողանալու չափ խորամանկ լինել:  
*Ոչ ոքի դեռևս չի հաջողվել խորամանկ լինել այնքան, որ թաքցնի խորամանկությունը:*
- 5) Պայքարից խուսափողը անձնատուր է լինում:  
*Նա, ով խուսափում է պայքարից, անձնատուր է լինում:*
- 6) Խաղաղության հասնում են լոկ այն պարտադրել կարողանալու դեպքում:  
*Խաղաղության հասնում են լոկ այն դեպքում, երբ կարողանում են այն պարտադրել:*

**21. Պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունների փոխակերպումներից որո՞նք են սխալ.**

- 1) Առաջ չնայողն է հայտնվում հետևում:  
*Նա, ով առաջ չի նայում, հայտնվում է հետևում:*
- 2) Սեփական ասելիք չունեցողը պետք է լռի:  
*Նա, ով չունի սեփական ասելիք, պետք է լռի:*
- 3) Թույլ մի՛ տուր լեզվիդ՝ մտքիցդ առաջ ընկնելը:  
*Թույլ մի՛ տուր լեզվիդ, որ մտքիցդ առաջ ընկնի:*
- 4) Դրանք մարդկությանը մշտապես հուզող հարցեր են:  
*Դրանք հարցեր են, որոնք մշտապես հուզում են մարդկությանը:*
- 5) Ընկերոջ հետ խոսելիս Եվան հուզմունքից կարմրեց:  
*Երբ Եվան խոսում էր ընկերոջ հետ, հուզմունքից կարմրեց:*
- 6) Աչքիս առջև են իմ մանկության՝ տխրությանը ու թախիծով լցված օրերը:  
*Աչքիս առջև են իմ մանկության օրերը, որոնք լցված են տխրությանը ու թախիծով:*

**22. Բարդ ստորադասական նախադասությունների փոխակերպման տարբերակներից որո՞նք են ճիշտ.**

- 1) Ինչպե՞ս եղավ, որ ես խոսեցի նրա հետ և մինչ այդ եղած տարածայնությունները մոռացա:  
*Ինչպե՞ս եղավ իմ՝ նրա հետ խոսելը և մինչ այդ եղած տարածայնությունների մոռացվելը:*
- 2) Արդեն բավական ժամանակ մի մեծ ճանճ էր պտտվում ավտոբուսում, չնայած մեքենայի ապակիները բարձրացված էին:  
*Արդեն բավական ժամանակ մի մեծ ճանճ էր պտտվում ավտոբուսում՝ չնայած մեքենայի՝ ապակիները բարձրացրած լինելուն:*
- 3) Խճուղու ամեն անհարթությունն անցնելիս Ժաննան զգում էր, թե ինչպես էր քնից վեր թռչում քնկոտ ամուսինը:  
*Խճուղու ամեն անհարթությունն անցնելիս Ժաննան զգում էր քնկոտ ամուսնու՝ քնից ինչպես վեր թռչելը:*
- 4) Հիմա ավազն ապակիներին էր զարնվում այնպես, որ դրանք ամեն վայրկյան դողդոջում էին:  
*Հիմա ավազն ապակիներին էր զարնվում՝ դրանք ամեն վայրկյան դողդոջանելով:*
- 5) Կնոջը թվում էր, թե զինվորական բաճկոնով նիհար ֆրանսիացու՝ ավազի ու ոսկորի խառնուրդից է շինված:  
*Կնոջը թվում էր՝ զինվորական բաճկոնով նիհար ֆրանսիացու՝ ավազի ու ոսկորի խառնուրդից շինված լինելը:*
- 6) Դեռ երեկ էր, որ ինքը տատանվում էր ամուսնության և ազատ կյանքով ապրելու միջև:  
*Դեռ երեկ էր իր՝ ամուսնության և ազատ կյանքով ապրելու միջև տատանվելը:*

**23. Բարդ ստորադասական նախադասությունների փոխակերպման տարբերակներից որո՞նք են սխալ.**

- 1) Մի օր արքայական սոխակը երգեց այնքան սքանչելի, որ կայսրի աչքերն արցունքով լցվեցին:  
*Մի օր արքայական սոխակը երգեց կայսրի աչքերն արցունքով լցվելու չափ սքանչելի:*
- 2) Նրանց, ովքեր գայթակղություն ունեն հավատալու հեռավոր գալակտիկաներում բանական արարածներ լինելու գաղափարին, խորհուրդ ենք տալիս հավատալ փաստերին:  
*Հեռավոր գալակտիկաներում բանական արարածներ լինելու գաղափարին հավատալու գայթակղություն ունեցողներին խորհուրդ ենք տալիս հավատալ փաստերին:*
- 3) Սա պատմագրի կամ բանաստեղծի առաջին օրինակը չէ, որ մռայլ գույներով է պատկերում մարդկանց դիմանկարները:  
*Սա մարդկանց դիմանկարները մռայլ գույներով պատկերած պատմագրի կամ բանաստեղծի առաջին օրինակը չէ:*
- 4) Նրա կյանքի մանրամասները, քանի որ շարադրված էին պատմական տարբեր աղբյուրներում, հեռու էին գայթակղիչ լինելուց:  
*Նրա կյանքի մանրամասները, ըստ պատմական տարբեր աղբյուրներում շարադրվածի, հեռու էին գայթակղիչ լինելուց:*
- 5) Նախօրոք անհաջողության դատապարտված գրողի նման ես բնավ հույս չէի փայփայում, թե այդ ձեռնարկը կարող է հաջողություն ունենալ:  
*Այն գրողի նման, որ նախօրոք անհաջողության է դատապարտվել, ես բնավ հույս չէի փայփայում այդ ձեռնարկի հաջողություն ունենալուց:*
- 6) Ճշմարտությանը շատ ավելի մոտ կլինեինք, եթե նոր տիրակալին համեմատեինք թարմ սափրած այտերով դերասանների հետ:  
*Ճշմարտությանը շատ ավելի մոտ կլինեինք նոր տիրակալին թարմ սափրած այտերով դերասանների հետ համեմատելիս:*

**24. Բարդ ստորադասական նախադասությունների փոխակերպման տարբերակներից որո՞նք են ճիշտ.**

- 1) *Սպասում եմ առավոտին, սպասում եմ, որ մայրս ինձ կանչի արևի հակինթյա սրինգով:  
Սպասում եմ առավոտին, սպասում եմ մորս՝ արևի հակինթյա սրինգով ինձ կանչելը:*
- 2) *Ըստ նրա, ինչ լրատվությունն է ներկայացնում հեռուստատեսերով, կարելի է կարծիք կազմել մեր տարածաշրջանում տիրող քաղաքական լարված փոխհարաբերությունների մասին:  
Ըստ տարածաշրջանում տիրող լարված փոխհարաբերությունների՝ կարելի է կարծիք կազմել լրատվության՝ հեռուստատեսերով ներկայացրածի մասին:*
- 3) *Ինքն իրեն մոռացության տալու համար օրնիբուն որսորդության էր գնում, բայց սիրած օրիորդին պատահմամբ հանդիպում էր թե չէ, հոգին տակնուվրա եղած գալիս էր ամրոց:  
Ինքն իրեն մոռացության տալու համար օրնիբուն որսորդության էր գնում, բայց սիրած օրիորդին պատահմամբ հանդիպելուն պես հոգին տակնուվրա եղած գալիս էր ամրոց:*
- 4) *Այն չարաբաստիկ օրից, ինչ պարոն Մոնրեն կորցրել էր սիրելի կնոջը, անցել էր մի քանի տարի՝ տխուր հիշողություններով պարուրված:  
Պարոն Մոնրեի՝ սիրելի կնոջը կորցնելու չարաբաստիկ օրից անցել էր մի քանի տարի՝ տխուր հիշողություններով պարուրված:*
- 5) *Նրանց դուստրը, անցնելով ամուսնանալու տարիքից, կեղծ քողի տակ ծածկում էր, որ աշխարհիկ կյանքը վաղուց ճաշակված է իր կողմից:  
Նրանց դուստրը, անցնելով ամուսնանալու տարիքից, կեղծ քողի տակ ծածկում էր իր կողմից աշխարհիկ կյանքը վաղուց ճաշակված լինելը:*
- 6) *Մարդաշատ սալոնում միայն նա չէր նկատել իր կրտսեր դստերը սիրահետելը, թեև երիտասարդի վարքագիծը աղմկահարույց դառնալու չափ անպարկեշտ էր:  
Մարդաշատ սալոնում միայն նա չէր նկատել իր կրտսեր դստերը սիրահետելը՝ թեպետ երիտասարդի վարքագծի՝ աղմկահարույց դառնալու չափ անպարկեշտ լինելուն:*

**25. Բարդ ստորադասական նախադասությունների փոխակերպման տարբերակներից որո՞նք են սխալ.**

- 1) *Իր անունը լսելով՝ նա հանկարծ մտածեց այն մասին, որ իր նման մարմնեղ կնոջ համար բավականին ծիծաղելի է այդ փաղաքշական անունը:  
Իր անունը լսելով՝ նա հանկարծ մտածեց իր նման մարմնեղ կնոջ համար այդ փաղաքշական անվան բավականին ծիծաղելի լինելը:*
- 2) *Ժանինը հանկարծ զգաց, որ ինչ-որ մեկն իրեն է նայում անթարթ, և զգուշորեն հետ շրջվեց:  
Ժանինը հանկարծ զգաց ինչ-որ մեկի՝ իրեն անթարթ նայելը և զգուշորեն հետ շրջվեց:*
- 3) *Նրա համար ակնհայտ էր, որ ինքը տարիների ընթացքում յուրացրել էր ամուսնու ձանձրալի և տափակ խոսելաճր յուրացնելը:  
Նրա համար ակնհայտ էր իր՝ տարիների ընթացքում ամուսնու ձանձրալի և տափակ խոսելաճր յուրացնելը:*
- 4) *Իրենք անցնում էին արաբների կողքով, ու թեպետ շատերի գլուխները խոնարհված էին, նրանք բոլորն էլ կարծես եվրոպացի կնոջն էին նայում:  
Իրենք անցնում էին արաբների կողքով, ու թեև շատերի գլուխների խոնարհված լինելուն՝ նրանք բոլորն էլ կարծես եվրոպացի կնոջն էին նայում:*
- 5) *Հայացքը հառած ծովի հեռուներից՝ նա խորհում էր այն մասին, որ ինքը երջանկության նման պահեր շատ քիչ է ունեցել:  
Հայացքը հառած ծովի հեռուներից՝ նա խորհում էր իր՝ երջանկության նման պահեր շատ քիչ ունենալու մասին:*
- 6) *Արևի առաջին շողերը դեռ լրիվ չէին ողողել ծովի ալիքները, երբ հեռվում գծագրվեցին Ալժիրի ափերը:  
Ալժիրի ափերը գծագրվեցին հեռվում՝ արևի առաջին շողերի՝ ծովի ալիքները լրիվ չողողելու պահին:*

**26. Բարդ ստորադասական նախադասությունների փոխակերպման տարբերակներից որո՞նք են սխալ.**

- 1) Անհագուրդ բնագրով նա գլխով կառչել էր պատուհանին հենված ամուսնուց, ինչպես նազն իր ամենաապահով նավահանգստին է կառչում:  
*Անհագուրդ բնագրով նա գլխով կառչել էր պատուհանին հենված ամուսնուց, ինչպես նազն իր ամենաապահով նավահանգստին կառչելը:*
- 2) Անձավի մթությունից ահաբեկված՝ նա այնքան էլ վստահ չէր, որ իրենցից որևէ մեկը ելքի ճիշտ ուղղությունը հիշում է:  
*Նա, անձավի մթությունից ահաբեկված, այնքան էլ վստահ չէր իրենցից որևէ մեկի՝ ճիշտ ելքի ուղղության հիշելը:*
- 3) Նա մեռնում էր հուսահատ, բայց մեռնում էր լուռ, որ իր տանջանքով որդիներին ցավ չպատճառի:  
*Նա մեռնում էր հուսահատ, բայց մեռնում էր լուռ՝ իր տանջանքով որդիներին ցավ չպատճառելով:*
- 4) Համաձայն այն լուրերի, թե ընտրատարածքներում լուրջ խախտումներ են եղել, այդ տեղամասերում ընտրությունները պետք է անվավեր ճանաչել:  
*Համաձայն ընտրատարածքներում լուրջ խախտումների մասին լուրերի՝ այդ տեղամասերում ընտրությունները պետք է անվավեր ճանաչել:*
- 5) Մարսելը, երբ հարևանի պարտեզի դուռը թույլ ճռնչաց, գլխի ընկավ նրա կնոջ հեռանալը:  
*Մարսելը գլխի ընկավ հարևանի կնոջ հեռանալը՝ նրա պարտեզի դուռը թույլ ճռնչալուց:*
- 6) Չմայլված նայում էինք մեր շուրջը, և թվում էր՝ կանաչի մեջ թաղված այս դրախտը ամենից լավ տեղն է ողջ աշխարհում:  
*Չմայլված նայում էինք մեր շուրջը, և թվում էր կանաչի մեջ թաղված այս դրախտի՝ ամենից լավ տեղը լինելը ողջ աշխարհում:*

**27. Պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունների փոխակերպումներից որո՞նք են սխալ.**

- 1) Եվ իրեն զգալով մենակ ու անընկեր՝ սկսեց ծանձրանալ սաստիկ:  
*Եվ քանի որ իրեն զգում էր մենակ ու անընկեր, սկսեց ծանձրանալ սաստիկ:*
- 2) Աստված, տեսնելով Ադամի՝ հոգու տառապանք պատճառող մենությունը, մտածեց նրա համար ստեղծել մի քնքուշ ընկեր:  
*Աստված, որ տեսնում էր Ադամի՝ հոգու տառապանք պատճառող մենությունը, մտածեց նրա համար ստեղծել մի քնքուշ ընկեր:*
- 3) Եվ ստեղծեց նրան՝ սքանչանալու իր վեհ գործերով և աստվածային անունը փառավորելու համար:  
*Եվ ստեղծեց նրան, որ սքանչանա իր վեհ գործերով և փառավորի աստվածային անունը:*
- 4) Ադամը, անկարող լինելով խավարի մեջ գտնել դարձի արահետը, հոգնած քնեց մի ծառի տակ:  
*Ադամը, որն անկարող էր խավարի մեջ գտնել դարձի արահետը, հոգնած քնեց մի ծառի տակ:*
- 5) Միայն լուսադեմին՝ երկնքի ու դրախտի՝ կաթնալույսով ողողվելու ժամանակ, Ադամը կարողացավ վերագտնել իր ուղին:  
*Միայն լուսադեմին, երբ կաթնալույսը ողողվել էր երկնքն ու դրախտը, Ադամը կարողացավ վերագտնել իր ուղին:*
- 6) Լիլիթը նայում էր սատանային՝ աչքերից բոցալեզու կրակներ արձակելով:  
*Լիլիթը նայում էր սատանային այնպես, ասես աչքերից բոցալեզու կրակներ էր արձակում:*

**28. Պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունների փոխակերպումներից որո՞նք են սխալ.**

- 1) Ու նա՝ դրախտի շքեղաշուք պարտեզների սիրով տարված սիրահարը, սկսեց թախծել ու չտեսնել բնության կատարելությունը:  
*Ու նա, որ դրախտի շքեղաշուք պարտեզների սիրով տարված սիրահար էր, սկսեց թախծել ու չտեսնել բնության կատարելությունը:*
- 2) Ու տեսավ Աստծու ստեղծած մարդկային արարածների այնքա՛ն փոքր լինելը:  
*Ու տեսավ, որ Աստծու ստեղծած մարդկային արարածները այնքա՛ն փոքր են:*
- 3) Տեսավ աշխարհի իրական դեմքը՝ իր բոլոր խոստումների մեջ խաբուսիկ ու դրժող:  
*Տեսավ աշխարհի իրական դեմքը, որքան էլ այն իր բոլոր խոստումների մեջ խաբուսիկ էր ու դրժող:*
- 4) Ազահ տիրակալը դավեր էր նյութում ազդեցիկ իշխանների դեմ՝ հողեր գրավելու և սեփական ամրոցներից նրանց արտաքսելու համար:  
*Ազահ տիրակալը դավեր էր նյութում ազդեցիկ իշխանների դեմ, որ հողեր գրավի և սեփական ամրոցներից նրանց արտաքսի:*
- 5) Ապշեց բռնակալը՝ կարդալով շիրմաքարի արձանագրությունը. այն է՝ ապրեց ու մեռավ և ապրեց իր կյանքի բոլոր օրերը:  
*Ապշեց բռնակալը, որը կարդաց շիրմաքարի արձանագրությունը. այն է՝ ապրեց ու մեռավ և ապրեց իր կյանքի բոլոր օրերը:*
- 6) Երկար խորհեց իշխանը և անկարող լինելով լուծել արձանագրության խորհուրդը՝ հրամայեց կանչել գիտակ մեկին:  
*Երկար խորհեց իշխանը և թեկուզ անկարող էր լուծել արձանագրության խորհուրդը, հրամայեց կանչել գիտակ մեկին:*

**29. Պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունների փոխակերպումներից որո՞նք են սխալ.**

- 1) Բոլոր դժբախտությունների բուն արմատն այն է, որ մարդ չի բավարարվում իր ունեցածով:  
*Բոլոր դժբախտությունների բուն արմատը մարդու՝ իր ունեցածով չբավարարվելն է:*
- 2) Վերջապես նա անում է, ինչ խելքին փչում է այդ պահին:  
*Վերջապես նա այդ պահին անում է խելքին փչածը:*
- 3) Ինչ ասվել էր հրահանգիչների ներկայությամբ, նույնությամբ կրկնեցին ժողովի ժամանակ:  
*Հրահանգիչների ներկայությամբ ասածը նույնությամբ կրկնեցին ժողովի ժամանակ:*
- 4) Նրանք են գոռում իրավունքի ոտնահարման մասին, ովքեր տարիներ շարունակ կոպտորեն ոտնահարել են հազարավորների գոյության իրավունքը:  
*Իրավունքի ոտնահարման մասին գոռում են տարիներ շարունակ հազարավորների գոյության իրավունքը ոտնահարող մարդիկ:*
- 5) Մեր օրերում անհրաժեշտություն է դարձել, որ յուրաքանչյուրը ծանոթ լինի տեղեկատվական տեխնոլոգիաներին:  
*Մեր օրերում անհրաժեշտություն է դարձել յուրաքանչյուրի ծանոթությունը տեղեկատվական տեխնոլոգիաներին:*
- 6) Ծովն այնքան հանդարտ էր, որ թվում էր շքեղ կտավից իջած անշարժ պատկեր:  
*Ծովը շքեղ կտավից իջած անշարժ պատկեր թվալու չափ հանդարտ էր:*

**30. Ուղղակի խոսքի փոխակերպման տարբերակներից որո՞նք են ճիշտ.**

– *Արա՛ այն, ինչ անհրաժեշտ է, Աքել՛,- առաջարկեց տիկինը,- գրությունը հասցրո՛ւ տիրոջը, իհարկե՛, առանց ավելորդ բաներ նրան տեղեկացնելու:*

- 1) Տիկինը առաջարկեց, որ Աքելը անի այն, ինչ անհրաժեշտ է, գրությունը հասցնի տիրոջը, իհարկե, առանց ավելորդ բաներ նրան տեղեկացնելու:
- 2) Տիկինը առաջարկեց Աքելին, որ աներ այն, ինչ անհրաժեշտ էր, գրությունը հասցներ տիրոջը, իհարկե, առանց ավելորդ բաներ նրան տեղեկացնելու:
- 3) Տիկինը առաջարկեց Աքելին, որ անի այն, ինչ անհրաժեշտ է, գրությունը հասցնի տիրոջը, իհարկե, առանց ավելորդ բաներ նրան տեղեկացնելու:
- 4) Տիկինը առաջարկեց Աքելին, որ թող նա անի այն, ինչ անհրաժեշտ է, գրությունը թող հասցնի տիրոջը, իհարկե, առանց ավելորդ բաներ նրան տեղեկացնելու:
- 5) Տիկինը առաջարկեց Աքելին, որ անի այն, ինչ անհրաժեշտ է, գրությունը հասցնի տիրոջը՝ առանց ավելորդ բաներ նրան տեղեկացնելու:
- 6) Տիկինը առաջարկեց, որ Աքելը անի այն, ինչ անհրաժեշտ է, գրությունը հասցնի տիրոջը, իհարկե, առանց ավելորդ բաներ իրեն տեղեկացնելու:

**31. Ուղղակի խոսքի փոխակերպման տարբերակներից որո՞նք են սխալ.**

– *Ընդհանրապես, սիրելի՛ս, մենք հողագործ ժողովուրդ ենք,- պատասխանում էր իմ հորեղբայր Մելիքը,- թեև մեր մեջ էլ նշանավոր դեմքեր եղել են:*

- 1) Իմ հորեղբայր Մելիքը պատասխանում էր, որ ընդհանրապես մենք հողագործ ժողովուրդ ենք, թեև մեր մեջ էլ նշանավոր դեմքեր եղել են:
- 2) Իմ հորեղբայր Մելիքը պատասխանում էր իր սիրելիին, որ ընդհանրապես մենք հողագործ ժողովուրդ ենք, թեև մեր մեջ էլ նշանավոր դեմքեր եղել են:
- 3) Իմ հորեղբայր Մելիքը պատասխանում էր, որ ընդհանրապես իրենք հողագործ ժողովուրդ են, թեև իրենց մեջ էլ նշանավոր դեմքեր եղել են:
- 4) Իմ հորեղբայր Մելիքը պատասխանեց, որ ընդհանրապես մենք հողագործ ժողովուրդ ենք, թեև մեր մեջ էլ նշանավոր դեմքեր եղել են:
- 5) Իմ հորեղբայր Մելիքը պատասխանում էր, որ մենք հողագործ ժողովուրդ ենք, թեև մեր մեջ էլ նշանավոր դեմքեր եղել են:

**32. Ուղղակի խոսքի փոխակերպումներից որո՞նք են սխալ.**

- 1) *«Աստրեստանցիները,- կարդաց Հելեն Էլիոթը,- երկար քթով, մազերով և մորուքով այդ մարդիկ, հյուսիսում շենագրին Նինվեն և դարձրին գորավոր տերություն»:*  
*Հելեն Էլիոթը կարդաց, որ աստրեստանցիները՝ երկար քթով, մազերով և մորուքով այդ մարդիկ, հյուսիսում շենագրել են Նինվեն և դարձրել գորավոր տերություն:*
- 2) – Մենք սկսում ենք երազել այդ բաների մասին, – ասաց նա,- բայց գիտենք, որ չենք կարող ունենալ, բայց դրանից մենք մեզ վատ չենք զգում:  
*Նա ասաց, որ իրենք սկսում են երազել այդ բաների մասին, բայց գիտեն, որ չեն կարող ունենալ, բայց դրանից նրանք իրենց վատ չեն զգում:*
- 3) – Մենք չենք էլ գիտակցում, թե որքան երջանիկ ենք, որ այսպիսի երկրում ենք ապրում, ուր ամեն ոք ազատ է,- ասաց իմ քեռի Վահանը:  
*Իմ քեռի Վահանն ասաց, որ մենք չենք էլ գիտակցում, թե որքան երջանիկ ենք, որ այսպիսի երկրում ենք ապրում, ուր ամեն ոք ազատ է:*
- 4) Գրիգորը նայում էր երաժշտական գործիքին ու հարցնում տղային.  
– Կարծում ես՝ պատճառը սրա հին լինե՞լն է, թե՞ պարզապես ջութակ նվագելու տաղանդ չունեն:  
*Գրիգորը նայում էր երաժշտական գործիքին ու հարցնում տղային, թե նա արդյոք կարծում է՝ պատճառը դրա հին լինելն է, թե պարզապես ինքը ջութակ նվագելու տաղանդ չունի:*

**33. Ուղղակի խոսքի փոխակերպումներից որո՞նք են ճիշտ.**

- 1) – Միշտ այդպես են մարդիկ,- ասաց նա.– անպայման պետք է քեզ սովորեցնեն՝ ինչ անես, ուրիշների հետ ինչպես վարվես:  
*Նա ասաց, որ միշտ այդպես են մարդիկ. անպայման պետք է քեզ սովորեցնեն ինչ անել, ուրիշների հետ ինչպես վարվել:*
- 2) – Հանեց ոսկի ժամացույցը, նայեց և ասաց.  
– Ներեցեք ինձ, հայրենակիցներ՝. տասնհինգ ամիս է՝ Ամերիկայում եմ մեն-մենակ:  
*Հանեց ոսկի ժամացույցը, նայեց և ասաց հայրենակիցներին, որ ներեն իրեն. տասնհինգ ամիս է՝ ինքը Ամերիկայում է մեն-մենակ:*
- 3) – Է՛հ, – ասաց նա ինձ, – բա ինչո՞ւ չես պահանջում, որ այդ մարդիկ իրենց եկամտի մի մասը Հայաստան ուղարկեն. նրանք մեր քաղաքացիներն են, չէ՞:  
*Նա ինձ ասաց, թե ինչու չեմ պահանջում, որ այդ մարդիկ իրենց եկամտի մի մասը Հայաստան ուղարկեն. նրանք մեր քաղաքացիներն են:*
- 4) – Լրագրող ընկերոջ հետ գնաց,- ասաց վշտացած կինն ամուսնուն,- գնաց՝ իբրև թե նրանց նստաշրջանը լուսաբանելու:  
*Կինը վշտացած ասաց ամուսնուն, որ նրա լրագրող ընկերը հետ գնաց, գնաց՝ իբրև թե նրանց նստաշրջանը լուսաբանելու:*

**34. Ուղղակի խոսքի փոխակերպումներից որո՞նք են ճիշտ.**

1. – Դու ինձ, խնդրեմ, անպատկառ պատասխաններ մի՛ տուր,- ասաց ոստիկանը.– ես թույլ չեմ տա, որ ինչ-որ տասը տարեկան երեխա ինձ հետ այդ լեզվով խոսի:  
*Ոստիկանն ասաց, որ նա իրեն անպատկառ պատասխաններ թող չտա. ինքը թույլ չի տա, որ ինչ-որ տասը տարեկան երեխա իր հետ այդ լեզվով խոսի:*
2. – Ես չեմ կարող հետաձգել այդ հանդիպումը,- ասաց Ռ-ոստոմը.– ես ուզում եմ նրան ասել այն, ինչ ուրիշները չեն հանդգնի ասել:  
*Ռ-ոստոմն ասաց, որ ինքը չի կարող հետաձգել այդ հանդիպումը. ինքը ուզում է նրան ասել այն, ինչ ուրիշները չեն հանդգնի ասել:*
3. Սահակն ասաց տիկնոջը.  
– Դրանք ինձ պետք չեն, քեզ են պետք, քո երեխաներին են պետք, վաղը նրանք են իշխանություն դառնալու, այդ դեպքում ի՞նչ ես անելու:  
*Սահակն ասաց տիկնոջը, որ դրանք իրեն պետք չեն, նրան են պետք, նրա երեխաներին են պետք, վաղը նրանք են իշխանություն դառնալու, այդ դեպքում նա ինչ է անելու:*
4. – Իհարկե, մեր կրթությունը վատն է,- ասաց բանաստեղծը,- բայց խոսքն այն մասին չէ, թե ինչ գիտելիքներ են մեզ հաղորդում և ինչ նպատակներով:  
*Բանաստեղծն ասաց, որ, իհարկե, իրենց կրթությունը վատն է, բայց խոսքն այն մասին չէ, թե ինչ գիտելիքներ են իրենց հաղորդում և ինչ նպատակներով:*

**35. Անուղղակի խոսքի փոխակերպման տարբերակներից որո՞նք են ճիշտ.**

- Նա հայերեն ասաց Արամին, որ նստի. իրենք ոչ մի տեղ չեն շտապում, անելու շատ բան էլ չունեն:*
1. Նա հայերեն ասաց Արամին.  
– Նստի՛ր. մենք ոչ մի տեղ չենք շտապում, անելու շատ բան էլ չունենք:
  2. Նա հայերեն ասաց.  
– Արա՛մ, նստի՛ր. մենք ոչ մի տեղ չենք շտապում, անելու շատ բան էլ չունենք:
  3. – Արա՛մ, նստի՛ր. մենք ոչ մի տեղ չենք շտապում, անելու շատ բան էլ չունենք,- ասաց նա հայերեն:
  4. Նա հայերեն ասաց.  
– Արա՛մ, նստի՛ր. նրանք ոչ մի տեղ չենք շտապում, անելու շատ բան էլ չունեն:

### 36. Անուղղակի խոսքի փոխակերպումներից որո՞նք են ճիշտ.

- 1) Ռոստոմն իր մտքում սկսեց հաշվարկներ անել՝ մտածելով, որ ինքն էլ օր օրի խելոքանում է, այսինքն՝ փորձում է հասկանալ ոչ թե կյանքը, այլ մարդկային էությունը:  
*Ռոստոմն իր մտքում սկսեց հաշվարկներ անել՝ մտածելով. «Ես էլ օր օրի խելոքանում եմ, այսինքն՝ փորձում եմ հասկանալ ոչ թե կյանքը, այլ մարդկային էությունը»:*
- 2) Նա ասաց ընկերոջը, որ նրա նկարն ամսագրում տեսավ և մտածեց, որ նա չափազանց տաղանդավոր է:  
*Նա ասաց ընկերոջը, որ նրա նկարն ամսագրում տեսավ և մտածեց. «Նա չափազանց տաղանդավոր է»:*
- 3) Ծերուկն ասաց, որ ինքը դա գիտի, բայց կարծում է, որ գոյություն ունի չափավորություն կոչված բանը, և ինքը վատահ է, որ ուրիշների մասին չմտածող տղան կարող էր նաև չափազանցնել իր աղաղակը:  
*Ծերուկն ասաց. – Ես դա գիտեմ, բայց կարծում եմ, որ գոյություն ունի չափավորություն կոչված բանը, և ես վատահ եմ, որ ուրիշների մասին չմտածող տղան կարող էր նաև չափազանցնել իր աղաղակը:*
- 4) Ռոստոմը մտածում էր, որ մարդը միշտ էլ ավելի հակված է քաղցր ստին, քան դառը ճշմարտությանը, որի վրա բավական քրտինք պիտի թափես, որ դառնա քաղցր ճշմարտություն:  
*Ռոստոմը մտածում էր. «Մարդը միշտ էլ ավելի հակված է քաղցր ստին, քան դառը ճշմարտությանը, որի վրա բավական քրտինք պիտի թափես, որ դառնա քաղցր ճշմարտություն»:*

### 37. Անուղղակի խոսքի փոխակերպումներից որո՞նք են ճիշտ.

- 1) Նա ասաց, որ իրեն հանկարծ տխրություն համակեց. երբեք այդպիսի բան իր հետ չէր պատահել, նույնիսկ այն ժամանակ, երբ իր հայրը մահացավ:  
*Նա ասաց. – Ինձ հանկարծ տխրություն համակեց. երբեք այդպիսի բան ինձ հետ չէր պատահել, նույնիսկ այն ժամանակ, երբ հայրս մահացավ:*
- 2) Բժիշկը շնջաց, որ ասում են՝ Գյումրին չկա, Սպիտակը լրիվ ավերված է, շտապօգնության իրենց մեքենաները չեն կարողանում հասնել այնտեղ:  
*– Ասում են՝ Գյումրին չկա, Սպիտակը լրիվ ավերված է, շտապօգնության իրենց մեքենաները չեն կարողանում հասնել,- շնջաց բժիշկը:*
- 3) Շերիֆն ասաց թափառաշրջիկին, որ այնտեղ՝ դռան հետևում, մի խումբ մարդիկ են հավաքվել. նրանք կարծում են, որ տունը նա է վառել:  
*Շերիֆն ասաց թափառաշրջիկին. – Այնտեղ՝ դռան հետևում, մի խումբ մարդիկ են հավաքվել. նրանք կարծում են, որ տունը ես եմ վառել:*
- 4) Պահակը հարցրեց, թե այդ խելացնոր պատմությանը նրան ով է ուղարկել այդտեղ, ինչ են ուզում իրենցից:  
*Պահակը հարցրեց. – Այս խելացնոր պատմությանը քեզ ո՞վ է ուղարկել այստեղ, ի՞նչ են ուզում մեզնից:*

**38. Անուղղակի խոսքի փոխակերպումներից որո՞նք են սխալ.**

1. Մի ծերունի, մատնացույց անելով իտալացուն, ասաց, թե արդյոք լավ չէր լինի, որ իրենք էլ այդ պարոնի նման բախտ ունենային:  
*Մի ծերունի, մատնացույց անելով իտալացուն, ասաց.*  
– *Լավ չէ՞ր լինի, որ իրենք էլ այս պարոնի նման բախտ ունենային:*
2. Նա հորդորեց, որ մահվան ձգտելու իր բացատրությունը չորոնեն սովորական պատճառների մեջ, որոնցով բացատրվում է ինքնասպանությունների մեծ մասը:  
– *Մահվան ձգտելու իմ բացատրությունը մի՛ որոնիր սովորական պատճառների մեջ, որոնցով բացատրվում է ինքնասպանությունների մեծ մասը,- հորդորեց նա:*
3. Վաճառատան տերը, հանկարծ լսպտերը վերցնելով և նրա լույսը ուղղելով նկարի հանդիպակաց պատին, ասաց, որ նա շուռ գա, նայի շագրենի կաշուն. այն իր դիմացն է:  
*Վաճառատան տերը, հանկարծ լսպտերը վերցնելով և նրա լույսը ուղղելով նկարի հանդիպակաց պատին, ասաց.*  
– *Շուռ արի, նայի՛ր շագրենի կաշուն, որը քո դիմացն է:*
4. Ծերունին շարունակեց, որ քանի որ նա արևելագետ է, ապա գուցե նա կարող է կարդալ այդ տարօրինակ գրվածքը:  
– *Քանի որ Դուք արևելագետ եք, ապա գուցե Դուք կարող եք կարդալ այս տարօրինակ գրվածքը,-շարունակեց ծերունին:*

**39. Անուղղակի խոսքի փոխակերպումներից որո՞նք են սխալ.**

- 1) Ռ-աֆայելը ասաց, որ թույլ տա, որ ինքը դատապարտի իր կյանքը. եթե նրա բարեկամությունը ուժ չունի իր գանգատները լսելու, ուրեմն թող քնի:  
*Ռ-աֆայելը ասաց.*  
– *Թո՛ւյլ տուր, որ ես դատապարտեմ իմ կյանքը. եթե քո բարեկամությունը ուժ չունի քո գանգատները լսելու, ուրեմն քնի՛ր:*
- 2) Տղամարդը շարունակեց, որ եթե նա իրենց մի անգամ էլ ստիպի հարցնել նրա իսկական անունը, հրացանի մի գնդակով կարժանանա ժառանգորդների հարգանքին:  
– *Եթե նա մեզ մի անգամ էլ ստիպի հարցնել իմ իսկական անունը, հրացանի մի գնդակով կարժանանա ժառանգորդների հարգանքին:*
- 3) Նա հեզնախառն շեշտով ասաց պարոնին, որ քանի որ նա Մարսելից է, իրենք թույլ կտան, որ հանգիստ շարունակի իր ճամփան:  
*Նա հեզնախառն շեշտով ասաց.*  
– *Պարո՛ն, քանի որ Դուք Մարսելից եք, մենք թույլ կտանք, որ հանգիստ շարունակեք Ձեր ճամփան:*
- 4) Նա, ինքնիրեն խոսելով, ասաց, որ, այո՛, ինքը խանգարում է նրանց, բայց շուտով այդ արարածն այլևս իր երեսը չի տեսնի:  
*Նա, ինքնիրեն խոսելով, ասաց. «Այո՛, ես խանգարում եմ նրանց, բայց շուտով այդ արարածն այլևս իմ երեսը չի տեսնի»:*

**40. Անուղղակի խոսքի փոխակերպումներից որո՞նք են ճիշտ.**

- 1) Հայկական բերդերից մեկի պաշարման ժամանակ մակեդոնացիներից մեկը գոռաց, թե բերդի աշտարակից հայերը լավաշ են կախել, և ապա զեկուցեց Մակեդոնացուն, որ բերդում պաշարվածները անձնատուր են լինում:  
*– Բերդի աշտարակներից հայերը լավաշ են կախել,- գոռաց մակեդոնացիներից մեկը հայկական բերդերից մեկի պաշարման ժամանակ և ապա զեկուցեց Մակեդոնացուն.- բերդում պաշարվածները անձնատուր են լինում:*
- 2) Հասկանալով պաշարվածների կատարած քայլը՝ Մակեդոնացին ասաց, որ հայերը հացապաշտ ազգ են, իսկ հացը խաղաղության խորհրդանիշն է, և կտրուկ կարգադրեց, որ վերացնեն պաշարումը. իրենք շարժվում են առաջ:  
*– Հայերը հացապաշտ ազգ են, իսկ հացը խաղաղության խորհրդանիշն է,- ասաց Մակեդոնացին՝ հասկանալով պաշարվածների կատարած քայլը, և կտրուկ կարգադրեց.- վերացրե՛ք պաշարումը. մենք շարժվում ենք առաջ:*
- 3) Մարկ Տվենը, գնացքի ուղեկցորդին մոտենալով, ասաց, որ ‘Դիժոն քաղաքին չհասած՝ արթնացնեն իրեն և իջեցնեն գնացքից, ինչպես կուզեն, ապա զգուշացրեց, որ եթե ինքը դիմադրի, ուշադրություն չդարձնեն. իրեն արթնացնելը հեշտ բան չէ:  
*– Դիժոն քաղաքին չհասած՝ արթնացրե՛ք ինձ և իջեցրե՛ք գնացքից, ինչպես կուզեք,- գնացքի ուղեկցորդին մոտենալով՝ ասաց Մարկ Տվենը, ապա զգուշացրեց.- եթե դիմադրեմ, ուշադրություն մի՛ դարձրու. ինձ արթնացնելը հեշտ չէ:*
- 4) Մի անգամ Արշակ Երկրորդը դիմում է Տիրան արքային, որ նա խորհուրդ տա իրեն, թե ինչ հուշարձան կառուցի, որ անմահացնի իր և նրա անունը:  
*Մի անգամ Արշակ Երկրորդը դիմում է Տիրան արքային.  
 – Հայր, խորհուրդ տուր ինձ, թե ինչ հուշարձան կառուցեմ, որ անմահացնեմ իրենց անունը:*
- 5) Որոտնեցին հրահանգեց, որ արշալույսին Գրիգորը իմաստասերների հետ սկսի մագաղաթների ընտրությունը, ապա, մի փոքր խորհելով, զգուշավոր ձայնով շշնջաց, որ մաս-մաս թաքցնեն գաղտնարաններում:  
*– Գրիգոր, արշալույսին իմաստասերների հետ սկսի՛ր մագաղաթների ընտրությունը,- հրահանգեց Որոտնեցին, ապա, մի փոքր խորհելով, զգուշավոր ձայնով շշնջաց.- մաս-մաս թաքցրե՛ք գաղտնարաններում:*
- 6) Տեսնելով լուսարարի՝ արծաթաձույլ սպասքին և ակնազարդ խաչերին ուղղված հայացքը՝ նա ասաց, որ հոգևոր հայրերը թաքցնեն մատյանները, իսկ մետաղը կսպասի:  
*– Հոգևոր հայրեր, թաքցրե՛ք մատյանները,- տեսնելով լուսարարի՝ արծաթաձույլ սպասքին և ակնազարդ խաչերին ուղղված հայացքը՝ ասաց նա,- իսկ մետաղը կարող է սպասել:*

**41. Ուղղակի խոսքի փոխակերպումներից որո՞նք են ճիշտ.**

- 1) – Ո՛վ վսեմափայլ,- ասաց Մուշեղը՝ կանգնելով թագուհու առաջ,- հայտնում եմ, որ մենք՝ հայերս, գիտենք վատությանը լավությամբ պատասխանել, և հակառակ քո ամուսնու՝ Շապուհի չարագործության՝ վաղը բոլորիդ պատվով կուղարկեն Տիգրան:  
*Մուշեղը, կանգնելով թագուհու առաջ, ասաց, որ հայտնում է, որ հայերը գիտեն վատությանը լավությամբ պատասխանել, և հակառակ նրա ամուսնու՝ Շապուհի չարագործության՝ վաղը նրանց բոլորին պատվով կուղարկեն Տիգրան:*
- 2) – Այրվում եմ մեկի սիրուց, բայց նա արհամարհում է ինձ,- հուզված ասաց երիտասարդը Աստղիկ դիցուհուն, ապա կերկերուն ձայնով ավելացրեց.– ես հասարակ խաշնարած եմ, իսկ նա՝ մեծատունի դուստր:  
*Հուզված երիտասարդը ասաց Աստղիկ դիցուհուն, որ նա այրվում է մեկի կարոտից, բայց նա արհամարհում է իրեն, ապա ավելացրեց կերկերուն ձայնով, որ ինքը հասարակ խաշնարած է, իսկ նա՝ մեծատունի դուստր:*
- 3) – Այս ծաղիկը թող դնեն քո սիրած աղջկա բարձի տակ,- խորհուրդ տվեց դիցուհին և ժպիտով կիսածայն ասաց,- դրանից հետո նա ինքը կայրվի քո սիրուց:  
*Դիցուհին խորհուրդ տվեց, որ այդ ծաղիկը թող դնեն իր սիրած աղջկա բարձի տակ, և ժպիտով կիսածայն ասաց, որ դրանից հետո նա ինքը կայրվի քո սիրուց:*
- 4) – Ուզում եմ գնել քո բոլոր նկարները. ասա՛ քո ուզած գինը, և ոչ մի առարկություն չեմ անի. պատրաստ եմ քո ամեն նկարի դիմաց տալ մի նժույգ,- ասում է Սարգիս Պիծակին այցելած մի իշխանավոր:  
*Սարգիս Պիծակին այցելած մի իշխանավոր ասում է, որ ինքն ուզում է գնել նրա բոլոր նկարները. թող ասի իր ուզած գինը, և ինքը ոչ մի առարկություն չի անի. պատրաստ է նրա ամեն նկարի դիմաց տալ մի նժույգ:*

**42. Ուղղակի խոսքի փոխակերպումներից որո՞նք են ճիշտ.**

- 1) – Քո առաջարկն ընդունել չեմ կարող,- մեղմորեն պատասխանեց նկարիչը և ավելացրեց.-մի քանի տարի հետո քո նժույգներն այլևս չեն խրխնջա, իսկ իմ նկարները կապրեն հավերժ:  
*Նկարիչը մեղմորեն պատասխանեց, որ նրա առաջարկն ինքն ընդունել չի կարող, և ավելացրեց, որ մի քանի տարի հետո նրա նժույգներն այլևս չեն խրխնջա, իսկ իր նկարները կապրեն հավերժ:*
- 2) – Ո՞րն է Ձեր դժգոհության պատճառը,- վրդովված հարցրեց ուղևորներից մեկը.– Դուք աղջկան հրեցիք, և Դուք էլ դեռ դժգոհում եք, գոնե լռե՛ք:  
*Ուղևորներից մեկը վրդովված հարցրեց, թե որն է նրա դժգոհության պատճառը. նա աղջկան հրեց, և նա էլ դեռ դժգոհում է, գոնե լռի:*
- 3) «Ի՞նչ անեմ, ինչպե՞ս կընդունի այս լուրը Դավիթ-Բեկը»,- խորհում էր Մովսեսը և մտքերի տակ կքած՝ ծպտված քայլում էր անձանոթ քաղաքով:  
*Մովսեսը խորհում էր, թե ինչ անի ինքը, ինչպես կընդուներ արդյոք այդ լուրը Դավիթ-Բեկը, և մտքերի տակ կքած՝ ծպտված քայլում էր անձանոթ քաղաքով:*
- 4) – Դուք մեր առաջարկները քննարկեցի՞ք,- անվստահ հարցրեց աշխատակիցը տնօրենին և հասկանալով, որ նա թղթապանակը չի էլ բացել, բարկացած գոռաց.– երբևէ զվաղվելու՞ եք Դուք Ձեր անմիջական պարտականություններով:  
*Աշխատակիցը տնօրենին անվստահ հարցրեց, թե ինքը նրանց առաջարկները քննարկեց արդյոք, և հասկանալով, որ նա թղթապանակը չի էլ բացել, բարկացած գոռաց, թե նա երբևէ զբաղվելու է իր անմիջական պարտականություններով:*

**43. Ուղղակի խոսքի փոխակերպումներից որո՞նք են ճիշտ.**

- 1) – Թութակը դրե՛ք վանդակը,- խիստ ասաց անծանոթը վաճառողին.– թառի վրա կտեղափոխեմ միայն այն ժամանակ, երբ ինձ ընտելանա և կարողանա ասել այն, ինչ որ ես եմ ուզում իրենից: *Անծանոթը վաճառողին խիստ ասաց, որ նա թութակը դնի վանդակը. թառի վրա կտեղափոխի միայն այն ժամանակ, երբ ինքը նրան ընտելանա և կարողանա ասել այն, ինչ որ ինքն է ուզում նրանից:*
- 2) – Եվս մեկ քայլ, և Դուք մեռած եք, – ատրճանակն ուղղելով շվարած նավաստու վրա՝ ասաց տղան. – պատասխան պիտի տաք հորս հետ կատարվածի համար, չէ՞: *Ատրճանակն ուղղելով շվարած նավաստու վրա՝ տղան ասաց, որ ևս մեկ քայլ, և նա մեռած է. պատասխան կտան նրա հոր հետ կատարվածի համար:*
- 3) «Եթե այս անգամ էլ հերթական ամբողջը զիջենք թշնամուն, երկրի սիրտը կբացվի թշնամու առաջ,- խորհում էր գորավարը, հետո, ինքն իրեն հույս տալով, մտմտում.-ո՛չ, նահանջի տեղ չկա, ու մեզնից ոչ մեկը իրավունք չունի սեփական դիրքը կենդանի լքելու»: *Չորավարը խորհում էր, որ եթե այս անգամ էլ հերթական ամբողջը իրենք զիջեն թշնամուն, երկրի սիրտը կբացվի թշնամու առաջ, հետո, ինքն իրեն հույս տալով, մտմտում, որ, ո՛չ, նահանջի տեղ չկա, ու իրենցից ոչ մեկը իրավունք չունի սեփական դիրքը կենդանի լքելու»:*
- 4) – Չե՞ք ուզում ստրուկի կապերն արձակել և մի քիչ ջուր տալ,- երկդիմի հարցրեց խորհրդականը.– կարող է շունչը փչել, և այդ դեպքում ի՞նչ օգուտ կտա ձեզ համր դիակը: *Խորհրդականը երկդիմի հարցրեց, թե նրանք չեն ուզում արդյոք ստրուկի կապերն արձակել և մի քիչ ջուր տալ. նա կարող է շունչը փչել, և այդ դեպքում ինչ օգուտ կտա նրանց համր դիակը:*

**44. Ուղղակի խոսքի փոխակերպումներից որո՞նք են ճիշտ.**

- 1) – Դու քո բաժին կռիվն արել ես թուրքի ճակատում,- ցածրաձայն ասաց հայրը ու ձեռքը դնելով որդու ուսին՝ քաջալերող ձայնով շարունակեց,- հերթը թռռանս է հասել, որ նա իր հոր պատիվը բարձր պահի: *Հայրը ցածրաձայն ասաց, որ նա իր բաժին կռիվն արել է թուրքի ճակատում, ու ձեռքը դնելով որդու ուսին՝ քաջալերող ձայնով շարունակեց՝ հերթը նրա թռռանն է հասել, որ ինքն իր հոր պատիվը բարձր պահի:*
- 2) – Հասկանո՞ւմ ես՝ ինչ գործի համար եմ եկել,- շշնջաց Բենը,- հետս էլ խուրջին եմ բերել, որ այս գալլաձագերին ինձ տաս: *Բենը շշնջաց, թե նա հասկանում է արդյոք՝ ինչ գործի համար է ինքը եկել, իր հետ էլ խուրջին է բերել, որ նա այդ գալլաձագերին իրեն տա:*
- 3) – Ինձ ո՞ր ժամին ես զանգել, որ տանը չեմ եղել,- ծիծաղելով հարցրեց ընկերոջը և վրա բերեց.– իրականում զանգե՞լ ես, թե՞ գլուխդ ես ազատում ինձնից: *Ընկերոջը ծիծաղելով հարցրեց, թե որ ժամին է արդյոք իրեն զանգել, որ նա տանը չի եղել, և վրա բերեց, թե իրականում զանգել է արդյոք, թե գլուխն է ազատում նրանից:*
- 4) – Տե՛ր աստված,- ճչաց մայրը, ո՞վ է տեսել՝ շունը գալլաձագերին կաթ տա, որ դու էդ խեղճ շանն ես ստիպում: *Մայրը ճչաց, թե արդյոք տեսել է, որ շունը գալլաձագերին կաթ տա, որ ինքն էդ խեղճ շանն է ստիպում:*

**45. Ուղղակի խոսքի փոխակերպումներից որո՞նք են սխալ.**

- 1) Ես զարմացած հարցրի նրան.  
– Ինչու՞ հարցը չլուծեցիր նրանց միջոցով, ովքեր, իմ կարծիքով, կարող էին այն լուծել:  
*Ես զարմացած հարցրի նրան, թե նա ինչու հարցը չլուծեց նրանց միջոցով, ովքեր, նրա կարծիքով, կարող էին այն լուծել:*
- 2) Հայրը բարկացավ տղայի վրա և ասաց.  
– Դու ինչու՞ ես մեր վեճի մասին պատմել մորդ. չէ՞ որ ես քեզ խնդրել էի լռել:  
*Հայրը բարկացավ տղայի վրա և ասաց, թե նա ինչու է իրենց վեճի մասին պատմել մորը. չէ՞ որ ինքը խնդրել էր նրան լռել:*
- 3) Կինը շարունակ ինքն իրեն հարց էր տալիս. «Ավելի լավ չէ՞ր լինի իմ հեռանալը, քան թե ամուսնուս հետ մնալն ու տառապելը»:  
*Կինը շարունակ ինքն իրեն հարց էր տալիս, թե ավելի լավ չէր լինի, որ ինքը հեռանար, քան թե ամուսնու հետ մնար ու տառապեր:*
- 4) – Ուրեմն այսպես, Արամ,- անթաքույց գայրույթով ասաց ուսուցչուհին,- փակե՛ք Ձեր բերանը և ինձ հնարավորություն տվե՛ք դասավանդելու:  
*Ուսուցչուհին անթաքույց գայրույթով ասաց Արամին, որ ուրեմն փակի իր բերանը և նրան հնարավորություն տա դասավանդելու:*

**46. Ուղղակի խոսքի փոխակերպումներից որո՞նք են սխալ.**

- 1) – Միայն հայը կարող էր նման հարց տալ. իմ՝ Կալիֆոռնիայի դպրոցներում աշխատելու տարիներին ոչ ոք երբեք նման հարց չի տվել,- ասաց գայրացած ուսուցչուհին, ապա նույն տոնով շարունակեց.- շատ համառն եք հայերդ:  
*Ուսուցչուհին գայրացած ասաց, ապա նույն տոնով շարունակեց, որ միայն հայը կարող էր նման հարց տալ. իր՝ Կալիֆոռնիայի դպրոցներում աշխատելու տարիներին ոչ ոք երբեք նման հարց չի տվել. հայերս շատ համառն ենք:*
- 2) – Լիլիթ, – կցկտուր թոթովեց Ադամը,- այդ ի՞նչ ծաղիկներ էին, որ դու քաղեցիր:  
*Ադամը կցկտուր թոթովեց, թե այդ ինչ ծաղիկներ էին, որ Լիլիթը քաղեց:*
- 3) Ադամը փաղաքուշ ձայնով ասաց.  
– Լիլիթ, նազելի՛ս, հիմա գիշեր է գալու. գնանք իմ տաղավարը. քնի՛ր այնտեղ, իսկ ես կհսկեմ քո անուշ քունը:  
*Ադամը փաղաքուշ ձայնով ասաց Լիլիթին՝ իր նազելիին, որ հիմա գիշեր է գալու. գնան իր տաղավարը. թող ինքը քնի այնտեղ, իսկ նա կհսկի նրա անուշ քունը:*
- 4) Նա մտածեց. «Ի՞նչ գեղեցիկ կլինե՛ր, եթե այս հակինթե թիթեռները միշտ մազերիս վրա մնային»:  
*Նա մտածեց, թե ինչ գեղեցիկ կլինի, եթե այդ հակինթե թիթեռները միշտ իր մազերի վրա մնան:*

**47. Ուղղակի խոսքի փոխակերպումներից որո՞նք են սխալ.**

- 1) – Ներս կանչիր հյուրերիդ,- ասաց բարեհամբույր կինը, ապա, դառնալով պառավին, ավելացրեց,- դու մի երկու հա՛ց հանիր, ես հիմա գալիս եմ:  
*Բարեհամբույր կինն ասաց, որ նա ներս կանչի իր հյուրերին, ապա, դառնալով պառավին, ավելացրեց, որ նա մի երկու հաց հանի, ինքը հիմա կգա:*
- 2) Կինը դառնությամբ մտածում էր. «Հանուն ինչի՞ էր իմ այս մեծահոգությունը. միևնույնն է, ինձ գնահատող չկա»:  
*Կինը դառնությամբ մտածում էր, թե հանուն ինչի է իր այդ մեծահոգությունը. միևնույնն է, իրեն գնահատող չկա:*
- 3) – Գործը մարդու համար է,- հանգստացնում էր նրանց Մարգարիտ տատը,- ես ինչպե՞ս ձեռքերս ծալած նստեմ:  
*Մարգարիտ տատը նրանց հանգստացնում էր, որ գործը մարդու համար է, որ ինքը ինչպես ձեռքերը ծալած պիտի նստի:*
- 4) Դպրոցի տեսուչը, ցույց տալով ինձ նամակը, հարցրեց.  
– Կարո՞ղ ես ասել՝ ում նամակն է, և ով կարող էր դիմել նման խարդախության:  
*Դպրոցի տեսուչը, ցույց տալով ինձ նամակը, հարցրեց, թե արդյոք կարող եմ ասել՝ ում նամակն է, և ով կարող էր դիմել նման խարդախության:*

**48. Ուղղակի խոսքի փոխակերպումներից որո՞նք են սխալ.**

- 1) Մարդիկ նորից ինձ դիմեցին՝ այս անգամ ասելով.  
– Երեք տարի առաջ կոչ էիք անում, որ փրկեն կաքավների, հիմա էլ կոչ պիտի անեք, որ արտերը փրկեն կաքավներից:  
*Մարդիկ նորից ինձ դիմեցին՝ այս անգամ ասելով, որ երեք տարի առաջ կոչ էիք անում, որ փրկեն կաքավներին, հիմա էլ կոչ պիտի անենք, որ արտերը փրկեն կաքավներից:*
- 2) – Ոչ մի դեպքում,- աներկբայորեն ասաց Փափագյանը և շարունակեց,- հանդիսատեսն ի՞նչ մեղք ունի, որ ես հիվանդացել եմ. չէ՞ որ նա հոգեբանորեն պատրաստվել է ինձ տեսնելու, ու ես անպայման պիտի խաղամ:  
*Փափագյանը աներկբայորեն ասաց՝ շարունակելով, որ ոչ մի դեպքում, հանդիսատեսն ինչ մեղք ունի, որ ինքը հիվանդացել է. չէ՞ որ նա հոգեբանորեն պատրաստվել է իրեն տեսնելու, ու ինքը անպայման պիտի խաղամ:*
- 3) – Անցյալը հիշելով՝ ոչինչ չես շահի. մի՞թե ավելի հաճելի չի լինի, եթե հանցանքը քավես,- պատասխանեց թագուհին՝ գսպելով հեծկլտոցը և գաղտնի սրբելով արտասուքը:  
*Թագուհին պատասխանեց՝ գսպելով հեծկլտոցը և գաղտնի սրբելով արտասուքը, որ անցյալը հիշելով՝ ոչինչ չես շահի. մի՞թե ավելի հաճելի չէր լինի, եթե նա իր հանցանքը քավեր:*
- 4) – Ներս արի, տղա՛ս.- ասաց կինը,- ես անգլերեն կարդալ չեմ կարող. մեքսիկուհի եմ և խնդրում եմ՝ կարդաս հեռագիրը:  
*Կինը ասաց տղային, որ ներս գա, ինքը անգլերեն կարդալ չի կարող. մեքսիկուհի է և խնդրում է, որ ինքը կարդա հեռագիրը:*

**49. Անուղղակի խոսքի փոխակերպման տարբերակներից որո՞նք են սխալ.**

- 1) Գրողը պատասխանեց տիկնոջը, որ ինքը ճիշտ է ասում, և շարունակեց համոզել նրան, որ նա զգուշանա այդ մարդուց:  
*Գրողը պատասխանեց տիկնոջը և շարունակեց համոզել նրան.*  
– Ես ճիշտ եմ ասում. Դուք զգուշացե՛ք այս մարդուց:
- 2) Մայրը սրբեց արցունքները և խոստացավ իր գավակներին, որ կկարդա այդ պատմությունը, միայն թե նրանք թող հանգստանան և չհակաճառեն նախարարին:  
*Մայրը սրբեց արցունքները և խոստացավ.*  
– Չավակներս, ես կկարդամ այս պատմությունը, միայն թե դուք հանգստացե՛ք և մի՛ հակաճառեք նախարարին:
- 3) Բժիշկը անթաքույց արհամարհանքով փնթփնթաց, թե նա չի տեսնում արդյոք, որ մեռած է, և ավելացրեց, որ խեղճ ծերուկը վերջապես ազատվեց և՛ խելագարությունից, և՛ բանտից:  
*Բժիշկը անթաքույց արհամարհանքով փնթփնթաց.*  
– Դու չե՞ս տեսնում, որ մեռած է,- և ավելացրեց. խեղճ ծերուկը վերջապես ազատվեց և՛ խելագարությունից, և՛ բանտից:
- 4) Պարետը առարկեց՝ ասելով հյուրին, որ նա գիտի, որ նման դեպքերում իրենք միայն զննումով չեն բավարարվում, ուստի թող նա բարեհաճի կատարել օրենքով սահմանված ձևականությունները:  
*Պարետը առարկեց՝ ասելով հյուրին.*  
– Դուք գիտե՞ք՝ նման դեպքերում մենք միայն զննումով չենք բավարարվում, ուստի բարեհաճե՛ք և կատարե՛ք օրենքով սահմանված ձևականությունները:

**50. Անուղղակի խոսքի փոխակերպման տարբերակներից որո՞նք են սխալ.**

- 1) Մի խորաթափանց հայացք զգելով վրաս՝ հարցրեց, թե ինչ է պատահել. արդյոք ես դժգոհ եմ այդտեղ գալուց, որևէ բան ինձ դուր չի գալիս արդյոք:  
*Մի խորաթափանց հայացք զգելով վրաս՝ հարցրեց.*  
 – *Ի՞նչ է պատահել. դու դժգոհ ես, որ այստեղ ես եկել, որևէ բան քեզ դուր չի՞ գալիս:*
- 2) Ես մտածում էի, որ ուրեմն նա ոչ միայն չի զղջում իր երեկվա արարքի համար, այլև շարունակում է արհամարհել ինձ, և այդ միտքը սուր ցավի պես խոցում էր սիրտս:  
*«Ուրեմն նա ոչ միայն չի զղջում իր երեկվա արարքի համար, այլև շարունակում է արհամարհել ինձ», - մտածում էի ես, և այդ միտքը սուր ցավի պես խոցում էր սիրտս:*
- 3) Նա ասում է, որ իր վճիռն անբեկանելի է, և զնում է իր մենախուց:  
*Նա ասում է.*  
 – *Իմ վճիռն անբեկանելի է, և ես զնում եմ իմ մենախուց:*
- 4) Իշխանը կանչեց Սահականույշի դայակին և ասաց, որ նա գիտե, թե ինչ վտանգ է սպառնում իր դստեր ընտանեկան երջանկությանը. թող նա զնա և հսկի նրա ամեն մի քայլը:  
*Իշխանը կանչեց Սահականույշի դայակին և ասաց.*  
 – *Դու գիտես, թե ինչ վտանգ է սպառնում իմ դստեր ընտանեկան երջանկությանը. թող զնա և հսկի նրա ամեն մի քայլը:*

## ԳԼՈՒԽ VII

## ԿԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

**1. Քանի՞ միջակետ պետք է դրվի տեքստում (նախադասությունները կետադրված չեն).**

Երբ երեք օրից վերադարձա տունս այժմ այդպես եմ անվանում իմ վրանն ու քարանձավը և հիացմունքով վերապրեցի սքանչելի հովիտը հայտնաբերելու պահը մտքում վերականգնելով նրա անմատույց դիրքը արգավանդ հողն ու ծառերը հովիտը քամիներից պատսպարված աղբյուրների պաղպաջուն ջրով: Սկսեցի խորհել որ սխալ էր տունս կառուցելու դիրքը դա կղզու ամենավատ տեղերից էր: Բայց հովիտ տեղափոխվելու պլանը քննարկելով հասկացա միակ դրականը իմ տնից երևում է ծովը և հույս կա ինձ պես դժբախտ մեկի կղզում հայտնվելու դեպքում կիմանամ դրա մասին: Բայց և այնպես հովտում շինեցի մի քողտիկ ցանկապատված մարդու հասակից բարձր ամուր կրկնակի ցցապատնեշով ցցերի մեջ երկար սանդուղքով:

**2. Քանի՞ բութ պետք է դրվի տեքստում (նախադասությունները կետադրված չեն).**

Փարիզը անեզր քան օվկիանոսը փայլվիւմ էր Էմմայի աչքերում ասես լինելով շքեղ խաղալիք: Համատարած ժխորի մեջ հերթագայող պատկերները արագ հեռանում էին չթողնելով վառ տպավորություն: Դա մարդկային մի ամբողջական պատկերասրահ էր տարակերպ տարաստիճան ցոփ ու կեղծ: Շքեղ տախտակամածներին ճեմող դեսպաններ էին հայելապատ դահլիճներում հասարակության սերուցք թավշյա ծածկոցներով ձվաձև սեղանների շուրջ զգլխիչ կուրտիզանուհիներ օպերային նախասրահներում փետրազարդ գլխարկների ձյունաթույր օձիքների դիմակավորված ժպիտների շքերթ: Անշուշտ միշտ այդպիսին է եղել Փարիզը որի մեջ երբեմն գլխապառույտ էր զգում և նրան թվում էր անսովոր այդ աշխարհը օտար վանող կամ ձգողական մի օր կարող էր իրեն էլ ընդունել ինչը սակայն միայն թվում էր բերելով հեռվից դյուրթող մի աշխարհի անդիմադրելի մղում:

**3. Քանի՞ ստորակետ պետք է դրվի տեքստում (նախադասությունները կետադրված չեն).**

Թեև ամառանոցիս շրջանաձև բակը բավական մեծ տրամագիծ ուներ բայց շուտով ծառերս հիմա այդպես կարող եմ կոչել ցանկապատի ցցերը ամբողջ տարածքը ծածկեցին սաղարթով և թանձր սովեր էին արձակում պաշտպանելով արևի անմիջական ճառագայթներից ողջ օրվա ընթացքում:

Գեռ մանկուց շատ էի սիրում գնալ մի գամբյուղագործի մոտ որ ապրում էր մեր քաղաքում և դիտել ինչպես է հյուսում ու ես շատ ժամանակ չանցած կարծես գլխի ընկա ոնց են հյուսում և իմ ուժերի չափով օգնում էի նրան:

Հիմա մենությանս մեջ որոշեցի գամբյուղ գործել: Գալով ամառանոցս կտրեցի ամենաբարակ ճյուղերը համոզվելով որ պիտանի են գործիս և ասեմ որ երկար որոնելու հարկ չեղավ նուրբ ընձյուղներ շրջակայքում հեշտ էր գտնել ու անմիջապես գործի անցա:

**4. Քանի՞ ստորակետ պետք է դրվի տեքստում (նախադասությունները կետադրված չեն).**

Գեղեցիկ է կապուտաչյա Լեմանը որ ասես փիրուզ երկնքի կտոր լինի ընկած Ջվիցերիայի և Ֆրանսիայի միջև: Մի հրաշք է երկնայինի կապուտակ անհունն ու անչափելի անդորրը հետը երկիր բերած: Թվում է չի ուզում խառնվել այս աշխարհի և ոչ մի գործին: Արտներ գյուղեր վիլլաներ սրանք են իրենց դողդոջուն սովերները թափել նրա ակնախտիղ այլակներում ու երկաթուղու ճեպընթաց գնացքները օղակ-օղակ քանդելով ծխի սպիտակ կծիկները սլանում են նրա ավերով տանել-բերելով աշխարհի ծագերից մի ամբողջ խառնուրդ:

Լեմանն է քմահաճ և գեղուհու պես նրբին շարժումն ունեցող: Հանկարծ ճակատը կծկվեց ու խոժոռվեցին ալյակները իսկ ձկներն ու ձկնկուլները հանդիսության ժամանակ օրում թռչող գլխարկների պես վերուվար արին կարծես գրգռելով մոտեցող ալիքներին: Լիճը դա փաստում են բոլորը գերբնական ձգողականություն ունենալով թույլ չի տալիս մոռանալ իրեն:

**5. Քանի՞ միջակետ պետք է դրվի տեքստում (նախադասությունները կետադրված չեն).**

Կամսարյանը լռեց կանգնած մնալով ձորաբերանի քարաժայռին հայացքով հետևելով հեռացող մեքենային: Փոշին ցրվեց և հսկայական խոռոչը անմիջապես երևաց: Նա գիտեր ոլորապտույտ ճանապարհի ամեն մի կիլոմետրը պայթյունի հատվածից ճանապարհը գահավիժում էր ցած:

Նայեց շուրջը գյուղն անդորր նիրհի մեջ էր: Հանկարծ կամրջին ստվերներ նշմարվեցին դարբիններն էին: Մի պահ քարացավ ամեն մեկի ձեռքին իր հուշարձանի քարն էր ու առաջանում էին ծանր լռությունը ոտնակոխ տալով: Առջևից ընթացողները երեքն էին պապ որդի ու թոռ: Ավելի ուշադիր զննեց երեքն էլ բարձրահասակ էին:

**6. Նշի՞ր այն նախադասությունների համարները, որոնցում ստորակետ պետք է դրվի (նախադասությունները կետադրված չեն).**

1. Նաիրյան այդ քաղաքի փողոցներով մարդիկ անցնում են դանդաղ անշտապ:
2. Իրոք թող բարությունը լինի անկաշկանդ և չամաչի ինքն իրենից:
3. Հանկարծ սրահ մտավ զվարթերես Ռոզալյան մի գեղեցիկ գլխարկով եզերված նուրբ ժանյակներով:
4. Երկար փնտրտուքից հետո ավագակները տարակուսած ու հուսախաբ հեռացան:
5. Կռացած մարդուց փոքր-ինչ հեռու գտնվող վիթխարի ծառը խուլ տնքաց ու տապալեցին նրան:

**7. Նշի՞ր այն նախադասությունների համարները, որոնցում ստորակետ կա (նախադասությունները կետադրված չեն).**

(1)Բյուզանդիայի հին աշխարհի ամենահզոր պետության մայրաքաղաք Կոստանդնուպոլիսը հերթական եռուզեռի մեջ էր երկրագնդի ամենատարբեր ծագերից մրցելու էր հավաքվել իմաստասերների ու գիտունների մի հոծ խումբ: (2)Հայաստան աշխարհից այստեղ էր եկել նշանավոր պատմիչի Մովսես Խորենացու քրոջորդին Դավիթը:

(3)Կամարազարդ դահլիճում շքեղ թիկնօթոցների մեջ շուրջանակի բազմել էին սպիտակամորուս գիտունները մրցելով տարաբնույթ ու առեղծվածային հարցերով մեկը մյուսի հետևից պարտության մատնելով իմաստասերներին:

(4)Հերթը հասավ հայոց իմաստասերին Դավթին: (5)Անպատասխան չթողնելով և ոչ մի հարց չորս ժամ անընդմեջ նա մեկնաբանեց բյուզանդացի գիտունների խորախորհուրդ հարցերը հիացնելով իր խելամտությամբ: (6)Այդ մրցավեճից հետո հայ իմաստասերը կնքվեց Դավիթ Անհաղթ անունով:

**8. Նշի՞ր այն նախադասությունների համարները, որոնցում ստորակետ կա (նախադասությունները կետադրված չեն).**

- 1) Ճաշը վերջացնելուց հետո հայրս իսկույն Լեթ խոսք բացեց հյուրերի հետ իմ ապագայի մասին սկսելով երկար-բարակ մի խորհրդակցություն:
- 2) Այդ մարդը խորհուրդ էր տալիս հորս ինձ նույնպես տալ երկաթագործության որևէ ճյուղ սովորելու:
- 3) Հայրս երկար վիճաբանությանը վերջ դնելու և հարցը միանգամից լուծելու համար ընդհատեց խոսքը:
- 4) Մինչ նրանք այս վիճաբանության մեջ էին ես ևս սկսեցի մտքումս խորհել իմ ապագայի մասին:
- 5) Այն ժամանակ ես չգիտեի ինչ է նշանակում վաճառականի գործակատար և որն է նրա զբաղմունքը:
- 6) Թե ինչ պայմաններով ես պիտի ծառայեի Գուլամյանցների տանը այդ մասին հայրս ինձ չհայտնեց:

### **9. Նշի՞ր այն թվերը, որոնց տեղում ստորակետ կա (նախադասությունները կետադրված չեն).**

Լոգարաններում ծուլորեն չփչփացնում էին թափացած այցելուներ(1) և քարե նստարանների մերսողները կոշտ ձեռնոցներով յուր էին շփում նրանց խոնավ մաշկին: Ինչպես երևում է(2) Լուկանոսը արդեն այստեղ էլ էր եղել: Մի ժամանակ Սենեկան նրա առաջին հովանավորն էր: Նա բացահայտեց տղայի մեջ բացառիկ ընդունակություններ երբ սա դեռ սովորում էր Աթենքում(3) և նրան կանչեց Հռոմ որտեղ ժամանակի ընթացքում Լուկանոսը նվաճեց կայսեր վստահությունն ու բարեհաճությունը: Իր բանաստեղծություններով և թատրոնում ունեցած սրամիտ ելույթներով(4) հաջողության հասավ թե բանաստեղծների(5) և թե կանանց շրջանում: Նրան համարում էին ամենաականավորը լատին բանաստեղծների մեջ(6) «Օրփեոս» պոեմի համար նա վերջերս գրական մրցանակ էր ստացել: Նա վայելչատես էր(7) պարթևահասակ: Նա ծնվել էր Անդալուզիայում և նրա երակներում(8) ինչպես և Սենեկայի(9) իսպանական տաք արյուն էր հոսում:

### **10. Քանի՞ ստորակետ պետք է դրվի տեքստում (նախադասությունները կետադրված չեն).**

Այնուամենայնիվ նա սաստիկ ձանձրանում էր գյուղն իր տեղը չէր ու ինքն էլ այլ պլաններ էր ուղեղում փայփայել: Ամուսնու գրույցները փողոցի մայթի պես տափակ էին առանց անուրջների հուզականության ու երևակայության: Նա չէր հետաքրքրվում թատրոնով կամ ձիարշավով գրականությամբ կամ սուսերամարտով մինչդեռ ինքնաբավ ժպտում էր նայելով իր կնոջը: Ինչը ստիպեց ընդառաջ գնալու ամուսնու անհեթեթ առաջարկին Էմման չէր կարողանում բացատրել: Ամեն կին էլ երբևէ ապրում է նման հոգեվիճակ ամուսնությունից հետո բայց ինքը ներքուստ ընդդիմանում էր և իր և իր կարգավիճակի դեմ ներքին ընդվզումը միակ սփոփանքն է նման վիճակում:

### **11. Քանի՞ բութ պետք է դրվի տեքստում (նախադասությունները կետադրված չեն).**

Գնացքները շարունակում էին գնալ մեկ այս մեկ այն կողմ դրդացնելով ծանր անիվների տակ ճգնվելուց հոգնած գետինը: Ինչքան տարածություն ու լույս կա դժվարանում էր միանգամից ընկալել: Իսկ մարդուն միևնույնն է միշտ մի բան պակասում է մտածում էր նա նայելով անծայրածիր տափաստանին: Իսկ մարդկանցից դուրս լինելով մարդը չի կարող ապրել բայց նաև դժվար է մարդկանց հետ: Էհ հիմա ինչ անեմ որ ցանցն ընկած ամեն մեկն էլ վարվի այնպես ինչպես կթելադրի բանականությունը ոչ թե հանցակիցների սահմանափակ ուղեղը: Եվ կարևոր է քայլն արվի ոչ այն պատճառով որ ունակ չէ հաղթահարելու իր մեջ գազանին: Միթե չկա հնար կամ ոչինչ չի փոխվելու:

### **12. Քանի՞ բութ պետք է դրվի տեքստում (նախադասությունները կետադրված չեն).**

Դա Պոնտացի Պիղատոսին ուղղված նամակն էր կնոջ կողմից շարադրված: Նա գրում էր Ամուսինս ես շատ եմ խնդրում անուղղելի վնաս չպատճառես այն թափառականին որ ինչպես խոսում են Քրիստոս է կոչում իրեն: Համաձայն շատերի կարծիքի այդ մարդն անվնաս է արդարակյաց վարքով տկարին ապաքինող ընկածին հասնող: Իսկ որ նա իրեն իբրև թե Աստծու որդի կամ փրկիչ անգամ հրեաների թագավոր է հռչակում ամենայն հավանականությամբ չարախոսություն է: Դու գիտես ինչ խառնակիչ մոլագար մարդիկ կան մեր շուրջը: Իսկ ինչ երազ էի տեսել երեկ հետո կպատմեմ հիմա միայն ուզում եմ ասել անեծք չբերես ոչ քո ոչ էլ ժառանգներիդ գլխին վնասաբեր վճիռ կայացնելով:

### **13. Քանի՞ բութ պետք է դրվի տեքստում (նախադասությունները կետադրված չեն).**

Մշուշը լեռներից կիրճն էր իջել թավալվոր լցվելով ձորը լեռների գլխին հիմա գորշ ամպեր էին ճոճվում իսկ արևը ծիկրակում ցրիվ ամպերի արանքից հրաշք էր: Հազրոյի հայացքի դիմաց լույսի ու սովերի խաղ էր ծառի շուրջքլորը ողողված էր արևով իսկ քիչ այն կողմ սովեր էր խոնավ ու մութն առած: Լույսը սովերն էր շեշտել սովերը լույսը: Անսովոր պայծառ շողեր էին գունեղ թրթռում և թվում էր ծառի շուրջքլորը ծիածաններ էին քանդվում ու հյուսվում: Իսկ ներքևի կաճանում լույսը պահմտոցի էր խաղում: Հազրոն հասկացել էր ինչու է ծառն այսպես երկար ապրել համառ կանգնել տարիներ: Մնացել էր որ տեսնի ինչպես է խաղում լույսի սովերը մի կաթ ջրում:

**14. Ո՞ր նախադասություններում ստորակետ կա (նախադասությունները կետադրված չեն)։**

(1)Դոյակը իտալական ոճով կառուցված մի նոր շինություն էր երկու առաջադիր թևերով երեք նախագավթով: (2)Խոշոր միմյանցից հեռու պուրակների միջև լայն ճանապարհն էր մեծ ընդունելությունների օրերին բազում շքեղ կառքերի անցուղարձի ուղին: (3)Առջևում կամրջի տակով հոսող գետակն էր կամուրջն այնքան հին էր որքան դոյակի փեշերին տարածված գյուղն էր ավեզրյա եղեգնուտների ջրերում միշտ լողացող բադերի ու սագերի խմբերով: (4)Դոյակն ուներ երեք աշտարակ գոթական ոճով կառուցված գունավոր ապակիներով նախազարդված ու նայելիս թվում էր արևի շողն ընկնելիս ծիածանն իր բոլոր գույներով խաղում է այնտեղ: (5)Մուտքի երկու մեծ փեղկերով դարպասը դրվագված էր դրախտահավքերով ու լուռսներով:

**15. Ո՞ր նախադասություններում միջակետ կա (նախադասությունները կետադրված չեն)։**

(1)Ճակատում առաջին իսկ մարտերում նա վիրավորվեց գնդակը թեթև ծակել էր ոտքի ոլոքը ու մի ամիս անց նա կաղին տալով եկավ զորամաս իր մեջ թաքցրած փրկության հույսը: (2)Կողքին այնքան մահ էր տեսել որ սեփականն էլ անխուսափելի էր թվում չէ՞ որ բոլորի կյանքն էլ գրավի տակ էր: (3)Հասցրեց կռվել և դահուկային գումարտակում և հետախուզականում ու վիճակվեց տեսնել ամեն բան թե տանկային գրոհ թե անակնկալ հարձակում թե գիշերային նահանջ: (4)Ամենքի առջևից գնացողներից չէր և ոչ էլ մյուսների թիկունքում թաքնվողներից դա իր համար չէր: (5)Իսկ մեռնել չէր ուզում ուրիշի կյանքի հաշվին ապրել նույնպես: (6)Կռիվների ժամանակ մտածելու ժամանակ չէր եղել բայց իր վարքագիծը նման չէր թուլամորթի պահվածքի ահա և պատասխանը:

**16. Նշի՞ր այն նախադասությունները, որոնցում բուծ կա (նախադասությունները կետադրված չեն)։**

(1)Զրույցը չէր ստացվում և նա սեղանի մոտ մի քանի հիմար քայլեր արեց անիմաստ հարցում անելովեղանակից ապա դաշտում վիտացող սոված գայլերից: (2)Եվս մի բան սրահը տաք չէր ու ոմանք դողում էին արագ-արագ ուտելիս: (3)Ծեր տիկինը հիվանդի մասին կցկտուր ինչ-որ բան մոթմոթաց ու կենտրոնացավ ավստի ուղիղ կենտրոնում դրված ու լավ ձևավորված թառափի կտորի վրա: (4)Ինչ էին հարցնում և ինչ պատասխան էին տալիս ոչ որ չէր էլ վերլուծում իր մեջ: (5)Երիտասարդը որոշեց կատարել վճռական քայլ չսպասելով ապագա աներոջ հրավերին: (6)Մտածեց անձամբ կներկայանա նրան կճշտի դրամօժիտի չափը իսկ թե ինչով կավարտվեր գրույցը նա դեռ չգիտեր: (7)Այնուհանդերձ հստակեցում պետք է մտցներ իրենց փոխհարաբերություններում հասկացնելով գլխավորը: (8)Ամուսնանալով արդեն պառաված և կասկածելի արտաքինով կնոջ հետ ինքը թեև աղքատ էր բայց մծարին դնում էր իր գեղեցկությունն ու երիտասարդությունը ակնկալելով փող և դիրք: (9)Իսկ թե ինչ ամաչելու բան կար դրանում ինքն իրոք չգիտեր:

**17. Նշի՞ր, թե քանի միջակետ պետք է դրվի տեքստում (նախադասությունները կետադրված չեն)։**

Ներս մտավ անորոշ տարիքի դեմքի անորոշ արտահայտությամբ մի մարդ ոչ գեղեցիկ էր ոչ սգեղ: Նրան շրջապատում յուրաքանչյուրը մի անունով էր դիմում ոմանք Իվան Վասիլիչ իսկ ոմանք Իվան Իլյիչ: Ազգանունը էդ մեկը ինքս էլ հստակ չեմ հիշում ևս տարբեր կերպ էին տալիս և նա երբեք ճշգրտում չէր մտցնում չէր ընդվզում: Ազգանունը լսելիս եթե մարդ չի ճշտում չի ընդվզում կամ վիրավորվում որտեղից դիմացինը գլխի ընկնի ինչպես է ճիշտը: Լսածուն ժպիտով ինչ-որ անորոշ հայացք էր նետում բարևողին ու անցնում ահա տիպիկ քամելեռնի վարքագիծ որ թերևս լավագույնս բնութագրում է նրա նմաններին: Մարդկանց շրջանում նրան չէին էլ նկատում նա ինքն էր չափազանց սուսուփուս հարմարվող ու ծավղող:

**18. Նշի՞ր, թե քանի միջակետ պետք է դրվի տեքստում (նախադասությունները կետադրված չեն)։**

Օլիմպոսից բարձր լայնորեն տարածվում է կապտավուն անհուն երկինքը նրանից ոսկեղեն լույս է հորդում: Չևսի թագավորության մեջ ոչ անձրև է գալիս ոչ ձյուն այնտեղ հավերժ պայծառ ու բերկրալի ամառ է: Իսկ ցածում քուլա-քուլա սահում են ամպերը նրանք երբեմն-երբեմն ծածկում են հեռավոր երկիրը: Այնտեղ երկրի վրա գարնանն ու ամռանը հաջորդում են աշունն ու ձմեռը: Հրճվանքին և ուրախությանը փոխարինելու են գալիս դժբախտությունն ու վիշտը: Ճիշտ է աստվածներն էլ գիտեն ինչ բան է վիշտը բայց դա վաղանցուկ է Օլիմպոսում կրկին տիրում է հրճվանքը:

**19. Նշիր այն թվերը, որոնց տեղում միջակետ պետք է դրվի (նախադասությունները կետադրված չեն).**

Լռություն էր իջել Սեպասարի գլխին (1) գիշեր էր: Վեցով նստած էին հրացանները ծնկներին քարերին թիկնած (2) ոչ մեկը մյուսին շիփ-շիտակ նայել չէր կարողանում: Թմբուկի ձայնը չէր դադարում (3) ականջները դժժում էին: Երկու ցերեկ ու գիշեր պաշտպանվեց Սեպասարը: Գիշերը քարեր գլորվեցին (4) նշանառու կրակոցներ եղան: Ուրիշ ճար չկար (5) փամփուշտները քիչ էին: Հետո ասկյարները հրանոթ բերեցին: Հրանոթի որոտներին Սեպասարը պատասխան տվեց: Արթնացավ քնած առյուծը կռիվ տվեց սարը մինչև վերջ ու կռվում ընկան մեկ-մեկ: Մի պահ զգաց (6) կողքի քարերից գնդակի որոտը լռեց: Քաջերն ընկել էին (7) կռվելու էր մենակ: Հավաքեց ու լիցքավորեց հրացանները (8) տարբեր դիրքերից էր կրակելու ցույց տալով որ դեռ դիմադիր ուժեր կան:

**20. Նշիր այն թվերը, որոնց տեղում բութ պետք է դրվի (նախադասությունները կետադրված չեն).**

Տարօրինակ բան(1) բարձրիկ սարերը թողած(2) արծիվը քաղաք մտավ նստեց Մլեհի դեմ դիմաց որձաքարի վրա: Արծիվն իջնի մարդկանց մոտ(3) ով է տեսել: Տարակուսանքի մեջ էր իրեն կորցրել էր հալածական էր դարձել հավքերի արքան: Ումից է հալածվել որ թշնամուց(4) չգիտեր: Գուցե իր նման փախել էր ոչ թե թշնամուց այլ նրա նենգությունից: Գուցե եկել էր մարդկանց մոտ իմանալու թե ինչու է աշխարհը լի նենգությամբ: Մլեհը հասկանալով(5) ինչքան երկար է ապրում արծիվն ու ինչքան շատ բան է հիշում(6) գտավ գլխավորը(7) հզոր թռչունի թշնամին հիշողությունն է: Արծիվը թևածեց Հայոց լեռնապարի կողմը ու ինքը հիշեց հեքիաթի տղային որ արծվի թևերին նստած(8) սավառնում է դեպի իր աշխարհի(9) մանկության լույսով ողողված ափը արևոտ լուսավոր ջերմ:

**21. Նշիր, թե փակագիծ ունեցող քանի նախադասություն կա տրված հատվածում (նախադասությունները կետադրված չեն).**

Նրբահյուս շղարշից կարված լաջվարդ ծիրանին ուսերին չքնադագեղ Աստղիկը նա հայոց դիցարանի սիրո և գեղեցկության աստվածուհին է դուրս եկավ Աստղկաբերդից: Նա համրաքայլ ուղևորվեց իր սիրելի Վիշապաքաղի այդպես էին անվանում Վահագնին աստվածային կացարանը: Հաղթահարելով երկնակարկառ լեռների բարձունքները դրանք պատված էին հավերժական ձյունով հասավ ծաղկառատ հովտին ու հանգրվանեց խոխոջուն գետակի ափին փոքր-ինչ դադար առնելու: Մակայն դիցուհու անդորրը խաթարվեց կատաղի մեռյալների գետինը դորդացնող դոփյունից փոշու ամպ բարձրացնելով դեպի աստվածուհին էր վարգում մի ասպախումբ: Վայրագ հրոսակախմբից պետք էր թաքնվել ինչպես լինում է նման դեպքերում և Աստղիկը հապշտապ մոտեցավ ճամփեզրին օրորվող մի փշատենու: Ծառն ակնթարթորեն հյուրընկալեց կույսին հասկացել էր որ աստվածուհին է գորովանքով իր գիրկն առնելով խոնարհեց թավշապատ ճյուղերը ծածկեց նրան և անուշաբույր սաղարթներից արծաթ փոշի արձակեց այդպես ստեղծելով մառախուղի խորհրդավոր պատրանք: Փրկվեց աստվածուհին բայց արծաթափայլ փշատենու ընձյուղները մնացին կռացած:

**22. Նշիր, թե փակագիծ ունեցող քանի նախադասություն կա տրված հատվածում (նախադասությունները կետադրված չեն).**

Տավուշում բարձրասաղարթ անտառներով հարուստ այդ երկրում մի ժայռեղեն բարձունքի վրա վեր է խոյացել անավարտ հոյակերտը Մակարավանքը այն կառուցվել է 12-րդ դարում Մակար քարագործի երկար տարիների տքնության արդյունքում շունչ ստացած վանքը որ թեև կառուցվում էր դանդաղ բայց վարպետն ուխտել էր որ մինչև վանքը ավարտին չհասցնի ոտքերը հողին չառնեն: Օր օրի բարձրանում էին վանքի պատերը իսկ վարպետ Մակարը հողից կտրվում: Նա գիշերում էր վանքի իր ձեռքով շարված ամուր պատերի վրա դրանք կիսով չափ բարձրացել էին իր երդումը չդրժելու համար: Վրա է հասնում աղետը որդին հիվանդանում է անբուժելի ախտով և վախճանվում: Հորը խնայելով բոլորը քաջատեղյակ էին նրա երդմանը հարազատները թաքցնում են կատարվածը: Բայց վարպետը սկսում է ինչ-որ բան գուշակել նա լավ գիտեր որդու տաշած քարերը և ի վերջո տեղեկանում է կատարվածի մասին: Չդիմանալով կորստի ցավին ցած է նետվում պարսպից: Դժբախտ վարպետի պատմությունը քչերը գիտեն բայց գեղեցիկ Մակարավանքը ծանոթ է բոլորին:

**23. Նշիր, թե փակագիծ ունեցող քանի նախադասություն կա տրված հատվածում (նախադասությունները կետադրված չեն).**

Բագրատունյաց Գագիկ արքայի հիմնած ձախլիկ նետածիգների վաշտը Գրիգոր Մագիստրոսն էր արքային տվել այդ գաղափարը եզակի էր իր տեսակի մեջ: Նրանցից ոչ մեկը ինչպես պարզվեց չէր վրիպում և բոլորի նետերը անվրեպ խոցում էին թիրախը երևի աշխարհի ոչ մի բանակում նման բան չէր գրանցվել զարմացնելով պալատականներին: Մանրակրկիտ քննելով ձախլիկներին հայ բժիշկները եզրակացրին որ ամենայն հավանականությամբ մեծ մասամբ ցորնահաց և ցորենով պատրաստված կերակուր գործածողների չորրորդ սերունդը ձախլիկ է լինում սա իրավամբ զարմանալի փաստ է այսինքն մարդը ձախլիկ է եթե նրա պապի հայրը պապը և հայրը ցորնակերներ են: Հետաքրքիր է մի բան ևս ձախլիկության խնդրին մարդիկ անդրադարձան հազար տարի անց միայն պարզելով մի քանի բան ձախլիկը ճարպիկ է ունի ձիգ կեցվածք ավելի նրբագագ է աջիկից: Քանի որ ձախլիկի ուղեղի աջ կիսագունդն ավելի գործունակ է ի դեպ աջ կիսագունդում տեսողական պատկերն ավելի արագ է հայտնվում նա ավելի շուտ է կողմնորոշվում և ավելի մեծ ճարպկություն դրսևորում:

**24. Նշիր այն նախադասությունները, որոնցում փակագիծ պետք է դրվի (նախադասությունները կետադրված չեն).**

1. Ըստ Մովսես Խորենացու Արամ արքան թագադրումից հետո մի օր հարևան երկրների տիրակալների համար դա ընդունված կարգ էր հնում խնջույք է կազմակերպում ճոխությամբ նշելու այդ իրադարձությունը:
2. Ալեքսանդրիայի փարոսը սյուներին հենված գմբեթով և Պոսեյդոնի բրոնզե արձանով մի հսկա ջահ էր նավերին գիշերային մթության մեջ կողմնորոշելու համար դա դիտաշտարակ էր քաղաքի մատույցները պաշտպանելու համար:
3. Երեք տարեկանից կույր Մահարին գիտելիքի անհագ ծարավը հագեցնելու համար հասավ Հալեպ եղավ Անտիոքի գրադարանում նրան օգնում էր ուղեկից ընթերցողը սպա Բադդադ որտեղ չափածո խոսքի վարպետներն էին:
4. Հայոց արքա Արտավազը զգալով հռոմեացիների հարձակման մոտալուտ վտանգը որոշում է թաքցնել արքունական գանձերը Բաղաս աշխարհի լեռներից մեկի քարայրում դեպի թաքստոց տանող օձագալար կածանը հայտնի էր միայն արքային որը ի դեպ նաև գաղտնարան էր:
5. Մատնիչներից իսկ դրանք միշտ եղել են տեղեկանալով արքայի հարստության մասին հռոմ զորավարը պաշարում է արքայական բերդը:
6. Խոսքով Կոտակը ինչպես նրան կարճահասակության համար կոչում էր ժողովուրդը փառավորվում էր իր մեծագործություններով սիրելի դառնալով ժողովրդին:

**25. Նշիր այն նախադասությունները, որոնցում բութ պետք է դրվի (նախադասությունները կետադրված չեն).**

1. Հայաստան մտած Լենկթեմուրի վրանն է մտնում մի իշխան նրան ծառայելու նրա կամակատարը դառնալու:
2. Վերջապես ես հասկացա գլխավորը նրան չեմ ուզում հանդիպել այն պատճառով որ պարզապես չեմ կարող նրա հարցերին ազնիվ պատասխաններ տալ խիստ ցավոտ է իրականությունը:
3. Մի կին ինձ քվելով անցավ և հետևից քարշ տվեց դեղնամազ անորոշ ցեղի մի շնիկ:
4. Հենց այդ պահին պարզորոշ տեսա պարոն Սեֆին որը մի անձանոթուհու թևանցուկ արած ճեմում էր ծառուղու երկայնքով:
5. Իմացա որ ընկերս ողջ է ու չգիտես ինչու տարակուսում եմ սրտանց չեմ ուրախանում:
6. Մենք ամբողջ գիշեր վիճում էինք նա ինձ չէր համոզում իր փաստարկներով ես նրան երկուսս էլ գուցե սխալ էինք:

**26. Նշիր այն նախադասությունները, որոնցում երկու բուք պետք է դրվի (նախադասությունները կետադրված չեն).**

1. Նա միշտ տեսնում էր նույն զարհուրելի երազը ձյան սանդուղքով իջնում է լապտերով լուսավորում խոր փոսը հատակին լեռնագնացներից մեկն է ծնկաչոք արնաշաղախ:
2. Ամբողջ օրն իրեն վատ էր զգում մղձավանջային երազը հիշելով տանջող մտքերը ցրելու անօգուտ ճիգ գործադրելով:
3. Լեռնանցքից տուն եկավ բոլորը արդեն գիտեին կատարվածի մասին և վշտից սպանված իրենց անելիքը չիմանալով բոլորել էին հարազատների շուրջը:
4. Չգիտեր ինչ ասի որ գլուխն ազատի նրանցից էլ նամակից էլ ու ծանր հոգոց արձակեց դա աննկատ շանցավ ինչպես կարող էր վարպետորեն արձակված հոգոցն ազդեցություն չգործել:
5. Կառավարչի հարցական հայացքը խոսքի չվերածված շատ մոտիկից գայլերի ոռնոց լավեց խուճապ տարակուսանք վախ ահա ինչ կարելի էր կարողալ նրա դեմքին:
6. Օրեր շարունակ նա չէր քնել և շատ էր ուզում գոնե մի պահ գլուխը բարձին դնել ու ամեն ինչ ջնջել և որտեղից որտեղ ներս է մտնում կառավարիչը մի նամակ ձեռքին կենտրոնից էին ուղարկել:

**27. Նշիր այն նախադասությունները, որոնցում փակագիծ պետք է դրվի (նախադասությունները կետադրված չեն).**

1. Ժուկով-ժամանակով մի թագավոր է լինում որ ամեն իրիկուն մութն ընկնելուն պես թափառաշրջիկի հագուստով շրջում է փողոցից փողոց որ իր աչքով տեսնի ինչպես է ապրում իր ժողովուրդը նա պալատականներին մեծ հավատ չէր ընծայում:
2. Տաթևի նշանավոր վանքում Հովհան Ռոտունցու նա նաև նույնանուն համալսարանի հիմնադիրն էր ծավալված գործունեության շնորհիվ միջնադարյան Հայաստանում Տաթևը կրթական խոշոր կենտրոն է դառնում:
3. Այն որ դեղձը հայկական պտուղ է և սխալմամբ է օտարների կողմից պարսկական համարվել և «պերսիկ» կոչվել վկայում է պարսկական առածը. «Ոչ հայն իր դեղձնուն կխփի ոչ պարսիկն իր դստերը» չէ որ պարսիկը իր ստեղծած մրգի մասին նման բան չէր ասի:
4. Պապի ականջին հաճախ փսփսուքներ էին հասնում պալատն առանց քծնանքի ու բանասարկության պալատ չի լինում թե Մուշեղը անկեղծ չէ արքայի հետ և պատահական չէ որ հայոց թագուհու վրեժն առնելու փոխարեն Շապուհի կանանցը ազատ արձակեց:
5. Այդ օրը ինչպես և սպասվում էր դահլիճը լիքն էր հանդիսականներով:
6. Երեկոյան խրախճանքի թեժ պահին Դամոկլեսը նկատելով հավաքվածների չարագուշակ հայացքները նա անտեղյակ էր որ իր գլխավերևում սուր է կախված հայացք նետեց առաստաղին և աչքովն ընկավ հենց իր գլխավերևում կախված սուրը:

**28. Նշիր այն նախադասությունները, որոնցում բուք պետք է դրվի (նախադասությունները կետադրված չեն).**

1. Ամառվա կեսին պատերազմ ամուսինը գորակոչիկ գործերը կանգնած փողոցները ամայի ու շոգ իսկ մարդիկ լուռ ու մոլորված:
2. Վախեցել էր շոգից ճանճերի պարսերից կեղտոտ անխոնի հոտով հագեցած հյուրանոցներից:
3. Նա պատմում էր որ իր վրա հարձակվողներից մեկը նիհար ու բարձրահասակ էր եղել մյուսը անշուշտ ավելի կարճ ու գիրուկ:
4. Օրնիրուն մեջք էր ծռում ակնկալելով տերերի գոհունակությունը նրանց բարյացակամությունը:
5. Ծով առափնյա խութեր ու կանաչի մեջ թաղված սարալանջեր ահա այն ամենը որ նրան մոռանալ կտային վերջին շաբաթվա անախորժությունները:
6. Թե ինչ ճանապարհով էր ետ բերելու տանուլ տված ահռելի գումարները նա չէր պատկերացնում և մտածելիս գլուխը պտտվում էր:

**29. Նշել այն նախադասությունների համարները, որոնցում բութ պետք է դրվի (նախադասությունները կետադրված չեն).**

1. Սենյակում իր խաղալիքներով աղմկող երեխան սեղանին մի բաժակ մուգ թեյ ու Տերյանի միհատորյակը:
2. Նա պարզվում է վերջերս է վերադարձել շրջագայությունից:
3. Նա չէր մոռացել հոր տարիներ առաջ տված խոստումը Հայաստան գնալու և սեփական աչքերով հայրենիքը տեսնելու մասին:
4. Աշխարհի չարն ու բարին ճանաչած խանին թվում է մոլորեցրել էին ու մղել սխալ արարքների:
5. Ինչ էր մտածել աշխարհահռչակ ջութակահարը իր վերջին հանգրվանի մասին նրա որդուն շրջապատողներից ոչ մեկը չէր կարող ասել բայց փաստն այն էր որ նրա աճյունը տասնյակ տարիներ դեգերում էր Եվրոպայի ճանապարհներից:
6. Քանի չէր եղել տաճարում չէր կողմնորոշվում վերանորոգման ծավալների հարցում ու սպասվելիք ծախսերի չափի մեջ:

**30. Ո՞ր նախադասություններում երկու բութ պետք է դրվի (նախադասությունները կետադրված չեն).**

1. Կից սենյակում թախտին պառկած էր անդամալույծը անհաղորդ ողբերգական անցուդարձին:
2. Թվում էր երկնքից թափվում է կրակի հեղեղ վայրենի մռնչյուն արձակելով:
3. Լողում էր մակույկը մաքառելով ալիքների դեմ ջանալով մոտենալ ափին:
4. Անփորձ աչքի համար առեղծված է ինչպես են քարերը նստել միմյանց վրա ստեղծելով ժայռակուփ կերտվածք:
5. Բակում խաղացող երեխաները մեզ տեսնելով զարմացած թողեցին խաղը:
6. Գզիրը մի անգամ էլ պտույտ արեց փողոցներում բարձր կանչով իսկ շներն այս ու այն կողմից ձայն տվեցին արագ հանդարտվելով:

**31. Նշիր այն նախադասությունները, որոնցում բութ պետք է դրվի (նախադասությունները կետադրված չեն).**

(1)Ասում են Գրիգոր Նարեկացին յոթ տարի հոտաղ է եղել Ջևիկ գյուղում: (2)Ի տարբերություն մյուսների նա անասուններին երբեք չէր ծեծում: (3)Տեսնելով նրա բարությունը տերը բարկանում է և փորձում խել ճիպտաբ: (4)Սեծատունը բիրտ ու ամբարիշտ մի մարդ ընկնում է Նարեկացու հետևից: (5)Բայց այդ պահին կատարվում է հրաշք Նարեկացին ճիպտաբ տնկում է հողի մեջ և անհետանում: (6)Հարուստը փորձում է ճիպտաբ հանել հողից բայց չի կարողանում որովհետև այն արմատակալում է դառնում մշտականաչ գիհի: (7)Գիհին որի փայտը չի փտում ապրում է չորս հարյուր տարի: (8)Բայց որքան էլ զարմանալի է Ջևիկի գիհին ոչ փտում է ոչ չորանում նա անընդհատ կանաչ է: (9)Այն այժմ հազար տարեկան է:

**32. Նշիր այն նախադասությունները, որոնցում բութ պետք է դրվի (նախադասությունները կետադրված չեն).**

1. Աչքերը պղտորվում են փղձուկը սեղմում է կոկորդը մի կարճ վայրկյան և վշտալլուկ հայրը բարձունքից ցած է նետվում:
2. Բաբելոնի զարդը կախովի այգիներն էին որոնք ըստ հույն պատմիչ Հերոդոտոսի հիմնվել էին թագավորի սիրելի կնոջ համար:
3. Հարավային մեղմ սյուրը շոյեց երիտասարդի հուզմունքից բորբոքված աչքերը:
4. Ահարկու վիշապի նման գետը գոռգոռում էր երախի մեջ առած կոճղեր ու ծառեր:
5. Ասում են թե դրանից հետո էր որ Ալեքսանդր Մակեդոնացին նվաճեց բաղձալի աշխարհամասը Ասիան:
6. Ոչ ոք չէր կռահում ինչի համար է նրբահյուս ժանեկազարդ կտորը:

**33. Նշի՛ր այն նախադասությունները, որոնցում բութ պետք է դրվի (նախադասությունները կետադրված չեն).**

(1)Մերուժանը ինն օր ճանապարհների վրա էր միայնակ ու լքված: (2)Հոգնածության հետ տանջում էր նաև քաղցը երկու օր էր ոչինչ չէր կերել: (3)Որպես ռազմիկ նա սովոր էր բացօթյա կյանքին բայց քաղցին ընդդիմանալու կարողություն չուներ: (4)Ոտքերն ընդարմացել էին աչքերը պղտորվել: (5)Մի անորոշ երկյուղ կրծում էր վշտերից կարեվեր խոցված հոգին: (6)Դիմացը հորիզոնի գծին զուգահեռ ուղղաբերձ լեռներն էին հակառակ կողմում հուռթի արտեր: (7)Լսվեց շների հաչոց երևի հովիվն էր գալիս: (8)Մերուժանի համբերությունն արդեն սպառվել էր նա պատասպարան խնդրեց հովվից: (9)Նա որ հայոց արքունիքում առաջնակարգ նախարարի բարձր ունեւ պարսից թագավորի հետ շատ անգամ նույն թախտին էր նստել երբևէ այնքան ախորժակով չէր ճաշել որքան այստեղ հովվի անպաճույճ քողտիկում:

**34. Նշի՛ր այն թվերը, որոնց տեղում բութ պետք է դրվի (նախադասությունները կետադրված չեն).**

Ինչքան էլ աշխատում էի ինձնից վանել այդ գաղափարը(1) երիտասարդի անհետացումը իմ մտքում անխուսափելիորեն կապվում էր օրիորդի համառ լուծության հետ: Երբ տուն վերադարձա տեսա(2) նա հենց այդ չարաբաստիկ մամակներն էր կարդում(3) ամենևին ուշադրություն չդարձնելով իմ գալուստին: Ես նրան ասելով որ անկարող եմ այլևս մնալ հոգեկան այսպիսի վիճակի մեջ անմիջապես հեռացա սենյակից: Նա մեծ դժկամությամբ(4) ինձ ցույց տվեց իր ազգականների(5) մի քանի օր առաջ ուղարկված մամակները: Նրանք գրում էին որ պարտավոր են նախազգուշացնել(6) ինչ կլինի օրիորդի անակնկալ մեկնումի արդյունքում: Ես աշխատում էի հիշել թե Փարիզ տեղափոխվելուց ի վեր(7) իմ վարքագծի մեջ ինչ արատավոր բան է եղել նրա ազգականների նատիպելով(8) այդպես վարվել: Ըստ նրանց կարծիքի(9) այդ կապը ծայրահեղ թուլության արդյունք էր:

**35. Նշի՛ր, թե քանի բութ պետք է դրվի տրված հատվածում (նախադասությունները կետադրված չեն).**

Ես արդեն համարյա վստահ էի որ դա նա է: Հուսախաբ քայլեցի առաջ չիմանալով ուր գնամ: Կյանքը զգալիորեն դառը համ ուներ և ես զգում էի ինչպես է վաղուց ի վեր հասունացող սրտխառնուրը հասնում իր գագաթնակետին ինչպես է կյանքն ինձ դուրս հրում և մի կողմ շարտում: Կատաղած քայլում էի գորշ քաղաքով ամեն ինչից խոնավ հողի հոտ առնելով: Աստված իմ ինչպես հնարավոր եղավ այս ամենը ինչպես հասա ես դրան ես ոգևորված պատանիս: Ու մինչ ես Հարրի Հալլերս կանգնած էի փողոցում հանկարծակիի եկած ինձ մոտեցավ մի գեղեցկատես պատանի գրքերի կապոցը ձեռքին:

**36. Նշի՛ր այն նախադասությունների համարները, որոնցում բութ պետք է դրվի (նախադասությունները կետադրված չեն).**

1. Ինձ համար հաճելի էր այդ պատկերը հիասքանչ որը ես այսօր կարող եմ համեմատել միայն Ռ-աֆայելի կտավների հետ:
2. Նրա ծովի մման ընդարձակ հայացքը միշտ ուղղված էր դեպի անորոշություն:
3. Նա միջահասակ էր նազելի կազմվածքով գեղեցիկ մազերով:
4. Թվում էր թե երբևէ ինչ-որ սարսափելի տեսիլ է ազդել նրա աչքերի վրա և այդ ահը այն ժամանակից դրոշմվել է այնտեղ առմիշտ:
5. Վերջապես մի օր առավոտյան ժամը տասին դիմացի դռները բացվեցին և փողոց ելավ բարձրահասակ տղամարդը:
6. Ես նայելով այդ կնոջը ականա ցնցվեցի և իմ տեղում մնացի բևեռված:

**37. Նշի՛ր այն նախադասությունների համարները, որոնցում բութ պետք է դրվի (նախադասությունները կետադրված չեն).**

(1)Դեռ Կալիգուլայի օրոք Բուռնոսը իր ծառայությունն սկսել էր որպես կայսեր կողմնակից և մասնակցել էր շատ ճակատամարտերի: (2)Նրա նժույզը գնում էր դեպի ճամբար ուր տեղավորված էր քաղաքամայր Հռոմի մոտ գտնվող հավաքակայանը: (3)Նժույզն իր տիրոջ հետ այնքան էր անցել այդ ուղին որ անսխալ գիտեր ճանապարհը երբեք չէր սխալվի: (4)Մի վարձկան գետնին նստած գարեհաց էր ուտում: (5)Ցենտուրիոնները գրուցում էին անցուղարձ անելով: (6)Բուռնոսը խանդաղատանք էր ապրում ծանոթ տեսարաններից և ներծծում էր ռազմական ճամբարի առնական սուր հոտը ռունգերն ուռցնելով: (7)Նա ուղևորվեց այնտեղ ուր ծածանվում էր կապույտ դրոշը դա հեծյալների ճամբարն էր: (8)Այստեղ լսվում էին ձիերի վրնջոցներ իսկ զինվորները պատրաստվում էին քնելու: (9)Բուռնոսը նստել իր վրանի մոտ աթոռի վրա:

**38. Նշի՛ր այն նախադասությունների համարները, որոնցում բութ պետք է դրվի (նախադասությունները կետադրված չեն).**

1. Քանի դեռ ուղևորը գիշեր-ցերեկ ճանապարհին է նա շտապում է չնկատելով անքնությունն ու վտանգները:
2. Նա թուլացավ և քնեց այնպիսի խոր քնով որ մարդիկ կարծելով թե մեռած է նրան դուրս տարան սենյակից:
3. Հռոմեական բանակը ծերունագարդ զինվորներով և փորձառու ռազմիկներով կռվից ուժասպառ տուն վերադարձավ:
4. Նրանք նայեցին իրենց ծննդավայրի մարգագետիններով զարդարված լայնարձակ տարածություններին և հասկացան որ արդեն բավական ծեր են:
5. Նրանք իրենց հերթին հարցրին թե որտեղ են որդիները և նրանց պատասխանեցին որ պատերազմը վերջացել է և Կեսարը մեռել:
6. Նրանք հիշեցին որ հայրական տան մութ անկյուններում տեսել են մարմարյա խորհրդավոր կիսանդրիներ լատիներեն մակագրությամբ:

**39. Ո՞ր նախադասություններում բութ չպետք է դրվի (նախադասությունները կետադրված չեն).**

- 1) Արքայանիստ քաղաքի նորաշեն բարձրաբերձ ու գեղադիր արքունիքում արտասովոր եռուզեռ էր տիրում:
- 2) Թվում էր թե մահաբեր մի ուժ մի չար ուժ ամայացրել էր երբեմնի աշխույժ կենդանի եռուզեռով լի քաղաքը:
- 3) Երջանիկ էր գգում որ մուրազը կատարվեց տեսավ իր երկիրը վայելեց կարոտն առավ:
- 4) Մշակները հայացքները հառել էին Սմբատին որը ձեռքերը գրպանները դրած լայնեզր գլխարկն աչքերին քաշած շրջում էր նավթամբարների մոտ:
- 5) Մեկ տարի հետո Սորունի ձորում ճանապարհից դուրս ծլեցին բազմաթիվ ընկուզենիներ:
- 6) Դրանք հիմա ահագին ծառեր են և ստվեր են գցում ճանապարհի արևով մշտապես ողողված հատվածներին:

**40. Նշի՛ր այն նախադասությունները, որոնցում կետադրական սխալ կա.**

1. Շատ ու շատ դարեր առաջ՝ Հունաստանում, մի գեղեցիկ աղջիկ էր ապրում՝ եղնիկի պես գեղակազմ, նոճու պես սլացիկ:
2. Նրա աչքերին նայելիս, թվում էր, կապտաթույր երկնքում աստղեր են առկայծում:
3. Ուր ոտք էր դնում՝ թուխպերը ցրվում էին, արևը՝ փայլում, և մարդիկ, մոռացած վիշտ ու տխրություն, ժպտում էին միմյանց:
4. Անասհման բարի էր դիցուհին՝ նա անչափ սիրում էր մարդկանց, նրանց տրտմությունները փարատում, վերքերը ամոքում:
5. Մի օր կաթնահունց լուսնի շողերի տակ՝ ականակիտ առվակի ափին, միայնակ նստած մի պատանու տեսավ՝ թախծոտ ու տամուկ աչքերով:
6. Դիցուհին պատանուն ասաց.  
- Այս ծաղիկը թո՛ղ դնեն աղջկա բարձի տակ. նա ինքը կայրվի քո սիրուց:

**41. Նշիր այն նախադասությունները, որոնցում կետադրական սխալ կա.**

1. Մեծաբանքար քանդակագործ-մանրանկարիչը՝ Մոմիկը, ապրել ու ստեղծագործել է տասներեքից տասնչորսերորդ դարերում:
2. Նրա մանրանկարներն ու խաչքարերը թեև դարերի հնություն ունեն, բայց հոգեպարար տրամադրությամբ են տոգորում դիտողին:
3. Որտեղ էլ տեղադրված լինեն դրանք՝ անմիջապես տարբերվում են իրենց յուրօրինակ արվեստով:
4. Ով մեկ անգամ տեսել է Նորավանքը, որ նախագծել ու կառուցել է Մոմիկը՝ այլևս երբեք չի կարող մոռանալ ճարտարապետական այդ հրաշքը:
5. Թեպետ այդ եզակի կառույցը վեց հարյուրից յոթ հարյուր տարեկան է, սակայն, այսօր էլ հիացնում է ինքնատիպ կառուցողական արվեստով:
6. Թվում է՝ տեսիլք է, որին մարդկային ձեռք չի դիպել:

**42. Նշիր այն նախադասությունները, որոնցում կետադրական սխալ կա.**

1. Երբ Հայկ Աղեղնավորը հաղթեց բռնակալ Բելին, քաշվեց Հարք գավառը և խաղաղության մեջ անցկացրեց կյանքի մնացած օրերը:
2. Դյուցազնի մերձավորները հաշվեցին նրա ապրած տարիները, և նրա մահվան օրը հայտարարեցին, թե նա ապրել է ուղիղ հարյուր տարի:
3. Մի անգամ Արշակ Երկրորդը դիմում է կուրացած հորը.  
- Հայր, խորհուրդ տո՛ւր ինձ՝ ինչ հուշարձան կառուցեմ, որ անմահացնեմ իմ և քո անունը:
4. Ցավալին այն է, որ աշխարհում ոչ մի կայուն բան չկա՝ ամեն ինչ փոխվում է:
5. Եթե ոսկյա այուն էլ կանգնեցնես, կվերածուլեն և քո անունը չեն տա, փառահեղ տաճար կերտես՝ կկործանեն հիմնիվեր, պողոտա սարքես՝ արահետ կդարձնեն ու իրենց անունով կկոչեն:
6. Ուզում եմ ասել՝ նախանձն ամեն ինչի ընդունակ է:

**43. Նշիր այն նախադասությունները, որոնցում կետադրական սխալ կա.**

1. Վեստֆալիայում, բարոն Թունդերի դղյակում, ապրում էր մի պատանի, որին բնությունն օժտել էր ամենամեղմ բնավորությամբ:
2. Հարկ եղած դեպքում՝ նրա բակի բոլոր շները հավաքվում և կազմում էին մի ոհմակ, իսկ նրա ձիապանները դառնում էին առաջատար որսկաններ:
3. —Հայտնի է,- ասում էր նա,- որ իրերն ուրիշ կերպ լինել չեն կարող, քանի որ, ստեղծված լինելով որոշակի նպատակի համար, դրանք ծառայում են հենց այդ նպատակին:
4. Առանձնատան ստորոտում ծովը, անօգնական մոլուցքով բռնված, լիզում էր մարմարե աստիճանները, նույնիսկ՝ բարձրանում ամենավերջին աստիճանին՝ պաշարելով առանձնատան պատերը:
5. Դրանցից մեկը բախվելով փշուր-փշուր եղավ ու հարվածեց փղոսկրյա արձանին:
6. Տարիներ առաջ արիստոկրատներն ու հարուստները միայն զանազան պատրվակներով էին մտնում այստեղ, օրինակ՝ ծանոթներին փնտրելիս:

**44. Նշիր այն նախադասությունները, որոնցում կետադրական սխալ կա.**

1. Մինչ անցյալ ձմեռ ես անցկացրի խաղաղ և աշխատանքային մի կյանք՝ նրանք, հակառակ իմ կամքի, օրը վատնում էին խնջույքներում և պարահանդեսներում:
2. Նա սկսեց ծիծաղել, և պատմեցին, որ Ռուբենը մեկնել է արտասահման՝ մի փոքր հանգստանալու և կիսատ մնացած գործերը կարգի բերելու:
3. Մի համակրելի եռանդով, որը նրան այնքա՛ն գրավիչ էր դարձնում, նա ինձ բացատրեց, որ բոլոր հանճարեղ մարդիկ տարօրինակ են և պետք չէ նրանց շատ վստահել:
4. —Դու անտանելի ես, — ասաց երիտասարդը՝ ծիծաղելով և վեր կենալով:— Ինչպե՞ս չես ճանաչում այդ աղջկան. նա ամուսնացած չէ և մեծ եկամուտ ունի:
5. Այդ ժամանակ հանդիսականները, զանգը լսելով, թողեցին ճեմասրահը և ուղղվեցին դեպի տները, իսկ ծերունին և Ռաֆայելը՝ բաժանվեցին:
6. «Ես ամենագեղեցիկն եմ»,- հնչում էին նրա ուղեղում այս արբեցուցիչ բառերը՝ ամոքելով նրա սնափառությունը:

**45. Նշիր այն նախադասությունները, որոնցում կետադրական սխալ կա.**

1. Բայց զմայլանքի խուլ աղմուկը աստիճանաբար հանդարտվեց, երգերը հնչեցին բեմի վրա և աստիճանաբար մարեցին հնչյունները:
2. Այդ ուժը, սակայն ոչ մեկին պետք չէր. անհրաժեշտ էր աճեցնել արագությունը ի հաշիվ ուժի:
3. Փոխանակ իրենց կատարածը ջուրը նետելու, նրանք պետք է հարգանք դրսևորեն ավագ սերնդի նկատմամբ և փորձեն այդ նորը հաստատել կյանքում:
4. - Իսկ թե ինձ հաղթես՝ քեզ սպասվում են այսպիսի պարզկներ՝ երկու հազար ոսկեդրամ, նրբին աշխատանքով ձիասարք, արոսի փայտից պատրաստված հոյակապ սարք:
5. Ժամկետը լրացավ, և յոթ տարվա ավարտը մոտեցավ. յոթերորդ տարվա վերջին օրվա երեկոյան նրա տան շենին մի անձանոթ մարդ հայտնվեց՝ իսպանացու տեսքով:
6. Այս մարդկանց հանդիպումը, որոնց, թվում է, չէր վիճակված կապվել իրար հետ, շատ անսպասելի էր:

**46. Նշիր այն նախադասությունները, որոնցում կետադրական սխալ կա.**

- 1) Դ-ա հանգուցյալի փեսան էր՝ Մարթայի ամուսինը՝ քաղաքում բավական ականավոր գործարանատեր և առևտրական Իսահակ Մարութխանյանը:
- 2) Արարատյան դաշտում արդեն խաղաղություն էր, և նրա բնակիչների՝ աշխատասեր գեղջուկի ու երկրագործի համար, սկսվել էր հողային աշխատանքների եռուն շրջանը:
- 3) Գարդմանա իշխանը՝ Սահակ Սևադան, և Ուտիքի տերը՝ Յիկ Ամրամը, ապստամբության դրոշ էին բարձրացրել հայոց արքա Աշոտ Երկաթի դեմ:
- 4) Հեծած սևաթույր նժույգը, սարեր ու ձորեր կտրելով՝ սուրում էր սիգապանձ ասպետը:
- 5) Հայերի քրիստոնեության ընդունումից հետո այն եղել է հայոց թագավոր Տրդատ Երրորդի քրոջ՝ Խոսրովդուխտի հովանոցը:
- 6) Մի սիգապանձ ասպետ սիրեց չքնադագեղ մի աղջկա՝ ոսկեվառ հյուսերով, շուշանաթույր դեմքով, աստղաշող աչքերով:

**47. Նշիր այն նախադասությունները, որոնցում կետադրական սխալ կա.**

- 1) Կյանքը, սակայն, սրընթաց թռչում էր, և երբեմնի կանաչ-կարմիր ասպետը օրըստօրե թառամում:
- 2) Սոնան էր՝ ճերմակաթույր ատամներով աղջիկը, որ տարիներ առաջ սրտաբուխ քրքջում էր՝ սրունքները կախած առվակի մեջ:
- 3) Երրորդ օրն է՝ ծանր, կսկծալի նախազգացումները կրծում էին նրա՝ կասկածներից ալեկոծ հոգին:
- 4) Մի օր էլ, երբ վարպետը նստած էր իր սիրած տեղը՝ դարպասի քարին, նրան մոտեցավ կոմիսարը՝ լռելյայն ու գլխահակ:
- 5) Ամառային պարզկա, վառվռուն առավոտ էր՝ լի թռչունների ճովողյունով, տերևների շրշյունով, դեղձի, դադձի ու փշատի հոտոտելիքը գրգռող բույրերով:
- 6) Դուրս գալով պատշգամբ՝ Սմբատը մի հայացք նետեց հանդիպակաց լեռների՝ արևից ոսկևորված կատարներին, գինեվետ այգիներին և հոգոց հանելով իջավ սանդուղքներով:

**48. Նշիր այն նախադասությունները, որոնցում կետադրական սխալ կա.**

- 1) Տարիներ առաջ, ճահճային թռչունների որսի ժամանակ մի կրիա գտա և բերեցի տուն:
- 2) Սա, ըստ էության, բնության այն դժվարըմբռնելի գաղտնիքներից է, որը ինչքան էլ ճգնում ես, չես կարողանում հասկանալ, թեև առաջին հայացքից թվում է պարզ ու հասկանալի:
- 3) Գուցե տարօրինակ է, բայց կարող են լինել և ավելի վեհ պատճառներ, օրինակ՝ որոշակի ձգողական զգացմունք տվյալ վայրի կամ այդ վայրում մեռած ցեղակցի նկատմամբ:
- 4) Այս ասելով՝ նա մյուս տղամարդու օգնությամբ բարձրացրեց երիտասարդ կնոջը ու հատակի վրայով քաշքշելով՝ նրան տարան իմ սենյակին կից սենյակը:
- 5) Հիշելով նախորդ գինետանը պատահած դեպքը՝ նա երկմտում էր՝ մտնի՞, թե՞ ոչ:
- 6) Եվ որովհետև Կամսարյանը ևս պատշգամբից վերադառնալով՝ մոտեցել էր սանդուղքին, ուստի հետաքրքրվեց, թե ով է եկողը:

**49. Նշիր այն նախադասությունները, որոնցում կետադրական սխալ կա.**

- 1) Թվում է՝ կարևոր չէ օրինակ, թե ով հորինեց արևի ժամացույցը, որովհետև վաղ թե ուշ մեկը հորինելու էր:
- 2) Եվ նա՝ ոճրագործը, անշարժ կանգնել էր ծերունու վեհ կերպարի առջև՝ ապշած ու շշմած:
- 3) Իսկ գյուղի՝ չգիտես որ մեղքի համար ապաշխարող բնակիչները կծկվել էին բարձրաբերձ լեռան անմատչելի ծերպերում, որոնք ներքևից չէին երևում, ու իրենց անկուտրում կամքով անբարբառ տանում էին դաժան փորձությունը:
- 4) Իրենք նստում էին քչքացող առվի կանաչագարդ եզրին և երբ հանգչում էր գրույցն իրենց շուրթերին, լռելյայն լսում էին ջրի կարկաչը ու թվում էր՝ առուն հասկանում է իրենց:
- 5) Այդ ամռանից մնացել էին ջինջ հիշողությունը և մի կակիժ, որը մրմռում էր՝ ինչպես լիովին չապաքինված վերքը:
- 6) Ըստ բոլոր նշանների՝ նա բոլորովին չէր գիտակցում, որ գտնվում է փողոցում և իրեն են սևեռվում շրջապատի մարդկանց՝ հետաքրքրությամբ լի հայացքները:

**50. Նշիր այն նախադասությունները, որոնցում առոգանության նշան կա (նախադասությունները կետադրված չեն).**

- 1) Ինչքան որ հուր կա իմ սրտում բոլորը քեզ:
- 2) Ինչքան ցավ եմ տեսել ես նենգ ու դավ եմ տեսել ես:
- 3) Ինչքան աշխարհը սիրես այնքան այն ցանկալի կլինի:
- 4) Եվ ինչքան պետք է տանջես ինձ այդպես:
- 5) Ես ինչ անեմ որ հոգիս չհեծկլտա կարոտից:
- 6) Եվ ով է հյուսել հեքիաթն այս վսեմ...
- 7) Ով քաղաքից էր հեռացել նա թողել էր մշուշը ծեր:
- 8) Ես ինչ անեմ որ մնա ծիածանը երեքգույն:
- 9) Ինչ էլ լինի ինձ հանկարծ չմոռանաս:

**51. Նշիր այն նախադասությունները, որոնցում շեշտ չպիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն).**

- 1) Բարեկամի հետ կերուխում արա առևտուր մի արա:
- 2) Մի խոսիր այդպես խրատական ոգով:
- 3) Ներկայացման ժամանակ ոչ մի ձայն ոչ մի շշուկ չէր լսվում հանդիսատեսը ակնածանքով էր նայում դերասաններին:
- 4) Մի դարձրու այդպես անիրական անհաս  
Իմ հասարակ համեստ երազը լուրթ
- 5) Ոչ դա մարդկային ձայն չէր այլ ինչ որ գազանային մռնչյուն:
- 6) Տուր ինձ տեր հոգեկան հանգստություն:
- 7) Նրան հետաքրքրում էին ոչ անձնական շահերը:
- 8) Չհեռանաս չմոռանաս ինձ:

**ԳԼՈՒԽ VIII**

**ԿԱՊԱԿՅՎԱԾ ԽՈՍՔ**

**1. Ո՞ր մտքերը չեն հակասում տեքստի բովանդակությանը.**

Ձուրը ամենազարմանալի, ամենատարածված և ամենաանհրաժեշտ հեղուկն է Երկիր մոլորակի վրա: Մարդու համար նրանից կարևոր նյութ չկա: Մարդու մարմնի մոտ երկու երրորդը և մեծ թվով կենդանիների մարմնի պարունակության չորս հինգերորդը ջուր է: Ջրի մոլեկուլները միմյանց կապվում են յուրօրինակ ձևով: Դրա շնորհիվ այն վերածվում է արտասովոր հեղուկի: Այդ կապի հետևանքներից մեկը ջրի անսովոր խտությունն է: Նյութերի մեծ մասը սառչելիս ավելի քիչ ծավալ է զբաղեցնում, այսինքն՝ խտանում է, իսկ ջուրը չորս աստիճան ցելսիուսի դեպքում ամենամեծ խտությունն ունի: Դրանից ավելի ցածր ջերմաստիճանում ջրի խտությունը նվազում է: Արդյունքում զրո աստիճանում սառույցն ավելի փոքր խտություն ունի, քան նույն ջերմաստիճանում գտնվող ջուրը:

Բացատրությունը մեկն է. սառույցի՝ ջրում չտուզվելու պատճառը թաքնված է հենց այդտեղ: Բացի այդ, հսկայական ջերմություն է անհրաժեշտ, որպեսզի ջուրը հեղուկ վիճակից վերածվի գազային կամ պինդ վիճակից՝ հեղուկի:

- 1) Ջրի մոլեկուլները միմյանց կապվում են այնպես, որ սառույցը ջրում չի սուզվում:
- 2) Քանի որ հսկայական ջերմություն է անհրաժեշտ, որպեսզի ջուրը հեղուկ վիճակից վերածվի գազային կամ պինդ վիճակից՝ հեղուկի, ջուրը չորս աստիճանում արդեն ամենամեծ խտությունն է ձեռք բերում:
- 3) Ջրո աստիճանի հասցված ջուրը, որ սառույցի տեսք ունի, ավելի փոքր խտություն ունի, բայց ոչ ամենափոքր ծավալը:
- 4) Երկրագնդի վրա մարդուն անհրաժեշտ ամենակարևոր նյութը ջուրն է. մարմնի 2/3-ը ջուր է:

**2. Ո՞ր մտքերն են հակասում տեքստի բովանդակությանը.**

Հնում ծովագնացները հեշտությամբ որոշում էին տեղանքի լայնությունը, բայց երկարության չափման հարցում կային մեծ դժվարություններ: Օրինակ՝ 1707-ին բրիտանական ռազմական նավատորմում եղած աղետի պատճառը նավի տեղակայման վայրը սխալ որոշելն էր: Բրիտանական պառլամենտը տասից քսան հազար ֆունտ խոստացավ ծովային երկարությունը սահմանելու ճշգրիտ միջոց հայտնաբերողին: 1753-ին ստեղծվեց ընդունելի առաջին ժամանակաչափը, որը մինչ օրս աշխատում է Գրինվիչի ազգային թանգարանում: Չափիչի միակ դերն այն էր, որ ճշտորեն պահում էր Գրինվիչի գրոյական միջօրեականի ժամանակը: Քանի որ ծովայինները աստղագիտական գործիքներով որոշում էին տեղական ժամանակը, դրա և Գրինվիչի միջօրեականի ժամանակների միջև եղած տարբերությամբ կարելի էր որոշել տեղանքի երկարությունը. այն է՝ 1 ժամը հավասար է 15 աստիճանի երկարության: Սարքի հետագա կատարելագործումը ժամանակի որոշման սխալը հասցրեց ինը վայրկյանի, որը հավասար էր երկու րոպեից էլ պակաս երկարության: Գյուտարարը՝ Հարիսոնը, ստացավ մրցանակի քառորդ մասը իր չորս մոդելների համար: Հենց չորրորդ մոդելի ժամանակաչափ էր գործածել Ջեյմս Կուկը իր 3-րդ նավարկության ժամանակ, որը նրան շատ օգնել էր: Թեպետ Վլադիմիր Վիսոցկու երգում ասվում է, որ նրան կերել են Հավայան կղզիների բնակիչները, բայց, այնուամենայնիվ, Կուկն ավարտին է հասցրել իր ճամփորդությունը, հետո են գուցե նրան կերել:

- 1) Ջեյմս Կուկի նավարկությունների ժամանակ չկար ճշգրիտ սարք, որով հնարավոր լիներ հստակ որոշել ծովային երկարությունը, այդ պատճառով հաճախակի էին դարձել ծովային աղետները:
- 2) 1707 թվականին բրիտանական պառլամենտը ստիպված է լինում սահմանել մեծ մրցանակ ճշգրիտ ժամանակաչափ ստեղծողին՝ կոծկելու համար ռազմական նավատորմում տեղի ունեցած մեծ աղետը:
- 3) Ջեյմս Կուկն իր 4-րդ նավարկության ժամանակ փորձել էր օգտվել Հարիսոնի չափիչ սարքից, բայց քանի որ այն սխալ էր ցույց տալիս մինչև երկարության երեք աստիճան, Կուկը հայտնվեց Հավայան կղզիներում, որտեղ էլ նրան կերան բնիկները:
- 4) Գյուտարար Հարիսոնը փորձում էր կատարելագործել իր ժամանակաչափը և ի վերջո սխալվելու չափը հասցրեց ինը վայրկյանի, որը հավասար էր երկու րոպեից էլ պակաս երկարության, ինչը, սակայն, թույլ տվեց ստանալ խոստացված պարգևի միայն քառորդ մասը:

**3. Ո՞ր մտքերն են հակասում տեքստի բովանդակությանը.**

Մարդու մարմինը բաղկացած է միլիարդավոր բջիջներից, որոնք մարմնից առանձին ապրել չեն կարող, բայց կան և բջիջներ, որոնք կարող են ապրել միայնակ, առանց օրգանիզմի օգնության: Դրանք անզեն աչքով անտեսանելի միաբջիջներն են, որ չունեն թաթեր, ձեռքեր, լողաթևեր, սակայն նրանց մեծ մասը կարողանում է շարժվել. ոմանք՝ իրենց մարմնի ձևի փոփոխությամբ, ոմանք՝ ինչ-որ ելուստներով: Միաբջիջներից ոմանք իրենց մարմնի շուրջ խեցի են կառուցում մանր ավազահատիկներով, մյուսները՝ ծովում լուծված աղով: Մահից հետո նրանց խեցե պատյանը սուզվում է ջրի տակ՝ վերածվելով նստվածքային ապարի՝ կրաքարի, որը քիչ-քիչ բարձրացնում է ծովի հատակը, երբեմն էլ դուրս գալիս մակերևույթ: Չարմանավորեն Քեոփսի բուրգից ոչ հեռու նման ծագման քարահատարան է պեղվել: Ստացվում է՝ բուրգի ավելի քան երկու միլիոն քարերը միաբջիջների պատյանների մնացորդներից են կտրվել: Գուցե նույնքան զարմանալի թվա դպրոցական կավիճը, որը ևս տասնյակ միլիարդավոր պատյաններ է պարունակում:

Պարզագույն միաբջիջների ներկայացուցիչ է ամեոբան, որի չափը 1 մմ-ից փոքր է, բայց կան նաև հսկա միաբջիջներ, ինչպես սցետաբուլյարիս ջրիմուռը, որի ամբողջ մարմինը ընդամենը մեկ բջիջ է՝ 8 սմ-ի հասնող: Իսկ ի՞նչ ասել ընծուդանների նյարդային որոշ բջիջների մասին, որոնք հասնում են 4 մետրի, կամ ջայլամների՝ մեկ բջջից կազմված չբեղմնավորված ձվի մասին, որ կարող է կշռել ավելի քան 1 կգ:

1. Միաբջիջները բազմանում են երկու մասի կիսվելով, ինչպես մարդու աճող օրգանիզմի բջիջները, և մարդու բջիջների պես անպաշտպան են, ուստի իրենց շուրջը խեցի են կառուցում:
2. Հին Եգիպտոսում և մերձակա երկրներում հայտնաբերվել են կրաքարային ծագման քարահատարաններ, և այդ վայրերից են հին եգիպտացիները բուրգի շինարարության համար կտրել ավելի քան երկու միլիոն քարային զանգված:
3. Դպրոցական կավճի՝ եղունգի չափ ունեցող կտորում պարունակվում են միաբջիջների տասնյակ միլիարդավոր պատյաններ, որոնք մանրադիտակով անզամ անհնար է տեսնել:
4. Միաբջիջները չափերով տարբեր են. կարելի է հանդիպել 1 մմ-ից փոքր և մինչև 4 մ երկարություն ունեցող միաբջիջների:

**4. Ո՞ր մտքերն են հակասում տեքստի բովանդակությանը.**

1982 թվականին անգլիացի հետազոտող Ջ. Ֆարմանը Անտարկտիդայի վրա հայտնաբերեց մթնոլորտային շերտի ճեղքվածք՝ ավելի քան 1000 կմ տրամագծով: Այս իրադարձությունը մեծ տազնապ առաջացրեց գիտական, քաղաքական և այլ շրջաններում. չէ՞ որ օզոնային ճեղքերն իրենցից մեծ վտանգ են ներկայացնում կենդանի օրգանիզմների համար: Այդ շերտը պաշտպանում է Երկրի մակերևույթը Արևի ուլտրամանուշակագույն ճառագայթների չափից մեծ քանակից: Սրա հետ կապված՝ 1985-ին ընդունվում է Վիեննայի համաձայնագիրը՝ օզոնային շերտի պահպանման վերաբերյալ, 1987-ին՝ Մոնրեալի արձանագրությունը: Բայց դեռ չէին խաղաղվել օզոնային շերտի քայքայման հետ կապված անհանգստությունները, 1992-ին մեկ այլ ճեղք հայտնաբերվեց, բայց այս անգամ՝ Արկտիկայի վրա, հետո՝ Ուրալյան լեռների հատվածում: Ուսումնասիրողները երկար տարիներ ենթադրում էին, որ օզոնային շերտի նոսրացման ու ճեղքերի գոյացման գլխավոր մեղավորը մարդն է և նրա արդյունաբերական գործունեությունը, հատկապես այնպիսի օզոնաքայքայիչ արտադրություններ, որոնցից է, օրինակ, ֆրեոնը, որը լայն կիրառություն ունի սառեցնող սարքավորումներում: Հակառակն ապացուցեցին 90-ականներին կատարված հետազոտությունները. օզոնային ճեղքերը ոչ մի կապ չունեն մարդու գործունեության հետ: Դրանք ավելի շուտ Երկրի բևեռների աստիճանական փոփոխման հետևանք են, երբ մոլորակի որոշ հատվածներում թուլանում կամ լրիվ բացակայում է մագնիսական դաշտը, և նման վիճակ մեր մոլորակը առաջին անգամ չէ, որ տեսնում է, բայց դրանք բնակլիմայական լուրջ փոփոխությունների են հասցնում՝ ազդելով և՛ կենդանիների, և՛ մարդու վրա: Սա է գուցե օզոնի շերտի քայքայման պատճառը:

- 1) 1982-ին գիտական և քաղաքական լայն շրջաններում անհանգստություն առաջացրեց Անտարկտիդայի և Ուրալյան լեռների վրա հայտնաբերված մթնոլորտային շերտի ճեղքվածքը՝ ավելի քան 1000 կմ տրամագծով:
- 2) 1985-ի և 1987-ի համաձայնագրերը բարդացրին իրավիճակը, և այդ հատվածներում եղած ճեղքերը ավելի մեծացան:
- 3) Օզոնային շերտը պաշտպանում է Երկրի մակերևույթն Արեգակի ուլտրամանուշակագույն ճառագայթների չափից մեծ քանակությունից, որոնք օզոնը քայքայող արտադրությունների արդյունք են:
- 4) Մոլորակի բևեռների փոփոխման հետ կապված՝ մոլորակի որոշ հատվածներում թուլանում կամ լրիվ բացակայում է մագնիսական դաշտը, և նման վիճակ մեր մոլորակը առաջին անգամ չէ, որ տեսնում է:

**5. Ո՞ր մտքերն են հակասում տեքստի բովանդակությանը.**

Ատամները շատ բան կարող են ասել մարդու կամ կենդանու մասին: Ինչպես պարզվում է, «Նվիրած ձիու ատամներին չեն նայում» առածը բժշկական ճշմարտություն չունի իր հիմքում. ատամները կարող են հստակ պատկերացում տալ օրգանիզմի առողջական վիճակի մասին: Օրինակ՝ մարդու որոշակի ատամների առողջ լինելը կոնկրետ օրգանների առողջական վիճակի մասին է վկայում: Իհարկե, դժվար է խոսել մարդու առողջական լավ վիճակի մասին, երբ մարդու ատամները ծլել են երկու անգամ. առաջին անգամ, երբ կաթնատամների փոխարեն ի հայտ են եկել հիմնական ատամները, և երկրորդ անգամ՝ հիմնական ատամները փոխվել են կրկին հիմնական ատամներով: Ատամներով կարելի է որոշել կենդանիների տարիքը՝ ևս. կովի տարիքի յուրահատուկ ցուցիչ են ստորին կտրիչ ատամները: Ի դեպ, նրա վերին ծնոտին ատամներ չկան, և կովն արածելիս խոտը պոկում է ստորին ատամներով՝ գլխի կողմնային շարժման օգնությամբ: Տարիների ընթացքում կովի կտրիչ ատամները քայքայվում են, և ծեր հասակում (15-18 տարեկան) դրանցից մնում են աննշան կտորներ: Իսկ ամենամեծ ատամները կաթնասունների մեջ ունեն դելֆինների ընտանիքին պատկանող նարվալ կոչվող կենդանիները, որոնց ատամ-ժանիքի չափը 3 ս է: Նման եղջյուր, որն իրականում ատամ է, ունեն միայն արունները: Սրանց մի քիչ մասն են Սառուցյալ և Խաղաղ օվկիանոսներում բնակվող ծովափղերը, որոնք ժանիքն օգտագործում են ջրի հատակից սնունդ հայթայթելու կամ սառույցների վրա մագլցելու համար:

- 1) Ինչպես պարզվում է, «Նվիրած ձիու ատամներին չեն նայում» առածը վերաբերում է բոլոր կաթնասուններին:
- 2) Երբ մարդու հիմնական ատամները ծլում են երկու անգամ, լավ է:
- 3) Ատամներով կարելի է որոշել մարդու օրգանիզմի առողջական վիճակը, մասն որոշ կաթնասունների տարիքը:
- 4) Որոշ դելֆինների ժանիքները իրականում եղջյուրներ են՝ երեք մետր երկարությամբ, որոնք օգնում են ջրի հատակից սնունդ հայթայթելու համար:

**6. Ո՞ր մտքերը չեն հակասում տեքստի բովանդակությանը.**

Պիզայի նշանավոր աշտարակը տարիների ընթացքում սկսել է թեքվել, և առ այսօր թեքման գործընթացն ավարտված չէ: Նրա թեքությունը անհանգստություն է պատճառում պատմամշակութային հնությունների պահպանման խնդիրներով զբաղվողներին: Ամբողջ աշխարհի գիտական միտքն այսօր միջոցներ է որոնում թեք աշտարակի շտկման, այսինքն՝ նախկին դիրքին վերադարձնելու համար: Համանման աշտարակ կար Լոնդոնից 100 կմ հեռավորության վրա գտնվող գավառական մի քաղաքում, և շինության հիմքում հողը մոտ երկու մետր փոս էր ընկել՝ մոտ հինգ աստիճանով թեքելով աշտարակի դիրքը: Կառույցը փրկելու նպատակով բնակիչները դիմել էին մի զինվորականի, որը, ուսումնասիրելով հիմքի հատվածը, եզրակացրել էր, որ աշտարակը կառուցված է հեղուկ պարունակող կավահողի վրա, և ժամանակի ընթացքում հեղուկը հոսել է, իսկ կավահողը՝ ծանրության պատճառով նստել: Նա հրահանգել է թեքված մասի հակառակ կողմում փորել հողը, խողովակներով հեղուկը հանել և աշտարակի պատերից կախել մետաղյա ծանրոցներ: Չարմանալի է, բայց աշտարակը մի քանի ամսում շտկել է իր թեքությունը և մինչ օրս կանգնած է իր տեղում:

- 1) Հռոմից 100 կմ հեռավորության վրա գտնվող գավառական մի քաղաքում կանգնած է Պիզայի նշանավոր աշտարակը, որի թեքությունը անհանգստություն է պատճառում պատմամշակութային հնությունների պահպանման խնդիրներով զբաղվողներին:
- 2) Անգլիական աշտարակն ամեն վայրկյան կարող է ընկնել, այդ պատճառով ամբողջ աշխարհի գիտական միտքն այսօր միջոցներ է որոնում թեք աշտարակի շտկման համար:
- 3) Համանման մի շինություն բավական հաջող փորձել են ուղղել Անգլիայում, և դա զարմանալիորեն հաջողվել է, թեև առաջարկը կատարել ու այն իրագործել է ոչ թե ճարտարապետ, այլ մի զինվորական:
- 4) Շատերին ոգևորում է անգլիական նմանատիպ աշտարակի վերականգնման փորձը, սակայն Պիզայի աշտարակը, ցավոք, կավային հիմք ունի, և գրունտային ջրերը լցոյրեն խարխուլում են շինության հիմքերը:

**7. Ո՞ր մտքերը չեն հակասում տեքստի բովանդակությունը.**

Մարդու գլխուղեղը մնան է գերիզուր համակարգչի, որն ընդունում է ամենատարբեր ազդանշաններ՝ ձայներ, հոտեր, պատկերներ, համեր, ճանաչում և վերամշակում է դրանք, հաշվարկներ կատարում, կուտակում տեղեկություններ: Ուղեղի երկու կիսագնդերը ունեն տարբեր ֆունկցիաներ: Երկու մեծ կիսագնդերից բացի՝ կա և միջանկյալ ուղեղ, միջին ուղեղ, հետին ուղեղ (վարոլյան կամուրջ) և երկարավուն ուղեղ: Գլխուղեղով անցնում են 200 մլն նյարդեր, և օրգանիզմի նյարդային բջիջների մեծ մասը գտնվում է ուղեղում: Ուղեղի նեյրոնների սկզբնական քանակը տասնչորս մլրդ է, որն աստիճանաբար սպառվում է և ծեր հասակում դառնում 10 մլրդ: Նեյրոնների օրական կորստի արագությունը 20 տարեկանում կազմում է 10.000 բջիջ, 40-ում՝ 50.000, 90-ում՝ 100.000 բջիջ: Գլխուղեղի կեղևը բաժանված է բազմաթիվ ծալքերի, որոնք հարթելու դեպքում կարող է զբաղեցնել 20 քառ. մետր տարածք: Հասուն մարդու գլխուղեղի միջին քաշը կազմում է 1470 գ: Մարմնի կշռի համեմատ մարդու ուղեղն ամենամեծն է: Գլխուղեղն աճում է մինչև 15 տարեկանը և առավել եռանդուն աշխատում է 15-25 տարեկանում: Մինչև 45 տարեկանն աշխատում է միջին արդյունավետությամբ, որից հետո սկսում է թուլանալ: Ծերանալուն զուգընթաց գլխուղեղը կորցնում է քաշը. սկզբնական 1,4 կգ քաշով գլխուղեղը 70 տարեկանում կշռում է 1,3 կգ, 80-ում՝ 1,2 կգ, 90-ում՝ 1,1 կգ: Հետաքրքիր է իմանալ, որ Օլիվեր Կրոմվելի ուղեղը կշռել է 2 կգ և 300 գ, Իվան Տուրգենևիինը՝ 2 կգ և 12 գ, Մերիլին Մոնրոյի ուղեղը՝ 1կգ և 22գ:

- 1) Օլիվեր Կրոմվելի ուղեղը, որը կշռել է 2 կգ և 300 գ, 70 տարեկանում կկշռեր 1,3 կգ, 80-ում՝ 1,2 կգ, 90-ում՝ 1,1 կգ:
- 2) Գլխուղեղով անցնում են 200 մլն նյարդեր, և օրգանիզմի նյարդային բջիջների մեծ մասը գտնվում է ուղեղում, որի նեյրոնների սկզբնական քանակը տասնչորս մլրդ է, որը, աստիճանաբար սպառվելով, հասնում է 100. 000 բջջի:
- 3) Մարդու գլխուղեղը տեղեկատվություն ընդունող, վերլուծող, վերամշակող, կուտակող, տարբեր հաշվարկներ կատարող յուրահատուկ համակարգիչ է՝ բազում նյարդային բջիջներով, որոնք տարիքին զուգընթաց քչանում են, քչանում է և ուղեղի քաշը՝ 70 տարեկանում հասնելով 1,3 կգ-ի:
- 4) Նեյրոնների օրական կորստի արագությունը 20 տարեկանում կազմում է 10.000 բջիջ, 40-ում՝ 50.000, 90-ում՝ 100.000 բջիջ:

**8. Ո՞ր մտքերն են հակասում տեքստի բովանդակությունը.**

Մարդն իր ամբողջ կյանքի ընթացքում ունենում է 52 ատամ, որոնցից քսանը աճում և ընկնում են մանկական տարիքում: Ատամների բարձրությունը տատանվում է 1.75 սմ-ից (մեծ սեղանատամ) մինչև 2.7 սմ (ժանիքներ): Տարեց մարդու բոլոր 32 ատամները մի գծով շարելու դեպքում կատացվի 70 սմ-անոց շարան: Մարդու ծնոտի սեղմման ուժը կարող է հասնել մինչև 80 կգ-ի (1քառ. սմ-ի վրա): Կծելու ուժգնության ռեկորդը պատկանում է մի ամերիկացու, որը գիտափորձի ժամանակ կարողացել է 1 քառ. սմ-ի վրա դրսևորել 442 կգ սեղմման ուժ: Վերջին ժամանակներում ավելի հաճախ է պատահում, երբ իմաստության ատամները ուղղակի չեն աճում կամ լինող ճեղքել չեն կարողանում, այսինքն՝ մարդու ատամների քանակը նվազման է գնում՝ հասնելով 28-ի: Դա կապված է կերակրի հետ, որը գնալով դառնում է ավելի փափուկ և դյուրաձամ, իսկ նախամարդու ծնոտի չափը վաղուց հեռավոր հիշողություն է դարձել:

- 1) Հասուն մարդու ատամնաշարն ունի հիսուներկու ատամ, որոնց բարձրությունը տատանվում է 1.75 սմ-ից մինչև 2.7 սմ:
- 2) Բավարար վիճակում գտնվող մարտդակական համակարգ ունեցող մարդկանց իմաստության ատամները հաճախ դուրս չեն գալիս:
- 3) Եթե մարդու երեսուներկու ատամները կշռեն, կատացվի չորս հարյուր քառասուներկու գրամանոց և յոթանասուն սանտիմետրանոց շարան:
- 4) Տարբեր մարդկանց ատամնաշարի սեղմման ուժը տարբեր է, և կծելու ուժգնության ռեկորդը պատկանում է մի ամերիկացու, որը գիտափորձի ժամանակ կարողացել է 1 քառ. սմ-ի վրա դրսևորել 442 կգ սեղմման ուժ:

**9. Ո՞ր մտքերն են հակասում տեքստի բովանդակությանը.**

Շվեյցարիայի գիտնականներն անց են կացրել կենդանիների մտավոր կարողությունների բացահայտման հետաքրքիր գիտափորձ և պարզել, որ մարդուց հետո մտավոր ունակություններով երկրորդ տեղում է դելֆինը (առայժմ մրցանակային այդ աստիճանն է հասկացվել նրան), երրորդում՝ փիղը, իսկ կապիկը գրավում է չորրորդ՝ ոչ մրցանակային տեղը միայն: Պարզվում է՝ դելֆինի ուղեղի կեղևն ունի երկու անգամ ավելի շատ ծալքեր, և նա ընդունակ է 1,5 անգամ ավելի շատ գիտելիքներ յուրացնելու և ամբարելու, քան մարդու ուղեղը: Արտառոց կարող է թվալ, սակայն դարեր շարունակ փղոսկրեր որոնողները, որոնք երազել են հայտնաբերել փղերի դիակներ ու չեն գտել, չեն կարողացել բացատրել, թե ինչու երբևէ չեն հանդիպել սատկած փղերի դիակների: Ուղղակի նրանք տեղյակ չեն Ռոդեզայի «Մերու» արգելանոցում պատահածին, այլապես կհասկանային փղերի գաղտնիքը: Արգելանոցի աշխատակիցները մի անգամ տեսել են, թե ինչպես փղերը հավաքվել են իրենց սպանված առաջնորդի դիակի մոտ, կնճիթներով փոս են փորել և թաղել նրան: Հետևաբար նրանք ցեղակիցների դիակներն անտեր չեն թողնում, այլ հողին են հանձնում: Մոլորություններ կան և ոչխարների հարցում: Նրանք բնավ էլ արժանի չեն հիմարության չափանիշ համարվելու իրենց վարկանիշին. ուշիմ են, խորաթափանց, ունեն գերազանց հիշողություն և անսխալ հիշում են մարդկանց դեմքերը. մի բան, որ դժվար կարողանա կատարել մարդը, եթե հարկ լինի հիշել ոչխարների դեմքերը:

- 1) Դելֆինների ուղեղը ծալքերի առումով կրկնակի գերազանցում է մարդու ուղեղին, ինչը թույլ է տալիս նրանց համարել ամենախելոք կենդանին մարդուց հետո:
- 2) Կենդանիների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ոչխարների անսովոր հիշողությունը նրանց թույլ է տալիս ազատվել «հիմար» համարվելու արմատացած կարծիքից և խելացի կենդանիների շարքում հավասարվել մարդկանց ու դելֆիններին:
- 3) Ուսումնասիրությունները պարզել են, որ մարդու ուղեղը մեկուկես անգամ քիչ ծալքեր ունի, քան դելֆիններինը, որոնք արտասովոր ընդունակություններ են ցուցաբերում գիտելիքների յուրացման գործընթացում:
- 4) Պակաս խելացի չեն կապիկները, որոնք որոշ դեպքերում հանդես են բերում աշխատանքային հմտություններ, երբեմն ցուցաբերում են փոխօգնություն, որն առավելապես մարդկային շփման ձև է:

**10. Նշի՞ր թվերի այն հերթականությունը, որը համապատասխանում է պարբերությունների տրամաբանական հաջորդականությանը.**

- 1) Այո՛, կովերի բազմացումն առաջացնում է վնասակար թափոններ, որոնք որոշակի բացասական ազդեցություն են ունենում շրջակա միջավայրի վրա. ծովում և օվկիանոսում հայտնվելով՝ վնասում են կորալային գոյացություններին, այնպես որ երկրի վրա սպրող 1.5 միլիարդ կովերը պատասխանատու են և՛ աշխարհում արտազատվող թունավոր գոլորշիների տասնութ տոկոսի համար, և՛ մոլորակի գլոբալ տաքացման համար:
- 2) Ջեկույցը եզրափակվում էր ոչ հուսադրող մի եզրահանգմամբ. ապագայում վիճակը կարող է վատանալ, քանի որ աշխարհում մսի պահանջարկն ավելի ու ավելի մեծ թվով խոշոր եղջերավոր անասուններ արտադրելու խնդիրներ կառաջացնի, որի արդյունքում կովերի՝ էկոլոգիային հասցված վնասը 2050-ին կարող է աճել կրկնակի:
- 3) Երկրի էկոլոգիային կովերն ավելի մեծ վնաս են պատճառում, քան տրանսպորտային բոլոր միջոցները միասին վերցրած: Հենց այս մասին է ահազանգվում ՄԱԿ-ի զեկույցում՝ նվիրված գյուղատնտեսությանն ու արդյունաբերությանը:
- 4) Ամերիկյան մսամթերքի արտադրությունից մեծապես տուժում են գետերը: Կովերի բազմացումն ամբողջ աշխարհում անտառների անհետացման գլխավոր գործոններից է, քանի որ արոտավայրերի համար հետևողականորեն ազատվում են նորանոր հողատարածքներ, կովերի հեռանալուց հետո բոլոր արոտավայրերի մեկ երրորդը վերածվում է անապատի, նրանք օգտագործում են մեծ քանակով ջուր. մեկ լիտր կաթ ստանալու համար օգտագործում են ինը լիտր ջուր:

**11. Նշի՛ր թվերի այն հերթականությունը, որը համապատասխանում է պարբերությունների տրամաբանական հաջորդականությանը.**

- 1) Հանելուկը վերջնականապես լուծվեց, երբ սենյակում տեղադրեցին ուլտրաձայնային որսիչ սարք և պարզեցին, որ չղջիկներն անընդհատ արձակում են բարձր հաճախականության ձայներ, որոնք կարող են անդրադարձվել նույնիսկ ամենամանր առարկաներից: Այդ ձայների հաճախականությունը կազմում է 30-70 կիլոհերց (30.000-ից մինչև 70.000 հերց):
- 2) Ջարմանալ կարելի էր միայն, որ կենդանիները այդ արգելքը հաղթահարեցին և՛ բաց, և՛ փակ աչքերով, այսինքն՝ նրանք մթության մեջ կողմնորոշվեցին ոչ տեսողությամբ: Հաջորդ փորձն արվեց այլ կերպ. փակեցին նրանց ականջները, և վերջապես լսվեց զանգի դողանջ. այսինքն՝ մթության մեջ նրանք «տեսնում էին ականջներով»:
- 3) Մարդկանց երկար ժամանակ զարմացնում էր մթության մեջ չղջիկների կողմնորոշվելու ունակությունը: Որոշեցին նրանց գիտափորձի ենթարկել. մի մութ սենյակում զանգակներով մետաղալարեր տեղադրեցին, որոնք բավական մեծ խտությամբ զբաղեցնում էին սենյակի օդային ամբողջ տարածքը, և թեթև հպումը մետաղալարին առաջացնում էր ուժեղ դողանջ:
- 4) Համեմատության համար ասենք, որ մարդը չի կարող արտաբերել 20 կիլոհերցից բարձր ձայն և ոչ էլ լսել այդ ձայնը: Այդ պատճառով էլ մենք չենք լսում չղջիկների արձակած ձայները և նրանց անվանում ենք լռակյաց կենդանիներ:

**12. Նշի՛ր թվերի այն հերթականությունը, որը համապատասխանում է պարբերությունների տրամաբանական հաջորդականությանը.**

- 1) Թռչելով գիշերային խավարում՝ նրանք ուլտրաձայն են արձակում և ընդունում դրա արձագանքը: Դա նման է գնդակին, որը մարդ շարժում է պատի ուղղությամբ, և գնդակը, հակադարձվելով պատից, վերադառնում է նետողի մոտ: Ուլտրաձայնի անդրադարձման այս երևույթը մարդիկ կիրառում են տեխնիկայի ու ռազմական բնագավառներում: Այդպես է որոշվում ծովի հատակի խորությունը, ինչպես նաև թռչող օբյեկտներն են հայտնաբերվում օդում:
- 2) Սակայն մոլորություն կլինի կարծել, թե չղջիկների արձակած ձայնը ցածր է կամ ծվծվան, այդ պատճառով չենք լսում: Իրականում այնպիսի ձայն է արձակվում, որ եթե հնարավոր լիներ լսել, մոտավորապես նման կլիներ մետրոյի թունելում գնացքի առաջացրած դրդոցին:
- 3) Ծիշտ նույն կերպ չղջիկները արձակում են ձայներ, որոնք ընդհատ-ընդհատ են հնչում՝ նման ավտոմատ հրազենի կրակահերթին: Անդրադարձվելով արգելքից՝ ձայնը արգելքի տեսքով վերադառնում է տիրոջը, որն արձագանքից պետք է հասկանա, թե ինչ է իր առջևում՝ խոչընդոտ, թե՞ որս:
- 4) Մարդու ականջն ամենից ավելի զգայուն է 1000-5000 հերց հաճախականությամբ ձայների նկատմամբ, թեև ընկալում է 16 հերցից մինչև 20.000 հերց, որը նրա համար լսելի տիրույթ է համարվում: Չնայած լսելու այդ լայն տիրույթին՝ մենք ոչ միայն չենք լսում չղջիկներին, այլև չունենք կողմնորոշման նրանց հմտությունները մթության մեջ:

**13. Նշի՛ր թվերի այն հերթականությունը, որը համապատասխանում է պարբերությունների տրամաբանական հաջորդականությանը.**

- 1) Այս կաթնասունների արձակած բարձր հաճախականության ձայները բաղկացած են շատ կարճ (վայրկյանի տասնորդական կամ հարյուրերորդական մասի տևողությամբ) թրթռոց-ազդակներից: Օրինակ՝ ջրի մեջ իջեցված 1 սմ տրամագծով գնդակը դելֆինը նկատում է ոչ ավելի, քան երեք մետրից, բայց ձայնային ազդանշանների շնորհիվ նա կարող է գնդակին «լսել» 10-13 մետրից: Եվ ինչպե՞ս բացատրել, որ աֆալին դելֆինատեսակը այլումինե խողովակների արգելքը «նկատում է» 350 մետրից:
- 2) Այդ ունակությունների գործադրմանը զուգընթաց դելֆինները իրեն գլուխները մի կողմից մյուսն են շարժում, որ ավելի ճշգրիտ որոշեն իրենց հետաքրքրող առարկայի գտնվելու վայրը:
- 3) Արդյոք հնարավո՞ր է նման բան. իհարկե, ո՛չ: Տեսողությամբ առարկան ջրի մեջ այդ հեռավորությունից հայտնաբերելու մասին վարկած նույնիսկ տեսականորեն չի կարելի թույլ տալ: Մնում է ապավինել դելֆինների ուլտրաձայնային արձագանքման ունակություններին:
- 4) Դելֆինները ցուցաբերում են տարածության մեջ կողմնորոշվելու զարմանալի ունակություն, և գուցե պատճառն այն է, որ նրանք չունեն լավ տեսողություն և ջրում կողմնորոշվելու, առարկաներ հայտնաբերելու համար արձակում են բարձր հաճախականության ձայներ:

**14. Նշի՛ր թվերի այն հերթականությունը, որը համապատասխանում է պարբերությունների տրամաբանական հաջորդականությանը.**

- 1) Կրիաները բազմանում են ձվադրմամբ: Էգը հետին ոտքերով փորում է ավազը, ձվերը տեղավորում փոսի մեջ, ապա ծածկում և հարթեցնում մակերեսը: Որոշ ժամանակ անց դուրս եկած ձագերը անմիջապես ձգտում են հասնել ջրին: Երբ ձագը նոր է ծնվում, գրահը հարթ է, բայց մեկ ժամ անց ձևավորվում է և ձեռք բերում ուռուցիկություն:
- 2) Կրիաներն աշխարհի ամենահին այն կենդանիներից են, որոնք երկրագնդի երեսին բնակվում են շուրջ 200 մլն տարի և բնավ փոփոխության չեն ենթարկվել: Այդ ընթացքում որոշ տեսակներ յուրացրել են ցամաքը, մյուսները՝ ջրային տարածությունները:
- 3) Չագն այնքան խոշոր է թվում, որ նույնիսկ կասկածելի է սեփական ձվի մեջ նորից տեղավորվելու միտքը: Ամենախոշոր կրիան ծովային մաշկավորն է, որի երկարությունը կարող է հասնել ավելի քան 2 մետրի, կշիռը՝ 916 կգ-ի, սուզվելու խորությունը՝ 640 մ-ի. նման խորություններ իջնելու պատճառը սնունդ որոնելու անհրաժեշտությունն է:
- 4) Թե՛ ջրային, թե՛ ցամաքային կրիաները երկարակյաց են, և ենթադրվում է, որ նրանց կյանքի տևողությունը 200-300 տարի է: Ի դեպ, նրանց տարիքը կարելի է որոշել գրահի զարդանախշերով, ինչպես ծառերինը՝ բնի օղակներով. կրիաների մոտ ամեն տարի գրահի զարդանախշերից յուրաքանչյուրը հարստանում է մեկական «տարեկան» շրջանագծով:

**15. Նշի՛ր թվերի այն հերթականությունը, որը համապատասխանում է պարբերությունների տրամաբանական հաջորդականությանը.**

- 1) Բացի այդ, Ճապոնիան անվանում են երկրաշարժերի երկիր. միջին հաշվով այստեղ տեղի է ունենում օրական երեք երկրաշարժ՝ նախաճաշին, ճաշին և ընթրիքին, ինչպես սիրում են կատակով ասել ճապոնացիները: Բայց ցնցումների մեծ մասը շատ թույլ է, և միայն սարքերն են կարողանում գրանցել:
- 2) Եթե երկրի դրոշը՝ սպիտակի վրա կարմիր սկավառակը, խորհրդանշում է արևը, ապա զինանշանի հարցում ճապոնացիները ավելի քիչ նախաձեռնող են եղել: Ընդունված է որպես զինանշան ներկայացնել կայսերական տոհմի նշանը՝ դեղին քրիզանթեմը, որը բաղկացած է 16 կրկնակի թերթերից. այն կրկին արևի խորհրդանիշն է:
- 3) Ճապոնացիներն իրենց երկիրն անվանում են Նիպպոն, որ թարգմանաբար նշանակում է Ծագող արևի երկիր: Ինչպես վկայում է հնագույն լեգենդը, արարիչ աստվածն իր նիզակը խրել է օվկիանոսի հատակը, և արևի տակ պսպղացող կաթիլները վերածվել են Ճապոնական կղզիների:
- 4) Իսկ ճապոնական բալենին՝ սակուրան, որ ծաղկում է մարտի վերջերին ու ապրիլի սկզբներին՝ ցուցադրելով հրաշագեղ գունային համակցություններ, իր ծաղկումով ազդարարում է սակուրայի գույներով զմայլվելու տոնի սկիզբը՝ Խանամին: Ծառի ծաղիկներով հրապուրվում են, ինչպես աշխարհում ոչ մի ուրիշ ծաղկով: Այն համարվում է ազգային հպարտություն:

**16. Նշի՞ր թվերի այն հերթականությունը, որը համապատասխանում է պարբերությունների տրամաբանական հաջորդականությանը.**

- 1) Խաղերի արդյունքները գրոյացվել են ապաշնորհ բռնակալի մահից հետո, ապա արգելվել ընդհանրապես, բայց ուշագրավ է մի բան. մարմարյա սալիկի վրա արձանագրված վերջին հաղթողի անունը Վարազդատ Արշակունի արքայի անունն է (գահակալել է 374-378 թթ.), որը 394-ի խաղերում հաղթել է կռփամարտում: Մեր օրերում դրանք մարզական ամենագնացվածային միջոցառումներից են:
- 2) Եթե հավատանք հին հունական հաշվարկներին, 394 թ. հռոմեական կայսր Թետոդոսիոս Առաջին Մեծի կողմից արգելված համահունական օլիմպիական խաղերը եղել են թվով 293-րդը: Օլիմպիական խաղերը հիմնադրվել են Չևս աստծու պատվին և դարձել ամենանշանավորը համահունական բոլոր խաղերի մեջ:
- 3) Հետագայում խաղերը տեղափոխվել են Հռոմ, ապա կրկին Հունաստան, որոշ տիրակալների օրոք ձեռք բերել նախկին հնչեղությունը կամ անտեսվել: Խախտվել է անցկացման ժամանակացույցը, ինչպես Ներոնի օրոք, որը նաև հրամայել է ջարդել նախորդ բոլոր հաղթողների արձանները, ավելացրել նոր՝ երգիչների մրցույթ, որի հաղթողն ինքն է եղել, զավթել է մարտակառքի մրցության հաղթողի պսակը, քանի որ եղել է միակ մասնակիցը: Ասում են՝ երկու անգամ ընկել է մարտակառքից մինչև եզրագծին հասնելը:
- 4) Անցկացվել են չորս տարին մեկ անգամ սրբազան Օլիմպոսում՝ Քրոնիոն լեռան ստորոտում, և քիչ-քիչ ընդարձակվել են դրանց ընդգրկման աշխարհագրական սահմանները՝ ներառելով նորանոր կղզիների մարզիկների: Զառասուներորդ խաղերից սկսած՝ մասնակցության թույլտվություն են ստացել փոքրասիական և հարավիտալական գաղութների հույները. բարբարոսների ներկայացուցիչները կարող էին լինել սոսկ հանդիսատես:

**17. Նշի՞ր թվերի այն հերթականությունը, որը համապատասխանում է պարբերությունների տրամաբանական հաջորդականությանը.**

- 1) Բայց նույնիսկ եթե ներկայումս ապրող կաթնասունների հետ հաշվարկենք նաև ժամանակին անհետացած բոլոր տեսակները (դրանց թիվը գրեթե 2-3 անգամ ավելին է), միևնույնն է, երկրագնդի երեսին երբևէ բնակված կաթնասունների թիվը չի անցնի 15.000-ից:
- 2) Արդի կենսաբանությունը կաթնասուններին բաժանում է շուրջ 25 խմբի, որոնցում ներառված են մոտ 140 ընտանիք և 4600 տեսակ: Սա չնչին մասն է կենդանական տեսակների բազմազանության, քանի որ այսօր հայտնի են շուրջ 5 մլն կենդանական տեսակներ, որոնց երկու երրորդը բաժին է ընկնում միջատներին, թռչունները 5000 են, ձկները՝ 20.000:
- 3) Կենդանական աշխարհը չափազանց բազմազան է, և դժվար թե մեկը երբևէ կարողանա հաշվել եղած բոլոր տեսակների ճշգրիտ թիվը: Պատճառը զարգացման գործընթացում որոշ տեսակների բնաջնջումն է, նրանց հետքերի վերացումը. կարող են վերանալ ամբողջական ընտանիքներ, և դա նույնքան տարածված է, որքան նոր տեսակների ու ցեղատեսակների առաջացումը:
- 4) Բացի գոյություն ունեցողներից՝ կենսաբանները դասերում ընդգրկում են նաև իրենց հայտնի բնաջնջված կամ անհետացած կենդանատեսակներ, որոնց թվերը մոտավոր են:

**18. Նշիր թվերի այն հերթականությունը, որը համապատասխանում է պարբերությունների տրամաբանական հաջորդականությանը.**

- 1) Հետևաբար շան հաշվողական ընդունակությունները վերլուծելով՝ կարելի է ասել, որ նա ծանոթ է Պյութագորասի թեորեմին, գիտե հաշվել ֆունկցիայի ածանցյալը և լուծել քառակուսի հավասարում: Ըստ երևույթին, մնացած բոլոր կենդանիներն էլ զարգացման միլիոնավոր տարիների ընթացքում բնականորեն սովորել են գտնել գործողություններ կատարելու ամենաարդյունավետ ճանապարհը:
- 2) Շան տերը մի օր՝ ծովափին գրոսնելիս, երբ գնդակ էր նետում ջուրը, նկատում է, որ Էլվիսը նախ որոշ տարածություն վազում է ծովի երկայնքով, ապա նետվում է ջուրը և բութ անկյան տակ լողում գնդակի ուղղությամբ: Շան տերը, որը նաև մաթեմատիկոս էր, մտածում է, թե որտեղից է կենդանին բնագոյաբար գտնում դեպի գնդակ տանող ամենակարճ ուղին, և երեք ժամում 35 փորձ է կատարում՝ նախ չափելով շան վազքի և լողալու արագությունը, ապա մեկնարկի ու ջրի մեջ ցատկելու կետի հեռավորությունը:
- 3) Հետազոտությունները հաստատում են, որ բնությունը մարդկանցից շատ ավելի շուտ է հայտնաբերել մաթեմատիկան: «Մաթեմատիկոս» շան տիպիկ օրինակ է Էլվիս շունը, որին կարելի է համարել հաշվելու մեթոդների մասնագետ:
- 4) Վերջապես տանը, համապատասխան հաշվարկներ կատարելով, պարզեց, որ շունը ցատկի տեղը որոշում է կատարյալ ճշտությամբ, և ավելի զարմացավ այն ժամանակ, երբ նույն խնդիրը առաջարկեց մաթեմատիկական գիտելիքներ ունեցող մի մարդու, որը մեկ ժամից միայն կարողացավ լուծել այն, ինչը երեք տարեկան Էլվիսը գտավ վայրկյանի տասնորդական մասերի ընթացքում:

**19. Նշիր թվերի այն հերթականությունը, որը համապատասխանում է պարբերությունների տրամաբանական հաջորդականությանը.**

- 1) Ալեքսանդրապոլի քաղաքային վարչությունը կազմակերպել էր փայլուն ընդունելություն: Կայարանում պատրաստված էր թեյասեղան: Համալսարանի դահլիճը զարդարված էր կանաչով ու դրոշակներով, նվազում էր զինվորական խումբը:
- 2) Հանդեսը բացեց համալսարանի տեսուչ, վաստակավոր գիտնական պրոֆ. Ի.Ղամբարյանը, որից հետո նախարար Ն. Աղբալյանը մի ընդարձակ ու կուռ ճառով վեր հանեց համալսարանի դերը հայ պետականության ու մշակույթի զարգացման գործում: «Այն ջահը,- ասաց նա,- որ մենք վառում ենք այսօր Հայաստանի բարձրավանդակի վրա, չի հանգչի երբեք և կլուսավորի Առաջավոր Ասիան»:
- 3) Հունվարի 31-ին Ալեքսանդրապոլում՝ Հայաստանի «երկրորդ մայրաքաղաքում», տեղի ունեցավ Հայաստանի համալսարանի հանդիսավոր բացումը: Երևանից և Թիֆլիսից հատուկ գնացքներով եկել էին բազմաթիվ հյուրեր՝ Խորհրդարանի նախագահ Ավ. Սահակյանը, վարչապետ Ա. Խատիսյանը, բրիտանական ներկայացուցիչ Օ. Ուորդրոպը, կրթության և արվեստի նախարար Ն. Աղբալյանը, արդարադատության նախարար Ա. Չիլինգարյանը, համալսարանի ուսուցչապետները՝ պրոֆ. Ղամբարյանի գլխավորությամբ, բանաստեղծ Հովհ. Հովհաննիսյանը և պետական ու հասարակական, գրական ու գիտական շատ ուրիշ դեմքեր:
- 4) Հանդեսի ամբողջ տևողության ընթացքում դուրսը խռնված էր մեծ բազմություն. շատերը եկել էին շրջակա գյուղերից: Հասարակությունը խանդավառ ցույցերով ընդունեց հանդեսից հետո դուրս եկող հյուրերին: Երեկոյան առևտրական դպրոցի սրահում կայացավ գրական-երաժշտական երեկույթ և պարահանդես, որ տևեց մինչև ուշ գիշեր: Պարահանդեսից հետո հյուրերն արտակարգ գնացքով վերադարձան Երևան:

**20. Նշի՞ր թվերի այն հերթականությունը, որը համապատասխանում է պարբերությունների տրամաբանական հաջորդականությանը.**

- 1) Այսպես վարվելու հիմքերը գորավոր էին. զարհուրելի էր կյանքը, և անկախությունն այդ օրերին թվում էր հեզմանք: Փաստորեն հայերի ձեռքը մնացել էր մի փոքրիկ հողաշերտ՝ հազիվ 12 000 քառ. կիլոմետր, աղքատ ու կիսակործան մի երկիր՝ կծկված ցամաք լեռների մեջ, ծանրաբեռնված գաղթականներով ու որբերով, շրջապատված թշնամիներով, անհաց, անդեղ, անօգնական: Սով ու հիվանդություն, լաց ու թշվառություն, կոտորած ու սարսափ:
- 2) Հրի ու սրի միջով անցնելով՝ Հայաստանը ձեռք բերեց անկախություն և կոչվեց անկախ կյանքի: Յնծության աղաղակներով ու ծափերով չընդունվեց հանրապետության ծնունդը: Ընդհակառակը, շատերի կողմից այն դիտվում էր անժամանակ ծնունդ: Ոմանք չէին հավատում նրան. «անկախություն» ու «հանրապետություն» բառերը դնում էին չակերտի մեջ:
- 3) Անկախության առաջին իսկ օրից վրաց կառավարությունն ու հասարակական կարծիքը սկսեց զարմանք ու զայրույթ արտահայտել, որ Վրաստանի հողի վրա շարունակում է մնալ օտար պետության մի իշխանություն: Հայերին ուղղվում էին աներկդիմի խոսքեր, թե նրանց տեղը Թիֆլիսը չէ, այլ Երևանը: Եվ դա այն պահին, երբ ամեն հաղորդակցություն Երևանի հետ կտրված էր, և Լոռու ու Փամբակի ձորերում թուրքերն ու տեղի մահմեդականները մաքրագործում էին հայկական գյուղերը:
- 4) Հայաստանում այսպիսին էր դրությունը, իսկ Թիֆլիսում տիրում էր կատարյալ շփոթ: Մայիսի 26-ից հետո հայ-վրացական հարաբերությունները լարվել էին ծայրաստիճան. վրացիները, արբած իրենց անկախությամբ ու գերմանական հովանավորությամբ, թշնամանքով էին նայում «ռուսների փեշից պոկ չեկող» հայերին, որոնք էլ իրենց հերթին վրացիներին համարում էին դավադիր, իրենց բարեկեցությունը հայ ժողովրդի դիակների վրա հաստատող:

**ԳԼՈՒԽ IX**

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ ՀԱՅԵՐԵՆԻ ՄԱՍԻՆ**

**1. Նշիր այն գիտնականներին, ովքեր հեղինակել են «Հայոց լեզվի դարձվածաբանական բառարանը» (Երևան, 1975).**

(1) Ստեփանոս Մալխասյանց, (2) Հովհաննես Բարսեղյան, (3) Արարատ Ղարիբյան, (4) Աշոտ Սուքիասյան, (5) Էդուարդ Աղայան, (6) Սերգեյ Գալստյան

**2. Ո՞ւմ անունով է կոչվում ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտը.**

1. Մանուկ Աբեղյանի
2. Էդուարդ Աղայանի
3. Հրաչյա Աճառյանի
4. Գևորգ Ջահուկյանի

**3. Թվարկվածներից քանի՞սն են լեզվաբաններ.**

Հովհ. Հովհաննիսյան, Ս. Աբրահամյան, Հ. Պարոնյան, Գ. Ջահուկյան, Պ. Սևակ, Գ. Սևակ, Հր. Թամրազյան, Խ. Աբովյան, Ս. Շահագիզ, Գ. Ալիխանյան

**4. Թվարկվածներից քանի՞սն են լեզվաբաններ.**

Գ. Մահարի, Էդ. Աղայան, Հ. Բարսեղյան, Ռ. Որբերյան, Գ. Սևակ, Մ. Աբեղյան, Ա. Գևանալանյան, Ա. Սուքիասյան, Ս. Աղաբաբյան

**5. Շարքերից քանիսո՞ւմ կան հայ լեզվաբանների անուններ.**

- 1) Գ. Աբով, Խ. Աբովյան, Հր. Աճառյան, Պ. Աղամյան
- 2) Ա. Ավետիսյան, Ար. Ղարիբյան, Ա. Ինճիկյան, Վ. Բարխուդարյան
- 3) Ֆ. Վինդիչման, Մ. Հերացի, Ն. Մառ, Մ. Մանուշյան
- 4) Վ. Փափագյան, Մ. Մեծարենց, Ա. Մեյե, Հ. Հյուբշման

**6. Նշանավոր հայագետների վերաբերյալ պնդումներից որոնցո՞ւմ սխալ կա.**

- 1) Մանուկ Աբեղյանը և Հրաչյա Աճառյանը մեծ ներդրում ունեն ինչպես հայ լեզվաբանության, այնպես էլ գրականագիտության զարգացման գործում:
- 2) Հայնրիխ Հյուբշմանը և Անտուան Մեյեն ապացուցել են, որ հայերենը հնդեվրոպական լեզվաընտանիքի առանձին լեզվաճյուղ է:
- 3) «Հայերեն արմատական բառարան» և «Լիակատար քերականություն հայոց լեզվի՝ համեմատությամբ 562 լեզուների» կոթողային աշխատությունների հեղինակն է Հր. Աճառյանը:
- 4) Նշանավոր հայագետներ Ստ. Մալխասյանցը, Ն. Մառը, Գ. Ջահուկյանը, Ս. Աբրահամյանը բառարանների հեղինակներ են:

**7. Բառարանագրության վերաբերյալ պնդումներից որոնցում սխալ կա.**

- 1) Բառարանները բաժանվում են երկու մեծ խմբի՝ հանրագիտական և բանասիրական:
- 2) Հանրագիտական բառարաններ են «Հայկական սովետական հանրագիտարանը», Հր. Աճառյանի «Հայոց անձնանունների բառարանը», Էդ. Ջրբաշյանի և Հ. Մախչանյանի «Գրականագիտական բառարանը»:
- 3) Բացատրական բառարաններ են Մ. Սեբաստացու «Բառզիրք հայկագեան լեզուի», Ռ. Ղազարյանի «Գրաբարի բառարան», Էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարան», Հր. Աճառյանի «Արմատական բառարան» աշխատությունները:
- 4) Բարբառային բառարաններ չեն լինում:
- 5) Բացատրական բառարաններում տրվում է բառի ստուգաբանությունը, ծագումը, առնչությունը այլ լեզուների հետ, բառի բացատրությունը:

**8. Նշված հայագետներից ովքե՞ր են բառարանների հեղինակներ.**

- 1.Գ. Սևակ, 2.Ստ. Մալխասյանց, 3.Ֆ. Ֆեյդի, 4.Հովհ. Բարսեղյան, 5.Ս. Աբրահամյան, 6.Ա. Ղարիբյան

**9. Նշված հայագետներից ո՞վ է ապացուցել, որ հայերենը հնդեվրոպական լեզուների մեջ ինքնուրույն լեզվաճյուղ է:**

1. Նիկողայոս Մառը
2. Հայնրիխ Հյուբշմանը
3. Գևորգ Ջահուկյանը
4. Յոզեֆ Կարստը

**10. Նշված օտարազգի հայագետներից ո՞վ է «Հայ ժողովրդական դյուցազնավեպը» ուսումնասիրության հեղինակը.**

- 1) Հ. Պետերմանը
- 2) Ֆ. Վինդիշմանը
- 3) Ֆ. Ֆեյդին
- 4) Ա. Սեյեն

**11. Պնդումներից որո՞նք են սխալ.**

- 1) 19-րդ դարի սկզբին ձևավորվեց պատմահամեմատական լեզվաբանությունը, որի շնորհիվ պարզվեցին լեզուների ծագումնաբանական կապերը:
- 2) Հնդեվրոպական լեզվաընտանիքը ամենալայն տարածում ունեցողն է: Նրա մեջ են մտնում սլավոնական, ռոմանական, գերմանական, հնդկական, իրանական և այլ լեզվախմբեր:
- 3) Վերը նշված յուրաքանչյուր լեզվախմբի մեջ իրենց հերթին մտնում են առավել մերձավոր ցեղակից լեզուներ: Օրինակ՝ սլավոնական լեզվախմբի մեջ մտնում են ռուսերենը, ուկրաիներենը, բելառուսերենը, սերբերենը, չեխերենը, ռումիներենը և այլն:
- 4) Պատմահամեմատական մեթոդի առաջին նշանավոր ներկայացուցիչ Հ. Պետերմանը ապացուցեց, որ հայերենը հնդեվրոպական լեզվաընտանիքի մի ինքնուրույն լեզվաճյուղ է, իսկ պարսկերենի հետ բառային ընդհանրությունները կապեց հետագա շրջանների փոխառությունների հետ:

**12. Պնդումներից որո՞նք են ճիշտ.**

- 1) Բառարանները լինում են հանրագիտական և բանասիրական: Հանրագիտական բառարաններն իրենց հերթին լինում են ընդհանուր և մասնավոր:
- 2) Բանասիրական բառարանները լինում են բացատրական, թարգմանական, հոմանիշների, հակահիշների, համանունների, դարձվածաբանական, ուղղագրական, ստուգաբանական և այլն:
- 3) Ստուգաբանական բառարաններում տրվում են բառերի ծագումը և նրանց առնչակցությունը ցեղակից ու ոչ ցեղակից այլ լեզուների հետ: Այսպիսի ստուգաբանական բառարան է Մ. Աբեղյանի «Հայերեն արմատական բառարանը»:
- 4) Հայերենի բացատրական բառարաններից են Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանը», Ս. Ամատունու «Հայոց բառ ու բանը», Էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանը» և այլն:

**13. Պնդումներից որո՞նք են սխալ.**

- 1) Արդի գրական արևելահայերենը ձևավորվել է Արարատյան բարբառի հիման վրա, որ պատկանում է **ալ** ճյուղին, իսկ արևմտահայերենը՝ Պոլսի և հարակից շրջանների **կը** ճյուղի բարբառի հիման վրա:
- 2) Արևմտահայերենը, ի տարբերություն արևելահայերենի, գրության մեջ չի պահել մաշտոցյան բոլոր տառերը, որովհետև արևմտահայերենում բոլոր ձայնեղները շնչեղանում են ( բ-փ ), իսկ խուլերը՝ ձայնեղանում ( պ-ք ):
- 3) Որոշ բառեր արևմտահայերենում և արևելահայերենում արտահայտում են տարբեր իմաստներ, օրինակ՝ արևելահայերենի *պահարան* (կահույքի տեսակ) բառը արևմտահայերենում նշանակում է *նամակածրար*, իսկ *ախոյան* (հակառակորդ)՝ *չեմպիոն* և այլն:
- 4) Ի տարբերություն արևելահայերենի, որտեղ գրեթե բոլոր օտար բառերը թարգմանվում են, արևմտահայերենում դրանք ազատորեն օգտագործվում են:

**14. Պնդումներից որո՞նք են ճիշտ.**

- 1) Արևմտահայերենը բայի սահմանական ներկան կազմում է **կը** մասնիկի միջոցով՝ կը սիրեմ, կը հավատամ, իսկ արևելահայերենը՝ **ալ**-ով՝ սիրում եմ, հավատում եմ:
- 2) Արևելահայերենում գրեթե բոլոր գոյականները հոգնակի թվում ենթարկվում են **ի** հոլովման, իսկ արևմտահայերենում՝ **ու**:
- 3) Թե՛ արևելահայերենում և թե՛ արևմտահայերենում հոգնակի կազմության ժամանակ **ի** և **ու** ձայնավոր ունեցող մի շարք բառեր (ջուր, շուն, մուկ, սիրտ և այլն) հնչյունափոխվում են:
- 4) Արևմտահայերենում անձի առման քերականական կարգը բացակայում է, այսինքն՝ արևմտահայերենում թե՛ անձնանիշ, թե՛ իրանիշ գոյականները ուղիղ խնդիրը ձևավորում են միևնույն ձևով:
- 5) Արևելահայերենի և արևմտահայերենի շարահյուսական տարբերություններից կարևոր է ժխտական դերանունների գործածությունը բայի հետ. ի տարբերություն արևելահայերենի՝ արևմտահայերենում կրկնակի ժխտում չկա:

**15. Արևմտահայերենի քերականական համակարգի վերաբերյալ ո՞ր պնդումներն են ճիշտ.**

- 1) Բայի սահմանական ներկա ժամանակաձևը կազմվում է **կը** մասնիկի միջոցով:
- 2) Գոյականի հոգնակի սեռականի ձևերը, ինչպես արևելահայերենում, հիմնականում կազմվում են **ի** վերջավորությամբ:
- 3) Ի տարբերություն արևելահայերենի՝ արևմտահայերենը չունի անձի առման քերականական կարգ:
- 4) Անորոշ դերբայը, ի տարբերություն արևելահայերենի, ունի երեք վերջավորություն՝ **ել, ալ, իլ** :

**16. Միայն արևմտահայերենին բնորոշ քանի՞ բառաձև կա տրված հատվածում.**

Զմբուխտներով կը ծփա դաշտը անհուն:  
Ծիտը կ'երգե թառած հասկի մ' օրորուն,  
Մինչ իր տակեն ցորյաններու մոլեգին  
Ծովեր կանցնին...

**17. Նշիր այն հատվածները, որոնք արևմտահայերեն են.**

- 1) Ոչ ոք ըսավ. «Սա տըղին  
Պատռենք սիրտը տրտմագին,  
Նայինք՝ ինչե՞ր գրված կան...»:  
– Հոն հրդեհ կա, ո՛չ մատյան:
- 2) Եղեգնյա գրչով երգեցի արյուն.  
– Ձեզի ընծա՛, սուրի զոհեր–
- 3) Ձեզանից հետո եկավ գիտություն՝  
Յուր ծանր հայացքով աշխարհի վերա,  
Ամեն բան ընկավ մտածության տակ,  
Բուպե չմնաց ազատ կամ ունայն:
- 4) Մանգաղս քարին եկավ.  
– Յարս յար ունի–  
Քարեն լորիկը թռավ:  
– Լե՛րդս կ'արյունի: –

**18. Ո՞ր շարքերում արևմտահայերեն բառերի իմաստի բացատրության սխալ կա.**

- 1) աքասիա – դափնեվարդ
- 2) հով – քամի
- 3) խոկալ – մտածել
- 4) նվագավար – նվագող
- 5) լաճ – մաճկալ
- 6) կռփամարտ - ըմբշամարտ
- 7) գոց – անգիր
- 8) կրթարան – դպրոց

**19. Նշիր այն բառերը, որոնք արևելահայերենում և արևմտահայերենում տարբեր իմաստ են արտահայտում.**

1.մանրահատակ, 2.հոն, 3.պահարան, 4.չեմպիոն, 5.ալեհավաք, 6.գրագետ, 7.մականուն,  
8.ռազմավարություն, 9.նվագավար

**20. Ո՞ր շարքերում են սխալ համապատասխանեցված տրված բառերի արևմտահայերեն և արևելահայերեն տարբերակները.**

- 1) բարկօղի – կոնյակ
- 2) հավկիթ – ձու
- 3) ալեհավաք – շանթարգել
- 4) աղվոր – գեղեցիկ
- 5) հանրակառք – կառք
- 6) աղեկ – լավ

**21. Ո՞ր շարքերում են սխալ համապատասխանեցված տրված բառերի արևմտահայերեն և արևելահայերեն տարբերակները.**

- 1) հրասայլ – սայլակ
- 2) դեղագիր – դեղատոմս
- 3) հեռաձայն – հեռախոս
- 4) էրիկմարդ – ամուսին
- 5) ձայնասփյուռ – ռադիո
- 6) հեռատեսիլ – հեռադիտակ

**22. Ո՞ր շարքերում են ճիշտ համապատասխանեցված տրված բառերի արևելահայերեն և արևմտահայերեն տարբերակները.**

- 1) սկլերոզ – կարծրախտ
- 2) դեմագոզ – համայնավար
- 3) կոմունիստ – ամբոխավար
- 4) սուբյեկտիվ – առարկայական
- 5) ռեալիզմ – իրապաշտություն
- 6) օբյեկտիվ – ենթակայական

**23. Քանի՞ հնաբանություն կա տրված հատվածում.**

Դրա համար մեկիքը հրամայել է՝ որքան կարելի է սակավ ցույց տան անասունների թիվը, հողերը չափելու չվանը սովորականից երկար անեն, որպեսզի արտերը չերևցնեն ավելի տարածություն: Նա նաև գնում էր խանի շտեմարանների ցորյանը, լցնում յուր պահեստները: Ով որ տեղեկություն ունի այդպիսի առևտրից, գիտի, թե մեծ չափով առնելը և փոքրով վաճառելը որքան օգուտ կբերի առևտրականին:

**24. Ո՞ր նախադասությունների մեջ հնաբանություն կա.**

- 1) Բժշկապետը նրա աչքերում նույնպես նկատեց արտասուքի կաթիլներ:
- 2) Դռնապանը բավականացավ ուղևորի պատասխանով:
- 3) Նա ուներ սևորակ նշան և աչքեր, սև սաթի նման զանգուր գիսակներ:
- 4) Երիտասարդը ցած իջավ գահավորակի վրայից:
- 5) Բնականից թուխ դեմքը ավելի մռայլ գույն էր ստացել բարկ արևից:

**25. Տրված հատվածներից որո՞նք են գրաբար.**

- 1) Բարեկամություններն ալ ատանկ են. հարկ է, որ ան խորտակուի, որպեսզի կորուստին մեծութիւնը կարենանք զգալ և չափել:
- 2) Չիմ եարն ամանաթ կուտամ, ի վարդին մէջըն պահեցեք, Թե երթամ խարիպուկ մեռնիմ, վարդըն ձեզ, գտերն յիշեցեք:
- 3) Տեղ ոսկի տեղայր ի փեսայութեանն Արտաշիսի, Տեղայր մարգարիտ ի հարսնութեանն Սաթինկանն:
- 4) Քանի գուգե քամին տանե՝ ծովեմեն ավազ չի՛ պակսի. Թեգուզ ըլիմ, թեգուզ չըլիմ՝ մեջլիսներուն սագ չի՛ պակսի...

**26. Տրված բառահոդվածը բառարանի ո՞ր տեսակից է վերցված.**

**ՍՈՍԱՓ**, ի, գ. 1. Տերևների՝ ճյուղերի՝ ցողունների օրորվելուց՝ շարժվելուց առաջացած մեղմ ձայնը, սոսալ: 2. Ջգեստի՝ շորեղենի ևն ծփանքից առաջացող մեղմ ձայնը, խշշոց, շրշյուն: 3. Ջեփյուռի՝ մեղմ քամու խշշոց, շրշյուն: 4. **փխբ**. Շրշյուն, շշունջ, շշուկ:

- 1) դարձվածաբանական
- 2) ուղղագրական
- 3) բացատրական
- 4) հոմանիշների

**27. Տրված բառահոդվածները բառարանի ո՞ր տեսակից է վերցված.**

**ԹՊՐՏԱԼ**

**ԹՊՐՏՈՑ**

**ԹՊՐՏՈՒՄ**, -տման

- 1) դարձվածաբանական
- 2) ուղղագրական
- 3) բացատրական
- 4) հոմանիշների

**28. Տրված բառահոդվածը բառարանի ո՞ր տեսակից է վերցված.**

**ՀԱՄԱԿՐԱՆՔ**, գ. 1. Համակրություն, հակում (հոգեկան), խանդադատանք, գորով, կարեկցություն, (հնգ.)՝ աղապատանք, կրակցություն (համակրական զգացմունք՝ վերաբերմունք): 2. Տե՛ս **Սեր**: 3. Տե՛ս **Պաշտպանություն**:

- 1) դարձվածաբանական
- 2) ուղղագրական
- 3) բացատրական
- 4) հոմանիշների

**29. Տրված բառահոդվածը բառարանի ո՞ր տեսակից է վերցված.**

**ԲԵՐԱՆՈՒՄ ԼԵՁՈՒ ԼԻՆԵԼ կամ ՈՒՆԵՆԱԼ**, - 1. Ի վիճակի լինել խոսելու, կարողանալ պատասխանել: *Բերանում լեզու կա՞, որ խոսի կամ պատասխանի*: 2. Ճարտարախոս լինել, ճարտար լինել: *Բերանում շան լեզու ունի*:

- 1) դարձվածաբանական
- 2) ուղղագրական
- 3) բացատրական
- 4) հոմանիշների

**30. Տրված բառահոդվածը բառարանի ո՞ր տեսակից է վերցված.**

**ԴԱՍԱՎԱՆԳԵԼ**, նբ. 1. Որևէ առարկա կարգալ ուսումնական հաստատությունում, դաս տալ: 2. Դասատու լինել, դասավանդումով զբաղվել:

- 1) դարձվածաբանական
- 2) ուղղագրական
- 3) բացատրական
- 4) հոմանիշների

**ԳԼՈՒԽ X ՊԵՐՈՒՄՆԵՐԻ ՓՈՒՆԶ**

**Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրի՛ր ճիշտ է, Միայն է, Չգիտես տարբերակներից որևէ մեկը:**

**1.**

- 1. Հնչյունը լեզվի արտասանական նվազագույն միավորն է:
- 2. Հնչյունը տառի գրային նշանն է:
- 3. Հայերենն ունի վեց ձայնավոր հնչյուն, որոնց համապատասխանում է վեց տառ:
- 4. Բառեր կարելի է կազմել նաև առանց ձայնավոր հնչյունների:
- 5. Հայերենն ունի երեսուն բաղաձայն և վեց ձայնավոր հնչյուն:
- 6. Բաղաձայն *բ, ծ, յ, մ, լ* հնչյունների արտաբերման ժամանակ բերանի խոռոչում արգելքներ չեն ստեղծվում:

**2.**

- 1. Կիսաձայն *յ* հնչյունի և որևէ ձայնավորի կապակցությունը կոչվում է երկհնչյուն:
- 2. Երկհնչյուն է նաև *ե-ն*, որը միշտ արտասանվում է *յէ*:
- 3. Երկու ձայնավորների միջև հանդես եկող *յ*-ն երկհնչյուն է կազմում իրեն հաջորդող ձայնավորի հետ:
- 4. *Հորեղբայր, երեկոյան, եթերային* բառերում կա չորս երկհնչյուն:
- 5. *Յ* հնչյունը կիսաձայն է. պարունակում է թե՛ ձայն, թե՛ աղմուկ:
- 6. *Սուրիաս, Մարիամ, Անդրեաս, առօրեական, իղեալ* բառերում կա միայն *յա* երկհնչյուն:

**3.**

- 1. Ուղղագրությունը ճիշտ գրելու և արտասանելու կանոնների ամբողջությունն է:
- 2. *Ա, ի, ու* ձայնավոր հնչյուններից հետո լսվող *յ* ձայնակապը երբեմն գրվում է, երբեմն՝ ոչ:
- 3. Բառամիջում *է* գրվում է բոլոր այն դեպքերում, եթե այն առանձին արմատի սկզբնատառ է:
- 4. Բառակապում *օ* արտասանելիս առանց բացառության գրվում է *օ* տառը:
- 5. Բառի մեջ տառերը և հնչյունները քանակով կարող են չհամապատասխանել:
- 6. *Յ* ձայնակապը արտասանվում, սակայն չի գրվում *ե, ի, ո* ձայնավորներից հետո:

**4.**

- 1. Վերջնավանկի արտասանվող *ը*-ն միշտ գրվում է:
- 2. *Միռոց, ստեյ, սփրթնել* բառերում *ը* հնչյունը արտասանվում է բաղաձայն *ս*-ից հետո:
- 3. Գաղտնավանկի *ը*-ն լսվում է, բայց չի գրվում:
- 4. *Յ* ձայնակապը արտասանվում է գրեթե բոլոր ձայնավորների միջև, բայց գրվում է միայն *ա*-ից և *ո*-ից հետո:
- 5. Կրկնակ բաղաձայնները արտասանվում են տևական և գրվում են կրկնատառ:
- 6. *Պտտահողմ, ծննդյան, բնօրրան, միատարր, ուղղագիծ* բառերը հնչյունավորության արդյունքում գրվում են կրկնատառ:

**5.**

- 1. Վանկը բառի այն մասն է, այն հնչյունը կամ հնչյունակապակցությունը, որ արտաբերվում է մեկ շնչով կամ օդի մեկ մղումով:
- 2. Վանկը հնչյունի պես իմաստագուրկ չէ:
- 3. Վանկը կազմվում է թե՛ ձայնավորով և թե՛ առանց ձայնավորի:
- 4. Վանկի ձայնավորը կոչվում է **վանկարար հնչյուն**. ահա թե ինչու ձայնավորները միայնակ կարող են վանկ կազմել:
- 5. Բառի մեջ որքան ձայնավոր կա, այնքան էլ վանկ կա:
- 6. Բաղաձայնով վերջացող վանկը **փակ վանկ** է, ինչպես՝ *դաս-վար, տան-տեր, գրլ-խարկ*:

6.

1. Բառի մեջ որևէ ձայնավոր հնչյունի արտասանության ուժեղացումը կոչվում է **շեշտ**:
2. Շեշտն ընկնում է բառի վերջին վանկի ձայնավորի վրա, ուստի հայերենում շեշտի դիրքը կայուն է:
3. Օտար բառերը հղովվելիս կամ բառակազմության դեպքում չեն ենթարկվում հայերենի շեշտադրման օրինաչափություններին:
4. *Եմ* օժանդակ բայը չի շեշտվում, բայց ժխտական խոնարհմամբ գործածելիս շեշտվում է, ինչպես՝ գրում եմ - չեմ գրում:
5. Բառավերջում *ւ*-ը շեշտվում է, ինչպես՝ արև, տերև:
6. Հարադրական կազմությամբ որոշ բառերում, որոնց վերջին բաղադրիչը *որ, թե* բառերն են, շեշտն ընկնում է առաջին բաղադրիչի վրա, ինչպես՝ ասես թե, կարծես թե, ո՛չ թե, միայն թե, ինչպե՛ս թե, ե՛րբ որ, հե՛նց որ, մի՛նչև՛ որ, քանի՛ որ:

7.

1. Բառի մեջ ձայնավորի կամ երկհնչյունի փոփոխությունը կամ սղումը կոչվում է հնչյունափոխություն:
2. Հայերենում հնչյունափոխության են ենթարկվում հիմնականում *է/ե/, ու, ի*, ձայնավորները և *յա, ույ, յու* երկհնչյունները:
3. Արմատի բաց վանկի *ի*-ն, միանալով *ա* հոդակապի հետ, մեծ մասամբ դառնում է *ե*:
4. Բազմավանկ բառերի վերջին բաց վանկի *ի*-ն երբեմն սղվում է:
5. *Ու* ձայնավորը հնչյունափոխվում է միայն բազմավանկ բառերի սկզբում, միջում և վերջում:
6. Շատ բառերում դրսևորվում է մեկից ավելի հնչյունափոխություն թե՛ արմատում, թե՛ ածանցում:

8.

1. Պարզ բառերը կազմված են մեկ արմատից:
2. Պարզ բառի մեջ կարող է լինել գրաբարյան նախդիր:
3. Բոլոր արմատները նաև բառեր են, և բոլոր պարզ բառերը նաև արմատներ են:
4. *Խայտաբղետ* բառը բարդ բառ է:
5. *Բղետ* արմատը գործածվում է միայն *խայտաբղետ* բառի մեջ:
6. *Մոտեցում* և *հեքիաթասաց* բառերը ածանցավոր են:

9.

1. Բառի հիմնական իմաստը արտահայտում է արմատը, որն անբաժանելի է:
2. Լեզվի մեջ կան բառեր, որոնք չունեն նյութական իմաստ (առանց, մասին, և...):
3. Ածանցները և վերջավորությունները փոխում են բառի իմաստը:
4. Գրաբարյան *ն* վերջնահնչյունը բառակազմական դեր չի կատարում:
5. *ա* հոդակապը բառակազմական մասնիկի դեր ունի:
6. *Ղեղին* և *կարմիր* բառերը պարզ բառեր են:

10.

1. Բառի կազմությանը մասնակցում է նաև *յ* ձայնակապը:
2. *Խոյակ* և *գոյական* բառերը կազմվել են *յ* ձայնակապով:
3. Բառակազմական մասնիկի դեր կարող են կատարել նաև *սց, եց* բայական մասնիկները:
4. Արմատ + գրաբարյան նախդիր (հ, գ, ի) ածանցավոր բառեր են:
5. *Հգոր, հարգել, հաստ* բառերի մեջ *հ*-ն գրաբարյան նախդիր է:
6. *Պահեստասպետ, խոտհարք, վտարանդի, ծնողագուրկ* բառերը բարդածանցավոր բառեր են:

## 11.

1. Բառերը կազմությամբ լինում են չորս տեսակ:
2. Շաղկապներով կարելի է կազմել հարադիր բարդություն:
3. Հապավումների միջոցով կարելի է կազմել բարդություններ:
4. *Մայրական – մայրենի, հողային – հողեղեն* բառերում ածանցները հոմանիշ են:
5. *Ատ, սկան, իկ, ու* ածանցներով կարելի է կազմել միայն ածականներ:
6. *Չարածճի* բառի մեջ *ճճի*-ն արմատ է:

## 12.

1. Կրկնավոր բարդությունները կազմվում են արմատի կրկնությամբ:
2. *Արտ – ներ, բաց – ներ, հակ – համ* ածանցները հականիշ են:
3. *Հաշվեգետ, ծաղկեփունջ* բառերը անհոդակապ բարդություններ են:
4. *Անկապտելի* բառի արմատը *կապելն* է:
5. Բառի արմատները և ածանցները լինում են հնչյունափոխված և անհնչյունափոխ:
6. Բառերը բառիմաստ և ինքնուրույն գործածություն ունեցող միավորներ են:

## 13.

1. Մեկից ավելի արմատ և ածանց ունեցող բառերը բարդաձանցավոր բառեր են:
2. Արմատները լինում են ինքնուրույն գործածություն ունեցող և ինքնուրույն գործածությունից զուրկ:
3. *Լրջագույն, պարզագույն, խնկագույն, շառագույն* բառերը ածանցավոր բառեր են:
4. *Ձեռնոտ, ձերբակալել, ձերբազատվել, առատաձեռն* բառերը ընդհանուր արմատ չունեն:
5. Բարդության և ածանցման ժամանակ բառերը կարող են հնչյունափոխվել:
6. *Վշտալլուկ* բառը բարդ բառ է:

## 14.

1. Նախաձանց և վերջաձանց ունեցող բառերը բարդաձանցավոր բառեր են:
2. *Եռաձանի, ինքնատեղ, եռոտանի, եռյակ* բառերն ունեն ընդհանուր արմատ:
3. *Գլխագին, կարգին, սակագին, ողբագին* բառերի մեջ կա *(ա)գին* ածանցը:
4. *Հանրաքվե, աշտե, սաթե, հրե* բառերը ածանցավոր բառեր են:
5. Բարդ բառերը կարող են գրվել միասին, անջատ և զծիկով:
6. *Խոզանակ* բառի ածանցն է *անակ*-ը:

## 15.

1. Հայերենի ժխտական ածանցները նույնանիշ ածանցներ են:
2. Բարդ բառերը կազմված են մեկից ավելի արմատներից:
3. *Փայտամած, կասկած, տխրամած, հանգած* բառերում *ած*-ը վերջաձանց է:
4. *Հաշվետու, տեղեկատու, կծու, ծախու* բառերի մեջ կա *ու* վերջաձանցը:
5. *Անջրդի* բառը բարդաձանցավոր բառ է:
6. *Խնկարկել, անվանարկել, հուղարկավորել, բանտարկել* բառերի *արկ* բաղադրիչը արմատ է:

## 16.

1. Բառաբարդության և ածանցման ժամանակ կատարված հնչյունափոխությունը կախված է շեշտի տեղափոխությունից:
2. Կան բառակապակցություններ, որոնք ունեն և՛ ուղիղ, և՛ փոխաբերական իմաստներ:
3. *Չեռնասուն, հիսուն, հովասուն, վաթսուն* բառերը վերջանում են *սուն* ածանցով:
4. *Առյուծի ձագ, արու թռչուն, գազանի բույն, ձկների խումբ* բառակապակցություններից բարդ բառեր են կազմվում:
5. *Համերգ, համբարձվել, համամիտ* բառերը կազմված են *համ* նախածանցից:
6. *Ջրիմուռ, քենակալ, աստղանալ, քրտնաջան* բառերը բարդ բառեր են:

## 17.

1. Բարդության և ածանցման ժամանակ ոչ բոլոր արմատներն են հնչյունափոխվում:
2. Բարդության տեսակ չեն հապավումները:
3. Բոլոր տերմինները բարդ բառեր են:
4. Պարզ բառերը կոչվում են նաև արմատական բառեր:
5. *Յավալլուկ, սրտմաշուկ, բամբուկ, բանուկ* բառերը վերջանում են *ուկ* վերջածանցով:
6. *Այլ և ած* ածանցներով կարելի է կազմել և՛ ածական, և՛ գոյական:

## 18.

1. Ածանցները փոխում են բառի իմաստը և նոր բառ կազմում, վերջավորությունները՝ նույնպես:
2. Բառերում ածանցից առաջ ընկած մասը կոչվում է հիմք:
3. Եթե բառը ունի մի քանի վերջավորություն, ապա բառի հիմքը վերջին վերջավորությունից առաջ ընկած մասն է:
4. Հնչյունափոխված բառերի հիմքը կոչվում է անհնչյունափոխ հիմք:
5. *Տուն* բառի երկու հիմք կա *տնետուն* բառում՝ *տն* և *տուն*:
6. Բառերի քերականական ձևափոխությունները հիմնականում կատարվում են բառի վերջից:

## 19.

1. Որոշյալ առումը ցույց է տալիս, որ առարկան հայտնի է խոսողին կամ լսողին:
2. Որոշյալ առումով գործածված գոյականները ստանում են միայն *ձ* հոդ:
3. Թե՛ ձայնավորով, թե՛ բաղաձայնով սկսվող բառերից առաջ բաղաձայնով վերջացող բառերը կարող են են *ը* հոդ ստանալ:
4. Անորոշ առումով գործածվող գոյականները հոդ չեն ստանում:
5. Անորոշ առմամբ գոյականի վրա կարող են դրվել *մի, որևէ, ինչ-որ* և նման բառեր:
6. Նախադասության մեջ գոյականը կարող է գործածվել որոշյալ, անորոշ առումներով:

## 20.

1. Հոլովումը կատարվում է բառին վերջավորություններ ավելացնելով, բառի մեջ որոշ հնչյուններ փոխելով:
2. Գոյականը կարող է ունենալ միևնույն ձևը, բայց կատարել տարբեր պաշտոններ:
3. Գոյականը կարող է ունենալ տարբեր ձևեր, բայց կատարել միևնույն պաշտոնը:
4. Նախադասության մեջ տարբեր պաշտոններ կատարելու համար գոյականը ենթարկվում է տարբեր ձևափոխությունների, ինչպես նաև ստանում է տարբեր ածանցներ:
5. Նախադասության մեջ պաշտոն են կատարում միայն անձ ցույց տվող գոյականները:
6. Այն բարդ բառերը, որոնց վերջին բաղադրիչը միավանկ բառ է, կարող են ստանալ *եր* կամ *ներ* վերջավորություններ:

21.

1. Իրանիշ գոյականների մի մասն է նախադասության մեջ պաշտոն կատարում:
2. *Տիկին, պարոն* և *անձ* բառերը հոգնակին կազմում են երկու ձևով:
3. Այն գոյականները, որոնք չունեն եզակի թիվ, կոչվում են անհոգնական գոյականներ:
4. Բառերի այն փոփոխությունը, որից կախված է նրանց պաշտոնը նախադասության մեջ, կոչվում է հոլովում:
5. *Անդեր, Կարպատներ, Հիմալայներ, Ալպեր* անունները անեզական գոյականներ են:
6. *Մարդ* գոյականի հոգնակին կազմվում է երկու ձևով՝ *մարդիկ* և *մարդեր*:

22.

1. Այն գոյականները, որոնք չունեն հոգնակի թիվ, կոչվում են անեզական գոյականներ:
2. Ուղղական հոլովով դրվում են միայն կոչականը, ստորոգելին:
3. Բացառական, գործիական հոլովներով կարող է դրվել գոյականով արտահայտված որոշիչը:
4. Չափի պարագան դրվում է միայն բացառական հոլովով:
5. *եղեն* ածանցով կազմված գոյականները չունեն ներգոյական հոլովաձև:
6. Որոշ դերանուններ ուղղական և ներգոյական հոլովաձևեր չունեն:

23.

1. Հոգնակի թվում բառերը պատկանում են *ի* հոլովման՝ որոշ բացառություններով:
2. *Ու* հոլովման ենթարկվում են միայն *ի* ձայնավորով վերջացող բառերը և *մարդ, ամուսին, Աստված* բառերը:
3. *ան* հոլովման ենթարկվում են գրաբարյան *ն* վերջնահնչյուն ունեցող բառերը, *-ում* վերջածանց ունեցող բառերը, ինչպես նաև *անուն* բառը:
4. *ոջ* հոլովման ենթարկվող բոլոր բառերը չունեն ներգոյական հոլովաձև:
5. *վա* հոլովման ենթարկվում են ժամանակի իմաստ արտահայտող բառերը, ինչպես՝ *օր, շաբաթ, ամիս, տարի, դար, առավոտ, վաղը* և այլն:
6. Արտաքին հոլովիչները վեցն են՝ *ի, ո, ան, ոջ, վա, ց*:

24.

1. *Ո* ներքին հոլովման ենթարկվող ոչ մի բառ չունի ներգոյական հոլովաձև:
2. Իր ցույց տվող հարադիր գոյականների հոլովման ժամանակ փոխվում է միայն վերջին բաղադրիչը:
3. Փոխանվանաբար գործածվելիս բառերը ենթարկվում են *ի* հոլովման:
4. *Անք, ենք, ոնք* ածանցով կազմված գոյականները պատկանում են *ց* հոլովման:
5. *Ան* արտաքին հոլովման պատկանող գոյականների մի մասը ունեն գուգաձև հոլովում:
6. *Կայսր, աստված, հանգիստ* բառերի հոլովական գուգաձևերը գործածվում են ժամանակակից հայերենում:

25.

1. Գոյականի հոլովումը որոշվում է եզակի կամ հոգնակի թվի սեռական հոլովաձևերով:
2. *Ի* հոլովիչը միշտ ավելանում է բառի ուղղական հոլովի անհնչյունափոխ ձևին:
3. *Անուն* բառը պատկանում է *ա* ներքին հոլովման:
4. Ժամանակ ցույց տվող բոլոր բառերը պատկանում են *վա* արտաքին հոլովման:
5. *Ոջ* հոլովման պատկանող բոլոր բառերը չունեն ներգոյական հոլով:
6. *-ություն* և *-ում* վերջածանցներով կազմված գոյականները պատկանում են *ա* ներքին հոլովման:

26.

1. Ոչ հաշվարկելի գոյականները գործածվում են հոգնակի, եթե ցույց են տալիս նյութի տեսակ:
2. Որոշ գոյականներ հանդես են գալիս միայն հոգնակի թվով:
3. Բացի *-եր, -ներ* վերջավորություններից՝ կան հոգնակիի արտահայտման այլ ձևեր:
4. Անեզական են միայն սահմանափակ թվով աշխարհագրական անուններ:
5. Այն բարդ բառերը, որոնց վերջին բաղադրիչը միավանկ բառ է, ստանում են *-եր* հոգնակերտ:
6. Մի շարք գոյականներ հոգնակի թվում վերականգնում են գրաբարյան *ն* վերջնահնչյունը (*քառ, թոռ, լեռ, կուռ, դուռ, ռուս* և այլն):

27.

1. Այն որակական ածականները, որոնք գերադրական աստիճանը կազմում են *-ազույն* ածանցով, չեն կարող կազմել գերադրական աստիճան *-ամենա* նախածանցով:
2. *Բորիկ, մերկ, կաղ, հորդ, կույր* ածականները չունեն համեմատության աստիճաններ:
3. Ածականը նախադասության մեջ կարող է դառնալ որոշիչ, ստորոգելի, ձևի պարագա:
4. Գոյականներից կարելի է կազմել ածականներ՝ *ան, ային, ական, ավոր, յս, ե, ոտ, յան* ածանցներով:
5. *Ան* նախածանցով կազմվում են միայն ածականներ:
6. Որակական ածականները չունեն հատուկ ձև և վերջավորություն:

28.

1. Թվականները առարկաների թիվ, քանակ կամ թվային կարգ ցույց տվող բառեր են, որոնք դառնում են միայն բայական անդամի լրացումներ:
2. Փոխանվանաբար գործածվելիս թվականը կարող է հոլովվել, հոգնակի թիվ ստանալ՝ կատարելով գոյականին հատուկ բոլոր պաշտոնները:
3. Քանակական թվականները արտահայտում են առարկաների թիվ, թվային կարգ, քանակ:
4. Բաշխական թվականներն արտահայտում են առարկաների մասերի քանակ՝ ամբողջ կամ ոչ ամբողջ թվերով:
5. Թվականները կազմությամբ լինում են պարզ, բարդ և ածանցավոր. *քառասուն, վաթսուն, միլիոն* թվականները ածանցավոր բառեր են:
6. 11-ից մինչև 99 թվերը գրվում են միասին, 100-ից մեծ թվերը՝ անջատ բաղադրիչներով, ածանցավոր բոլոր թվականները նույնպես գրվում են միասին:

29.

1. Դերանունները անվան դեր կատարող բառեր են և գործածվում են անուն խոսքի մասերի փոխարեն՝ արտահայտելով առարկա և հատկանիշ առանց դրանք անվանելու:
2. Ի տարբերություն գոյականների՝ անձնական դերանունները թե՛ եզակի, թե՛ հոգնակի թվում հոլովվելիս փոխում են իրենց արմատը:
3. Ցուցական դերանունները մատնանշում են առարկայի հատկանիշ (*սա, դա, նա, այս, այդ, այն ..*), և գործողության հատկանիշ (*այսպես, այդպես, այստեղ, այդտեղ, սույն, միևնույն...*):
4. Ի տարբերություն հարցական դերանունների՝ հարաբերական դերանունները նախադասության անդամ չեն դառնում:
5. *Ամեն, ողջ, բոլոր, համայն, ամենայն* բառերը որոշյալ դերանուններ են, իսկ *ոմն, մեկը, մի, ուրիշ, այլ, որոշ* բառերը անորոշ դերանուններ են:
6. Փոխադարձ դերանունները չունեն ուղղական հոլով, հետևաբար չեն կարող կատարել ենթակայի պաշտոն:

30.

1. *Այս, այդ, այն* ցուցական դերանունները նախադասության մեջ կարող են մատնանշել և՛ առարկայի հատկանիշ, և՛ առարկա:
2. Անձնական դերանունները հաճախ գործածվում են նաև գոյականաբար:
3. *Այսքան, այդքան, այնքան* ցուցական դերանունները գործածվում են թե՛ որպես գոյականի, թե՛ որպես բայի լրացում:
4. *Ո՞ր, քանի՞* հարցական դերանուններից *-երորդ* ածանցով կազմվում են թվականներ:
5. *Ոչ ոք* դերանունը հոլովվում է՝ ստանալով ու հոլովիչ:
6. *Ինչ-որ* անորոշ դերանունը նախադասության մեջ հանդես է գալիս իբրև որոշիչ:

31.

1. Մակբայները խոսքի մեջ հանդես են գալիս որպես բայի լրացում՝ պարագա և խնդիր:
2. Ժամանակի մակբայները ցույց են տալիս գործողության կատարման ժամանակը և պատասխանում են *ե՞րբ, երբվա՞, երբվանի՞ց* հարցերին:
3. *Առաջ* մակբայը ունի և՛ տեղի, և՛ ժամանակի իմաստ:
4. Բոլոր մակբայները ունեն հատուկ ձև, որով էլ առանձնանում են մյուս խոսքի մասերից:
5. Որևէ ածականի կամ գոյականի կրկնությամբ կարելի է ստանալ մակբայ:
6. *-աբար* ածանցով կազմվում են թե՛ մակբայներ, թե՛ ածականներ:

## 32.

1. *-ացն,-եցն, -ցն* ածանցներով կազմված բայերը բացառապես ներգործական սեռի են:
2. *-ան, -են, -ն, -չ* բայական ածանցները ունեն սուկ բայակազմական արժեք:
3. Անկախ դերբայները նախադասության մեջ կարող են դառնալ պարագա, խնդիր, որոշիչ, պարզ ստորոգյալ:
4. Հրամայական եղանակն ունի 2-րդ դեմք՝ եզակի և հոգնակի, մեկ ժամանակ՝ ներկա:
5. Ժխտական ձևաբայով կազմվում են բայի ժխտական խոնարհման բոլոր ձևերը:
6. Անորոշ դերբայը կարող է դառնալ որոշիչ, հանգման, միջոցի խնդիր, ձևի պարագա:

## 33.

1. Կազմությամբ պարզ են *ասել, բերել, ուտել, զարկել, ելնել* բայերը:
2. Կազմությամբ ածանցավոր են *անել, դնել, տալ, գտնել* բայերը:
3. Պակասավոր են *եմ, կամ, կենալ, գալ, հուսալ* բայերը:
4. *Գալ, լալ, տալ* բայերը անկանոն են ոչ միայն անցյալ կատարյալում, այլև սահմանական ներկայում:
5. *Առնել* բայն անկանոն է միայն եզակի հրամայականում:
6. *Կամ*-ը սահմանական եղանակի ապառնի ժամանակի բայաձև է:

## 34.

1. Բայը ցույց է տալիս գործողություն կամ եղելություն:
2. Բայի դիմավոր ձևերը կոչվում են նաև եղանակային ձևեր և ըստ կազմության լինում են բաղադրյալ և պարզ:
3. Բայի անդեմ ձևերը չունեն սեռ, եղանակ, ժամանակ, դեմք, թիվ:
4. Անորոշ դերբայը անվանում է գործողությունը:
5. Անկատար, ապակատար և վաղակատար ձևաբայերը ինքնուրույն գործածություն երբեմն ունեն, երբեմն՝ ոչ:
6. Սահմանական եղանակի անցյալ կատարյալի և ենթադրական եղանակի ժխտական բայաձևերը պարզ դիմավոր ձևեր են:

## 35.

1. Գործողություն ասելով հասկանում ենք առարկայի մի բան անելը, իսկ եղելություն ասելով՝ մի բան լինելը:
2. Բայի անդեմ ձևերը չունեն դիմավոր ձևերի հատկանիշներից և ոչ մեկը:
3. Հարկադրական եղանակի բայաձևերը բաղադրյալ ժամանակաձևեր են:
4. *Գրում եմ, երգում եք, խոսել եմ, հիշում եմ* բայաձևերը արտահայտում են ներկա ժամանակ:
5. Հրամայական եղանակի բայերը արտահայտում են ապառնի ժամանակ:
6. *Միրեն, ունեն, չի հավատա, պիտի պատմի* բայերը ապառնի ժամանակի բայաձևեր են:

## 36.

1. Բոլոր դիմավոր բայերն ունեն դեմք, թիվ, ժամանակ, եղանակ:
2. Պարզ դիմավոր ձևերի վերջավորություններն արտահայտում են և՛ թվի, և՛ դեմքի քերականական կարգ:
3. Բաղադրյալ դիմավոր ձևերը կազմվում են անորոշ, հարակատար դերբայներից և օժանդակ բայից:
4. Հարկադրական և ենթադրական եղանակների բայերը թե՛ դրական, թե՛ ժխտական խոնարհման դեպքում կազմվում են ըղձական եղանակի ձևերից:
5. Դրական խոնարհման դեպքում օժանդակ բայը նախադասության մեջ միշտ դրվում է ձևաբայից հետո, իսկ ժխտական խոնարհման դեպքում՝ ձևաբայից առաջ:
6. Հրամայական եղանակն ունի մեկ դեմք, երկու ժամանակաձև:

## 37.

1. Բայի պարզ կամ ածանցավոր լինելը որոշվում է անորոշ դերբայի հիմքից:
2. Ենթակայական դերբայը խոսքի մեջ հանդես է գալիս գոյականին, ածականին և մակբային հատուկ բոլոր պաշտոններով:
3. Ենթակայական դերբայը *ե՛մ* օժանդակ բայի հետ կարող է կազմել բաղադրյալ դիմավոր ձևեր: -
4. Համակատար դերբայը կազմվում է անորոշ դերբայից՝ նրան ավելացնելով *-իս* կամ *-ով* վերջավորությունները:
5. Անորոշ դերբայը հոլովվում է՝ ենթարկվելով *m* հոլովման:
6. Հարակատար դերբայը նախադասության մեջ սովորաբար դառնում է որոշիչ, իսկ որպես ձևի պարագա՝ հանդես է գալիս հոլովված:

## 38.

1. Շաղկապներն ըստ կազմության պարզ բառեր են:
2. *Սակայն*-ը կարող է կիրառվել և՛ որպես շաղկապ, և՛ որպես վերաբերական:
3. *Թե*-ն կարող է կիրառվել որպես համադասական շաղկապ:
4. *Մինչ, մինչև, մինչև որ, մինչև իսկ* բառերը ստորադասական շաղկապներ են:
5. Շաղկապները երբեմն կարող են դառնալ նախադասության անդամ:
6. Շաղկապները բառային նյութական իմաստ չունեն:

## 39.

1. Նախադասության ներդրյալ միավորներ են կոչականները, կապերը, վերաբերականները:
2. Կոչականը անգամ նախադաս լրացում ունենալու դեպքում շեշտվում է:
3. Ամբողջ նախադասությանը եղանակավորող վերաբերականները կապվում են ստորոգյալի հետ:
4. Նախադասության ոչ բոլոր ներդրյալ միավորները կարող են հանդես գալ նախադաս դիրքում:
5. Նախադասության ներդրյալ միավոր չեն համարվում ձայնարկությունները:
6. Ներդրյալ միավոր պարունակող նախադասությունները համարվում են թերի նախադասություններ:

## 40.

1. Բարդ ստորադասական նախադասությունը կարող է լինել միաբաղադրիչ, երկբաղադրիչ, եռաբաղադրիչ:
2. Գերադաս և ստորադաս նախադասությունների կապը կարող է լինել նաև շարահարությամբ:
3. Գերադաս և ստորադաս նախադասությունները իրարից անջատվում են ստորակետով, երբեմն՝ բութով:
4. Բաղադրիչ ստորադաս նախադասությունները կարող են իրար համադաս լինել:
5. Բոլոր բարդ ստորադասական նախադասությունները փոխակերպելի են պարզի:
6. Ստորադասական բոլոր շաղկապների գեղջման դեպքում դրվում է բութ:

## 41.

1. Գոյականով արտահայտված որոշիչը դրվում է ուղղական, սեռական, բացառական և գործիական հոլովներով:
2. Նպատակի պարագան ձևավորվում է միայն կապական կառույցներով:
3. Պատճառի պարագան դրվում է միայն գործիական հոլովով:
4. Հեռացած հատկացուցիչը միշտ չէ, որ տրոհվում է նախադասության մյուս անդամներից:
5. Ենթակայի և ստորոգյալի լրացումները կոչվում են երկրորդական անդամներ:
6. Հետադաս որոշիչները կարող են արտահայտվել և՛ բառով, և՛ բառակապակցությամբ, և՛ դերբայական դարձվածով:

## 42.

1. Նախադասության գլխավոր անդամները կապակցվում են համաձայնությամբ և խնդրառությամբ:
2. Բացահայտիչը և բացահայտյալը կապակցվում են խնդրառությամբ:
3. Հոլովական և խոնարհման վերջավորությունները նախադասության մեջ կատարում են կապակցման միջոցի դեր:
4. Մասնական բացահայտիչը հոլովով և թվով համաձայնում է բացահայտյալին, որոշիչ հոդ չի ընդունում:
5. Մասնավորող պարագայական բացահայտիչը բացահայտյալին երբեմն համաձայնում է, երբեմն՝ ոչ:
6. Եթե ենթական ունենում է երկու կամ երկուսից բարձր թվական որոշիչ, ապա և՛ ենթական, և՛ ստորոգյալը կարող են դրվել թե՛ եզակի, թե՛ հոգնակի:

## 43.

1. Ենթակայի առկայությունը պարտադիր է երկկազմ նախադասության մեջ:
2. Ենթական կարող է արտահայտվել զոյականով, անձնական, ցուցական, հարցական, հարաբերական դերանուններով:
3. Ենթակա կարող է դառնալ ցանկացած անկախ դերբայ:
4. Առածները երբեմն անենթակա նախադասություններ են:
5. Միակազմ նախադասությունների մի մասը չունի ենթակա, բայց ունի դիմավոր բայ:
6. Բայական անդամ նախադասությունները չունեն ենթակա, բայց ունեն ստորոգյալ:

## 44.

1. Բարդ նախադասությունների բաղադրիչ նախադասությունները կարող են միանալ ոչ միայն շաղկապներով, այլև հնչերանգով:
2. Բարդ նախադասության բաղադրիչ նախադասությունները միմյանց հետ կարող են կապակցվել թե՛ համադասությամբ, թե՛ ստորադասությամբ:
3. Միևնույն բարդ նախադասության կազմում միաժամանակ չեն կարող լինել և՛ համադասությամբ, և՛ ստորադասությամբ կապվող բաղադրիչ նախադասություններ:
4. Բարդ համադասական նախադասությունները բաղկացած են համադաս նախադասություններից, որոնք միմյանց հետ կապակցվում են միմիայն համադասական շաղկապներով:
5. Բարդ համադասական նախադասությունները միշտ ունենում են իրենց առանձին գլխավոր անդամները՝ ենթական և ստորոգյալը:
6. Համադաս նախադասության մեջ ստորոգյալը չկրկնելու համար այն կարող ենք զեղչել, ընդ որում, ստորոգյալի զեղչումը պետք է լինի մասնակի:

## 45.

1. Ստորադաս նախադասությունները լինում են ենթակա և ստորոգելի, զոյական անդամի և բայական անդամի լրացումներ:
2. Ենթակա ստորադաս նախադասությունը փոխարինում է գերադաս նախադասության ենթակային, իսկ ստորոգելի ստորադաս նախադասությունը՝ գերադաս նախադասության ստորոգյալին:
3. Որոշիչ ստորադաս նախադասություն ունեցող գերադաս նախադասությունը ունենում է ձևական որոշիչ, որն արտահայտվում է *այն, այնպիսի, այնքան, այնպես* հարաբերյալներով:
4. Ուղիղ խնդիր ստորադաս նախադասություն կարող է ունենալ միայն այն գերադաս նախադասությունը, որի ստորոգյալը ներգործական սեռի բայ է:
5. «*Այդ մարդու վիշտը փարատվում է նրանով, որ որդին շուտով գորացրվելու է*» բարդ նախադասության ստորադաս նախադասությունը միջոցի անուղղակի խնդիր է:
6. Չիջման պարագա ստորադաս նախադասությունը գերադասին կապվում է *քստ, չնայած, թեև, թեպետ, թեկուզ* շաղկապներով:

46.

1. Բարդ ստորադասական նախադասությունը և դերբայական դարձվածով պարզ նախադասությունը կարող են իրար հոմանիշ լինել:
2. Բոլոր բարդ ստորադասական նախադասությունները կարելի է փոխակերպել պարզի:
3. Դերբայական դարձվածով պարզ նախադասությունները հաճախ չեն փոխակերպվում բարդ ստորադասականի, իսկ առանձին դեպքերում դառնում են բարդ համադասական նախադասություններ:
4. Փոխակերպման ժամանակ ստորադաս նախադասության պարզ ստորոգյալը հիմնականում վերածվում է դերբայի:
5. Ստորադաս նախադասության բաղադրյալ ստորոգյալի ստորոգելին փոխակերպման ժամանակ մնում է, իսկ հանգույցը կա՛մ վերանում է, կա՛մ վերածվում է որևէ դերբայի:
6. Բարդ ստորադասական նախադասության փոխակերպման ժամանակ որևէ բառի հավելումը բացառվում է:

47.

1. Ե՛վ ենթակա, և՛ ստորոգյալ ունեցող նախադասությունները երկկազմ են:
2. Միակազմ նախադասությունները լինում են երեք տեսակ՝ բայական, անվանական, դերանվանական:
3. Անդեմ նախադասության գերադաս անդամը արտահայտվում է անորոշ դերբայով և կոչվում է բայական անդեմ նախադասություն:
4. Անվանական և բայական անդեմ նախադասությունները ևս կարող են լինել թե՛ պարզ, թե՛ բարդ:
5. Ձեղջիված ենթակայով նախադասությունը միակազմ նախադասություն է:
6. «Աշուն էր՝ տերևաթափով, արևի նվազ ջերմությամբ» նախադասությունը անդեմ է:

48.

1. Ստորոգյալները լինում են երկու տեսակ՝ պարզ և բաղադրյալ:
2. Պարզ ստորոգյալի մեջ *եմ* – ը օժանդակ բայ է, բաղադրյալ ստորոգյալի մեջ՝ ոչ:
3. Բաղադրյալ ստորոգյալում հանգույցի դեր են կատարում միայն *լինել, դառնալ, թվալ* բայերը:
4. Որևէ խոսքի մասից և հանգույցից կազմված ստորոգյալը բաղադրյալ է:
5. «*Ձիճկորի կոչումը հայրենիքին ծառայելն է*» նախադասության ստորոգյալը պարզ է:
6. Ստորոգելին արտահայտում է հատկանիշ, հանգույցը կատարում է վերագրում:

49.

1. Որոշիչն արտահայտվում է գոյականի բոլոր հոլովներով:
2. Հետադաս որոշիչը միշտ տրոհվում է բուրքով:
3. Որոշիչը կարող է արտահայտվել կապային կապակցությամբ:
4. «*Նրա ուսյալ աչքերը տեսնում էին մազադաթյա մատյանները՝ գրված եղեգնյա գրչով*» նախադասության մեջ բոլոր որոշիչներն արտահայտված են ածականներով:
5. *Բոլոր, ողջ, յուրաքանչյուր, համայն* որոշիչների հետ որոշյալը դրվում է եզակի թվով:
6. Հետադաս որոշիչի շարադասությունը ազատ է:

50.

1. Ուղիղ խնդիրը դրվում է ներգործական սեռի բայերի պահանջով:
2. Վերաբերության խնդիրը արտահայտվում է միայն կապային կապակցությամբ:
3. Ներգործող անուղղակի խնդիրը դրվում է միայն բացառական հոլովով:
4. *վիրել, հանձնել, տալ* բայերը պահանջում են թե՛ ուղիղ, թե՛ հանգման անուղղակի խնդիր:
5. Ներգործող խնդիրը դրվում է ներգործական սեռի բայերի պահանջով:
6. Անուղղակի խնդիրները ձևավորվում են մաս կապերով:

51.

1. Պարագաներն արտահայտվում են միայն գոյականի հոլովաձևերով և մակբայներով:
2. Գործողության հետ կապված առարկաները կոչվում են պարագաներ:
3. Չնի պարագան կարող է արտահայտվել դերբայական դարձվածով:
4. Պարագաները լինում են տեղի, ժամանակի, ձևի, միջոցի:
5. Պարագաներն արտահայտվում են նյութական իմաստ արտահայտող բոլոր խոսքի մասերով:
6. Պես կապով կարող են կազմվել թե՛ ձևի, թե՛ ժամանակի պարագաներ:

52.

1. Դերբայական դարձված ձևավորում են միայն անկախ դերբայները:
2. Բազմակի դերբայական դարձվածները միմյանցից անջատվում են միայն բութով:
3. Համակատար դերբայով կազմվում է ժամանակի պարագա դերբայական դարձված:
4. Հարակատար դերբայով կազմված ձևի պարագա դերբայական դարձվածները բոլոր դիրքերում տրոհվում են:
5. Դերբայական դարձվածը լրացնում է միայն բայական անդամին:
6. «Կամարակապ դարպասի մոտ նստելը պապիս սովորությունն էր» նախադասության ենթական արտահայտված է դերբայական դարձվածով:

53.

1. Նախադասության մեջ ուղիղ խնդրի պաշտոնով կարող են հանդես գալ գոյականը, դերանունները կամ գոյականաբար գործածված այլ խոսքի մասեր:
2. Ուղիղ խնդիրը միշտ ձևավորվում է բառի ուղիղ ձևով, կարող է հոդ ստանալ կամ չստանալ:
3. Ուղիղ խնդիր ստանում են ներգործական սեռի բայերը:
4. «Նա որոշել է դառնալ օդաչու» նախադասության մեջ օդաչու բառը ուղիղ խնդիր է:
5. «Ծերունին հոգնած նստեց, և մի թառանչ դուրս թռավ նրա կրծքից» նախադասության մեջ թառանչ բառը ուղիղ խնդիր է:
6. «Ձուրն ամբողջովին թրջել էր նրա հնամաշ տրեխները և լցվել գուլպաները» նախադասության մեջ կա երկու ուղիղ խնդիր:

54.

1. Պարագաները ցույց են տալիս գործողության հատկանիշ:
2. Տեղի պարագան արտահայտվում է տեղի մակբայներով կամ դերանուններով, իսկ գոյականը տեղի պարագա կարող է դառնալ միայն կապերի հետ:
3. Ձիջման պարագան բոլոր դիրքերում նախադասության մյուս անդամներից անջատվում է բութով:
4. Բոլոր պարագաները կարող են ունենալ մասնավորեցնող բացահայտիչ:
5. Չափի պարագան արտահայտվում է փոխանուն թվականների տարբեր հոլովական ձևերով:-
6. Պարագաները լրացնում են ստորոգյալին կամ անդամ բայերին:

55.

1. Որոշիչը գոյականով արտահայտված անդամի որակը, որպիսությունը, չափը արտահայտող լրացում է:
2. Որոշիչը կարող է արտահայտվել ածականով, թվականով, գոյականի բոլոր հոլովներով:
3. Որոշիչը կարող է լինել հետադաս և նախադաս. հետադաս որոշիչը միշտ որոշյալից անջատվում է բութով:
4. Ստորոգելին չի կարող ունենալ որոշիչ լրացում:
5. Որոշիչը կարող է արտահայտվել դերանվան բոլոր տեսակներով:
6. Որոշիչը կարող է արտահայտվել անորոշ, հարակատար, համակատար դերբայներով:

56.

1. Հատկացուցիչը դրվում է սեռական, երբեմն՝ բացառական հոլովներով:
2. Հատկացուցիչը կարող է լինել հետադաս և նախադաս. հետադաս հատկացուցիչը հատկացյալից անջատվում է բութով:
3. Դերանունները չեն կարող հանդես գալ հատկացուցչի պաշտոնով:
4. «Թագուհու գնալը բոլորին տարօրինակ թվաց, և ոչ մեկի համար գաղտնիք չէր, որ նա շուտով կժամանի եղբոր տուն» նախադասության մեջ կա երկու հատկացուցիչ:
5. Հատկացուցիչը հատկացյալի հետ համաձայնեցվում է դեմքով և թվով:  
Հատկացուցիչը ցույց է տալիս ոչ միայն առարկայի պատկանելություն, այլև վերաբերություն:

**ԳԼՈՒԽ XI**

**ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. Նշիր, թե որ թվականին է հիմնադրվել Մխիթարյան միաբանությունը.
2. Նշիր, թե հետևյալ մտավորականներից քանի՞սն են եղել 1899-ին Հովհաննես Թումանյանի կազմակերպած «Վերնատուն» գրական խմբակի մշտական անդամները.  
Հովհաննես Թումանյան, Վահան Տերյան, Ղազարոս Աղայան, Պերճ Պռոշյան, Գաբրիել Սունդուկյան, Ավետիք Իսահակյան, Լևոն Շանթ, Մուրացան, Դերենիկ Դեմիրճյան, Շիրվանզադե, Նիկոլ Աղբալյան
3. Նշիր, թե հայ իրականության մեջ որ դարում է ձևավորվել կլասիցիզմը՝ որպես գրական ուղղություն.
4. Նշիր, թե հայ իրականության մեջ որ դարում է ձևավորվել ռոմանտիզմը՝ որպես գրական ուղղություն.
5. Նշիր, թե հայ իրականության մեջ որ դարում է ձևավորվել ռեալիզմը՝ որպես գրական ուղղություն.
6. Նշիր այն ժանրերը, որոնք բնորոշ են հայկական կլասիցիզմին.  
(1) ներբող, (2) վեպ, (3) էլեգիա, (4) նորավեպ, (5) շարական, (6) հովվերգություն, (7) վիպերգ, (8) գանձ, (9) ողբերգություն
7. Նշիր այն գրողներին, որոնք գրել են դրամատիկական երկեր.  
(1) Ալեքսանդր Շիրվանզադե, (2) Ավետիք Իսահակյան, (3) Պետրոս Դուրյան, (4) Բաֆֆի, (5) Նաիրի Զարյան, (6) Ակսել Բակունց, (7) Միսաք Մեծարենց, (8) Լևոն Շանթ, (9) Համո Սահյան
8. Նշվածներից քանի՞սն են պատմիչներ.  
Մեսրոպ Մաշտոց, Կորյուն, Ագաթանգեղոս, Եզնիկ Կողբացի, Դավիթ Անհաղթ, Թովմա Արծրունի, Սահակ Պարթև, Հռոփանոս, Հովհաննես Դրասխանասկերտցի
9. Նշիր այն ժանրերը, որոնցով ստեղծագործել է Գրիգոր Նարեկացին.  
(1) ողբերգություն, (2) թուղթ, (3) գանձ, (4) վեպ, (5) տաղ, (6) առակ, (7) հանելուկ
10. Նշիր այն տաղերը, որոնք գրել է Գրիգոր Նարեկացին.  
(1) «Տաղ Վարդավառի», (2) «Հայրողիներ», (3) «Տո՛ւր ինձի, Տե՛ր...», (4) «Տաղ անձնական», (5) «Մեղեդի ծննդյան», (6) «Մեռելոց»
11. Արվեստի ճշմարիտ երկերի համար անհրաժեշտ նախապայմանի ընդգծումը նշյալ ո՞ր գրողի կողմից է ստացել հետևյալ բնորոշումը. «Երբ կու ծաղկին միտքս ու հոգիս, լեզուս իմ հանց պըտուղ կուտայ».

1. Գրիգոր Նարեկացու
2. Ֆրիկի
3. Նահապետ Քուչակի
4. Սայաթ-Նովայի

**12. Նշիր, թե որ պնդումներն են սխալ.**

1. Հայկական ժողովրդի նշանավոր դեմքերն են Բաֆֆին, Հակոբ Պարոնյանը և Մուրացանը:
2. Ռոմանտիզմի արվեստում նոր հնչեղություն են ստանում բնությունը, պատմությունը, կրոնը, բանահյուսությունը:
3. Ռոմանտիզմի պոեզիայում առաջնակարգ նշանակություն է ստանում անձնական քնարերգությունը, ստեղծվում են ժանրային այնպիսի տեսակներ, ինչպիսիք են քնարաէպիկական պոեմը, ողբերգությունը, լեգենդը, բալլադը և այլն:
4. Ի հակադրություն կլասիցիզմի հռչակած ստեղծագործական ազատության սկզբունքի՝ ռոմանտիզմը հանդես է գալիս խիստ կանոնակարգության պահանջով:
5. Ռոմանտիզմի պոետիկայի էական առանձնահատկությունը իդեալի և իրականության հակադրումն է և իդեալի ժխտումը:
6. Ռոմանտիզմը գեղագիտական իմաստով հակադիր էր կլասիցիզմին:

**13. Նշիր այն ժանրերը, որոնցով ստեղծագործել է Բաֆֆին.**

- (1) վեպ, (2) վիպակ, (3) կատակերգություն, (4) ուղեգրություն, (5) ակնարկ, (6) բանաստեղծություն, (7) պատմավեպ, (8) ողբերգություն, (9) դրամա

**14. Նշիր այն ժանրերը, որոնցով ստեղծագործել է Մուրացանը.**

- (1) դրամա, (2) վիպակ, (3) կատակերգություն, (4) պոեմ, (5) բանաստեղծություն, (6) գրական դիմանկար, (7) պատմավեպ, (8) ողբերգություն, (9) վեպ

**15. Նշիր, թե որ պնդումներն են ճիշտ.**

1. Հայկական ռեալիզմի նշանավոր դեմքերն են Հակոբ Պարոնյանը, Ալեքսանդր Շիրվանզադեն, Գրիգոր Չոփրապը և Նար-Ռոսը:
